

Յ Ե Ղ Ա

ՁԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Առատաձեռնության Չօրույթները

Փ Ո Խ ՈՒ

Կ Է Ր Ի Բ Ի Ս Ի

Թ Ի Է Ն Ը

Սիրելի բարեկամ Քրիստոսով,

Մեր աղօթքն է, որ այս ուսուցումի աղբիւրը օրհնութիւնն եւ քաջալերանք ըլլայ քեզի: Ազատ զգայ այս նիւթերը կիսուելու քու բարեկամներուդ, ընտանիքիդ եւ եկեղեցիիդ անդամներուն հետ: Նաեւ կրնաս այցելել FLNFree.com կայքէջը եւ ներբեռնել յաւելեալ պատճեններ եւ յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ: Աստուած կը սիրէ քեզ եւ Ան հիանալի ծրագիր մը ունի կեանքիդ համար: Աստուծոյ Թագաւորութեան գործելածեւը սորվիլը մեր կեանքը դէպի լաւը փոխեց, եւ վստահ ենք, որ անկկա նոյնը պիտի ընէ քեզի համար:

Քրիստոսի սիրով,

Կերի եւ Տրենտա Քիսի



Յ.Գ. Մի մոռնար այցելելու մեր ձրի ներբեռնման կայքէջը` FLNFree.com` ներբեռնելու համար յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ:

Յ Ե Ղ Ա

ՋԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Առատաձեռնությունների Զորակիր

Փ Ո Խ ՈՒ

Կ Է Ր Ի Ք Ի Ս Ի

Թ Ի Է Ն Ը

Your Financial Revolution:

The Power of Generosity, Western Armenian
Copyright © 2023 by Gary Keesee

Originally published in English
Copyright © 2015 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-52-2

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is
NOT FOR SALE

Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը.

Առարածեղութեան Զօրութիւնը, Արեւմտահայերէն
Հեղինակային իրաւունք © 2023 Կերի Քիսի

Բնագիրը հրատարակուած է անգլերէնով
Հեղինակային իրաւունք © 2015 Կերի Քիսի
ISBN: 978-1-945930-52-2

Կերի Քիսի Ծառայութիւններ
Նամակատուի՝ 779, Նիւ Ալպանի,
Օհայօ 43054, ԱՄՆ
GaryKeesee.com

Այս գիրքը ՁՐԻ ՆՈՒԷՐ է Կերի Քիսի Ծառայութիւններուն կողմէ եւ ԾԱԽՈՒ ՉԷ:

ՁՕՆ

Այս գիրքը կը նուիրեմ իմ քառասուն տարիներու գեղեցիկ կնոջս՝ Տրենտային: Ան ամէնէն առատաձեռն անձն է, որ երբեւէ տեսած եմ կեանքիս մէջ: Ան միշտ ուրիշներու մասին կը մտածէ եւ ինծի շատ բան սորվեցուցած է մարդիկը սիրելու մասին, որուն համար յաւիտեան երախտապարտ պիտի մնամ:

—Կերի Քիսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	7
ԳԼՈՒԽ 1. Առատաձեռնության Ջորութիւնը.	15
ԳԼՈՒԽ 2. Լուծումը Շնորհքն է	35
ԳԼՈՒԽ 3. Ատամկ Ես	67
ԳԼՈՒԽ 4. Որո՞ւ Դրամն է Ատիկա	85
ԳԼՈՒԽ 5. Դուն Գործակիցի՛ մը Պէտք Ունիս	103
ԳԼՈՒԽ 6. Տասանորդի Խորհուրդը	119
ԳԼՈՒԽ 7. Դուն Քսակի մը Պէտք Ունիս. Առաջին Մաս	139
ԳԼՈՒԽ 8. Դուն Քսակի մը Պէտք Ունիս. Երկրորդ Մաս	173
ԳԼՈՒԽ 9. Չափի Օրէնքը	185
ԳԼՈՒԽ 10. Առատաձեռն Թագաւորը	201
ԳԼՈՒԽ 11. Առատաձեռն Մարդոց Տրուած Խոստումը	221

ՆԱԽԱԲԱՆ

Երբ Աստուած Տրենտան եւ զիս կանչեց՝ հեռատեսիլի ծրագիրներու մէջ ելոյթ ունենալու համար, կրնամ ըսել, որ ատիկա երբեք մտքէս չէր անցած: Տակաւին նոր վերադարձած էի Ալպանիայէն, ուր Աստուծոյ Թագաւորութեան մասին հինգ պահեր դասաւանդած էի եւ անոնց ըսած էի, թէ ինչպէս Տրենտան եւ ես Թագաւորութեան օրէնքներուն հետեւելով մեր պարտքերէն ազատած էինք:

Եթէ իմ նախորդ գիրքերս կարդացած ես, թերեւս պիտի յիշես, թէ ինչպէս Աստուծոյ փառքին կապոյտ մշուշը միսիոնարին նստասենեակը լեցուց այն գիշերը, երբ մեր վերջին պահը ունեցանք: Հոն էր, որ Տէրը ինձի ըսաւ. *«Քեզ կը կանչեմ ազգերուն երթալու եւ մարդոց սորվեցնելու իմ ֆինանսական օրհնութեան ուխտս: Եւ ո՛ր որ քեզ դրկեմ, ես ծախսերը պիտի հոգամ»:*

Այդ գիշերը փոխեց իմ կեանքս: Բայց գաղափար չունէի, թէ Տէրը ճիշդ ինչ ըսել կ'ուզէր Իր խօսքերով. *«Քեզ կը կանչեմ ազգերուն երթալու»:*

Հետագային պարզուեցաւ, որ հեռատեսիլն էր այդ միջոցը, որ Տէրը Իր միտքին մէջ ունէր: Դարձեալ, ատիկա բան մըն էր, որուն մասին չէի մտածած կամ նոյնիսկ փափաքը չունէի այդ մէկը ընելու: Միակ բանը, որ վստահ գիտէի, այն էր, որ մեծ փափաք ունէի մարդոց օգնելու, որ յայտնաբերեն այն, ինչ որ Տրենտան եւ ես յայտնաբերեցինք՝ Աստուծոյ Թագաւորութիւնը:

Ինը տարի ապրեցանք ծանր պարտքերու տակ, ամէն տեսակի արգելանքի տակ եւ տկարացնող խուճապի յարձակումներու դէմ կը պայքարէինք: Ընկճուածութեան դեղերը, զորս բժիշկները ինձի կու տային, չէին օգներ: Սկսայ կեանքէն քաշուիլ, եւ վախի խաւարը

կարծես բոլոր միտքերս կը գրաւէր: Այնքան վախով կապուած էի, որ հասայ տեղ մը, ուր կը վախնայի տունէն դուրս ելլելու, բան մը, որ անշուշտ վաճառորդութեան գործիս համար օգտակար չէր: Արագօրէն կը սնանկանայիմք, եւ կարծես անզօր էի այդ մէկը կեցնելու: Ամօթը այլեւս կեանքի ձեւ դարձած էր ինծի համար, եւ ինքզինքս շատ ձախող մէկը կը զգայի: Ամենամեծ ձախողութիւնը, որ կը զգայի, իմ գեղեցիկ կնոջս եւ զաւակներուս հանդէպ էր: Բացի մեզի համար անհրաժեշտ գումարը չապահովելէ, այդ տարիներուն ես նաեւ լաւ հայր կամ ամուսին չէի:

Մենք գոյատեւեցինք՝ ապրելով 1850-ականներու ազարակատան մը մէջ, ուր ամէն բան կոտրուած էր: Ապակիները փակցնելիք երիզով միացուած էին: Գետնին գորգերը ճամբուն եզերքը գտնուող աղբակոյտի մը մէջէն գտնուած էին: Տղոցս սենեակին անկողիները ծերանոցի մը դուրսը նետուած ապրանքներուն մէջէն գտնուած էին: Մեր քշած ինքնաշարժները մեզ կը խայտառակէին: Մեր կեանքերը լեցուն էին անդադար հնչող հեռաձայններով, որոնք դրամ կը պահանջէին փաստաբաններու եւ բազմաթիւ վարկային քարտի (*քրեդիթ քարտ*) ընկերութիւններու եւ դրամ փոխ տուող ընկերութիւններու կողմէ, որոնց մենք դրամ պարտք ունէինք:

Անյոյս էի: Այո՛, զԱստուած սիրող քրիստոնեայ մըն էի: Եկեղեցի կ'երթայի եւ Սուրբ Հոգիով մկրտուած էի: Պսակաւորի աստիճան ստացած էի Հին Կտակարանին մէջ եւ մէկ տարի Աստուածաշունչի դպրոց յաճախած էի, բայց շատ սխալ բան մը կար:

Օր մը յուսալքուած Աստուծոյ աղաղակեցի, եւ անմիջապէս Ան պատասխանեց: Այնպէս չէր, որ ես չէի աղօթած մտահոգութեամբ լեցուն այդ ինը տարիներուն ընթացքին. աղօթած էի: Բայց այս անգամ գիտէի, որ պէտք ունիմ լսելու:

Կ'ենթադրեմ, որ մինչեւ այդ ժամանակ կը կարծէի, թէ ես կրնամ ինքզինքս դուրս հանել այդ ֆինանսական փոսէն, որ ես փորեր էի՝ ամէն բան իմ ուժերովս ընելով: Բայց այդ առաւօտ գիտէի, որ ա՛լ ելք չունիմ: Բոլոր բարեկամներէս դրամ փոխ առած էի, տասնեակ հազարաւոր տոլարներ փոխ առած էի ընտանիքէս, եւ աւելի դրամ փոխ առնելու ամէն միջոց կործանուած էր:

Երբ այդ առաւօտ աղօթեցի, յուսալքուած էի, եւ ատով հանդերձ, զարմացայ, որ այդքան արագ Անոր պատասխանը լսեցի: Հոգիիս մէջէն լսեցի Անոր ձայնը, որ Փիլիպպեցիներուն 4.19-ը կ'արտասանէր.

«Եւ իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պիտի լեցնէ իր ճոխութեանը չափովը, փառքով՝ Քրիստոս Յիսուսին ձեռքով»:

Տիրոջ պատասխանեցի. «Տէ՛ր, եւ գիտեմ այդ համարը, բայց չեմ տեսներ անոր կատարուիլը իմ կեանքիս մէջ»: Ան նորէն խօսեցաւ եւ ինձի ըսաւ, որ ես այդ խառնաշփոթ վիճակին մէջ էի, որովհետեւ երբեք չէի սորված, թէ Իր Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ: Չէի գիտեր, թէ ատով ինչ ըսել կ'ուզէր, բայց Տրենտան եւ ես որոշեցինք գիտնալ:

Աստուածաշունչի առաջին համարներէն մէկը, որ Աստուած մեզի ցոյց տուաւ, Ղուկասի 6.20-ն էր.

«Յիսուս իր աչքերը աշակերտներուն յառելով, ըսաւ. «Երանի՛ աղքատներուդ, որովհետեւ ձերն է Աստուծոյ արքայութիւնը»»:

Աստուծոյ Թագաւորութիւնն էր մեր լուծումը: Դարձեալ, մենք իրապէս բնաւ գաղափար չունէինք, թէ Ան ինչ նկատի ունէր ատով, բայց գիտէինք, որ պէտք է յայտնաբերենք:

Քիչ ետք Թագաւորութեան մասին աւելի պիտի խօսինք, բայց քեզի ըսեմ, թէ արդիւնքը ինչ եղաւ:

Սուրբ Հոգին սկսաւ մեզի ցոյց տալ այնպիսի բաներ Աստուածաշունչէն, զորս մենք նախապէս երբեք չէինք տեսած: Կիրարկելով այն բաները, զորս Տէրը մեզի կը սորվեցնէր Թագաւորութեան մասին, մենք կրցանք երկուքուկէս տարուան մէջ ամբողջութեամբ դուրս գալ պարտքէն: Մենք սկսանք մեր ինքնաշարժներուն գինը կանխիկ վճարել եւ յիսունհինգ արտավար տարածութեամբ հող մը գնեցինք՝ անոր գինը կանխիկ վճարելով, հող մը, որ լեցուն էր կարծր փայտ ունեցող գեղեցիկ ծառերով

եւ ճահիճներով, ուր կրնայի որսորդություն ընել եւ մանուկներս մեծցնել հիանալի բնութեան մէջ:

Եւ իմ կեանքիս ամենամեծ ուրախություններէն մէկը տեսնելն էր, որ Տրենտան ինչպէս կը ձեւակերպէ եւ կը շինէ իր երազանքի տունը, որ մենք նոյնպէս ունինք առանց պարտքերու:

Այն բոլոր բաներէն ետք, որոնցմէ անցայ եւ տեսնելով Աստուծոյ Թագաւորութեան գործելաձեւը մեր կեանքերուն մէջ, ամէն օր տօնախմբութեան մէջ կ'ապրէինք: Իրականութեան մէջ, խնճողք մինչեւ հիմա չէ դադրած: Մենք տակաւին ամէն օր կը տօնենք Թագաւորութիւնը: Անցեալին մեր մանուկներուն կերակուր գնելու համար բարձիկներու տակ տասը սենթեր փնտոելէն մինչեւ ներկայիս առանց պարտքի ըլլալը եւ ամբողջ աշխարհի շուրջ Աւետարանին տարածման համար հարիւր հազարաւոր տոլարներ կարենալ տալը վստահաբար տօնելու պատճառներ են:

Տրենտան եւ ես շատ մեծ փափաք ունինք մարդոց Աստուծոյ հիանալի Թագաւորութեան մասին պատմելու: Ատիկա էր պատճառը, որ ես առաջին հերթին Ալպանիա գացի:

Ինչպէս նշեցի, երբ Ալպանիայի մէջ Աստուած ինձի խօսեցաւ ազգերուն երթալու մասին, շփոթեցայ: Ինչ կը նշանակէր ատիկա: Այդ ժամանակ ես կը հովուէի այն եկեղեցին, որ Տրենտան եւ ես հիմնած էինք տասը տարիներ առաջ: Արդեօք ես պէտք է հրաժարէի եկեղեցիէն եւ սկսէի ճամբորդել:

Աստուծոյ կողմէ տնօրինուած ծանօթացումներու ցանցի մը միջոցով Տրենտան եւ ես ծանօթացանք հեռատեսիլի գործով զբաղող մարդոց եւ ընկերութիւններու, որոնք հեռատեսիլի ծրագիրներու արտադրութեամբ կը զբաղէին: Այդպէս չէ, որ ես զիրենք կը փնտոէի. պարզապէս Աստուած զիրենք մեր դիմացը հանեց: Դարձեալ, ես հեռատեսիլի մէջ ելոյթ ունենալով բնաւ հետաքրքրուած չէի, բայց յիշեցի տեսիլք մը, որ քանի մը տարի առաջ տեսած էի: Մեր եկեղեցւոյ ծառայութիւններէն մէկուն ընթացքին կ'աղօթէի երբ յանկարծ Տէրը ինձի ըսաւ, որ ես հեռատեսիլի եւ ռատիոկայանի ծրագիրներու մէջ ելոյթ պիտի ունենամ: Այդ մասին շատ չմտածեցի, քանի որ այն ատեն այդ երկուքէն որեւէ մէկով հետաքրքրուած չէի, բայց ատիկա

ուշադրութիւնս գրաւեց, եւ Տրենտային ըսի այդ մասին:

Կարճ ըսելով՝ Աստուած հիանալի դոներ բացաւ եւ մեզի հիանալի մարդոց ծանօթացուց, որոնք մեզ քաջալերեցին, որ հեռատեսիլի ծրագիրներու մէջ ելոյթ ունենանք, բայց մենք հեռատեսիլի մասին ոչինչ գիտէինք: Եւ երբ կ'ըսեմ ոչինչ, այսինքն՝ ոչինչ: Բայց զգացինք, որ պէտք է շարունակենք հետեւիլ Աստուծոյ մեզի ցուցուցածին:

Մենք գործիքներ չունէինք եւ նոյնիսկ չէինք գիտեր, թէ ինչպիսի գործիքներ պէտք ունինք նկարահանման համար, բայց այն մարդիկը, զորս Աստուած մեզի բերաւ, գիտէին: Վերջապէս հասանք տեղ մը, ուր պէտք է որոշում առնէինք: Հեռատեսիլի ծրագիրներ արտադրող ընկերութիւն մը մեզի առաջարկեց, որ իրենց հետ համաձայնագիր մը կնքենք, որ արտադրական աշխատանքը ընեն զեղչուած գիներով: Եթերային ժամանակը եւ հեռատեսիլի կայան մը սկսելու բոլոր ծախսերը հաշուելով, ըստ մեր հաշիւներուն, մենք երեք հարիւր հազար տոլարի պէտք ունէինք: Այդ ժամանակ մենք այդ երեք հարիւր հազար տոլարը չունէինք: Բայց ասոր մասին աղօթելէ եւ Աստուծոյ հետ գօտեմարտելէ ետք, վերջապէս «այո՛» ըսի: (Անշուշտ երբ Աստուծոյ հետ կը գօտեմարտիս, երբեք չես յաղթեր):

Ուստի այդ արտադրական ընկերութիւնը մեր քաղաքը եկաւ (անոնց ընկերութեան կեդրոնատեղին Թեքսասի մէջ է), եւ սկսանք նկարահանել մեր առաջին հեռատեսիլի ծրագիրը: Քանի որ նկարահանումի համար յատուկ տեղ մը չունէինք, մեր առաջին տարին ամբողջութեամբ նկարահանեցինք մեր նստասենեակին մէջ, կրակարանին դիմաց: Եթէ ըսեմ, որ շատ պրկուած եւ ճնշուած էի առաջին նկարահանումին ընթացքին, ատիկա թերգնահատանք պիտի ըլլայ: Չէի գիտեր ինչ ակնկալեմ: Եւ միայն հեռատեսիլի նկարահանումը ընելը չէր, որ զիս անհանգիստ կ'ընէր: Պէտք է ամբողջ բովանդակութիւնը պատրաստէի եւ ձեւով մը ամբողջ ծրագիրը ձեւաւորէի, անշուշտ Տրենտային ներդրումով: Արտադրական խումբը շատ լաւ խորհուրդներ տուաւ մեզի եւ մարզեց մեզ, բայց ես տակաւին հանգիստ չէի:

Կը խնդրեմ, որ հասկնաս, թէ ես բնութեանս մէջ համարձակ

անձ մը չեմ, ուստի ինձի համար հեռատեսիլին վրայ երեւնալը իմ հանգիստի գօտիէս բոլորովին դուրս էր: Բացի ասկէ, նկարահանումի օրը արտադրական խումբը շատ շուարած էր: Խումբին ղեկավարը կէս գիշերին գացած էր, քանի որ իր փոքրիկ տղան սպաննուած էր երբ իրենց դրացիին ինքնաշարժը անոր զարկած էր կառուղիին մէջ: Ես այդ մէկը այդ առաւօտ իմացայ, նկարահանումի ժամէն անմիջապէս առաջ: Ես որոշեցի Տրենտային չըսել նախքան արձանագրութեան կատարուիլը: Ունու, ատիկա շատ դժուար բան է:

Յետոյ, արձանագրութենէն անմիջապէս ետք, մեր անձնակազմէն մէկը երբ տղուս՝ Թիմին մոթորսիքլէթը կը քշէր, տեղ մը զարնուած էր: Թիմը վազելով տուն մտաւ եւ կը պոռար ըսելով, թէ Տէյվիսը մեռած է: Ան մեռած չէր, պարզապէս մարած էր, բայց ինչ ահաւոր ձեւ նկարահանումը սկսելու:

Նկարահանումի շաբաթը անցուցինք, եւ հաղորդումը տեղական կայանի մը վրայ սփռուեցաւ: Մենք շարունակեցինք նկարահանել ամիսը մէկ շաբաթ, բայց երկրորդ ամսուան վերջաւորութեան տակաւին դժուար էր մեզի համար. եւ ես անատակութեան եւ խուճապի զգացումներուն հետ կը պայքարէի: Վերջապէս արտադրական ընկերութեան տիրոջ ըսի, որ չեմ կրնար շարունակել: Ան պահ մը ինձի նայեցաւ եւ ըսաւ. «Ո՛ւշ: Պէ՛տք է հեռատեսիլի յայտագիրներ ունենաս»:

Յետոյ ինձի ըսաւ, որ նստիմ, քանի որ կ'ուզէր բան մը ցոյց տալ ինձի: Ան բացաւ հեռատեսիլը եւ դարձուց հեռատեսիլի Քրիստոնէական ցանցերուն բաժինը: Անկեղծ ըլլալու համար, ես Քրիստոնէական կայաններ շատ չէի դիտած, բայց ինչ որ տեսայ այդ օրը, ինձի զգուանք պատճառեց եւ ինձի վերստին մտածել տուաւ Քրիստոնէական հեռատեսիլին մաս կազմելու մասին:

Յայտագիրներէն մէկուն մէջ «սուրբ ձիթաիւղ» կը ծախէին, որ կ'ըսէին, թէ անելի մեծ օծութիւն կը բերէ բարգաւաճելու համար: Ուրիշ յայտագիրի մը մէջ քարոզիչը «օծուած բլիթներ» կը ծախէր, ըսելով, որ իւրաքանչիւր խաճի հետ նոր յայտնութիւն կը ստանաս: Ուրիշ յայտագիրի մը մէջ լսեցի, որ եթէ յաջորդ

երեք վայրկեաններուն ընթացքին նուիրատուութիւն ընես, բարգաւաճելու եռապատիկ օծութիւն կը ստանաս: Ուրիշի մը մէջ, սառած ճաշ կը ծախէին: Իւրաքանչիւր յայտագիր տարօրինակ դրդապատճառ մը կ'առաջարկէր, որպէսզի մարդոց մղէր, որ տան:

Բայց նկատեցի, որ պակսող մասը այն էր, որ անոնցմէ ոչ ոք մարդոց կ'ըսէր, թէ ինչպէս պիտի ստանային իրենց պէտքը՝ թէ իրականութեան մէջ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ: Անոնց կ'ըսէին, որ պէտք է սերմ ցանեն, բայց ես գիտէի, որ մէկը պէտք է մարդոց ըսէր, որ ինչպէս կը հնծեն այդ սերմը:

Փազըլէն բազմաթիւ կտորներ կային, զորս մարդիկ պէտք է գիտնային եթէ յաջողակ պիտի ըլլային: Եթէ պարզապէս մարդոց սորվեցնենք, թէ ինչպէս պէտք է տան, առանց անոնց սորվեցնելու, թէ ինչպէս պէտք է հնծեն, գիտեմ, որ մարդիկ Աստուծոմով յուսախաբ պիտի ըլլան եւ պիտի կարծեն, թէ Ան կը թերանայ իրենց հանդէպ Իր պարտականութեան մէջ երբ ամէն բան չի պատահիր այնպէս ինչպէս անոնք կ'ակնկալեն, որ պատահի:

Մարդիկ պէտք է գիտնան Թագաւորութեան օրէնքները եւ թէ ինչո՞ւ տալը երկրի վրայ Թագաւորութեան առատութեան մէջ քալելու անհրաժեշտ մէկ բաժինն է: Եւ դարձեալ, ակելի կարելորդ այն է, որ անոնք պէտք է գիտնան, թէ տալէն ետք ինչ պէտք է ընեն: Անոնք պէտք է գիտնան ինչպէս իրենց պէտքը պիտի հնծեն Աստուծմէ:

Ես յայտնաբերեցի, որ ես իմ դերս ունիմ խաղալու իմ հունձքիս մէջ —որոնցմէ առաջինը գիտնալն է, թէ ինչ է հաւատքը եւ ինչո՞ւ անոր պէտք ունինք: Պէտք ունէի սորվելու, թէ ինչպէս Սուրբ Հոգին կ'առաջնորդէ զիս դէպի իմ հունձքս եւ թէ ինչքան կարելորդ են հունձքիս ժամանակն ու մանրամասնութիւնները: Յայտնաբերեցի, որ կան հոգեւոր օրէնքներ, զորս պէտք է սորվիլ եւ կիրարկել, ինչպէս նաեւ բնական մարզը կառավարող օրէնքներ, որոնք հունձքին կ'ազդեն:

Այդ բոլոր յայտագիրները այնպէս մը ցոյց կու տային, թէ կարծես դրամը քու նամակատուփիդ մէջ պիտի յայտնուի:

Համաձայն եմ, երբեմն դրամը հրապէս կը յայտնուի նամակատուփիդ մէջ, բայց եթէ ուշադրութեամբ քննես այդ դէպքերը, հոգետոր բանալիներ պիտի գտնես, թէ ինչո՞ւ եւ ինչպէս ատիկա յայտնուեցաւ:

Այդ յայտագիրներէն քանի մը հատը դիտելէ ետք, տեսածներէս ամէջայ: Զարմանալի չէ, որ աշխարհը ուշադրութիւն չի դարձներ: Բայց նոյն ատեն ջղայնացայ: Այդ պահուն անդրադարձայ, որ մարդիկ ինծի պէտք ունին, թէ ես ըսելիք ունիմ:

Որոշեցի հեռատեսիլի ծրագիրս շարունակել, քանի որ պատմութիւն մը ունէի, զոր պէտք է պատմէի: Եւ վերջին տասնչորս տարիներուն ընթացքին կը շարունակեմ հեռատեսիլի յայտագիրներ վարել եւ տեսած եմ տասնեակ հազարաւոր մարդիկ կը յայտնաբերեն Թագաւորութիւնը – ոչ թէ կրօն, այլ Թագաւորութիւնը – եւ անոնք նոյն արդիւնքներուն կը հասնին ինչպէս Տրենտան եւ ես:

Գիտեմ, որ դուն ալ նոյն արդիւնքները ձեռք պիտի բերես:

Այս գիրքը՝ *«Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Առատաձեռնության Զորութիւնը»*, *«Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը»* գիրքերու շարքիս հինգերորդ եւ վերջին գիրքն է: Այս ամբողջ շարքով խանդավառուած եմ եւ այս վերջին գիրքով ալ խանդավառուած եմ:

—Կէրի Քիսի

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Իրիկուն մը մեր ընտանիքը մեր նախասիրած տեղական ճաշարաններէն մէկուն մէջ ընթրիք կ'ընէր: Սպասեակը իր յղութեան վերջին ամիսներուն մէջ եղող երիտասարդ կին մըն էր: Երբ կը պատրաստուէի մեր հաշիւը վճարելու, յանկարծ առաջնորդուեցայ անոր դրամական մեծ նուէր մը տալու, փոխանակ մեր վճարելիք հաշիւին քսաներկուքէն քսանհինգ տոկոսը տալու, որ ես սովորաբար կու տամ: Ուստի դրամական նուէրին վրայ հարիւր տոլար աւելցուցի: Ան առանց նայելու առաւ ստորագրուած *Վիզա* քարտիս թուղթը եւ դէպի խոհանոց գնաց:

Քիչ ետք վերադարձաւ եւ այտերէն արցունքներ կը հոսէին: Վերադարձաւ մեզի շնորհակալութիւն յայտնելու: Մեզի պատմեց, թէ ինչպէս նիւթական նեղութեան մէջ կը գտնուէր եւ կը մտածէր, թէ ինչպէս կրնայ այդ վիճակէն դուրս գալ: Նախքան մեր մեկնիլը, մենք առիթը ունեցանք Քրիստոսի մասին խօսելու եւ իրեն համար աղօթելու:

Պարզապէս մեր առատածեռն ըլլալը բացաւ դուռը անոր սիրտին ծառայելու:

*«Կամ թէ անոր անչափ քաղցրութիւնը եւ համբերութիւնը ու երկայնամտութիւնը կ'արհամարհեն: Չէս գիտեր, թէ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպի **ապաշխարութիւն** կ'առաջնորդէ»:*

—Հռոմայեցիներուն 2.4
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուածաշունչի «Քինկ Ճէյմզ» տարբերակին մէջ Հռոմայեցիներուն 2.4-ը կ'ըսէ, որ Աստուծոյ քաղցրութիւնը մեզ դէպի ապաշխարութիւն կ'առաջնորդէ:

Առատաձեռն ըլլալը Աստուծոյ նման վարուիլ կը նշանակէ:

Մատթէոս 5.45-ը կ'ըսէ.

«Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր զաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ»:

Աստուած բարի է եւ առատաձեռն: Մենք Անոր զաւակներն ենք, եւ Քրիստոսով մեր նոր բնութիւնն ալ առատաձեռն ըլլալ է: Ինչպէս վերը նշուած պատմութեան մէջ տեսանք, առատաձեռն ըլլալը մարդոց ցոյց կու տայ Աստուծոյ սիրտը: Ինչպէս շատ տաք օրուան մը ընթացքին ումպ մը պաղ ջուր խմելը, նոյնպէս առատաձեռն ըլլալը հանգստութիւն եւ յոյս կը բերէ աշխարհի մը, որ կը գտնուի աղքատութեան անապատին մէջ:

Առատաձեռնութեամբ տալու ազդեցութիւնը յստակօրէն կ'երեւի Կորնթոսի եկեղեցիին ուղղուած Բ.Կորնթացիներուն 9.10-15-ի Պօղոսի թելադրանքին մէջ.

«Ուրեմն ան' որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունկը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները: Ամէն բանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առատաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ. որովհետեւ այս պաշտօնին սպասարկումը ո՛չ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շատ շնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Քրիստոսի ւեպարանին ձեր դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առատաձեռն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. ու

պիտի աղերսեն [աղօթեն] ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպարսկալի պարգեւին համար» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ձեր առատաձեռնութիւնը պատճառ կ'ըլլայ, որ մարդիկ զԱստուած փառաւորեն եւ շնորհակալութիւն յայտնեն Անոր : Նկատի առէք, որ Պօղոս կ'ըսէ, թէ առատաձեռն ըլլալը ձեր սպասարկութիւնն (պաշտօնն) է Աստուծոյ:

Պաշտօն կամ սպասարկութիւն բառին սահմանումն է՝ մեծաւորի մը համար գործ մը կամ պարտականութիւններ կատարել կամ իբրեւ ծառայ:¹

Աստուծոյ հանդէպ քու պարտականութեանդ մէկ մասն է, հոս՝ երկրի վրայ, բաժնեկցիլ Անոր սիրտը եւ նախանձախնդրութիւնը մարդոց հանդէպ: Արդիւնքը յստակ է՝ ատիկա մարդոց սիրտերուն կը դպչի եւ զանոնք կը բանայ Յիսուսը ընդունելու:

Կարծեմ բոլորս ալ կը յիշենք դէպք մը, ուր մէկը մեզի օգնութեան հասաւ եւ ատիկա ինչ մեծ նշանակութիւն ունեցաւ մեզի համար:

Կը յիշեմ երբ չորս հազար տոլար տուրք պէտք էր վճարէի երբ տակաւին նոր ամուսնացած էի եւ չէի գիտեր, թէ ո՞ր կէ պիտի բերեմ այդ դրամը: Այդ կացութենէն սարսափած շատ գիշերներ արթուն կը մնայի: Այդ ժամանակ մենք Թալսայի մէջ կը բնակէինք եւ ծրագրած էինք արձակուրդին Օհայօ այցելել:

Երբ հայրս հարցուց, թէ ամէն բան ինչպէս կ'ընթանար, անոր ըսի «Այ. Ար. Էս.»ի (ԱՄՆ-ու ներքին տուրքերու ծառայութեան) վճարելիք գումարիս մասին: Ըսաւ. «Ատիկա լուծելը դիւրին է», եւ չէք մը հանեց եւ իմ անունովս ամբողջ գումարին համար չէք մը գրեց: Անոր անմիջապէս առատաձեռն ըլլալը ինծի հանդէպ այդ վայրկեանին պատճառ դարձաւ, որ ես իմ հայրս նախկինէն աւելի սիրեմ: Քանի որ այդ պահուն ես տեսայ անոր սիրտը ինծի հանդէպ:

Հայրս յաճախ իր սիրտը՝ սէրը կը պահէր: Ան երբեք իր

¹ «Տի Ամերիքըն Հերիթեճ Տիքընըրի աֆ տի Ինկլիշ Լենկուէյճ», Հինգերորդ Հրատարակութիւն

զգացումները բացայայտորեն ցոյց չէր տար մարդոց, ոչ իսկ մօրս: Ամբողջ կեանքիս ընթացքին հայրս երբեք ինձի չէր ըսած, որ կը սիրէ զիս մինչեւ այդ պահը, ինչքան որ կը յիշեմ: Միայն մէկ անգամ երբ մայրս իրեն ըսաւ, որ ըսէ եւ ան վերջապէս ըսաւ՝ հարցը բաւական մեծցնելէ ետք: Մայրս կ'աղաչէր իրեն՝ ըսելով. «Քու սեփական տղուդ չե՞ս կրնար ըսել, որ կը սիրես զինք»: Բայց ան լուռ մնաց:

Վերջապէս երբ մայրս սկսաւ լալ, ան ըսաւ, որ կը սիրէր զիս: Բայց ինձի համար այդ պահուն իր սէրը յայտնելը բաւարար չէր, քանի որ անոր ստիպեցին, որ ատիկա ընէր:

Փոխանակ մեզի բառացիօրէն ըսէր, որ կը սիրէր մեզ, երբեմն հայրս մեզի համար յատուկ բան մը կը գնէր, եւ կարծեմ, թէ մենք չորսս ալ՝ պզտիկներս, գիտէինք, որ մեր հայրը կը սիրէ մեզ: Ես Հօրս սիրտը կը տեսնէի միայն անոր գործերուն ընդմէջէն, գրեթէ երբեք չէի տեսներ անոր ըսածներէն: Ատոնք թանկագին պահեր էին ինձի համար, քանի որ մութ գիշերուան մը մէջ լոյսերու պէս կ'երեւէին ինձի:

Այն օրը, որ ան չէք մը գրեց իմ «Այ. Ար. Էս.»ի (ԱՄՆ-ու ներքին տուրքերու ծառայութեան) պարտքիս համար, սիրտս երախտագիտութեամբ լեցուեցաւ: Արցունքով փաթթուկ ըրի իօրս եւ շնորհակալութիւն յայտնեցի անոր: Անոր պատասխանը զարմացուց զիս: Ըսաւ. «Այնքան ատեն որ ունիմ, կ'ուզեմ օգնել»:

Վստահ եմ, որ դուք ալ ինձի պէս մէկու մը առատաձեռնութեան յիշատակները ունիք, պահեր, որոնք ձեր ուշադրութիւնը գրաւած են: Ուստի ձեր միտքը պահեցէք հետեւեալը.

Առատաձեռնութիւնը մարդոց ցոյց կու տայ քու սիրտդ եւ Աստուծոյ սիրտը անոնց հանդէպ:

Առատաձեռնութիւնը շատ հզօր բան մըն է: Անիկա կը փոխարինէ բառերը՝ անոնցմէ անդին երթալով եւ ուղղակի դէպի սիրտը կ'երթայ: Զարմանալի է ինչպէս կը յիշենք մէկու մը կողմէ մեզի տրուած գովասանք մը կամ նուէր մը:

Կեանքիս առաջին պահերէն մէկը երբ իօրս սիրտը տեսայ, վեցերորդ դասարան էի: Այդ ժամանակ զարմիկս եւ ես պզտիկ

հրթիռները շատ կը սիրէինք, եւ ես կոնաձեւ թափանցիկ քիթով հրթիռ մը գնած էի, որուն մէջ կարելի էր բաներ դնել եւ զայն դէպի երկինք արձակել:

Օր մը զարմիկս եւ ես մտածեցինք գորտ մը դնել կոնաձեւ քիթին մէջ եւ կոնաձեւ քիթը փակցնելիք երիզով մը փակցնել, որպէսզի հրթիռը փոխանակ իր անկարգելը (*փարաշիւթը*) բանար, իյնալով ջախջախուէր: Մեր նպատակն էր տեսնել, թէ ինչ պիտի պատահէր գորտին, որ կարծեմ կրնաս պատկերացնել պատահելիքը:

Հրթիռը արձակեցինք եւ, ի սարսափ մեզի՝ հայրս դուրս ելած էր դիտելու: Մենք գիտէինք, որ ան ուրախ պիտի չ'ըլլար մեր գորտը սպաննելովը:

Հրթիռը վեր բարձրացաւ այնպէս ինչպէս պէտք էր, որ ընէր եւ յետոյ կամարաձեւ դարձաւ եւ քիթին վրայ գետին ինկաւ: Երբ գացի զայն վերցնելու, տեսայ, որ կոնաձեւ քիթը ջախջախուած էր եւ գորտը մեռած էր, ինչպէս կ'ակնկալէի:

Երբ հրթիռը վերցուցի, շուտով մեռած գորտը մէկ կողմ նետեցի, որպէսզի մեր իսկական մտադրութիւնները հորմէս պահէի: Ան մօտեցաւ եւ հրթիռին մասին հարցուց: Տակաւին կը յիշեմ անոր իրական մտահոգութիւնը մեր հրթիռին մասին: Երբ զայն իր ձեռքը առաւ, սկսաւ ինձի ըսել, թէ ինչպէս կրնայի զայն վերանորոգել եւ թէ կը ցաւէր, որ անիկա ջախջախուեցաւ: Յետոյ ան մանրամասն կերպով բացատրեց, թէ ինչպէս կրնայի կոտրուած կտորները վերականգնել: Անոր ծայնին մէջ գտնուող իրական հոգատարութիւնն ու ազնուութիւնը զիս դատապարտեցին իմ ըրած սխալիս համար: Ան երբեք չգիտցաւ գորտին մասին, բայց երբեք չեմ մոռնար անոր մեղմ մտահոգութիւնը իմ անձիս եւ հրթիռիս մասին: Այդ պահուն ուշադրութիւնս գրաւեց այն իրականութիւնը, որ ան իսկապէս ինձմով հետաքրքրուած էր:

Երբեմն Աստուած կը գործածէ մարդիկ, զորս նոյնիսկ չենք ճանչնար, որպէսզի մեզ քաջալերէ եւ մեզի ձեռք երկարէ:

Յատկապէս յիշատակելի ժամանակ մըն էր երբ օր մը Տրենտան եւ ես փասեան թոչուն որսալու գացինք բարեկամներու հետ: Տրենտան եւ ես տակաւին նոր ամուսնացած էինք եւ Թալսայի մէջ կը բնակէինք: Ուսանող եղած տարիներու սենեկակիցներէս մէկը

Քենսըսի մէջ կը բնակէր եւ մեզ հրաւիրեց, որ իրեն միանանք այդ տարուան փասեան թոշուններ որսալու եղանակի բացման օրը: Չափազանց խանդավառուած էի:

Հինգ ժամ քշելէ ետք Քենսըս հասանք, հիանալի որսորդական օր մը անցուցինք, եւ քանի թոշուն, որ մեզի արտօնուած էր որսալ, որսացինք: Բայց Թալսա վերադարձին մեր բարեկամին ինքնաշարժին շարժիչը պայթեցաւ: Հեռու տեղ մը կը գտնուէինք, հողոտ ճամբու մը վրայ եւ տակաւին տունէն ժամեր հեռու էինք: Եթէ երբեք Քենսըս եղած ես, գիտես, թէ ինչպիսի անապատային տեղ մըն է ատիկա:

Մթնցաւ, եւ հեռուն միայն մէկ լոյս տեսանք: Քալելով գացինք ազարակապանին տունը եւ անոր պատմեցինք մեր կացութիւնը: Մեծապէս ցնցուեցայ երբ ան ըսաւ. «Ձեզ ինքնաշարժով տուն կը տանիմ այս գիշեր: Ձեր ինքնաշարժը յետակառքիս վրայ կը դնեմ եւ ձեզ ժամանակին տուն կը հասցնեմ, որպէսզի Երկուշաբթի օրը գործի երթաք»: (Տրենտան առաւօտուն նոր գործի մը պիտի սկսէր, մասնակի ժամանակով ճաշարանի մը մէջ պիտի աշխատէր, եւ ան շատ յուսիսաբ եղած էր, որ կրնար ստիպուիլ հեռաձայնել եւ ըսել, որ պիտի չկարենար երթալ):

Հիանալիօրէն այդ մարդը, որուն ատկէ առաջ երբեք չէինք հանդիպած, հինգ ժամ քշելով մեզ մեր տունը՝ Թալսա տարաւ եւ յետոյ դարձաւ եւ քշելով Քենսըս հասաւ նախքան առաւօտը բացուիլը: Ան ամբողջ գիշերը քշեց:

Երբեք չեմ մոռնար այդ անձնուրաց ազնուութեան արարքը: Ան նոյնիսկ լումայ մը չառաւ վառելանիւթին համար: Ես միշտ երախտապարտ պիտի մնամ այդ մարդուն: Երբ անոր մասին կը մտածեմ, միշտ երախտագիտութեամբ կը մտածեմ անոր նուէրին մասին:

Երբ մարդիկ քու մասիդ կը մտածեն, Աստուծոյ շնորհակալ պիտի ըլլան քու առատաձեռնութեանդ համար:

Վստահ եմ, որ քու կեանքիդ մէջ ալ այդպիսի կացութիւններ պատահած են, զորս կը յիշես: Դուն պիտի յիշես, թէ ինչքան երախտապարտ էիր այն խնամքին եւ հոգածութեան համար, որ մէկը ցոյց տուաւ քեզի: Պօղոս կը փորձէր այդ մէկը փոխանցել

այս եկեղեցիին — անոնց առատաձեռնությունը մարդոց կը հասնէր Աստուծոյ սիրտով եւ պատճառ կը դառնար, որ մարդիկ փառք տան Աստուծոյ եւ շնորհակալութիւն յայտնեն Անոր անոնց ծառայութեան համար:

Երբ Քրիստոսի եկայ, սիրտս փափկացաւ, եւ տեսայ, որ ես իսկապէս մարդիկը կը սիրեմ: Երբ պէտք մը կը տեսնէի, միշտ կ'ուզէի օգնել, բայց շատ նեղացուցիչ էր, որ ընդհանրապէս չէի կրնար այդ մէկը ընել, քանի որ անելորդ դրամ չունէի:

Փորձառաբար կրնամ ըսել, որ մարդոց մեծամասնութիւնը եւս այդպէս կը զգայ: Պարզապէս եթէ խօսիս ամբոխի մը եւ ուղղութիւն խնդրես, տասնեակ մը մարդիկ պիտի ուզեն քեզի օգնել, որ ճամբադ գտնես:

Բայց ինչպէս Աստուածաշունչէն յայտնաբերեցի, առատաձեռն ըլլալը անելի հզօր բան է, քան ինչ որ կը կարծէի: Բ. Կորնթացիներուն 9-ը կարդալով յայտնաբերեցի Աստուծոյ Թագաւորութեան վերաբերող օրէնք մը, որ փոխեց ամէն բան, որ կը մտածէի տալու մասին.

«[...] Այս պաշտօնին սպասարկումը ո՛չ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շար շնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Քրիստոսի անբարանհիւս ձեր դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առաքաձեռն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. ու պիտի աղերսեն [աղօթեն] ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպատմելի պարգեւին համար»:

—Բ. Կորնթացիներուն 9.12-15
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մարդիկ շնորհակալութիւն պիտի յայտնեն Աստուծոյ այն գերազանց շնորհքին համար, որ Ան տուած է անոնց, որոնք առատաձեռն են:

Որպեսզի իսկապէս հասկնանք, թէ Պօղոս ինչ կ'ըսէ հոս, պէտք է մեր բառերը սահմանենք:

**ՄԱՐԴԻԿ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ՊԻՏԻ ՅԱՅՏՆԵՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅՆ
ԳԵՐԱԶԱՆՑ ՇՆՈՐՀՔԻՆ
ՀԱՄԱՐ, ՈՐ ԱՆ ՏՈՒԱԾ
Է ԱՆՈՆՑ, ՈՐՈՆՔ
ԱՌԱՏԱՁԵՐՆ ԵՆ:**

Գերազանց կը նշանակէ՝ մեծ քանակութեամբ կամ բարձր աստիճանի. չափը անցնող, գերազանցող, կամ արտասովոր. գերազանց շքեղութիւն ունեցող կառոյցներ.²

Ինչն է, որ հսկայական քանակութեամբ պիտի ունենաս: Ինչն է, որ արտասովոր պիտի ըլլայ, եւ գերազանց շքեղութիւն պիտի

ունենայ քու կեանքիդ մէջ: Աստուծոյ շնորհքը:

Լաւ, հիմա անցնինք «շնորհք» բառին սահմանումին:

Շնորհք կը նշանակէ Աստուծոյ չշահուած պարգեւը:

Ասիկա շնորհք բառին սովորական սահմանումն է, բայց բնաւ անոր իսկական արժէքը չի ներկայացներ: Աւելի լաւ սահմանում մը տամ քեզի:

Հետեւեալը աստուածային շնորհքի մասին «Ուիքիփիտիա»յէն առնուած մէջբերում մըն է.

Սովորական Քրիստոնէական ուսուցումը կ'ըսէ, թէ շնորհքը չշահուած ողորմութիւն (օրհնութիւն, պարգեւ) է, զոր Աստուած մարդկութեան տուաւ՝ յղկելով Իր Որդին, որ խաչին վրայ մեռնի, այդպիսով յաւիտենական փրկութիւն տալով: Բայց այս սահմանումը ինքնին առանձինը չի կրնար ընդգրկել այն բոլոր իմաստները, որով այս բառը գործածուած է Աստուածաշունչին մէջ: Օրինակ՝ (անգլերէն Աստուածաշունչի «Քինկ Ճէյմզ» տարբերակէն) Ղուկասի 2.40-ը կ'ըսէ. «Մանուկը կը մեծնար ու հոգիով կը զօրանար իմաստութիւնով լեցուած ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր»: Այս օրինակին մէջ

2 Dictionary.com

Երբ շնորհք բառը կը գործածենք չշահուած օրհնութիւն իմաստով, անտրամաբանական կ'ըլլայ, որ անմեղ Քրիստոսը ատոր կարիքը ունենայ:

Ճէյմզ Ռայլ կ'առաջարկէ. «Շնորհքը Աստուծոյ զօրացնող Ներկայութիւնն է, որ քեզի կու տայ կարողութիւնը, որ ըլլաս այն անձը, որ Ան սրտեղծած է քեզ, որ ըլլաս, եւ ընես այն, ինչ որ Ան կանչած է քեզ, որ ընես»: Իսկ Պիլ Կոթըրրօ կ'ըսէ. «Շնորհքը մեզի կու տայ փափաքը եւ զօրութիւնը, որ Աստուած մեզի կու տայ՝ Իր կամքը կատարելու համար»: Այս երկու սահմանումներն ալ լաւ ձեւով կ'արտայայտեն շնորհք բառին իմաստը ամբողջ Աստուածաշունչին մէջ:³

Ուստի կը տեսնենք, որ այս հատուածին մէջ Պօղոս կը խօսի բարգաւաճելու շնորհքին կամ զօրութեան մասին: Այս պարզելը, շնորհքի պարզելը, կարելոր կը նկատուէր, որովհետեւ անկա մարդոց զօրութիւն կու տար, որ բարգաւաճէին: Եւ երբ անոնք, իրենց կարգին, առատաձեռն կ'ըլլային, մարդոց կարիքները կը հոգային, ատիկա պատճառ կ'ըլլար, որ մարդիկ զԱստուած պաշտէին:

Պօղոս իր քննարկումը կ'աւարտէ ըսելով. «Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպատմելի պարգեւին համար»:

Լաւ, սահմանում մը եւս տամ: «Անպատմելի» (indescribable) բառը կը նշանակէ՝ ինչպէս յստակօրէն կը յայտնէ, որ չկան բառեր, որոնք կրնան պէտք եղած ձեւով նկարագրել զայն:⁴ Պօղոս կ'ըսէ, որ շնորհքի պարզելը այդքան լաւ է, քառերէն անդին է, եւ յատկապէս անոնց համար, որոնք այս պարգեւին միջոցով նիւթական օժանդակութիւն կը ստանան:

Ասիկա այն զօրութիւնն է, որ կրնայ քեզ նիւթական կապանքէն ազատագրել: Այս զօրութիւնը, Աստուծոյ շնորհքը, բոլոր հաւատացեալներուն տրամադրելի է:

3 https://en.wikipedia.org/wiki/Divine_grace

4 «Տի Ամերիքըն Հերիթեճ Տիքշընըրի աֆ տի Ինկլիշ Լենկուէճ», Հինգերորդ Հրատարակութիւն

Բայց հարցը հետեւեալն է. մենք կրնանք երկար ատեն խօսիլ այն բանին մասին, որ Պօղոս ըսաւ, որ ընենք՝ տալլ: Բայց եթէ չհասկնանք շնորհքը, որ Աստուծոյ զօրութեամբ բարգաւաճելու զօրութիւնն է, պիտի փախցնենք այն հունձքը, որ Աստուած մեզի համար նախատեսած է: Ատիկա կը նմանի պարտէզոյ անտառին մէջ գտնուող մեծ ծառի մը շուքին տակ ցանելուն, ուր չկայ արեւ, չկայ այդ փափաքելի արդիւնքը բերելու զօրութիւնը:

Տրենտան եւ ես Աստուածաշունչէն պատմութիւններ կը կարդայինք, ուր Աստուծոյ զօրութիւնը կը յայտնուէր եւ կացութիւնը ամբողջութեամբ դէպի լաւ կը փոխէր: Պէտք է խոստովանիմ, որ երբ փոքր էինք, շատ քիչ անգամ լսած էինք, որ այդպիսի պատմութիւններ կը պատահէին մեր եկեղեցիին մէջ: Բացի փրկութենէն, ոչ ոք իրապէս կը խօսէր, թէ ինչպէս կարելի է Աստուծոյ շնորհքը բերել կացութեան մը մէջ:

Կը հասկնամ, որ մեր փրկութիւնը ամենակարեւոր բանն է: Բայց ինչպէս հիմա ըսի, ինծի համար անհրաժեշտ էր, որ այդ նոյն շնորհքը գործէր կեանքիս քուրք մարզերուն մէջ, բայց չէի գիտեր, թէ այդ մէկը ինչպէս պիտի ըլլար: Եւ տգիտութեանս պատճառով, մենք դրամ չունէինք, հիւանդ եւ ընկճուած էինք: Փրկութեան մասին գիտէինք — յաւիտենական փրկութեան մասին լաւատեղեակ էինք — բայց չէինք գիտեր կամ հասկցած չէինք, թէ ինչպէս կրնանք դրախտը մեր կեանքերէն ներս բերել եւ ինչպէս կրնանք Աստուծոյ զօրութիւնը դրսեւորել: Ինչպէս ըսի, մենք ֆինանսապէս կործանուած էինք:

Բայց Աստուած ինծի հետեւեալը ըսաւ երբ այդ օրը ինծի Թագաւորութեան մասին խօսեցաւ. «Դուն այս խառնաշփոթ վիճակին մէջ ես, որովհետեւ երբեք չես սորված, թէ Իմ Թագաւորութիւնս ինչպէս կը գործէ»:

Այլ խօսքով, Ան կ'ըսէր, որ ես չէի գիտեր ինչպէս Թագաւորին իշխանութիւնը պիտի արձակեմ երկրի վրայ: Երբեք չէի սորված ինչպէս ատիկա ընել կամ նոյնիսկ որ կրնամ ատիկա ընել: Բնաւ գաղափար չունէի, թէ ինչպէս կարելի էր օգտուիլ շնորհքէն, Աստուծոյ զօրութենէն:

Օ'հ, չմոռնամ ըսելու, որ այն օրը երբ Աստուած ինծի հետ

Թագաւորութեան մասին խօսեցաւ, ուրիշ բաներ ալ ըսաւ: Ան շարունակեց ըսելով. «Իմ եկեղեցիս կ'ապրի այնպէս, ինչպէս Իսրայէլի որդիները կ'ապրէին երբ գերի էին եւ Փարաւոնին համար աղիս կը շինէին: Անոնք սպրուկներ են: Իմ ժողովուրդս պարտքի տակ է, եւ ես կ'ուզեմ, որ անոնք ազատագրուին»:

Կ'ուզեմ կէտ մը շեշտել հոս՝ դուն երբեք ազատ պիտի չըլլաս մինչեւ որ ֆինանսապէս ազատ ըլլաս: Եւ ինչպէս Տրենտան եւ ես վերջին երեսուն տարիներուն ընթացքին ըսած ենք՝ երբեք քու իսկական ինքնութիւնդ պիտի չյայտնաբերես եւ կեանքիդ հոգեւոր նպատակին մէջ պիտի չքալես, մինչեւ դրամին հարցը չլուծես:

Կ'ուզեմ այս կէտը եւս շեշտել՝ **ԴՈՒՆ ԿՐՆԱ՛Ս ԱԶԱՏԱԳՐՈՒԻՒԼ:**

Ես ատիկա փաստեցի, եւ հազարաւոր ուրիշներ եւս փաստած են: Աստուծոյ շնորհքը ներկայ է քեզի օգնելու: Կան բաներ, զորս կանչուած ես ընելու, զորս իբրեւ ստրուկ երբեք պիտի չկարենաս իրագործել: Դուն պէտք է ֆինանսապէս ազատ ըլլաս ոչ միայն դուն քեզի եւ ընտանիքիդ համար, այլեւ որպէսզի մարդիկ տեսնեն, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէ կեանքէդ ներս, եւ հասուն պտուղներով բեռնաւորուած պտղատու ծառի մը նման, ատիկա մարդիկը դէպի Թագաւորութիւնը պիտի գրաւէ:

Մարդիկ պատասխաններ կը փնտոեն: Անոնք ճշմարիտը, իրականը կը փնտոեն: Անոնք շատ կարիքը ունին Թագաւորութիւնը տեսնելու եւ ոչ թէ կրօն:

Պիտի պատմեմ խօսակցութիւն մը, որ անցեալ օրը ունեցայ հիւանդապահուիկի մը հետ: Իրականութեան մէջ երկու հիւանդապահուիկներու հետ:

Մայրս ութսունութը տարեկան է եւ բաւական լաւ վիճակի մէջ է, բայց ան քալած ատենը օգնութեան պէտք ունի, ինչպէս կրնաք պատկերացնել: Ուստի օր մը զինք քանի մը բժիշկներու հետ ժամադրութեան պիտի տանէի:

**ՄԱՐԴԻԿ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԿԸ
ՓՆՏՈՒՆ: ԱՆՈՒՔ
ՃՇՄԱՐԻՏԸ, ԻՐԱԿԱՆԸ
ԿԸ ՓՆՏՈՒՆ: ԱՆՈՒՔ
ՇԱՏ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻՆ
ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ
ՏԵՍՆԵԼՈՒ ԵՒ ՈՉ ԹԷ
ԿՐՕՆ:**

Երբ առաջին ժամադրության ընթացքին հիանդապահուիլին հետ կը խօսէի, ան ինձի հարցուց, թէ ինչ գործով կը զբաղիմ: Անոր պատմեցի մեր եկեղեցիին մասին ինչպէս նաեւ մեր ֆինանսական ընկերութեան մասին եւ թէ ինչպէս մենք մարդոց կ'օգնենք, որ իրենց պարտքէն դուրս գան: Ատիկա անոր ուշադրութիւնը գրաւեց: Ապա ան ինձի ըսաւ, որ դժուարութեան մէջ էր, մեծ պարտքերու տակ էր, եւ բնաւ գաղափար չունէր, թէ ինչպէս պիտի գոյատեւէր:

Երբ երկրորդ բժիշկի ժամադրութեան գացի այդ օրը, հոն գտնուող հիանդապահուիլին հետ գրեթէ նոյն խօսակցութիւնը ունեցայ: Անոր աչքերը արցունքներով լեցուեցան երբ ան ինձի կը պատմէր իր ֆինանսական կացութեան մասին:

Բարեկամ, անոնք յատուկ մարդիկ չեն: Այս է Ամերիկայի կեանքը այսօր:

Սիրտիս մէջ ունիմ մեծ փափաք մարդոց օգնելու, որ հասկնան, թէ աւելի լաւ ձեւ մը կայ կեանքը ապրելու — Թագաւորութեան ձեւը:

Երբ Տրենտան եւ ես սկսանք Աստուծոյ Թագաւորութեան մասին սորվիլ եւ սկսանք կիրարկել այն, ինչ որ Աստուած մեզի կը սորվեցնէր Թագաւորութեան մասին, մեր կեանքերը արմատապէս փոխուեցան: Մենք սկսանք տեսնել, թէ ինչպէս այն շնորհքը, որուն մասին Պօղոս կը խօսի, կը յայտնուի մեր կեանքերուն մէջ:

Գիշեր մը մեր անձնական գործը սկսելու մասին երազ մը տեսայ, ուր մարդոց պիտի օգնէինք, որ իրենց պարտքերէն դուրս գան: Ատիկա անտրամաբանական է, չէ՞: Բուն այն անձը, որ չի գիտեր ինչպէս դրամին հետ վարուիլ, հիմա պիտի վարէ ընկերութիւն մը, որ մարդոց ցոյց պիտի տայ ինչպէս պարտքէն դուրս գալ: Միայն Աստուած կրնայ ատիկա ընել, չէ՞:

Կրնաս հարց տալ. «Ինչպէս ատիկա պատահեցաւ: Ինչպէս գիտցար ինչպէս պարտքերէն ազատիլ, որ կարենաս իրապէս ուրիշներու օգնել, որ իրենց պարտքերէն ազատին»: Ատիկա շատ լաւ հարցում է:

Կարճ ձեռով ըսելով՝ Սուրբ Հոգին ինձի ցոյց տուաւ, թէ ինչպէս կարելի է ընել ատիկա:

Անշուշտ ես սորվելիք բաներ ունէի բնական աշխարհին մէջ, եւ յետոյ մարդիկ ինձի սորվեցուցին, թէ ինչպէս պէտք է ընկերութիւնս հիմնեմ, բայց Սուրբ Հոգին առաջնորդեց դէպքերուն ընթացքը եւ այն իւրայատուկ ռազմավարութիւնները եւ ձեւերը, զորս կը գործածէինք՝ մարդոց օգնելու համար: Այդ ընկերութիւնը շատ արագ վերելք ունեցաւ եւ անիկա է, որ ֆինանսաւորեց մեր ֆինանսական ազատութիւնը:

Ի միջի այլոց, գիտեմ ինչ կը մտածես՝ մենք բաւական մեծ գումար պահանջած պէտք է ըլլանք մարդոցմէ՝ իրենց օգնելու համար եթէ ատիկա էր, որ մեզի հայթաթեց այն բոլոր անհրաժեշտ գումարները, որոնց պէտք ունէինք՝ ազատ ըլլալու համար:

Ո՛չ: Ինչպէս ըսի, Սուրբ Հոգին մեզի տուաւ շատ իւրայատուկ գործարքի օրինակ մը, որ հետեւեալն է.

Մենք մեր յաճախորդներուն հետ ՁՐԻ կ'աշխատինք:

Ինչպէս կրնամ գումար գանձել մէկէ մը, որ արդէն դժուարութիւն ունի իր ծախսերը վճարելու, եթէ իրեն պիտի օգնեմ, որ իր պարտքերէն ազատի: Ո՛չ, ատիկա չեմ կրնար ընել: Աստուած իմ ընկերութիւնս ֆինանսաւորելու տարբեր ձեւ մը տուաւ ինձի: Եղած չէ եւ երբեք ալ պիտի չըլլայ, որ իմ ընկերութիւնս գումար պահանջէ՝ իւրաքանչիւր յաճախորդի համար յարմարեցուած՝ պարտքերէն ազատելու ծրագիր մը մշակելու համար: Իմ ընկերութեանս մասնագիտութիւնն է յաճախորդներուն ցոյց տալ, թէ ինչպէս կրնան եօթը տարիէն առաջ իրենց պարտքերէն ազատիլ, ներառեալ իրենց տան պարտքը, ընդհանրապէս առանց իրենց եկամուտը փոխելու:

Մենք ոչ թէ մեր յաճախորդներուն վրայ կը յենինք, այլ՝ տասնեակ մը ընկերութիւններու, ծախողներու եւ մասնագէտներու, զորս մենք ընտրած ենք՝ մեր յաճախորդներուն լուծումներ եւ վերակազմաւորելու ընտրութիւններ տալու համար: Անոնք մեզի կ'օգնեն, քանի որ մենք մեր յաճախորդներուն իրենց մասին ծանուցում կ'ընենք:

Օրինակի համար, մեր վերակազմաւորման գործընթացին մէջ, եթէ ես գիտեմ, որ այսինչ ընկերութիւնը կրնայ իմ յաճախորդիս ապահովագրական գումարը կէսին չափ կրճատել, անոր պիտի ըսեմ, որ այդ ընկերութեան դիմէ: Հիմա իմ յաճախորդս կրնայ անձամբ այդ ընկերութեան հետ խօսիլ եւ ինքնուրոյն որոշում կայացնել, թէ արդեօք ինք հետաքրքրուամ՞ է անոր աժան գիներով, իբրեւ իր հաշիւներուն եւ պարտքերուն վերակազմաւորման ծրագիրին մէկ մասը, կամ ոչ:

Ուստի յաճախորդին համար ամէն բան անվճար է: Եւ ես համոզուած եմ, որ ասիկա մեր ընկերութեան հիանալի աճին նպաստող հիմնական գործօնն էր: Մեր ընկերութեան մասին տեղեկութիւններ քաղելու համար այցելեցէք հետեւեալ կայքէջը՝ forwardfinancialgroup.com.

Մենք նաեւ կ'օգնենք մարդոց, որ գիտնան ապահով ներդրումներ ընելու մասին: Այդ ներդրումները իսկապէս ապահով են. ներդրումներ՝ առանց սակարանի գիներու անկումի վտանգին, որ իրենցմէ կը գողնայ իրենց թանկագին կենսաթոշակը:

Այդ բոլորը ըսի, որպէսզի ըսեմ, որ անցած երեսուն տարիներուն ընթացքին մենք խօսած ենք հարիւր հազարաւոր մարդոց հետ, եւ տեսած ենք այն դժուար վիճակը, որուն մէջ կը գտնուի ամերիկացիներուն մեծ մասը:

Օրինակներէն մէկը ուշադրութիւնս գրաւած է եւ ցոյց կու տայ, թէ ինչպէս մեծ թիւով ամերիկացիներ կ'ապրին:

Կին մը ինծի հեռաձայնեց, որ իրեն այցելեմ, քանի որ ան իր պարտքին հետ կապուած օգնութեան պէտք ունէր: Ես եւ իմ գործընկերներէս մէկը անոր հետ հանդիպեցանք, եւ ես դժուարութիւն կ'ունենայի հաւատալու երբ ան իր վիճակը կը բացատրէր: Ան երեսուներկու տարբեր *քրեպիթ քարպ* ունէր, որոնց բոլորը առաւելագոյն չափով գործածուած էին: (Այո՛, ճիշդ լսեցիք — ան երեսուներկու *քրեպիթ քարպ* ունէր):

Ան յաջողութեամբ շինած էր իր սեփական բանտը, եւ ինձմէ բանալին կը խնդրէր, որ անկէ դուրս ելլէ: Միտքիս մէջ պատասխանը դիւրին էր՝ դադրիր *քրեպիթ քարպ* գործածելէ: Ատիկա լաւ սկիզբ մը պիտի ըլլար: Ուստի անոր ըսի, որ *քրեպիթ*

քարտերը կտրտե՛ն եւ պնդեցի, որ իր եկամուտին սահմաններուն մէջ ապրի: Յետոյ անոր պարտականութիւն մը տուի, որ իր ապրուստի բոլոր ծախսերուն ցանկը կազմէ, որպէսզի գիտնամ ռիկէ պիտի սկսիմ երբ իրեն խորհուրդ տամ: Նաեւ առաջարկեցի, որ *տեպիթ քարտ* (դրամատան մէջ իր ունեցած հաշիւին կապուած քարտ) գործածէ, փոխանակ դրամատնային քարտ գործածէ, որպէսզի իր վիճակը աւելի չվատթարանար:

Երբ իրեն առաջարկեցի, որ իր *քրեպիթ քարտ*երը կտրտե՛ն, անմիջապէս սկսաւ լալ եւ այս ցնցիչ հարցումը հարցուց. «Ինչպէս կօշիկ պիտի գնեմ»:

Ականջներուս չհաւատացի: Ան կերակուրի համար բաւարար դրամ չունէր, բայց տակաւին կօշիկի մասին կը հարցնէր:

Հաւանաբար կը մտածես, որ այդ կինը բացառութիւն է: Նկատի առնելով անոր *քրեպիթ քարտ*երուն թիւը, այո: Բայց ինչ կը վերաբերի ֆինանսական բանտի մէջ գտնուելուն, ան բացառութիւն չէ: Տես Ամերիկայի վերջին վիճակագրութիւնը.

- Ժողովուրդին 57 տոկոսը հազար տոլար չունի դրամատան մէջ:⁵
- 44 տոկոսը չի կրնար վճարել 400 տոլար արժողութեամբ անսպասելի ծախս մը:⁶
- Ամերիկացիներուն 23 տոկոսը չի կրնար իր ամսական վճարումները ընել եւ ամէն ամիս աւելի խոր պարտքերու տակ կը թաղուի:⁷

Բարեկամ, ամերիկացիները ճիշդ Աստուծոյ ըսածին պէս են — անոնք գերի են:

Մտածէ այն բաներուն մասին, որ ստրուկը կ'ընէ:

- Ան իր սեփական գործը չ'ունենար: Թէեւ ան կ'աշխատի եւ շահ կը բերէ, այդ շահը ամէն ամիս պարտատէրերուն

5 Ռէյ Հանընաիա, «Ամերիկացիներուն 57 տոկոսը հազար տոլարէն պակաս ունի իր հնարաւորութեան հաշիւին մէջ», Մարտ 31, 2021, SuburbanChicagoland.com

6 Ճոզֆ Լոլըր, «Ամերիկացիներուն 44 տոկոսը Զի Կրնար Վճարել 400 տոլար Արժողութեամբ Անսպասելի Ծախս մը», Ուաշինկթըն Էկզեմփինըր, Մայիս 19, 2017:

7 Մեկըն Լիոնարտ, «Պիքամ Տեթ Ֆրի», Մայիս 24, 2019

(փոխատուներուն) կը դրկուի, եւ մնացածը հազիւ կը բաւէ, որ ընտանիքը ամիս մը եւս գոյատեւէ:

- Ստրուկները կ'ապրին տուներու մէջ, որ իրենց սեփականը չէ (այսինքն՝ տան պարտքը վճարած չեն):
- Կը քշեն ինքնաշարժներ, որոնք իրենց չեն պատկանիր, որպէսզի գործի երթան եւ վճարեն պարտքը տան մը, որ իրենց չի պատկանիր:
- Կը հագուին հագուստներ, զորս *քրեպիթ քարպով* գնած են, որպէսզի գործի երթան, իրենց սեփականութիւնը չեղող ինքնաշարժին եւ տան պարտքերը վճարեն, ինչպէս նաեւ ուսանողական պարտքը, որ քսան տարիէ ի վեր կը վճարեն:

Հասկցար միտքը:

«Հարուստը աղքատներուն վրայ կը տիրէ ու փոխ անոնողը փոխ տուողին ծառայ կ'ըլլայ»:

– Առակաց 22.7

Գիտէիր, որ մարդոց մեծամասնութիւնը իր գործը չի սիրեր: Իրականութեան մէջ «Կելըփ» ընտրողներու ցանկը կ'ըսէ, որ գործատուներուն 85 տոկոսը կ'ատէ իր գործը:⁸

Ուրեմն անոնք ինչո՞ւ կ'աշխատին իրենց աշխատած վայրին մէջ: Որովհետեւ անոնք ստրուկներ են, եւ ստրուկները ընտրութիւններ չունին:

Ուրեմն ստրկութենէն դուրս գալու միջոց կ'այ: Այո՛:

Ինձի չէն հաւատար: Քեզի ցոյց պիտի տամ:

«[...] Այս պաշտօնին սպասարկումը ո՛չ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շարժնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Քրիստոսի աւերարանին ձեր

8 Սարա Պըրոզ, «Մարդոց 85%-ը կ'ատէ իր Գործը»,- Կ'ըսէ «Կելըփ Փօլ»-ը», Սեպտեմբեր 22, 2017, returntonow.net

դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առաքածոն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. ու պիտի աղերսեն [աղօթեն] ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպարսկի պարգեւին համար»:

—Բ. Կորնթացիներուն 9.12-15
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եկէ՞ք կեդրոնացած մնանք այդ պատասխանին վրայ՝ Աստուծոյ շնորհքը բարգաւաճելու զօրութիւնն է:

Նաեւ պէտք է գիտակցինք, որ թշնամին կ'ուզէ, որ պարտքի մէջ մնաս եւ երբեք չգիտնաս, որ ինչպէս այդ վիճակէն դուրս պիտի գաս: Այդ պատճառով Միացեալ Նահանգներուն մէջ կան 1.1 եռիլիոն քրետիթ քարտեր, որոնք գործածութեան մէջ են:⁹ Նաեւ այդ է պատճառը, որ ամէն տարի չորսէն մինչեւ ութը երկիլիոն քրետիթ քարտի առաջարկներ կ'ըլլան:¹⁰

Կայ մէկը, որ կ'ուզէ, որ պարտքի տակ ըլլաս, եւ միայն դրամատուներն ու փոքրաքանակ վաճառականները չեն, որ քեզի կ'աղաչեն, որ իրենց քարտերը փորձես:

Սատանան գիտէ, որ եթէ կարենայ քեզ պարտքի տակ պահել, դուն երբեք պիտի չկարենաս քալել քու հոգեւոր կոչումիդ մէջ, որ գիտէ, թէ կործանում պիտի բերէ իր իշխանութիւններուն վրայ:

Ուստի կարճ վերաքաղ մը ընեմ: Այս գիրքը առատածեռն ըլլալու մասին է, համաձայն ես: Այո՛ եւ ո՛չ: Այո՛, մենք շուտով պիտի խօսինք տալու եւ առատածեռն ըլլալու բոլոր օգուտներուն մասին: Բայց տալը ինքնին պատասխանը չէ: Դուն պէտք է գիտութիւնը ունենաս, թէ ինչպէս պիտի հասնիս այդ շնորհքին, Աստուծոյ զօրութեան:

Ուստի նորէն պիտի ըսեմ՝ ինքնին տալու բանածելը, միայն

9 Բէյնըր Տի Պեյթ, «Քրետիթ Քարտ էնտ Տեպիթ Քարտ Նամպըր ին տը Եու.Էս. 2012-2018», Դեկտեմբեր 16, 2020, statisa.com/statistics

10 Պոպ Պրայըն, Նոյեմբեր 24, 2015, businessinsider.com

իրբու բանաձեւ, բանալին չէ: Ատիկա անշուշտ մէկ մասն է, բայց դուն եւ ես պէտք ունինք այդ գերբնական, արտասովոր բարգաւաճելու զօրութեան, որ կը կոչուի շնորհք:

Տասթընը եւ Քենտըլը յայտնաբերեցին այն բանը, որուն մասին կը խօսիմ: Անոնք երիտասարդ զոյգ մըն են, որոնք չէին հասկցած, որ իրենց ֆինանսականին մէջ Աստուծոյ շնորհքին պէտք ունին մինչեւ որ շատ նեղ կացութեան մը մատնուեցան: Անոնք պարզապէս նայած էին նոր գործարքի գաղափարի մը եւ որոշած էին սկսիլ: Ծմիսը: Հարիւր յիսուն հազար տոլար, եւ բոլորը պարտք էր:

Նոյն ամսուան մէջ, որ անոնք այդ ընկերութիւնը գնեցին, «Այ. Ար.Էս.»ին կողմէ հաշուեքննութեան ենթարկուեցան եւ յիսուներեք հազար տոլար յետադարձ տուրք պահանջուեցաւ իրենցմէ: Տասթընը կ'ըսէ, որ իրենք զիրենք երկու հարիւր հազար տոլար պարտքի մէջ գտան, որմէ ելք չկար, մանաւանդ որ նախքան այդ ընկերութիւնը գնելը, իրենք արդէն իսկ դրամական նեղ կացութեան մէջ էին:

Անոնք տակաւին նոր դրամ փոխ առած էին՝ իրենց վերջին մանուկին հիւանդանոցի ծախսերը վճարելու համար: Տուրքային հաշուեքննութիւնը զիրենք ֆինանսական շատ մտահոգիչ վիճակի մը մէջ ձգեց, եւ Տասթընը դժուարութիւն կ'ունենար լուծումներ գտնելու:

Փնտռելէ ետք, ան վերջապէս երեսուն հազար տոլար պարտք առնելու առաջարկ մը գտաւ, դիմելէ ետք ընդունուեցաւ, եւ այդ մասին կնոջ կարծիքը հարցուց: Սակայն ան չէր գիտեր, որ Քենտըլը «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Հանգիստին Զօրութիւնը» (*Your Financial Revolution: The Power of Rest*) խորագիրով գիրքս կը սերտէր եւ անոր վրայ կը խոկար, որ նոյնպէս կը խօսի Աստուծոյ շնորհքին հասնելու մասին:

Ուստի երբ Տասթընը իր պարտք առնելու գաղափարը անոր յայտնեց, Քենտըլը յուսալքուեցաւ, քանի որ կը յուսար, որ ան Աստուծոյ պիտի դիմէր, փոխանակ պարտքի դիմելու: Կինը որոշեց անոր հետ խօսիլ իրենց որոշումին մասին եւ զինք քաջալերեց, որ

Աստուծոյ վստահի: Տասթընը շնորհալիօրէն ընդունեց իր կնոջ իմաստութիւնը:

Երբ աղօթեցին, լսեցին Սուրբ Հոգիին ձայնը, որ կ'ըսէր, որ սերմ ցանեն: Անշուշտ այդ ժամանակ անոնք դրամ չունէին, որ Աստուծոյ իրենց ցոյց տուած գումարը վճարէին, ուստի յաջորդ քսանութիւն օրերուն ընթացքին աշխատեցան, որպէսզի բաւարարաչափ դրամ շահէին Աստուծոյ իրենց ցոյց տուած գումարը ցանելու:

Ինչ եղաւ արդիւնքը: Անոնց ընկերութիւնը մեծ վերելք արձանագրեց:

Յաջորդ տարի անոնք կրցան իրենց պարտքին հարիւր եօթանասունհինգ հազար տոլարը վճարել եւ Տասթընը կ'ըսէ, թէ այդ տարի ինք ՏԱՍՆԵՐԿՈՒ անգամ աւելի դրամ շահեցաւ, քան երբեւէ կրցած էր շահիլ իր ամբողջ կեանքին ընթացքին:

Քենտրըլը եւ Տասթընը յայտնաբերեցին, որ Թագաւորութեան ձեւը մի'շտ կը յաջողի:

Ինչն էր անոնց լուծումը: Աստուծոյ Թագաւորութիւնը եւ շնորհքը:

Ինչն է քու լուծումդ: Աստուծոյ Թագաւորութիւնը եւ շնորհքը:

ԳԼՈՒԽ 2

ԼՈՒԾՈՒՄԸ ՇՆՈՐՀՔՆ Է

Նախորդ գլուխին մէջ մենք ըսինք, թէ ինչպէս առատաձեռնութիւնը հոգեւորապէս կ'ազդէ մարդոց վրայ — ինչպէս աստիկա կը փափկացնէ անոնց սիրտերը քեզի եւ Աստուծոյ հանդէպ երախտագիտութեամբ: Մենք նաեւ շեշտեցինք Պօղոսի ըսածը, թէ առատաձեռն ըլլալու այդ կարողութիւնը Աստուծոյ շնորհքին արդիւնքն է մեր կեանքերուն մէջ:

«Ու պիտի աղերսեն [աղօթեն] ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերազանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպարմելի պարգեւին համար»:

—Բ.Կորնթացիներուն 9.14-15

Մենք խօսեցանք այն շեշտին մասին, որ Պօղոս կը դնէ «գերազանց» բառին վրայ երբ ան կը նկարագրէ այն շնորհքը, որ Աստուած մեզի տուած է՝ բարգաւաճելու համար: Մենք տեսանք, որ շնորհք կը նշանակէ բան մը իրագործելու արտասովոր զօրութիւն: Պօղոս Աստուծոյ շնորհքին այս զօրութիւնը անպատմելի պարգեւ կը կոչէ: Կարծեմ ամէն մարդ համաձայն է, որ եթէ Աստուած իրեն օգնէ, որ կեանքի մէջ բարգաւաճի, աստիկա հիանալի առաւելութիւն մը պիտի ըլլայ:

Որպէսզի քեզի օգնեմ, որ հասկնաս այն գործին մեծութիւնը, որ Աստուած կ'ուզէ ընել կեանքիդ մէջ եւ այն հսկայական զօրութիւնը, որ տրամադրելի է քեզի, եկուր քանի մը համար ետեւ երթանք եւ սկսինք կարդալ վեցերորդ համարէն:

«Բայց սա՛ գիտցէք, թէ՛ ան՝ որ խնայելով կը սերմանէ՛ խնայելով ալ պիտի հնձէ, եւ ան՝ որ առափաձեռնութեամբ կը սերմանէ՛՝ առափաձեռնութեամբ պիտի հնձէ: Իւրաքանչիւրը թող տայ՝ ինչպէս որոշած է իր սիրտին մէջ, ո՛չ թէ՛ տրտմութեամբ կամ հարկադրաբար. որովհետեւ Աստուած կը սիրէ ցնծութեամբ տուողը: Եւ Աստուած կարող է բոլոր շնորհքներով ճոխացնել ձեզ, որպէսզի դուք՝ ամէն բանի մէջ ամէն ատեն լման ինքնաբաւութիւն ունենալով՝ ճոխանաք ամէն բարի գործով, ինչպէս գրուած է. “Սկոռեց եւ աղքատներուն տուաւ. անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ”։ Ուրեմն ան՝ որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունտը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները: Ամէն բանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առափաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ»:

—Բ.Կորնթացիներուն 9.6-11

(Անգլերէն Աստուածաշունչի «Ի.Էյչ.Վի.» տարբերակէն)

Հոն կը սկսի իրապէս հետաքրքրական մասը:

Կը տեսնենք, որ այդ նոյն «շնորհք» բառը կը գործածուի հոս, բայց այս հատուածին մէջ Պօղոս կ'աւելցնէ «բոլոր» ածականը, որպէսզի ընթերցողին օգնէ, որ հասկնայ, թէ Աստուծոյ «ԲՈԼՈՐ» (ամբողջ) զօրութիւնը այդ «շնորհք» բառին ետին կը գտնուի: Հոս Պօղոս յստակօրէն կը խօսի տալու եւ ստանալու մասին եւ կը շեշտէ, որ երբ տաս, Աստուծոյ բոլոր շնորհքները տրամադրելի պիտի ըլլան քեզի՝ հունձքը հաւաքելու համար:

Աստուծոյ բոլոր շնորհքները կը նշանակէ՛ Աստուծոյ ամբողջ զօրութիւնը, Անոր իմաստութիւնը, բարեհաճութիւնը, եւ խորաթափանցութիւնը հիմա հասանելի են քեզի, որպէսզի այդ սերմին հունձքը գրաւես: Չեմ գիտեր դուն ինչպէս կը զգաս, բայց ատիկա կը խանդավառէ՛ զիս:

Բայց տակաւին ատիկա չի նշանակեր, որ հունձքը ինքն իրեն պիտի պատահի:

Եթե շատ հարուստ հողագործ մը քեզի ըսէ, որ իր միլիոնաւոր տոլարներ արժող հողագործութեան գործիքները քեզի փոխ պիտի տայ, որպէսզի ցանես եւ բերքը հաւաքես, բայց դուն հողագործութեան մասին ոչինչ գիտես, ասիկա ոչ մէկ օգուտ պիտի ունենայ քեզի համար:

Աստուած Իր ամբողջ զօրութիւնը տրամադրած է մեզի, բայց մենք ալ դեր մը ունինք խաղալիք, ճիշդ ինչպէս հողագործը գիտէ, որ հողագործութեան մէջ շատ աւելին կայ, քան պարզապէս սերմը հողին մէջ նետելը:

Առայժմ, միակ բանը, որ կ'ուզեմ, որ հասկնաս, այն է, թէ Աստուծոյ ամբողջ կարողութիւնը պատրաստ կեցած է՝ ոչ միայն քեզի օգնելու, որ ցանելէդ ետք հնձես, այլեւ նոյնիսկ քեզի օգնելու, որ գիտնաս երբ եւ որպէս պէտք է ցանես: Եւ այդ պատճառով, դուն անսահման ֆինանսական ապագայ մը ունիս:

**ԵԹԷ ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ԳՈՐԾԸ ԸՆԵՍ,
ԱՍՏՈՒԱԾ ԱԼ ՔՈՒԿԴ
ՊԻՏԻ ԸՆԷ:**

Պէտք է մէկ քայլ անդին երթանք եւ խօսինք այս հատուածին մէջ գտնուող այն յստակ յայտնութեան մասին, որ կը վերաբերի առաջին հերթին դրամ ունենալու նպատակին:

«[...] Եւ Աստուած կարող է բոլոր շնորհքներով ճոխացնել ձեզ, որպէսզի դուք՝ ամէն բանի մէջ ամէն ատեն լման ինքնաբաւութիւն ունենալով՝ ճոխանաք ամէն բարի գործով [...]»:

Կը տեսնենք, որ առաջին բանը, որ Աստուած կ'ըսէ, բոլոր մեզի պէտք եղածը ունենալն է: Նկատի առ, Անիկա միայն դրամի մասին չի խօսիր: Ան կ'ըսէ՝ ամէն բանի մէջ ամէն ատեն:

Ես միշտ այսպէս կ'ըսեմ. «Դուն Աստուծոյ գործը ըրէ, Աստուած ալ քուկդ պիտի ընէ»: Ուստի «ամէն բանի մէջ ամէն ատեն» ինծի համար կը նշանակէ, թէ ինծի պէտք եղած բաներէն երբեք պիտի չզրկուիմ, անկախ անկէ, թէ ինչ կը պատահի տնտեսութեան մէջ:

Նաեւ երբ Աստուած կ'ըսէ՝ քու կարիքներդ պիտի հոգամ, Ան ըսել չ'ուզեր, որ հազիւ պիտի գոյատեւես:

«[...] Դուն շար ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ պիտի չառնես: Տէրը ժողովուրդներու գլուխ պիտի ընէ քեզ եւ ո՛չ թէ՛ պոչ: Դուն միշտ պիտի բարձրանաս ու բնաւ վար պիտի չիջնես, եթէ քու Տէր Աստուծոյդ պատուիրանքները մտիկ ընելով պահես ու կատարես, որոնք ես այսօր քեզի կը յայտնեմ»:

– Բ.Օրինաց 28:12-13

Երբ Աստուած քու բոլոր պէտքերուդ հոգացուելուն մասին կը խօսի, Ան կը խօսի կատարեալ ֆինանսական ազատութեան մէջ քալելու մասին՝ առանց որեւէ պարտքի, մեծ եռանդով քու պարտականութեանդ մէջ քալելու, եւ երկրին տուած բերքին լաւագոյնը ուտելու մասին: Ատիկա նաեւ կը նշանակէ, թէ դուն կատարեալ առողջութիւն եւ խաղաղութիւն պիտի ունենաս:

Երկրորդ՝ պէտքերդ հոգացուելէ ետք, դուն այլեւս պարզապէս պիտի չգոյատեւես, այլ պիտի ծաղկիս եւ բարգաւաճիս.

«Ամէն բանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առատաձեռնութեամբ» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):
(«Ամէն ձեռով պիտի հարստացնէ՛ ձեզ, որպէսզի ամէն ձեռով առատաձեռն ըլլաք»)

Վերջին արդիւնքը նիւթական կարողութիւն ունենալն է, որպէսզի առատաձեռն ըլլանք, մարդոց տանք եւ անոնց օգնենք, եւ երկրի վրայ Աստուծոյ պարտականութիւններուն նեցուկ կանգնինք:

Աստուծոյ նպատակն է Իր սիրտը մարդոց ճանչցնել եւ մարդոց սիրտերը Իրեն հանդէպ շարժել:

Ինչպէս միշտ կ'ըսեմ. «Աստուծոյ գործը մարդիկն են»:

Կ'ուզեմ անդրադառնալ սխալ ենթադրութեան մը, որ շատ յաճախ կը լսեմ:

Վերջերս շատ հարուստ մարդու մը հետ կը խօսէի, եւ ըսաւ. «Աւելի դրամի պէտք չունիմ. շատ ունիմ»:

Գիտեմ ինչ ըսել կ'ուզէր, թէ՛ իր պէտքերը շատ լաւ հոգացուած են եւ անձնապէս ինք աւելի դրամի պէտք չունի: Բայց իրականութեան մէջ ան աւելի դրամի պէտք ունի՝ եւ մե՛ծ գումարներու:

Եթէ միայն կը նայինք, թէ դրամը ինչ կրնայ ընել անձնապէս մեզի համար, ապա կ'ենթադրեմ, որ կը հասնինք տեղ մը, ուր աւելի դրամ շահելու մեր ձգտումը կը պակսի: Բայց եթէ հասկնաս այն սիրտը, որ Աստուած ունի մարդոց հանդէպ եւ միլիոնատերներու հասնելու համար՝ որոնք տակաւին չեն յայտնաբերած այն ճոխ, արժէքաւոր կեանքը, որ Թագաւորութեան մէջ կը գտնուի եւ տակաւին եթէ այդ պահուն մեռնին, պիտի երթան Դժոխք, որ իրական տեղ մըն է, այն ատեն պիտի հասկնաս, որ Աստուած աւելի՛ դրամի պէտք ունի:

Պիտի կրկնեմ. «**ԱՍՏՈՒԱԾ ԱԻԵԼԻ՛ ԴՐԱՄԻ ՊԷՏՔ ՈՒՆԻ**»:

Տակաւին շատ գործ կայ ընելիք:

«[...] Եւ Աստուած կարող է բոլոր շնորհներով ճոխացնել ձեզ, որպէսզի դուք՝ ամէն բանի մէջ ամէն ապեն լման ինքնաբաւութիւն ունենալով՝ ճոխանաք ամէն բարի գործով [...]» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ամէն տեսակի բարի գործեր կան, զորս պէտք է ընես: Ամէն տեսակի բարի գործերը Թագաւորին համար կատարուած գործերն են: Իրականութեան մէջ դուն շատ յատուկ գործ մը ունիս ընելու ըստ Եփեսացիներուն 4.7,11-12, որ կ'ըսէ.

«Բայց մեզմէ՛ իւրաքանչիւրին շնորհք մը տրուած է, Քրիստոսի պարգեւած չափով: Եւ ինքը՝ Քրիստոսն էր որ «պարգեւներ բաշխեց մարդոց», որպէսզի ոմանք առաքեալ ըլլան, ոմանք՝ մարգարէ, ոմանք՝ ւեպարանիչ, ոմանք՝ հովիւ եւ ուսուցանող, Աստուծոյ ժողովուրդը պատրաստելու եւ Աստուծոյ ծառայութեան մէջ դնելու համար»:

—Եփեսացիներուն 4.7,11-12
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Գիտե՛ս, շատեր կը փորձեն ֆինանսապէս ազատ ըլլալ, քանի որ առնետավազքէն (միօրինակ, ձանձրացուցիչ, աննպատակ, յոգնեցուցիչ եւ մրցակցութեան մթնոլորտի մէջ աշխատելէն) ձանձրացած են: Անոնք խաղաղութիւն կը փնտռեն: Եւ քանի որ շատեր կ'աշխատին գործեր, զորս իրապէս չեն սիրեր, անոնք կը փնտռեն այն ազատութիւնը, որ դրամ ունենալը պիտի տայ իրենց: Անոնք կը փնտռեն իրենց ուզածը ընելու ազատութիւնը, փոխանակ ընելու այն, ինչ որ պէտք է ընեն: Անոնք կ'ուզեն իրենց շատ սիրած բանին ետեւէն երթալ եւ գտնել սկիզբէն իրենց կեանքին համար նախասահմանուած նպատակը:

Հետեւեալ նախադասութիւնը կը խենթացնէ կրօնաւորները.

«Ամէն ձեռով պիտի հարստացնէ ձեզ»:

Այո՛, այդպէս կ'ըսէ: Դուք պիտի հարստանա՛ք:

«Հարուստ» բառը անշուշտ ենթակայական է, եւ մեր մշակոյթին մէջ ընդհանրապէս սխալ հասկցուած է: Չենք կրնար ըսել, որ մէկը, որ մէկ երկիւիոն տոլար ունի, անլի ուրախ է, քան մէկը, որ հարիւր հազար տոլար ունի: Ո՛չ, «հարուստ» ըլլալը տարբեր մարդոց համար տարբեր բաներ կը նշանակէ: Բայց անշուշտ կ'ենթադրէ, որ մեր բոլոր պէտքերը հոգացուած են, թէ մենք պարտքերէ ազատ կ'ապրինք, եւ երկրին լաւագոյն բարիքները կը վայելենք:

«Եթէ դուք յօժարիք ու հնազանդիք, երկրին բարիքը պիտի ուրէք»:

—Եսայի 1.19

**ՈՒՍՏԻ ԴԱՐՁԵԱԼ,
ԱՍՏՈՒԱԾ Կ'ՈՒՋԷ,
ՈՐ ԱՌԱՏ ՊԱՇԱՐ
ՈՒՆԵՆԱՍ՝ ԵՐԿՐԻ
ՎՐԱՅ ԻՐ ԳՈՐԾԸ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ
ՀԱՄԱՐ:**

Բայց հարուստ ըլլալ միայն դրամ ունենալ չի նշանակեր: Ատիկա նաեւ կը վերաբերի թոռներուս հետ խաղալուս, կնոջս ձեռքը բռնելուս, եւ ուրիշ շատ հիանալի բաներ կեանքի մէջ: Տրենտան եւ ես հինգ հիանալի զաւակներ ունինք, որոնք

բոլորը կը սիրեն զԱստուած եւ ձեռով մը կամ ուրիշ ծառայութիւն ստանձնած են: Մենք բոլորս իրարու մօտ կ'ապրինք, եւ անկեղծօրէն, կը սիրենք իրարու հետ ժամանակ անցընել: Ես ատիկա հարստութիւն կը կոչեմ:

Գիտե՛ս, կրօնաւորները կը կարծեն, թէ շատ դրամ ունենալը ազահութիւն է: Բայց ինչքան ալ շատ դրամ ունենաս, տակաւին ատիկա բաւարար պիտի չըլլայ եթէ Աստուծոյ հետ միասին մարդոց գործին մէջ ես: Միշտ ալ պիտի ըլլան նոր պարտականութիւններ եւ գրաւելիք նոր հողեր:

Ուստի դարձեալ, Աստուած կ'ուզէ, որ առատ պաշար ունենաս՝ երկրի վրայ Իր գործը շարունակելու համար:

Աստուած կ'ուզէ, որ Իրեն համար առատածեռն ըլլաս, մարդոց օգնես, եւ Իր պարտականութիւնները ֆինանսաւորես: Եթէ միշտ առատածեռն պիտի ըլլաս, պէտք է դրամ ունենաս:

Այսինքն՝ միշտը կրնայ նշանակել ամէն օր կամ օրական քանի մը անգամ: Եկէք անկեղծ ըլլանք — ատիկա ընելու համար, ամիսէ ամիս հազիւ ապրուստդ ապահովող անձ մը պէտք չէ ըլլաս. ծախսերդ վճարելէն անդին աւելորդ դրամ պէտք է ունենաս, շատ աւելին: Կարծեմ ամէն մարդ այս ըսածիս համաձայն է:

Բայց եկէք խօսինք ամէնէն կարեւոր կէտին մասին ինչ կը վերաբերի առատածեռնութեան կամ ընդհանրապէս տալուն.

Պէտք է վախին հարցը լուծես երբ կու տաս:

Չըսի, որ պէտք է հանդուրժես վախը: Ըսի՝ պէտք է վախին ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵՍ Երբ կու տաս: Եւ վախին հարցը լուծելու լաւագոյն միջոցը ճշմարտութիւնը գործածելն է:

Ուստի ի՞նչ վախ կայ տալու մէջ: Պարզ ըսած՝ այն վախը, որ մենք մեզի համար բաւարար պիտի չունենանք, չէ՛:

Հաւանաբար այսպէս մտածես՝ ես այդ դրամին պէտք ունիմ, եւ անշուշտ անոր պէտք ունիս: Բայց Աստուած ալ անոր պէտք ունի: Եւ Աստուած քեզմէ պիտի չխնդրէ, որ դրամդ Իրեն տաս, որպէսզի զայն գործածէ առանց փոխարէնը քեզի խոստում մը տալու,

այսպես ըսած՝ շահ մը քու ըրած ներդրումիդ համար, չէ՛: Կարծեմ Ան այդ մէկը բաւական յստակ ձեւով կ'ըսէ Իր Խօսքին մէջ.

«Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի. լաւ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը [...]»:

—Ղուկաս 6.38

Աստուած շատ աւելի երկար ժամանակ կ'անցընէ քեզի բացատրելով Իր Թագաւորութեան նեցուկ կանգնելու օգուտին մասին, քան՝ քեզի թելադրելով, թէ ինչ պէտք է ընես: Ան պարզապէս մէկ բառ կ'ըսէ. «Տուէ՛ք», բայց քսաներեք բառ կը գործածէ՝ անոր օգուտը բացատրելու համար քեզի: Կարծեմ ես այդ ձեւով գրուած հրեւէ պայմանագիր կը ստորագրեմ:

Լաւ գիտցիր, որ Աստուած անձնապէս շահագրգռուած է քու յաջողութեամբդ: Մտածէ՛. «Աստուած հմրկէ պիտի գտնէ այն դրամը, որուն Ինք պէտք ունի՝ Իր ծրագիրը ֆինանսաւորելու համար»:

Այդ դրամը քեզմէ, ինձմէ եւ մեզի պէս ուրիշ հաւատացեալներէ պէտք է գայ անշուշտ: Սատանային մարդիկը Աստուծոյ ծրագիրը պիտի չֆինանսաւորեն:

Յաւալին այն է, որ հաւատացեալներուն մեծամասնութիւնը կ'ըսէ, որ սխալ է Աստուծմէ շահ ակնկալելը իրենց տուածին դիմաց: Անոնք կը հաւատան, որ Աստուծոյ տալը եւ փոխարէնը բան մը ակնկալելը ազահութիւն է եւ ատիկա կը պակսեցնէ զԱստուած պաշտելու մաքուր արարքին արժէքը:

Կը հաւատան, որ հողագործը բոլորովին սխալ կ'ընէ երբ կը հաւատայ, որ իր տալը իրեն եւ իր ընտանիքին համար շահ պիտի արտադրէ: Ան պարզապէս կը գործածէ հողագործութեան վերաբերող օրէնքները, զորս Աստուած տուած է իրեն:

Աստուած կ'ուրախանայ մեր բարգաւաճումը տեսնելով: Ան մեզի տուաւ ցանելու եւ հնձելու օրէնքը՝ մեր օգուտին համար: Ժամանակներու սկիզբէն ի վեր Սատանան տալու եւ դրամի մասին սուտ խօսած է եկեղեցիին: Կարգ մը յարանուանութիւններ

կը հպարտանան իրենց աղքատության երդումներով (Քրիստոսի հետեւելու համար աշխարհային ունեցուածքէն հրաժարելով աղքատ կեանք մը ապրելու Աստուծոյ տրուած խոստում)՝ առանց անդրադառնալու, որ իրենք ուղղակի Սատանային սուտերուն մէջ կ'իյնան: Իր ծառայութեան ընթացքին Յիսուս շատ անգամ կը ստիպուէր այդ կեցուածքին հարցը լուծելու: Իրականութեան մէջ Ան Իր ամէնէն նշանաւոր առակներէն մէկը պատմեց ճիշդ այս հարցին մասին. Բարի Սամարացիին առակը:

«Ահա օրինական մը ելաւ ու զանհկա փորձելով՝ ըսաւ. «Վարդապետ, ինչ ընեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»: Անհկա ալ ըսաւ անոր. «Օրէնքին մէջ ինչ գրուած է, ինչպէս կը կարդաս»: Պատասխան տուաւ անհկա ու ըսաւ. «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ ու քու բոլոր անձովդ եւ քու բոլոր զօրութիւնովդ ու քու բոլոր մտքովդ եւ քու ընկերդ՝ քու անձիդ պէս»: Ինք ըսաւ անոր. «Շիտակ պատասխան տուիր, ապիկա ըրէ ու պիտի ապրիս»: Իսկ օրինականը, ուզելով ինքզինք արդարացնել, ըսաւ Յիսուսին. «Բայց իմ ընկերս ո՞վ է»: Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ. «Մարդ մը երուսաղէմէն երիքով կ'իջնէր ու աւազակներու ձեռք ինկաւ, որոնք մերկացուցին զանհկա ու վիրաւորելով կիսամեռ թողուցին ու գացին: Պատահեցաւ, որ քահանայ մը այն ճամբայէն իջնէ ու զանհկա տեսնելով անդիի կողմէն անցաւ: Նոյնպէս Ղեւրացի մըն ալ այնտեղ հասնելով՝ գնաց ու տեսաւ եւ անդիի կողմէն անցաւ: Բայց Սամարացի մը, որ ճամբորդութիւն կ'ընէր, եկաւ անոր քով ու զանհկա տեսնելով խղճաց: Սօսեցաւ, անոր վերքերը փաթեց, վրան ձէթ եւ գինի թափելով ու իր գրաստիւն վրայ դնելով՝ տարաւ զանհկա պանդոկ մը եւ անոր հոգ տարաւ: Հետեւեալ օրը, երբ կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին տուաւ եւ անոր ըսաւ. «Հոգ տար ապոր ու ինչ որ աւելի ծախք ընես, երբ դառնալուս ես քեզի կը վճարեմ»: Հիմա այն երեքէն ո՞րը ընկեր կ'երենայ աւազակներուն ձեռքը ինկողին»:

Անիկա ըսաւ. “Ա՛ն, որ ողորմութիւն ըրաւ”: Այն ապեն Յիսուս ըսաւ անոր. “Գնա՛, դուն ալ այնպէս ըրէ”»:

—Ղուկաս 10.25-37

Կարծեմ բոլորս ալ լսած ենք այս պատմութիւնը, որուն դասը հետեւեալն է՝ ինչ պիտի ընէր Աստուած եթէ ճամբայէն իջած ատենը այս մարդը տեսնէր: Գիտենք, որ Տէրը այդ ծեծ կերած մարդը պիտի չձգէր, որ հոն՝ ճամբուն եզերքը մեռնէր:

Դասը, որ շատ մը կիրականօրեայ դպրոցներ կը սորվեցնեն այս առակէն, լաւ դրացի ըլլալն է: Մարդոց հոգ տանիլ: Մարդոց հոգ տանիլը Աստուծոյ սիրտին փափաքն է, եւ կրնամ ըսել, որ ես հարիւր տոկոս համաձայն եմ այդ կարծիքին: Սակայն այս առակին մէջ շատ աւելին կայ, որ յաճախ նկատի չ'առնուիր:

Իրապէս հասկնալու համար Յիսուսի յանդիմանութիւնը այս օրինականին, պէտք է հասկնաս այդ ժամանակուայ ընկերային մթնոլորտը: Հրեաները կ'արհամարհէին սամարացիները եւ զանոնք անմաքուր եւ ոչ հոգեւոր կը սեպէին: Ուստի հրեաները իրենք զիրենք շատ աւելի սուրբ եւ արդար կը սեպէին Աստուծոյ աչքին, քան սամարացիները, այն աստիճան, որ անոնց հետ չէին յարաբերեր: Ուստի Յիսուսի պատմութիւնը ձեռով մը այս օրինականին երեսին տրուած ապտակ մըն է՝ անոր բարեպաշտ վարմունքին համար յանդիմանութիւն մը: Կարծեմ բոլորս ալ կը հասկնանք այդ մտածելակերպը:

Սակայն այն մասը, որ երբեք չեմ լսած, այսինքն՝ երբեք լսած չեմ, որ որեւէ կիրականօրեայ դպրոցի մէջ կ'ուսուցանուի, երկու արծաթէ մետաղադրամներուն բաժինն է: Յիսուս ինչո՞ւ երկու արծաթէ մետաղադրամներուն մասին խօսեցաւ եթէ կարեւոր կէտը, որ Ան կ'ուզէր մատնանշել, միայն ուսուցիչին սիրտին սխալ կեցուածքն էր սամարացիներուն հանդէպ: Եկէ՛ք յայտնաբերենք:

«Ու իր գրաստիւն վրայ դնելով՝ փարաւ զանիկա պանդոկ մը եւ անոր հոգ փարաւ: Հերեւեալ օրը, երբ կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդոկապետին»

Կրուա եւ անոր ըսաւ. ‘Հոգ Կար արոր ու ինչ որ ւայի ծախք ընես, եր դառնալու ես քեզի կը վճարեմ’»:

—Ղուկաս 10.34-35

Այս պատմութեան մէջ, որ Յիսուս կը սորվեցնէ, նաեւ կը տեսնենք, որ ատիկա նմանութիւն մըն է այն բանին, որ Յիսուս կը պատրաստուէր մեզի համար ընելու: Մենք կը տեսնենք մարդկութիւնը ծեծուած եւ ճգնուած Սատանային՝ գողին կողմէ: Կը հասկնանք, որ ձէթը եւ գինին մարգարէաբար կը ներկայացնեն Սուրբ Հոգին եւ այն արեան ուխտը, որ Յիսուս պիտի տայ բոլոր անոնց, որոնք Իրեն պիտի գան: Եւ այս պատմութեան մէջ կը տեսնենք, որ ձէթը եւ գինին քսելէն ետք, սամարացին քայլ մը անդին կ’երթայ եւ այս վիրաւոր մարդը պանդոկ կը տանի, որպէսզի բուժուի: Սամարացին գիտէ, որ այդ մարդը ժամանակի պէտք ունի, որ բժշկուի, եւ զայն ապահով տեղ մը կը տանի, որպէսզի ապաքինի, եւ այդ բոլորը կ’ընէ իր հաշույն:

Կը հաւատամ, որ պանդոկը կը ներկայացնէ տեղական եկեղեցին: Յիսուս հոն կը բերէ այն մարդիկը, զորս կը գտնէ ծեծուած եւ մահամերձ կեանքի ճամբուն վրայ: Անոնք վերստին ծնունդ կ’ունենան, սակայն արեան ուխտով մաքրուած ըլլալով մեղքէն եւ Սուրբ Հոգիով կենդանացած ըլլալով հանդերձ, անոնք տակաւին իրենց հետ կը կրեն աշխարհի անէծքի համակարգին արատն ու ցաւը: Անոնք ժամանակի պէտք ունին՝ բժշկուելու եւ բոլորովին նոր ապրելակերպ մը սորվելու համար: Յիսուս զիրենք տեղական եկեղեցիի մը մէջ կը զետեղէ եւ պանդոկապետի մը՝ տեղական հովիւին հսկողութեան տակ կը դնէ, որպէսզի ան հետեւի անոնց յառաջդիմութեան:

Բայց դժբախտաբար եկեղեցիին մէջ մենք կը տեսնենք այն վերաբերումը, որ օրէնքի ուսուցիչը ունէր: Մարդիկ չեն ուզեր քայլ առնել եւ օգնել պանդոկին մէջ: Վիրաւոր մարդուն քովէն անցնողներուն պէս, անոնք ալ անոր հարցը կը տեսնեն իբրեւ ուրիշի մը պատասխանատուութիւնը: Ինչո՞ւ պիտի խառնուին: Ինչ շահ պիտի ունենան անկէ, բացի ժամանակի եւ դրամի վատնումէ:

Այս կեցուածքին պատճառով հովիւները իրենց ժամանակին մեծ մասը կ'անցընեն մարդոց աղաչելով, որ մանկամտութիւն մէջ օգնեն կամ պզտիկ խումբ մը ղեկավարեն: Սակայն այնպէս կը թուի, որ մարդիկ արդէն զբաղած են իրենց սեփական գործերով եւ դժուար կը գտնեն պարտականութիւն մը յանձն առնելը: Կրօնը ինքնին ոչ մէկ քաջալերանք կու տայ, այլ՝ միայն պարտականութիւն եւ օրէնք: Օրէնքը կը փորձէ մարդոց յանցաւոր զգացնելով զանոնք մղել, որ օգնեն, ըսելով. «Դուն Աստուծոյ պարտական ես, որ այսինչ կամ այնինչ բանը ընես: Ի վերջոյ, տես Աստուած ինչ ըրած է քեզի համար»: Ես համաձայն եմ, որ մենք պէտք է միշտ յօժար եւ շնորհակալ սիրտեր ունենանք Աստուծոյ հանդէպ եւ ուրիշներուն օգնելու փափաքը ունենանք, բայց Աստուած «Դուն ինձի պարտական ես» ձեւը չի գործածեր: Ան կ'ըսէ. «Ես երկու դահեկան կը ձգեմ քեզի, որ ծախսերը հոգաս եւ ԻՆՉ ՈՐ աւելի ծախք ընես, ետ դառնալու ես քեզի կը վճարեմ»:

Դարձեալ, կրօնական մտածելակերպը այդ խօսքը այսպէս կը բացատրէ՝ երբ երկինք երթանք, Յիսուս պիտի վարձատրէ մեզ՝ երկրի վրայ Իր Թագաւորութեանը համար մեր ըրած գործին համար: Ո՛չ, երբ Յիսուս այդ պատմութիւնը կը պատմէր, Ան նկատի ունէր այն ժամանակը երբ այդ գործարարը իր վերադարձին այդ քաղաքէն պիտի անցնէր: Յիսուս կը խօսէր իրական ժամանակի մէջ նիւթապէս այդ պանդոկապետին օգնելու մասին: Բայց մարդիկ կրնան ըսել. «Շատ լաւ, Աստուած պիտի հոգայ այդ պանդոկին ծախսերը մինչ անոնք այդ մարդուն կը հոգան, բայց ես ալ իրական ծախսեր ունիմ իմ տանս մէջ: Չեմ կրնար ժամանակով կամ դրամով մասնակցիլ»: Շատեր չեն քաջալերուիր պարզապէս իրենց մասնակցութիւնը բերելով իրենց ըրած ծախսերուն համար փոխհատուցում ստանալով: Անշուշտ ատիկա կ'օգնէ, բայց ատիկա Աստուծոյ սիրոյն ամբողջ պատմութիւնը չի յայտներ մասնակցողներուն:

Այո՛, գիտեմ ինչ պիտի ըսես. «Մենք բոլորս ալ պէտք է պանդոկին մէջ օգնենք պարզապէս Աստուծոյ հանդէպ մեր ունեցած սէրէն մղուած»: Այո՛, կրնաս ատիկա ընել հովիւիդ հանդէպ ունեցած

հաստարմութենէդ մղուած եւ Աստուծոյ հանդէպ սերէդ եւ պարտականութենէդ մղուած, եւ երբեմն ատիկա կարելոր է ... Սակայն Աստուած կ'ուզէ, որ խանդավառ ըլլաս «պանդոկին մէջ աշխատելու» Իրեն հետ:

Եւ ասիկա է կարելոր կէտը՝ մենք Աստուծոյ ՔՈՎ չենք աշխատիր, այլ՝ Աստուծոյ ՀԵՏ: Աստուած Ինքը հետեւեալը կ'ըսէ Պօղոսի միջոցով.

«Ո՞ր զինուորը իր սեփական ծախսով զինուորութիւն կ'ընէ: Կայ մէկը որ այգի տնկէ եւ անոր պտուղէն չվայելէ: Կայ հովիւ մը, որ ոչխարներուն կաթէն չճաշակէ: Բայց միթէ պարզապէս մարդկային փորձառութեամբ է որ այս բաները կ'ըսեմ. Օրէնքն ալ նոյն բանը չ'ըսէր: Արդարեւ, Մովսէսի Օրէնքին մէջ գրուած է. “Կալին մէջ աշխատող եզին դունչը մի՛ կապեր”: Աստուած եզներով մտահոգուած էր միթէ. չէ՞ որ մեզի համար է որ կ'ըսէ ատիկա. ինչպէս դարձեալ մեզի համար գրուած է հետեւեալը. “Հերկողը յոյս պէտք է ունենայ՝ որ հերկէ, եւ ցորենը կամնողը անկէ վայելելու յոյսը պէտք է ունենայ՝ որ կամնէ”»:

—Ա. Կորնթացիներուն 9.7-10

Աստուած չ'ուզեր, որ Իրեն ծառայես վախէն կամ պարզապէս պարտականութենէն մղուած:

Նկատի առ, թէ ինչ կ'ըսէ. «Հերկողը յոյս պէտք է ունենայ՝ որ հերկէ, եւ ցորենը կամնողը անկէ վայելելու յոյսը պէտք է ունենայ՝ որ կամնէ»: Աստուած միայն հետաքրքրուած չէ այն հունձքով, որ Իր կողմէ քեզի տրուած պարտականութեան արդիւնքն է: Ան նաեւ կը հոգայ անոնց, որոնք հոն՝ Իր կողքին կ'աշխատին, եւ Ան կ'ուզէ, որ անոնք հունձքին ուրախութիւնը վայելեն ճիշդ այնպէս, ինչպէս Ինք կը վայելէ:

Յիսուս պատմութեան համար պանդոկապետ մը ընտրեց՝ շատ կարելոր պատճառով մը: Կը հասկնանք, որ պանդոկապետը գործ կը դարձնէր: Ան օրական գիներուն մէջ ներառած էր մնայուն ծախսերը եւ իր անձնակազմին ամսականները: Սակայն

պանդոկը դարձնելու բոլոր ծախսերուն վրայ ան կ'աւելցնէ շահը: Այո՛, շահը:

Ամէն անգամ որ պանդոկապետը իր հիւրէն մէկ գիշերուան վարձքը կը գանձէ, ան շահ կ'ընէ: Այդ պատճառով, պանդոկապետը շատ տարբեր նայուածք ունի այդ վիրաւոր մարդուն հանդէպ, զոր իրեն բերին: Ան իր գրպանէն լումայ մը պիտի չդնէր՝ այդ մարդուն հոգալու համար, քանի որ ճամբորդը խոստացած էր անոր բոլոր ծախսերը հոգալ: Սակայն պանդոկապետը գիտէր իրականութիւն մը, որ իրեն թոյլ կու տար, որ այդ մարդուն օգնէր առանց դժկամութեան: Իրականութեան մէջ ան շատ ուրախ եւ խանդավառ կը զգայ իրեն ընծայուած առիթին համար:

Գիտէն, պանդոկապետը գիտէր, որ իւրաքանչիւր գիշեր, որ այդ մարդը հոն կը մնայ, ինք շահ պիտի ունենար, եւ քանի որ

**ԴԺԲԱԽՏԱԲԱՐ
ԱՆՈՆՑՄԷ ԿԸ ՎՐԻՊԻ
ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՏԻՆ
ՓԱՓԱՔԸ, ԹԷ ԱՆ
ՊԱՏՐԱՍՏ Է ՈՐԵՒԷ
ԳԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ
ՄԱՐԴՈՅ ՀԱՍՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ, ԵՒ ԱՆ ՄԻՇՏ
ՄԵՐ ՆԵՐԴՐԱԾԷՆ
ԱԻԵԼԻՆ ԿՈՒ ՏԱՅ
ՄԵՁԻ:**

վաճառականը պատրաստ էր որեւէ գումար վճարելու, ան չափազանց ուրախ էր: Կրնամ երեւակայել պանդոկապետին խօսակցութիւնը ճամբորդող վաճառականին հետ երբ ան հրաժեշտ կ'առնէր երթալու. «Հէյ, եթէ ճամբուն վրայ տեսնես ուրիշ մէկը, որ օգնութեան պէտք ունի, անպայման հոս բեր: Ես կրնամ ընդունիլ ինչքան մարդ, որ կ'ուզես ինծի բերել եւ եթէ սենեակներս չբաւեն, նոր սենեակներ կ'աւելցնեմ»:

Ինչպէս կը տեսնես, այս պատմութեան մէջ շատ աւելին կայ, քան պարզապէս այն ծանօթ պատմութիւնը, որ ցոյց կու տայ, թէ Յիսուս ինչ պիտի ընէր: Յիսուս կը փորձէր սրբագրել այն կրօնական մտածելակերպը, որ օրինականը ունէր Աստուծոյ եւ սամարացիին հանդէպ: Նաեւ անոր նպատակն էր անոր իմացնել, որ ան կը փախցնէր հսկայական առիթ մը, զոր սամարացին օգտագործեց. շահը:

Միշտ կը տրտմիմ երբ կը լսեմ մարդիկ կ'ըսեն, որ Աստուած

վատ բաներ կ'ընէ լաւ մարդոց կամ կը տեսնեմ, որ մարդիկ Աստուծոյ կը ծառայեն կրօնական պարտականութենէ մղուած՝ փոխանակ մղուելու այն հետաքրքրական կեանքէն, որ կրնան ունենալ: Սատանան կը փորձէ Աստուծոյ բարութիւնը ծածկել մարդոցմէ, որպէսզի անոնք յօժարութեամբ չծառայեն Անոր իրենց ամբողջ սիրտով:

Շատերու համար եկեղեցին պարզապէս համախմբուելու մէկ ուրիշ առիթ է օրացոյցին վրայ: Անոնք չեն հասկնար, որ իրենք են եկեղեցին՝ պանդոկը, ուր Աստուած մարդիկ կը դրկէ, որպէսզի առողջանան: Դժբախտաբար անոնցմէ կը վրիպի Աստուծոյ սիրտին փափաքը, թէ Ան պատրաստ է որեւէ գին վճարելու մարդոց հասնելու համար, եւ Ան միշտ մեր ներդրածէն աւելին կու տայ մեզի: Միշտ:

Կը յիշեմ տարիներ առաջ Տրենտային եղբօրը հետ նստած էինք եւ ճիշդ այս կէտը կը քննարկէինք, թէ՛ Աստուած բարի է եւ վարձատրող, եւ մեզի տուած է Թագաւորութիւնը, որ կը հոգայ մեր բոլոր պէտքերը: Թագաւորութեան այս հասկացողութիւնը նոր էր ճոնսին եւ իր կնոջ՝ Քենտին համար, քանի որ անոնք կու գային աւանդական եկեղեցիէ, ուր շատ քիչ ճշմարտութիւն կը սորվեցնէին:

Այդ օրերուն ճոնսին եւ Քենտին Ճորճիայի մէջ դպրոցի ուսուցիչներ էին, եւ մինչ ուսուցչութիւն կ'ընէր, ճոնսին մասնակի ժամով իմ ֆինանսական ընկերութեանս՝ «Ֆորուրտ Ֆայնենշըլ Կրուպ»ին (*Forward Financial Group*) հետ կ'աշխատէր: Այնպէս կը թուէր, որ ճոնսին բնածին ծիրք ունէր առեստորի մէջ: Ընկերութեան մէջ իր առաջին տարուան ընթացքին ան աւելի դրամ շահեցաւ մասնակի ժամանակով աշխատելով, քան՝ մէկ տարի ուսուցչութիւն ընելով, ուստի որոշեց ուսուցչութիւնը ձգել եւ լման ժամանակով ֆինանսական գործով զբաղիլ:

Սկիզբը ճոնսին շատ լաւ կ'ընէր գործը: Բայց այդ տարուան վերջաւորութեան տեսայ, որ անոր գործունէութիւնը սկսաւ դանդաղիլ եւ գիտէի, որ այդ արագութեամբ շատ երկար չէր կրնար շարունակել:

Տրենտան եւ ես պտոյտ մը ծրագրած էինք դէպի Ճորճիա

Սուրբ Ծննդեան տօնին առթիւ, եւ իմ նպատակս էր ճոնիին հետ ժամանակ անցընել, որպէսզի տեսնեմ եթէ կրնամ յայտնաբերել այն պատճառները, որոնք արգելք կ'ըլլային, որ ան արտադրէր այն գործը, որ պէտք էր արտադրէր՝ գործին մէջ լման ժամանակով մնալու համար: Նախքան ճոնիին հեռաձայնելս, ան ինծի հեռաձայնեց եւ հարցուց եթէ կրնամ իրենց հանդիպիլ, որպէսզի գործի մասին խօսինք: Անշուշտ, ես արդէն ատոր համար պատրաստուած էի:

Յայտնի էր, որ ճոնին եւ Քենտին կը վախնային: Անոնք արդէն այդ ամսուան համար հինգ հազար տոլար արժողութեամբ վճարելիքներ ունէին, եւ յաջորդ ամսուան հինգ հազար տոլարի իրենց վճարումին համար տեղէ մը եկամուտ չունէին: Երբ ճոնիին հետ նստայ, անոր առաջին խօսքերն էին. «Յաջողութիւն չեմ գտներ»: Գիտէի, որ Թագաւորութեան հասկացողութիւնը նորութիւն էր ճոնիին եւ Քենտիին համար, եւ զգացի, որ պէտք էր զիրենք մարզէի, որպէսզի գիտնային, թէ ինչպէս ատոր հարցը պիտի լուծէին հոգեւորապէս: Քանի որ ես գիտէի, որ Թագաւորութիւնը մի'շտ կը յաջողի: Ուստի գրեթէ երկու ժամ անցուցի իրենց հետ՝ իրենց բացատրելով Թագաւորութեան օրէնքներուն մասին եւ թէ ինչպէս իրենց հաւատքը պէտք է արձակէին: Երբ կը խօսէի, կը զգայի, որ վախը կ'անհետանար եւ հաւատքը կը սկսէր բարձրանալ: Գիտէի, որ ճոնին յաջորդ քայլը առնելու պատրաստ էր:

«Ճոնի», ըսի, «Պէտք է Աստուծոյ քով սերմ ցանես եւ հաւատաս, որ Ան քեզի պէտք եղած դրամը պիտի հայթայթէ»:

Ճոնին եւ Քենտին համաձայնեցան, բայց անոնք դրամ չունէին: Այնպէս պատահեցաւ, որ հետս հարիւր վաթսուն տոլարնոց չէք մը բերած էի ճոնիին համար մեր գլխաւոր գրասենեակէն: Գիտէի, որ անոնք պէտք ունէին այդ դրամին, բայց փոխարէնը զիրենք քաջալերեցի, որ զայն իբրեւ սերմ սերմանեն, քանի որ երկուքս ալ գիտէինք, որ ինքնին հարիւր վաթսուն տոլարը բան մը պիտի չընէր հինգ հազար տոլարնոց վճարումին դիմաց, որուն վճարումի ժամանակը արդէն անցած էր կամ այն հինգ հազար տոլարնոց

վճարումին դիմաց, որուն վճարումի ժամանակը շուտով պիտի հասնէր: Անոնք համաձայնեցան:

Երբ կը պատրաստուէինք միասին աղօթելու եւ մեր հաւատքը արձակելու, Ճոնիին հարցուցի. «Ինչ կը հաւատաս, որ պիտի ստանաս երբ այս դրամը սերմանես»: Երբ այդ խօսքերը իմ շրթներէս ելան, Սուրբ Հոգին զիս կեցուց եւ ըսաւ, որ չձգեմ, որ ան պատասխանէ, եւ ես գիտէի ինչո՛ւ: Ճոնին կրնար ըսել, որ կը հաւատայ, որ այդ հինգ հազար տոլարը պիտի ստանայ, քանի որ յստակօրէն հիմա ատոր պէտք ունէին: Փոխարէնը՝ Սուրբ Հոգին ինծի ըսաւ. «Իրեն հարցուր եթէ երեսուն օրուան մէջ տասներկու հազար տոլարը բաւարար է»:

Ուստի այդպէս ըրի: Չձգեցի, որ պատասխանէ եւ իրեն հարցուցի եթէ երեսուն օրուան մէջ տասներկու հազար տոլարը բաւարար պիտի ըլլար: Ան աչքերը լայն բացաւ երբ ըսի այդ գումարը, որ Աստուած ինծի ըսաւ, որ իրեն հարցնեմ: Գիտէի, որ Ճոնին իր ամբողջ կեանքին ընթացքին երբեք երեսուն օրուայ մէջ տասներկու հազար տոլար չէր շահած: Պահ մը մտածեց եւ յետոյ ըսաւ, թէ՛ այո՛, կրնար անոր հաւատալ ինծի հետ: Նոյն հարցումը Քենտիին հարցուցի, եւ ան ալ «Այո՛» ըսաւ: Ձեռք ձեռքի բռնեցինք, մեր ձեռքերը այդ չէքին վրայ դրինք, եւ մեր հաւատքը արձակեցինք՝ երեսուն օրուայ մէջ տասներկու հազար տոլար ստանալու համար:

Երեք շաբաթ ետք Ճոնին ինծի հեռաձայնեց: Շատ խանդավառ էր: Նախորդ երեք շաբաթներուն ընթացքին ան բաւարարաչափ գործարարութեան վերաբերող աշխատանքներ տարած էր, որոնք իրեն ոչ միայն տասներկու հազար տոլար ապահոված էին, այլ՝ տասնեօթը հազար տոլար: Ան ըսաւ, որ հիմա ինք իրապէս հաւատացեալ էր:

Դժբախտաբար, երկու ամիս ետք, անձրեւոտ գիշեր մը երբ ժամադրութենէ մը ետք Ճոնին տուն կը վերադառնար, ինքնաշարժը անոր տիրապետութենէն դուրս ելաւ: Ինքնաշարժը ջախջախուեցաւ, բայց Ճոնին արկածէն ողջ մնաց, բան մը, որ ինքնին Աստուծոյ գործն էր: Բայց արկածին պատճառով Ճոնին

իր ապաքինման շրջանին չկրցաւ աշխատիլ: Այդ ընթացքին անոր տունը գրաւագրկուեցաւ եւ պարտքը վճարելու համար ծախու դրուեցաւ: Ան տասը հազար տոլարի պէտք ունէր, որպէսզի տունը չծախուէր:

Այդ ժամանակին էր, որ Ճոնին եւ Քենտին որոշեցին Օհայօ փոխադրուիլ՝ ասելի մօտ ըլլալու համար Թագաւորութեան ուսուցումին (Աստուծոյ Թագաւորութեան վերաբերող օրէնքներուն եւ սկզբունքներուն մասին ուսուցում), որ կը փոխէր իրենց կեանքը: Ուստի տունը անշարժ կալուածքի շուկային մէջ ծախու դրին, թէեւ գիտէին, որ ընդամէնը մօտ մէկ ամիս ունէին նախքան որ տունը աճուրդի դրուէր եւ ծախուէր:

Մինչ թուականը կը մօտենար, իրական գնորդներ չկային մինչեւ աճուրդէն քանի մը օր առաջ երբ մարդ մը մօտեցաւ եւ առաջարկեց տունը գնել: Բայց ան խնդրանք մը ունէր: Ան կ'ուզէր գիտնալ, որ եթէ այդ պահուն Ճոնին տասը հազար տոլար տար, ան կրնամր տունը երեսուն օր պահել մինչեւ որ ուրիշ գործ մը վերջացներ, որով պահանջուած ամբողջ գումարը պիտի ապահովէր:

Ճոնին ցնցուեցաւ: Ան գիտէր, որ տունը աճուրդէն հանելու համար գնողը պէտք էր անոր գինը կանխիկ վճարէր, քանի որ աճուրդին ընդամէնը քանի մը օր մնացած էր: Այդ գնորդը կ'ուզէր անմիջապէս տասը հազար տոլարնոց չէք մը գրել Ճոնին եւ յետագային հաշիւը փակել: Ատիկա ճիշդ այն գումարն էր, որուն Ճոնին պէտք ունէր: Ճոնին գիտցաւ, որ ատիկա Աստուծմէ էր: Ուստի առաւ տասը հազար տոլարնոց չէքը եւ անմիջապէս տան համար վճարեց: Օ'հ, եւ այդ տասը հազար տոլարը վաճառքի գինին մէկ մասն էր:

Ուստի Ճոնին եւ Քենտին Օհայօ փոխադրուեցան եւ տուն մը վարձեցին: Անոնք սկսան «Ֆէյթ Լայֆ» եկեղեցին յաճախել, եւ Ճոնին նոր թափով նետուեցաւ ֆինանսական գործին մէջ: Բայց հիմա անոնք նոր հարց մը ունէին: Միայն մէկ ինքնաշարժ ունէին, եւ Ճոնին անոր պէտք ունէր՝ շաբթուան ընթացքին յաճախորդներուն հետ իր բազմաթիւ հանդիպումները կատարելու համար: Անոնք

գիտէին ինչ պիտի ընէին: Նոր ինքնաշարժի մը համար սերմ ցանեցին եւ Մարկոս 11.24-ին համաձայն՝ հաւատացին, որ ստացան զայն երբ աղօթեցին:

Յետոյ շատ անսովոր բան մը պատահեցաւ: Ճոնիին մանկութեան ընկերներէն մէկը հեռաձայնեց ...

«Ճոնի՛, երբեք քեզի վճարեցի՞ այդ հեծանիւին գինը, որ վեցերորդ դասարանին ինծի տուիր», հարցուց ան:

«Ո՛չ», ըսաւ Ճոնին:

Այն ատեն ընկերը ըսաւ. «Լա՛ւ, հիմա անոր գինը պիտի վճարեմ քեզի: Քեզի «Պի.Էմ.Տապըլեու.» մը պիտի գնեմ:

Մանկութեան տարիներուն երկու տղաքը միշտ ինքնաշարժներու մասին կը խօսէին, եւ ան գիտէր, որ Ճոնին միշտ կը փափաքէր «Պի.Էմ.Տապըլեու.» ունենալ: Ընկերը հաւատարիմ էր իր խօսքին եւ Ճոնիին դրկեց գումարը, որ ինքն իրեն համար «Պի.Էմ.Տապըլեու.» մը գնէր: Բայց երբ Ճոնին այդ գումարը ստացաւ, անդրադարձաւ, որ իր ընտանիքը կը մեծնար եւ «Պի.Էմ.Տապըլեու.»ն այն ինքնաշարժը չէր, որուն ինք պէտք ունէր: Ինք եւ Քենտին որոշեցին Քենտիին համար ընտանեկան «Էս.Եու.Վի.» մը գնել եւ աւելի փոքր ինքնաշարժ մը՝ Ճոնիին գործին համար, քանի որ Քենտիին փոքր ինքնաշարժը, որ կը թշէին, հին էր եւ հարցեր ունէր: Ուստի այդպէս ըրին:

Կը յիշեմ այն գիշերը երբ Ճոնին ինծի հեռաձայնեց: Ան նստած էր իր նոր «Էս.Եու.Վի.»ին մէջ՝ իր կառուղիին մէջ, իր միւս նոր ինքնաշարժին կողքին եւ արցունքոտ աչքերով ինծի ըսաւ, թէ ճիշտն անգուցած էր, որ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով ունէր երկու ինքնաշարժներ, որոնց գինը լիովին վճարուած էր:

Ճոնին նոր անձ էր: Ան գիտէր, որ Աստուած կրնայ ամէն բան ընել:

Օր մը ան իմ գրասենեակս եկաւ եւ ըսաւ, որ վարձով ապրելէն ձանձրացած էր. ինք եւ Քենտին հողատարածքով ագարակ մը կ'ուզէին ունենալ եւ կը փնտռէին: Գիտէի, որ իր արկածին իբրեւ հետեւանք, Ճոնիին վարկը դրամատան մօտ լաւ չէր եւ զինք քաջալերեցի, որ պարզապէս քիչ մը եւս իբրեւ վարձակալ

ապրի եւ կանխիկ գումար շատցնէ, որպէսզի դրամական հաստատութիւններու քով իր վարկը կամ վստահելիութիւնը բարձրանար: Սակայն ճոնին շատ ուշադրութիւն չդարձուց ըսածիս:

Յետոյ ինծի ըսաւ, որ մեր շրջանին մէջ ազարակ մը տեսած էր, որ ծախու էր, եւ զայն պիտի ստուգէր, որպէսզի գնէր: Անշուշտ, քանի որ այդ օրերուն ես գրաւադրութեան ընկերութիւն ունէի, գիտէի, որ անկարելի էր, որ ճոնին կարենար փոխ դրամ առնել այդ ազարակին համար: Նաեւ գիտէի, որ այդպիսի բան մը գնելու համար կանխավճար չունէր:

Շաբաթ մը ետք ցնցուեցայ երբ ան գրասենեակս վերադարձաւ լայն ժպիտով մը եւ ըսաւ, որ ազարակը իրն էր: Երբ ինծի ատկա ըսաւ, գիտցայ, որ ատոր ետին հետաքրքրական պատմութիւն մը կար, որ պէտք էր լսէի: Անշուշտ ան ըսաւ, որ Քենտին Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուած է, ինչպէս սորված էին հաւատալ, որ իրենց աղօթած պահուն արդէն ստացած են: Յետոյ ճոնին շարունակեց եւ ինծի բացատրեց, թէ ինչ պատահած էր:

Ան կ'երթայ իր դրամատան հետ հանդիպում մը ունենալու այդ գնումին համար, եւ տնօրէնը դուրս կը հանէ անոր վարկին մասին տեղեկագիրը եւ անոր հետ նստելով կ'ըսէ. «Ճոնի՛, ճիշդ ըսիր քու վարկիդ մասին: Դուն բան մը գնելու իրաւունք չունիս»:

Բայց յետոյ տնօրէնը տարօրինակ բան մը կ'ըսէ: Ան մէկդի կը հրէ վարկի թղթապանակը եւ կ'ըսէ. «Բայց ես սիրեցի քեզ: Նայիմ ինչ կրնամ ընել»:

Կարճ ըսելով՝ դրամատունը այդ գնումը հարիւր տոկոսով ֆինանսաւորեց, անորչորս ամիս տուաւ մինչեւ իր վարձակալական պայմանագիրը վերջանար, որպէսզի կարենար տեղափոխուիլ, լեցուց վառելանիւթի ամբարը, վճարեց կալուածին չվճարուած տուրքերը, եւ վերջաւորութեան ճոնին հինգ հազար տոլարնոց չէք մը տուաւ, որ տան առջեւի մուտքին կրածոյին ճեղքը շինէ:

Ես ապշեցայ մինչ ճոնին տակաւին կը շարունակէր պատմել Թագաւորութեան մասին: Միակ բանը, որ կրցայ ըսել, «Ունու» էր:

Ամիս մը ետք ճոնին ինծի ըսաւ, որ «Ֆորտ» թրաքթորի մը համար սերմ ցանած էր (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուած էր):

Ինձի ըսաւ, թէ որոշած էր, որ իր նոր ագարակին համար *թրաքթորի* մը պէտք ունէր եւ շատ յատուկ սերմ մը ցանած էր կապոյտ, *տիգրի* *օյլով* քալող «Ֆորտ» *թրաքթորի* մը համար: Դարձեալ, քանի որ իմ ընկերութեանս մէջ կ'աշխատէր, եւ գիտնալով *թրաքթորներուն* գիները, գիտէի, որ ան դեռ այդպիսի գումար չունէր:

Բայց իրապէս ալ քանի մը շաբաթ ետք երբ ճամբուն կողմը կը նայէի, տեսայ, որ ճոնին *տիգրի* *օյլով* քալող կապոյտ «Ֆորտ» *թրաքթոր* մը քշելով դէպի իր տունը կ'երթար: Երբ իրեն հարցուցի, թէ ուրկէ եւ ինչպէս ձեռք բերաւ այդ *թրաքթորը*, ըսաւ, որ եկեղեցիին մէջ կին մը պատահմամբ իրեն մօտեցած էր եւ հարցուցած էր եթէ գիտէր մէկը, որ կրնար *թրաքթորի* մը պէտք ունենալ: Ան իր ծնողքին ագարակը հաշուեյարդարի կ'ենթարկէր եւ *թրաքթոր* մը կար, որմէ կ'ուզէր ձերբազատիլ: Ճոնին անոր ըսաւ, որ ինք հետաքրքրուած էր:

Կինը անոր ըսաւ, որ վճարումին մասին չմտահոգուէր, պարզապէս վճարէր երբ որ կրնար. աճապարելու պէտք չկար: Այդպիսով ան ձեռք բերաւ այդ *թրաքթորը*:

Անոր յաջողութիւնները շարունակուեցան: Յաջորդ ամիսը ան եօթանասուներկու հազար տոլար շահեցաւ միայն մէկ ամսուայ մէջ: Եթէ ճոնիին հարցնէք, թէ ասիկա ինչպէս եղաւ, պիտի ըսէ՝ ասիկա եղաւ Աստուծոյ հանդէպ առատածեռն ըլլալով եւ Թագաւորութեան օրէնքները հասկնալով:

Ինչ հիանալի պատմութիւն: Տակաւին կը յիշեմ ճոնիին եւ Քենտիին հետ նստիլս Ճորճիայի իրենց տան մէջ այդ գիշեր եւ իրենց հետ Թագաւորութեան մասին խօսիլս: Անոնք չէին գիտեր ինչ պիտի ընէին, քանի որ ուշացած էին իրենց հինգ հազար տոլար արժողութեամբ վճարումները ընելու եւ Սուրբ Ծնունդը մօտ էր: Առաւել յաջորդ հինգ հազար տոլար արժողութեամբ վճարումները կը մօտենային եւ ոչ մէկ տեղէն դրամ ստանալու յոյս ունէին: Հաւանաբար քեզի համար հետաքրքրական պիտի ըլլայ գիտնալը, որ ես ինչ ըսի իրենց այդ գիշեր:

Գիտէի, որ պէտք էր պարզապէս իրենց օգնէի, որ իրենց դիմագրուած պայմաններուն մշուշին ընդմէջէն զԱստուած

տեսնելին: Ես սկսայ իրենց ցոյց տալ այն բաները, որոնց մասին կը խօսէինք Բ.Կորնթացիներուն 9.10-11-ին մէջէն.

«Ուրեմն ան՝ որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակորի համար հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունւորը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները: Ամէն բանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առատաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ»:

Ես նշեցի, որ Պօղոս կ'ըսէ, թէ Աստուած ոչ միայն քու սերմանելիք սերմդ պիտի պարգեւէ, այլեւ քու սեփական պէտքերուդ համար հաց պիտի պարգեւէ: Հացը ակնարկութիւն է այն բոլոր բաներուն, որոնց դուն անձնապէս պէտք ունիս քու կեանքիդ մէջ: Այդ ժամանակէն սկսելով Ան պիտի աւելցնէ քու կարողութիւնդ, որպէսզի նոյնիսկ աւելին տաս: Ատիկա կը նշանակէ, որ դուն պիտի բարձրանաս:

Դարձեալ, ինչ վախ կայ տալու մէջ: Այն վախը, որ դուն քու պէտքերուդ համար բաւարար պիտի չունենաս:

Բայց ուշադրութիւն ըրէ, թէ Աստուած ինչ կ'ըսէ: Ան սերմ ցանողին սերմ կը պարգեւէ եւ կերակորի համար՝ հաց: Հիմա շատ կարեւոր հարցում մը պիտի հարցնեմ, եւ այս հարցումը ճոնիին հարցուցի.

Քու ձեռքիդ մէջ եղածը սերմ է թէ՛ կերակոր: Ընտրութիւնը քուկդ է:

Մօրս հայրը՝ մեծ հայրիկս, ամբողջ կեանքը հողագործ եղած է: Կը յիշեմ, որ երբ փոքր տղայ էի, անոր սերմի վակոնին մէջ կը խաղայի: Թերեւս երբեք լսած չես սերմի վակոնի մասին: Թերեւս այդ բառը գոյութիւն ալ չունի, բայց մեծ հայրիկին հետ մեծցած ատեննիս ատիկա իրական էր մեզի համար: Գիտես, ամէն տարի հունձքի ժամանակ, մեծ հայրիկս միշտ մէկ վակոնի չափ սերմ կը պահէր իր շտեմարանին մէջ: Այդ վակոնը լեցուն կ'ըլլար սերմով, որ ան կը պահէր գարնան ցանելու՝ յաջորդ տարուան հունձքին համար:

Ձմրան ամիսներուն մեծ հայրիկս կը նայէր այդ մեծ վակոնին, որ լեփլեցուն կ'ըլլար սօճալուբիայով, գիտնալով, որ ինք ընտրութիւնը ունէր անմիջական պէտքի մը համար զայն ծախելու կամ զայն պահելու գարնան ցանքին համար, որ գիտէր, թէ մեծ հունձք պիտի արտադրէր: Ան ընտրութիւն ունէր, բայց համոզուած էր այն օրէնքներով, որոնք կը կառավարեն ցանելու եւ հնձելու ժամանակները եւ բացարձակապէս վստահ էր անոնցմէ:

Ճոնին եւ Քենտին նոյն որոշումը դիմագրաւեցին երբ այդ հարիւր վաթսուն տոլարնոց չէքը իրենց ձեռքին մէջ ունէին: Անշուշտ անոնք կրնային ատիկա անյետաձգելի պէտքի մը համար գործածել, բայց փոխարէնը գիտէին, որ Աստուծոյ հանդէպ առատածեռն ըլլալը վերջ ի վերջոյ իրենց ամէլի մեծ հունձք պիտի տար: Եւ ճիշդ էին:

«Մարդ կայ, որ իր ստացուածքը ցրուելով կ'աւելցնէ ու մարդ կայ, որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի»:

—Առակաց 11.24

Նախքան այս գլուխը վերջացնենք, առակ մը եւս կայ, որուն մասին կ'ուզեմ խօսիլ. Մատթէոս 25.14-30, տաղանդներու առակը:

«Դարձեալ, երկինքի արքայութիւնը պիտի նմանի հետեւեալին.-

«Մարդ մը կար, որ երբ ուրիշ երկիր պիտի երթար, կանչեց իր ծառաները եւ անոնց յանձնեց իր ստացուածքը, որ շահարկեն: Եւ համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր: Եւ ապա ճամբորդեց:

«Ծառաներէն ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, անմիջապէս գնաց, շահարկութեան դրաւ եւ հինգ հարիւր եւս շահեցաւ: Նոյն ձեւով, ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, երկու հարիւր ալ շահեցաւ: Բայց ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, գնաց հողը փորեց եւ իր փորոջ դրամը հոն պահեց:

«Բաւական ժամանակ ետք, այդ ծառաներուն փէրը

եկաւ եւ անոնցմէ հաշիւ պահանջեց: Ան որ հինգ հարիւր ոսկի դրամ սրացած էր, հինգ հարիւր եւս բերաւ եւ ըսաւ. “Տէր, ինծի հինգ հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ հինգ հարիւր եւս շահեցայ”: Տէրը ըսաւ. “Ապրիս, բարի եւ հաւատարիմ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան”: Ան որ երկու հարիւր ոսկի դրամ սրացած էր, մօտեցաւ եւ ըսաւ. “Տէր, ինծի երկու հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ երկու հարիւր ալ շահեցայ”: Տէրը ըսաւ. “Ապրիս, բարի եւ հաւատարիմ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ: Դուն ալ եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան”:

«Յետոյ մօտեցաւ ան որ հարիւր ոսկի դրամ սրացած էր, եւ ըսաւ. “Տէր, գիտէի որ խիստ մարդ ես, կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած: Վախցայ, ուստի գացի եւ տուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի: Ահա տուածդ քեզի”: Տէրը պատասխանեց. “Չար ու ծոյլ ծառայ, եթէ գիտէիր, որ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած եւ կը հաւաքեմ ինչ որ չեմ ցանած, պէտք էր որ քեզի յանձնած դրամս շահարկողներուն տայիր, որպէսզի վերադարձիս տոկոսով միասին ետ առնէի զայն: Հիմա առէք անկէ հարիւր ոսկի դրամը եւ տուէք անոր՝ որ հազար ունի: Որովհետեւ ունեցողին պիտի տրուի՝ նոյնիսկ աւելիով, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ: Իսկ այս անպիտան ծառան դուրսը մտօին հանեցէք: Թող հոն լայ եւ ակռաները կրճպէ”»:

—Մատթէոս 25.14-30

Այս պատմութիւնը ծանօթ պատմութիւն է: Տէրը ուրիշ երկիր մը կ'երթայ եւ երեք ծառաներ պատասխանատու կը դնէ: Մէկուն կու տայ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր:

Առաջին երկուքը անմիջապես գործի կ'անցնին եւ կը կրկնապատկեն իրենց ունեցած ոսկիները: Տէրը կը գովէ զիրենք իրենց տարած աշխատանքին համար: Բայց ես կ'ուզեմ երրորդ ծառային մասին խօսիլ: Անոր հարիւր ոսկի դրամ տրուած էր, բայց ան ոչինչ ըրաւ անով: Իրականութեան մէջ ան պարզապէս զայն թաղեց մինչեւ իր տիրոջ վերադարձը:

«Յետոյ մօտեցաւ ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, եւ ըսաւ. “Տէ՛ր, գիտէ՛ի, որ խիստ մարդ ես, կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած: Վախցայ, ուստի գացի եւ տրուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի: Ահա տրուածդ քեզի”»:

Ուշադրութեամբ նայէ առաջին նախադասութեան. «Տէ՛ր, գիտէ՛ի, որ խիստ մարդ ես, կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած»:

Ինչ կ'ըսէ ան: Քեզի պիտի ըսեմ, թէ ճիշդ ինչ կ'ըսէ ան: Կ'ըսէ. «Ինչո՞ւ պիտի մասնակցիմ: Եթէ դուն կը հնձես ինչ որ չես սերմանած, ուրեմն ո՞վ վճարեց սերմին գինը եւ ո՞վ ցանեց զայն եւ զայն աճեցնելու ամբողջ գործը ըրաւ»:

Գիտենք, որ տէրը անոր դրամ տուաւ, որպէսզի սերմ գնէր, բայց անոր կեցուածքը այն էր, թէ՛ չէր արժեր, որ ինք այդ գործին մէջ իր մասնակցութիւնը բերելու համար իր ժամանակը տրամադրէր: Ան շահ մը չունէր ատկէ: Ամբողջ շահը՝ իր գործին արդիւնքը, տիրոջ կ'երթար: Իր ունեցած պատկերացումին պատճառով տիրոջ անձին մասին՝ զոր կը տեսնէր իբրեւ կարծր վերակացու մը, ան ձեւով մը մերժեց մասնակցիլ: Ան փորձեց տիրոջ հանդէպ իր ունեցած իրական արհամարհանքը ծածկել՝ ըսելով, որ դրամը պահելու իր շարժառիթը զանիկա կորսնցնելու վախն էր, եւ ուստի ան ոսկին պահած էր, որ զայն պաշտպանէր: Բայց տէրը մերկացուց անոր խաբէութիւնը եւ ըսաւ, որ եթէ ան իրապէս կը սիրէր զինք, գոնէ դրամը դրամատան մէջ կը դնէր եւ տոկոս կը շահէր:

Ո՛չ, ծառան ոսկին կորսնցնելէն չէր վախնար. ան կը վախնար մասնակցութեան համար իր վճարելիք գինէն: Ան այլասերած,

ծուռ եւ չար պատկերացում մը ունէր իր տիրոջ մասին, քանի որ իրականութեան մէջ հակառակն էր ճիշդը: Տէրը կոշտ վերակացու մը չէր: Միւս երկու ծառաները, տիրոջ դրամը յաջողութեամբ գործածելէ ետք, պաշտօնի բարձրացումով վարձատրուեցան եւ հրաւիրուեցան տիրոջ ունեցուածքը վայելելու: Այս ծառան,

**ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ՄԵԾ
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԻՏԻ ՏԱՅ ԻՐ ԱՅՆ
ԶԱԻԱԿՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ
ԻՐ ՇԱՀԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԻՆ
ԻՐԵՆՑ ՄԻՏՔԻՆ ՄԷՋ ...**

տիրոջ մասին իր ունեցած սխալ պատկերացումին պատճառով, ընտրեց չմասնակցիլ: Եւ կրօնը ճիշդ ասիկա կը սորվեցնէ մեզի. թէ՛ Աստուած կարծր վերակացու մըն է եւ Անոր հետ աշխատելու մէջ շահ մը չկայ, ուստի ինչո՞ւ պիտի մասնակցիմք:

Բայց Աստուծոյ մասին այդ պատկերը բոլորովին այլատրած է եւ ճիշդ չէ: ՉԱստուած անարդար կոչելը չարութիւն է: Աստուած այդ նկարագրութեան ճիշդ հակառակն է:

Ան բարի եւ վարձատրող է:

Բայց հիմա կ'ուզեմ շատ կարեւոր կէտ մը շեշտել այս պատմութեան մէջ: Ուշադրութիւն ըրէ, որ տէրը ինչ ըրաւ այդ ոսկիին հետ, որ ետ առաւ չար ծառայէն:

«Հիմա առէք անկէ հարիւր ոսկի դրամը եւ տուէք անոր՝ որ հազար ունի: Որովհետեւ ունեցողին պիտի տրուի՝ նոյնիսկ անելիով, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ: Իսկ այս անպիտան ծառան դուրսը մութին հանեցէք: Թող հոն լայ եւ ակռաները կրճտէ՛»:

Ճիշդ կարդացի՛: Տէրը այդ ոսկի դրամը առաւ անպիտան ծառայէն եւ զայն տուաւ անոր՝ որ հազար ունէր եւ ոչ թէ անոր՝ որ չորս հարիւր ունէր: Վստահ չեմ եթէ ատիկա քաղաքականապէս ընդունելի է, բայց ան այդպէս ըրաւ: ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ:

Աստուած Իր մեծ գաղափարները եւ պարտականութիւնները պիտի տայ Իր այն զաւակներուն, որոնք Իր շահը նկատի ունին իրենց միտքին մէջ եւ իրենց հաւատարմութիւնը եւ

վստահելիությունը (նուիրումը) նախ փոքր գործերու մէջ փաստած են:

Աստուած անմիտ չէ: Ան Իր դրամը պիտի դնէ հոն, ուր ամենամեծ շահը պիտի բերէ:

Կը խնդրեմ, որ մտածես հիմա ըսածիս մասին՝ Աստուած իր դրամը պիտի դնէ հոն, ուր ամենամեծ շահը պիտի բերէ:

Անշուշտ Աստուած դրամի գործով չ'զբաղիր, այլ՝ մարդու գործով: Եւ երբ մենք փութաջանութեամբ Իրեն հետ աշխատելու մէջ հաւատարիմ կ'ըլլանք, Ան պիտի բարձրացնէ մեզ եւ Իր լաւ բաներով պիտի օրհնէ մեզ:

Այո՛, Աստուած նախասիրած անձեր ունի այն իմաստով, որ Ան որո՞ն կը վստահի տարբեր պարտականութիւններ: Անոնք որոնք իրենց հաւատարմութիւնը փաստած են, Աստուծոյ վստահութիւնը պիտի շահին՝ անելի մեծ եւ անելի բաւարարող պարտականութիւններ յանձն առնելու իմաստով:

Նկատի առ երկու յաջողակ ծառաներուն կեցուածքը. անոնք անմիջապէս գացին եւ գործի՛ դրին իրենց տիրոջ դրամը: Ինչո՞ն անմիջապէս: Որովհետեւ անոնք գիտէին, որ ստիկա առիթ էր, եւ ոչ թէ գերիի մը վրայ դրուած բեռ:

Աստուծոյ ժողովուրդէն շատերը Աստուծոյ ծառայելը կը տեսնեն որպէս ստրկական աշխատանք, պարտականութիւն մը, որ պէտք է ընեն, եւ ոչ թէ իբրեւ այն առիթը, որ իրականութեան մէջ է:

Երբ Տրենտան եւ ես կը շինէինք «Նաու Սենթըր»-ի շէնքը, պէտք է որոշում կայացնէինք: Ընդամէնը երեք հարիւր հոգինոց եկեղեցի մըն էինք երբ որոշեցինք, որ մնայուն եւ անելի մեծ տուն մը պէտք է շինէինք մեր աճող հաւատացեալներու մարմինին համար:

Սկսանք կարելի եղածին չափ դրամ հաւաքել՝ վեց միլիոն տոլար արժողութեամբ ծրագիրի մը համար: Այդ օրերուն ստիկա հսկայական գումար էր մեզի համար: Ծրագիրը հետեւեալն էր՝ սկիզբը շինել հիմնական ենթակառուցուածքը

**ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ՄԵԾ
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒ
ԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ
ՏԱՅ ԻՐ ԱՅՆ
ՉԱԻԱԿՆԵՐՈՒՆ,
ՈՐՈՆՔ ԻՐ ՇԱՀԸ
ՆԿԱՏԻ ՈՒՆԻՆ ԻՐԵՆՑ
ՄԻՏՔԻՆ ՄԷՋ ...**

մօտ 4.2 միլիոն տոլարի եւ յետոյ աւելցնել մնացեալ երկու միլիոն տոլար արժողութեամբ սարքաւորումները եւ շինարարութիւնը ամբողջացնել կամաց-կամաց երբ դրամը ունենայինք:

Ասիկա Աստուծոյ ծրագիրներուն նկատմամբ առատաձեռն ըլլալու մէջ մեր առաջին փորձառութիւնը չէր, բայց անոնց մէջ մեծագոյնն էր, որոնց մաս կազմած էինք մինչեւ այն ատեն:

Սակայն այդ պատմութեան մէջ գտնուող ծառաներուն նման, որոնք գիտէին Աստուծոյ բարութիւնը, մենք անմիջապէս ուզեցինք դրամահաւաքին մաս կազմել, եւ ուզեցինք տալ այնպիսի մակարդակով մը, որ կը պահանջէր հաւատք եւ հնազանդութիւն այն բանին հանդէպ, որ կը հաւատայինք, որ Աստուած մեզի կ'ըսէր:

Այն օրը, որ ամբողջ եկեղեցին յայտնեց, թէ ինչքան որոշած էին, որ պիտի սերմանեն այդ ծրագիրին համար, Տրենտան եւ ես ըսինք, որ մենք երկու հարիւր հազար տոլար պիտի տանք: Այն ատեն երկու հարիւր հազար տոլար չունէինք, բայց մօտաւորապէս քսան հազար տոլարի սերմ ունէինք, որ պիտի ցանէինք մնացեալ գումարին համար:

Մենք գիտէինք, ինչպէս Ան անցեալին ալ ըրած էր, որ Աստուած մեզի ցոյց պիտի տար, թէ ո՛րկէ եւ ինչպէս հնձենք այդ գումարը եւ առատ աւելցուք ալ պիտի մնար մեզի համար:

Մեր ունեցածը սերմանելէ ետք, մենք սկսանք Հոգիով աղօթել՝ սպասելով, որ ուղղութիւն եւ թելադրանք ստանանք, թէ ուրկէ եւ ինչպէս պիտի տիրանանք այդ մնացեալ գումարին: Ներածական մը տալու համար, որպէսզի հասկնաք, թէ Աստուած ինչպէս բերաւ այդ գումարը, պէտք է գիտնաք, որ վերջին երեսունինը տարիներուն ընթացքին մենք ֆինանսական ընկերութիւն մը ունեցած ենք: Այդ ընկերութիւնը տարբեր ծախողներու եւ մասնագէտներու հետ կ'աշխատի, ինչպէս ասկէ առաջ քեզի ըսի: Ծախող մեծ ընկերութիւններուն մեծամասնութիւնը, որոնց հետ կ'աշխատինք, տարեկան համագումարներ եւ հաւաքոյթներ կը կազմակերպէ իր յաճախորդներուն համար:

Այդ տարի մեր վաճառորդներէն մէկը Տրենտան եւ զիս հրաւիրեց, որ Լոնտոն, Անգլիա երթանք՝ իրենց համաժողովին մասնակցելու համար: Մենք շատ գեղեցիկ պանդոկի մը մէջ

մնացինք Լոնտոնի կեդրոնին մէջ, եւ պարզապէս գեղեցիկ էր, ինչպէս Լոնտոնի մէջ կ'ըսեն:

Ընկերութիւնը ձեռնարկ մը ունէր, որ քաղաքին միւս կողմը պիտի ըլլար, եւ փոխնախագահը Տրենտան եւ զիս հրաւիրեց, որ իրեն հետ թաքսիով ձեռնարկին երթանք, բան մը, որ սիրով ընդունեցինք: Երբ թաքսիին մէջ էինք, փոխնախագահը մեզի շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր գործերուն համար, որ իրենց ուղարկած էինք եւ յետոյ սկսաւ մեզի պատմել պարգեւի նոր ծրագիրի մը մասին, որ այդ տարի պիտի սկսէին:

Յետոյ ան շարունակեց բացատրել անոր գործելաձեւը եւ պարգեւին կառուցուածքը, որ անոնք պիտի տային այն գործընկերներուն, որոնք իրենց ապրանքը կը յանձնարարէին: Ես շատ կը խանդավառուէի երբ ան կը խօսէր, քանի որ գիտէի, որ մենք բաւական գործ ըրած էինք եւ արժանի էինք այդ պարգեւին, որուն մասին կը խօսէր:

Յետոյ, երբ խնդրեցի, որ աւելի մանրամասնութիւններ տայ, ան կտրուկ կերպով ըսաւ, որ մեր ընկերութիւնը այդ պարգեւի ծրագիրին չի կրնար մասնակցիլ՝ իր ընկերութեան հետ մեր ունեցած յարաբերութեան կառուցուածքին պատճառով:

Չէի կրնար հաւատալ: Ինչո՞ւ ան այդ բոլոր մանրամասնութիւնները բացատրեց եւ ինծի համոզեց, որ այդ մեծ ծրագիրով հետաքրքրուիմ եւ խանդավառուիմ եթէ վերջին վայրկեանին զայն պիտի խլէր ինձմէ: Նաեւ չհասկցայ, որ իր ընկերութեան հետ իմ յարաբերութիւնս ինչպէս կառուցուած էր, որ մենք իրաւունք չունէինք այդ պարգեւը ստանալու:

Թէեւ ուրիշ հարցումներ ալ հարցուցի, բայց ան յստակ պատասխան մը չտուաւ ինծի: Միակ բանը, որ վստահ գիտէի, այն էր, որ այդ պարգեւը ստանալու իրաւունք չունէի. ատիկա շատ յստակ դարձուց:

Տարի մը անցաւ եւ մեր արտադրութիւնը լաւ էր այդ տարուան համար, ուստի մտածեցի անոր հեռաձայնել եւ անգամ մը եւս հարցնել պարգեւին մասին: Սակայն այս անգամ երբ հեռաձայնեցի, չկրցայ անոր հետ կապուիլ, ուստի անոր օգնականէն խնդրեցի, որ իմ հարցումս փոխանցէ անոր:

Յաջորդ օրը անոր օգնականը հեռաձայնեց ինձի եւ խիստ ձայնով մը յայտնեց, որ փոխնախագահը տարի մը առաջ արդէն ինձի ըսած էր, որ ես չէի կրնար այդ պարգելը ստանալ, եւ ան ոչինչ կրնար ընել այդ մասին:

«Լաւ, ոչինչ», մտածեցի, «գոնէ փորձեցի»:

**ԳԻՏԵՍ, ԱՍՏՈՒԱԾ
ՎԱՐՁԱՏՐՈՂ Է:
ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ-
ՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ
ԱՌԱՏԱՁԵՌՆ ԸԼԼԱԸ
ՇԱՀԱՐԵՐ Է:**

Երբ կ'աղօթէի այդ հարիւր ութսուն հազար տոլարը ուրկէ գտնելու մասին, լսեցի, որ Սուրբ Հոգին ինձի կ'ըսէր, որ փոխնախագահին հեռաձայնեմ եւ անգամ մը եւս այդ պարգեւին մասին հարցնեմ: Ես շատ ուրախ չէի այդ մէկը լսելով: Վերջին երկու տարիներուն ընթացքին անոր

հարցնելու իմ փորձառութենէս ետք ես գիտէի անոր կեցուածքը: Ան ատիկա շատ յստակ դարձուցած էր: Ուստի մտածեցի իրեն ե-նամակ մը դրկել՝ պարզապէս այսպէս ըսած, անոր բազկերակը քննելու համար:

Մօտաւորապէս եօթը օր ետք իր պատասխանը ստացայ, որ ի ուրախութիւն ինձի կ'ըսէր, որ ան մտածեր էր այդ մասին եւ որոշեր էր իմ ընկերութեանս տալ այդ պարգելը: Զարմանալիօրէն, պարգելը երկու հարիւր հազար տոլար էր: Ահա ամենալաւ բաժինը: Այդ պայմանագիրի փոփոխութիւնը տակաւին նոյնը կը մնայ տասնչորս ՏԱՐԻՆԵՐԷ ի վեր, եւ այդ օրուրնէ ի վեր մենք ամէն տարի այդ երկու հարիւր հազար տոլարի պարգելը կը ստանանք:

Գիտէն, Աստուած վարձատրող է: Եւ Աստուծոյ պարտականութիւններուն հանդէպ առատաձեռն ըլլալը շահաբեր է:

Ուստի Տրենտան եւ ես ինչքան վճարեցինք այդ երկու հարիւր հազար տոլարը սերմանելու համար:

Մօտաւորապէս հինգ տարիներ անցան, եւ որոշեցինք, որ իբրեւ եկեղեցի՝ պէտք է աւելի դրամ հաւաքենք՝ եկեղեցւոյ մէջ քանի մը բան ամբողջացնելու եւ կարգ մը գործիքներ գնելու համար: Դարձեալ, Տրենտան եւ ես պէտք է որոշէինք, թէ ինչքան

Կ'ուզէինք սերմանել այդ ծրագիրներուն համար, եւ որոշեցինք, որ հինգ հարիւր հազար տոլար պիտի սերմանենք:

Ուահի, ատիկա բաւական մեծ գումար էր: Բայց զգացինք, որ կրնանք Աստուծոյ վստահիլ անոր համար՝ տեսնելէ ետք, թէ Ան ինչ ըրաւ երկու հարիւր հազար տոլարին հետ: Դարձեալ, մենք մեր կրցածը սերմանեցինք, որ կարծեմ յիսուն հազար տոլար էր, եւ կը սպասէինք, որ Սուրբ Հոգին մեզի ցոյց տար, թէ ո՛րկէ եւ ինչպէս պիտի գրաւէինք մնացեալ չորս հարիւր յիսուն հազար տոլարը:

Կարծեմ վեց շաբաթ անցած էր, եւ ես տեղեկագիր մը ստացայ, որ մեր ընկերութեան վճարումներ կատարելու հետ առնչուած քանի մը պայմանագրական փոփոխութիւններ տեղի պիտի ունենային: Երբ տեղի ունեցող փոփոխութիւններուն հիման վրայ մեր հաշիւները ըրինք, յայտնաբերեցինք, որ յաջորդ երեք տարիներուն ընթացքին մօտաւորապէս վեց հարիւր երեսուն հազար տոլար աւելի պիտի շահէինք քան անցեալին: Աղուոր է, չէ՛: Գիտցիր ինչ: Այդ պայմանագրային փոփոխութիւնը տասնմէկ տարիներէ ի վեր տակաւին նոյնը կը մնայ, եւ մենք տակաւին ամէն տարի պայմանագիրին այդ աւելցած տոկոսը կը ստանանք:

Դարձեալ, Տրենտան եւ ես ինչքան վճարեցինք Աստուծոյ ծրագիրներուն մէջ սերմանելու եւ առատաձեռն ըլլալու համար:

Ուստի յիշեցնեմ, որ Աստուած շահի Աստուած է: Ան բարի է եւ վարձատրող:

ԳԼՈՒԽ 3

ԱՏԱ՛Կ ԵՍ

Կարծեմ ամէն մարդ լսած է Սուրբ Ծնունդի պատմութիւնը եւ այն երեք թագաւորներուն մասին, որոնք ոսկի, կնդրուկ եւ զմուռս բերին Յիսուսի: Բնաւ մտածամձ ես, թէ այդ առարկաները դժբան կ'արժէին: Աւելի լաւ պիտի ըլլար հարցնել. «Առաջին հերթին ինչո՞ւ զանոնք Անոր բերին»:

Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք, յայտնաբերեցի, որ այդ օրերուն սովորութիւն էր իշխանները այդպիսի նուէրներով պատուել, քանի որ զինք որպէս ապագայ թագաւորը կը տեսնէին:

Լաւագոյն գնահատականը այն է, որ այդ նուէրները հաւանաբար հարիւր հազարէն մինչեւ քանի մը հարիւր հազար տոլար կ'արժէին:

Մոգերը հաւանաբար ուսումնասիրած էին Սուրբ Գիրքերը եւ գալիք Մեսիային մասին մարգարէութիւնները, եւ աստղը տեսնելով այն եզրակացութեան հասած էին, որ Ան հոն էր, որմէ ետք երկար ճամբորդութիւն մը կատարեցին՝ Անոր նուէրներ բերելու համար:

Այն գաղափարը, որ անոնք Յիսուսի հանդիպեցան մտորին մէջ, իրականութիւնը չէ, թէեւ մեր Սուրբ Ծննդեան թատրոններուն մէջ այդպէս կը ներկայացուի: Մենք ատիկա գիտենք, քանի որ Մատթէոսը հետեւեալը կ'ըսէ.

«Երբ տրուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամի հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեցին մանուկին: Ապա բացին իրենց արկղերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս»:

—Մատթէոս 2.11

Անոնք Յիսուսի հանդիպեցան Իր տան մէջ, եւ ոչ թէ մտորին մէջ: Հատուածը ցոյց կու տայ, թէ Ան փոքր երեխայ էր, եւ ոչ թէ մանուկ: Ուստի մոգերուն հոն հասնիլը բաւական երկար ժամանակ առած պէտք է ըլլայ:

Երկրորդ՝ ոչ ոք իրապէս գիտէ, թէ մոգերը քանի՛ հոգի էին: Աստուածաշունչը չ'ըսեր քանի հոգի եկաւ, բայց կը նշէ, թէ ինչ բերին: Այն օրերուն կնդրուկը եւ զմուռը իրականութեան մէջ աւելի արժէքաւոր էին քան ոսկին, ուստի անոնց բերած նուէրները չափազանց արժէքաւոր էին:

Ուստի ինչո՞ւ այդ մասին կը խօսիմ: Քեզի հարցում մը հարցնեմ. «Ինչո՞ւ կը կարծես, որ այդ մոգերը այդ նուէրները բերին»:

Քեզի ըսեմ ինչո՞ւ—Յովսէփ իր պարտականութեան համար մատակարարումի պէտք ունէր:

Յիշեցնեմ ...

Աստուած միշտ կը ֆինանսաւորէ Իր պարտականութիւնները— մի՛շտ:

«Ֆէյթ Լայֆ» եկեղեցին լեփ-լեցուն էր: Եկեղեցին լեփ-լեցուն կ'ըլլար շաբաթավերջերուն, լեփ-լեցուն կ'ըլլար շաբթուան ընթացքին, քանի որ մենք երկու հարիւր պզտիկներու ուսուցում կու տայինք, լեփ-լեցուն կ'ըլլար փոքր խումբերով եւ անձնակազմով: Մենք աւելի տեղի պէտք ունէինք: Սկսանք քննարկել, թէ արդեօք եկեղեցւոյ համար երկրորդ տարածք մը պէտք է ունենայինք թէ՛ մեր ունեցած շէնքին վրայ պէտք է շինէիք: Որոշեցինք երկուքն ալ ընել նոյն ատեն:

Ուստի խումբ մը կազմեցինք, որ սկսի եկեղեցւոյ համար նոր տարածք մը փնտռել, եւ զիրենք ուղղեցինք դէպի քաղաքին այն մասը, որուն զգացինք, թէ ամէնէն առաջ պէտք է նայինք:

Միեւնոյն ժամանակ, մենք սկսանք առաջին քայլերը առնել շէնքի յատակագիծի, երկրաչափական ուսումնասիրութիւններու եայլնի մէջ՝ ընդարձակուելու նպատակով: Մենք վարձեցինք ճարտարապետ մը եւ շինարար մը եւ կազմեցինք խորհրդատուութեան խորհուրդ մը, որուն բոլոր անդամները պայմանագիրներ յանձն առնելու եւ զանոնք գործադրելու փորձառութիւնը ունէին:

Յայտնաբերեցինք, որ մեր ներկայ շէնքին վրայ շինութիւն աւելցնելու հետ կապուած լուրջ հարցեր կային: Ամենամեծ հարցը այն էր, որ մեր ներկայ շէնքին մէջ ոչ կոյուղի եւ ոչ ալ ջուր ունէինք: Մենք ջրհորի ջուր կը գործածէինք եւ կոյուղիին համար անկախ համակարգ մը կը գործածէինք:

Գաւառի պատասխանատուները արդէն իսկ մեզի ըսած էին, որ չենք կրնար մեր շէնքին վրայ կառոյց աւելցնել կամ յաւելեալ շէնքեր շինել մեր երեսունվեց արտավար տարածութիւն ունեցող հողին վրայ եթէ քաղաքէն ջուր չառնենք եւ մեր շէնքերը կոյուղի չունենան, որովհետեւ շինարարական առումով մենք առաւելագոյն չափին հասած էինք, որ անոնք կրնային արտօնել: Մենք ատիկա գիտէինք երբ այդ տեղը առինք, բայց այնքան շատ նոր շինարարութիւն կար մեր շուրջը, որ վստահ էի, որ շուտով ջուրի եւ կոյուղիի խողովակները մեր մօտերը պիտի բերէին:

Բայց պարզուեցաւ, որ ջուրի եւ կոյուղիի խողովակները տակաւին նոյնիսկ մեր փողոցը չէին հասած, ուստի հարցը պարզապէս անոնց հասնելով անոնցմէ օգտուիլը չէր: Խողովակները հոն հասած չէին:

Մենք սկսանք գիներու առաջարկներ ստանալ՝ այդ ջուրի եւ կոյուղիի խողովակները մեր շէնքը բերելու համար, որոնց գինը մենք պիտի վճարէինք եւ յետոյ այդ ծախսերուն մեծ մասը պիտի վերստանայինք երբ շինարարական զարգացումները մեզի հայթայթէին խողովակներուն գիները երբ մայր խողովակներուն հասնէին: Պիտի չուզես գիտնալ, թէ որքան պիտի ըլլար այդ ծախսերուն գումարը:

Ուստի վերադարձանք քաղաքապետարան եւ վերանայեցանք անոնց ծրագիրներուն եւ ժամանակացոյցին, թէ այդ ծառայութիւնները երբ տրամադրելի պիտի ըլլային եւ կը յուսայինք, որ անոնք կը մտածեն աւելի շուտ ընել այդ աշխատանքները, քանի որ շրջանը արդէն կը զարգանար եւ վերջաւորութեան այդ ծառայութիւնները պէտք պիտի ըլլային: Սակայն անոնք չշարժեցան: Ուստի դժբախտ ժամանակէն այդ ծառայութիւնները տրամադրելի պիտի ըլլային: Բնաւ յայտնի չէր:

Գիտէինք, որ չէինք կրնար տարիներ սպասել, որ այդ ջուրի եւ

**ԱՍՏՈՒԱԾ ՄԻՇՏ ԿԸ
ՖԻՆԱՆՍԱԿՈՐԻ ԻՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ-ՄԻՇՏ:**

Կոյուղիի խողովակները հասանելի ըլլային մեր շրջանին մէջ, ուստի որոշեցինք մեր ներկայ շէնքին վրայ շինութիւն աւելցնելու աշխատանքը յետաձգել եւ մեր առաջնակարգ

նպատակը եղաւ եկեղեցւոյ համար տարածք մը փնտռել: (Այդ հանդիպումէն մինչեւ այս գլուխը գրելս արդէն չորս տարիներ անցած են, եւ տակաին քաղաքապետարանէն ոչ մէկ լուր չենք առած, թէ ե՞րբ կոյուղին պիտի սարքեն):

Մեր խումբը վեց ամիս փնտռեց եկեղեցւոյ համար այդ կատարեալ տարածքը առանց յաջողութիւն գտնելու: Այնպէս կը թուէր, որ մեր ուզած չափանիշներուն յարմարող շէնքեր չկային, զորս կրնայինք վարձել կամ գնել: Ուստի մտածեցինք միջոցառումներու կեդրոն մը վարձել մեր շրջանին մէջ, եւ միայն շաբաթավերջերուն համար, որ ամսական երեսուն հազար տուար պիտի արժէր: Բացի այդ ծախսէն, ամէն շաբաթ պէտք էր մեր բոլոր ապրանքները դնէինք եւ ետ վերցնէինք: Իրականութեան մէջ ես չէի ուզեր մեր ժողովուրդը այդ կացութեան մէջ դնել: Կ'ուզէի մնայուն տեղ մը ունենալ, զոր կրնայինք կառավարել: Այդ միջոցառումներու կեդրոնին գծով խաղաղութիւն չունեցանք:

Յետոյ մտածեցինք տեղ մը վարձել խարխլած առետուրի կեդրոնի (*մոլի*) մը մէջ: Սակայն նկատի առնելէ ետք բոլոր վերանորոգութիւնները եւ փոփոխութիւնները, զորս պէտք է ընէինք, որպէսզի շինարարական օրէնքներուն պահանջները բաւարարուէին, որոշեցինք, որ ատիկա ալ յաջողութիւն պիտի չգնտէր:

Շէնք մը գտնելու մեր կորիզի արժէքներէն մէկը այն էր, որ ատիկա պէտք է յարմար ըլլար շաբաթուան ընթացքին մանուկներուն կրթութեան համար գործածուելու: Մեր եկեղեցւոյ մէջ ունինք հարիւրաւոր ընտանիքներ, որոնք տնային ուսուցման մեթոտին կը հետեւին, եւ մենք ամէն շաբաթ այդ ընտանիքներուն, որոնք միասին կը համագործակցին՝ իրենց զաւակներուն ուսում տալու համար, եկեղեցւոյ մէջ տեղ կը տրամադրենք, որ միասին հանդիպին ինչպէս նաեւ ամէն շաբաթ դասաւանդութեան

համար դասարաններ կը տրամադրենք: Մենք բազմաթիւ անգամներ խօսած ենք օր մը դպրոց մը, մանուկներու ցերեկային խնամքի կեդրոն մը, դպրոցէն ետք աշակերտներու դաս սորվեցնելու ծրագիր մը եւ ուրիշ շատ մը ծրագիրներ ունենալու հնարաւորութեան մասին՝ մեր տեղական համայնքներուն ծառայելու համար: Կ'ուզէինք գտնել տեղ մը, որ մեզի պիտի արտօնէր այդ բաները ընել: Այդ շէնքը ստանալու համար սերմ ցանած էինք, հոչակելով, որ մեր պէտքերուն համար կատարեալ շէնքը պիտի գտնենք, բայց ասիկա տակաւին չէր երեւնար:

Տրենտան եւ ես Ֆորթ Ուլրթ, Թեքսասի մէջ ժողովի մը ներկայ պէտք է գտնուէինք՝ աջակցելու համար նոր «Վիքթորի Թելեվիզիոն Նեթուրըք»ին: Երբ հոն էինք, մինչ հոն գտնուող մարդոց մէջ նստած էի, Աստուած ինծի հետ խօսեցաւ: Ըսաւ. *«Կ'ուզեմ, որ հարիւր հազար տղար սերմանես այս հեռադեսիլի կայանին համար: Եկեղեցիդ վերադարձիր, գրէ 'չէք'ը եւ բոլոր ծառայութիւններուն ընթացքին զայն ձեռքդ բռնէ եւ այդ սերմին վրայ հոչակէ, որ կատարեալ շէնքը պիտի գտնես: Նաեւ սաստիկ Սատանան եւ անոր ըսէ, որ դադրի Իմ գործիս արգելք ըլլալէ: Երբ կը սերմանես, հոչակէ, որ այդ մէկը կատարուած է»:*

Ուստի այդպէս ըրինք: Տուն վերադարձանք, եւ զանձապահիս հեռաձայնեցի եւ անոր ըսի, որ հարիւր հազար տղարնոց չէք մը պատրաստէ «Վիքթորի Թելեվիզիոն Նեթուրըք»ին համար: Յետոյ այդ չէքը տարի իւրաքանչիւր պաշտամունքի, եւ ամբողջ եկեղեցին ինծի հետ համաձայնեցաւ երբ այդ սերմը սերմանեցինք՝ կատարեալ շէնք մը ունենալու համար: Սաստեցինք Սատանան եւ անոր ըսինք, որ դադրի միջամտելէ եւ մեր մատակարարումը ուշացնելէ:

Յաջորդ օրը, Երկուշաբթի առտու, հեռաձայն մը ստացանք մեր աղջիկէն, որ ըսաւ, թէ երբ մենք ժողովի մէջ էինք Թեքսասի մէջ, անշարժ գոյքի գործակալը առաջարկած էր իրենց ցոյց տալ հետաքրքրական կալուած մը: Անիկա վարձու չէր եւ իրականութեան մէջ մեր պիտօճէէն վեր էր, քանի որ անոր ծախու գինը 7.9 միլիոն տոլար էր: Բայց անոր գինը ատկէ շատ աւելի բարձր էր, քանի որ անիկա դրամատան կողմէ բռնագրաւուած

կալուած էր: Ան ըսաւ, որ ատիկա կատարեալ շէնքը պիտի ըլլար մեզի համար, բայց անշուշտ ան գիտէր, որ ֆինանսական առումով ատիկա մեզի համար ընտրութիւն չէր: Բայց ան կ'ուզէր գիտնալ եթէ ատով հանդերձ տակաւին կ'ուզենք տեսնել զայն: Ըսինք՝ անշուշտ:

Ուստի Երեքշաբթի առտու գացինք կալուածը տեսնելու: Կալուածը եօթը արտավար տարածութեամբ հողամասի մը վրայ շինուած էր եւ անցեալին ամէնէն սուղ անձնական դպրոցներէն մէկուն տարածքը եղած էր: Անիկա ունէր երեք յարկանի դպրոցի շէնք մը եւ երկու ուրիշ մեծ շէնքեր, ինչպէս նաեւ կալուածին վրայ տուն մը: Ունէր վազքուղի մը, չորս թենիսի դաշտեր, ծանրութիւն վերցնելու սենեակներ, արուեստի շէնք մը՝ լուսանկարներու տարրալուծարանով, խեցեգործութեան երկու փուռ, սենեակ մը՝ լեցուն կարի գործիքներով եւ արուեստի ապրանքներով, տասնեակ մը երաժշտական գործիքներ երաժշտութեան սենեակին մէջ, եւ շատ աւելին: Ամբողջ կալուածը լիովին կահաւորուած եւ ապրանքներով լեցուն էր:

Երբ կը շրջէինք կալուածին մէջ, պարզապէս հիանալի էր: Սակայն միեւնոյն ժամանակ գիտէինք, որ չենք կրնար անոր համար պարտքի տակ մտնել: Մօտաւորապէս երեք միլիոն տոլար ունէինք որպէս շէնքի դրամագլուխ, բայց տակաւին պէտք էր գրեթէ հինգ միլիոն տոլար պարտքի առնէինք:

Այդ գիշեր մեր ծառայութեան գործակիցներէն մէկուն հետ ընթրիք ունէինք: Այդ ընթրիքը աշնան ընթացքին հաւանաբար չորս անգամ ծրագրուած եւ անոր թուականը փոխուած էր, քանի որ երկուքս ալ շատ զբաղած էինք, բայց այդ գիշեր յարգեցինք թուականը:

Երբ կը խօսէինք, մարդը սկսաւ ինծի հարցնել շինարարական ծրագիրին մասին, եւ անոր պատմեցի այն բոլոր ուշացումներուն մասին, որոնց հանդիպած էինք: Ինծի նայեցաւ եւ ըսաւ. «Գիտէս, համաձայն չեմ: Իրապէս կը կարծեմ, թէ պէտք է մտածես փոխարէնը եկեղեցւոյ նոր տարածք մը բանալ»: Անոր ըսի, որ համաձայն ենք եւ, իրականութեան մէջ, վեց ամիսէ ի վեր շէնք կը փնտռէինք, բայց չգտանք: Սակայն անոր ըսինք, որ տակաւին այդ

օրը հիանալի տարածք մը տեսած էինք մեր եկեղեցիին համար, բայց վարձու չէր եւ մեր նախատեսած գինին սահմանէն վեր էր:

Ան քանի մը հարցում հարցուց անոր մասին, յետոյ Տրենտային նայեցաւ եւ ըսաւ. «Հապա եթէ ատիկա ձրի ըլլայ»: Տրենտան չպատասխանեց, քանի որ կը կարծէր, թէ ան կատակ կ'ընէ: Յետոյ ան նորէն կրկնեց. «Տրենտա՛, ըսի՛ հապա եթէ ատիկա ձրի ըլլայ»:

Տրենտան հարցուց. «Ի՞նչ ըսել կ'ուզես»:

«Անոր համար չէք մը պիտի գրեմ», ըսաւ:

Տրենտան եւ ես ապշած մնացինք:

Կարճ ըսելով՝ ան իրապէս վճարեց անոր գինը: Յետոյ մենք որոշ գումար մը ծախսեցինք՝ շէնքը վերանորոգելու եւ փոխելու համար, որպէսզի մեր օգտագործման նպատակին ծառայէ: Արդիւնքը կատարեալ տարածք մը եղաւ: Եւ շէնքին գինը վճարուած է:

Ես չէի կրնար ատիկ կատարեալ տարածք մը ծրագրել մեր պէտքերուն համար: Անոր ամէն բանը կատարեալ է: Մեր ապահովագրական ընկերութեան համար գնահատում մը ըրինք այդ կալուածին համար, եւ ըստ գնահատումին կալուածին գինը տասնմէկ միլիոն տոլար էր, ներառեալ բովանդակութիւնը:

Մտածէ այդ մասին. հիմա մենք ունինք տասնմէկ միլիոն տոլար արժողութեամբ եկեղեցւոյ տարածք մը՝ ութսունինը հազար քառակուսի ոտնաչափ (մօտաւորապէս ութը հազար երկու հարիւր վաթսունութը քառակուսի մետր) տարածութեամբ, որուն գինը վճարուած է: Այդպիսի պատմութիւններ չեն սիրեր:

Ինչպէս ըսի, Աստուած միշտ կը ֆինանսաւորէ Իր պարտականութիւնները: Ատիկա Անոր ծառայութիւնն է, եւ ոչ թէ մերը: Մենք պարզապէս Անոր կողքին կ'աշխատինք ընտանեկան գործին մէջ:

Հիմա ըսեմ, թէ ի՞նչ պատահեցաւ այդ ամուսինին եւ կնոջ, որոնք մեր փոխարէնը շէնքը ֆինանսաւորեցին: Առաջին հերթին

**ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ՁԵՒԸ ՄԻՇՏ ԿԸ
ՅԱԶՈՂԻ:**

քանի որ անոնք նուիրատուություն ըրած էին, անոնց տուրքերէն աւելի պակսեցաւ քան այն գումարը, որ անոնք շէնքերուն համար վճարած էին: Ինչպէս: Շէնքը երկու տարի անոնց անունով պիտի ըլլար: Յետոյ անոնք շէնքը ծառայութեան նուիրեցին՝ այդ ժամանակուան գնահատուած գինով:

Ասիկա ռազմավարություն մըն է, որմէ տեղեակ պէտք է ըլլաս եթէ դուն հովիւ ես եւ շէնքի պէտք ունիս: Ուստի վերջաւորութեան շէնքը մեր երկուքին համար ձրի եղաւ՝ անոր կողմէ եղած իմաստուն տուրքերու ծրագրաւորումին իբրեւ արդիւնք: Բայց նոյնիսկ ատիկա պատմութեան հիանալի կողմը չէր:

Այս գործակիցը կը փորձէր քաղաքին մէջ ուրիշ ընկերություն մը գնել, որ ծախու էր այն ատեն երբ մենք կալուածին կը նայէինք: Թէեւ ան կանխիկ դրամ կ'առաջարկէր, բայց անոր առաջարկը պէտք էր ընկերութեան սեփականատէրերուն կողմէ ընդունուէր, որպէսզի անոր տային ընկերութեան արտադրանքները ծախելու առանձնաշնորհումը եւ դժբախտաբար անոնք վերադարձան եւ ըսին, թէ ուրիշ մէկու մը առաջարկած են: Ան շատ հիասթափուած էր անոնց որոշումէն: Ինծի ըսաւ, որ չէր կրնար ատիկա իր միտքէն հանել. իր հոգիին մէջ կը զգար, որ ատիկա վերջը չէր, տակաւին յոյս կար:

Ուստի երբ ան այդ դրամը սերմանեց մեր շէնքին համար, ինծի ըսաւ, որ ատիկա սերմանեց հաւատալով, որ ընկերութեան սեփականատէրերը իրենց միտքը պիտի փոխեն, քանի որ ֆինանսապէս ան շատ աւելի զօրաւոր դիրքի վրայ էր քան միւսները, եւ ան կանխիկ պիտի վճարէր:

Իրապէս ալ երբ մեր կալուածին գործարքը կատարուեցաւ, ան հեռաձայն մը ստացաւ սեփականատէրերէն, որոնք ըսին, թէ նախորդ գործարքը ձախողած էր եւ եթէ կը փափաքէր, հիմա ինք կրնար առնել այդ գործարքը: Ան ըսաւ՝ այո՛, վստահ կ'ուզէր:

Յետոյ այդ գործարարական նոր կալուածին շուրջ համաձայնությունը կնքելէն քանի մը շաբաթ առաջ, յանկարծ բոլորովին անսպասելի գործարք մը առաջարկուեցաւ անոր, որ պիտի արտադրէր ամբողջ գումարը, որուն ան պէտք ունէր՝ այդ գործարքին գինը կանխիկ վճարելու համար: Ան բնաւ պէտք

չունեցաւ գործածելու այդ կանխիկ դրամը, որ մէկ կողմ դրած էր՝ այդ ընկերութիւնը գնելու համար: Ինծի ըսաւ, որ կարծես այդ ընկերութիւնը ձրի ստացաւ:

Օ՛հ, չմոռնամ ըսելու, որ երբ ան գնեց այդ ընկերութիւնը, անոր գինը գնահատուեցաւ ւաւելի քան կրկնապատիկը այն գումարին, որ ան վճարած էր անոր համար: Երբ ան հեռաձայնեց ինծի այն օրը, որ վերջնականապէս այդ կալուածին տիրացաւ, շատ խանդավառուած էր:

Թագաւորութեան ձեւը մի՛շտ կը յաջողի:

Այս գործակիցը Աստուծոյ պարտականութիւններուն հանդէպ առատաձեռն էր եւ հնազանդ՝ հետեւելու եւ նայելու, թէ Աստուած ինչ ըրաւ մեր երկուքին համար: Մենք սերմ ցանեցինք (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուինք) նոր հեռատեսիլի կայանի մը համար, որ Աստուծոյ յանձնարարութիւններէն մէկն էր, եւ տեսէք ինչ պատահեցաւ մեզի հետ:

Աստուծոյ եւ Աստուծոյ ժողովուրդին հանդէպ առատաձեռն ըլլալը այնպիսի դռներ պիտի բանայ, որ նոյնիսկ չէիր գիտեր, որ գոյութիւն ունին:

Մարդիկ միշտ ինծի կը հարցնեն. «Կէրի՛, եթէ այսօր ինծի մէկ գլխաւոր բանալի մը պիտի տայիր Թագաւորութեան ֆինանսաւորումին մասին, ինչ պիտի ըլլար ատիկա»:

Շատ բաներ կան, զորս կ'ուզեմ անպայման քեզի ըսել: Բայց հետեւեալ խրատը անգին է: Ուստի անպայման գրէ Թագաւորութեան վերաբերող հետեւեալ սկզբունքը:

Եթէ այս գիրքին մէջ գտնուող ուրիշ որեւէ բանէ չօգտուիս, ասկէ օգտուիր:

Կ'ուզեմ անդրադառնալ Ղուկաս 4-ին մինչ կը սկսիմ քակել կամ վերլուծել Թագաւորութեան այս հզօր օրէնքը քեզի համար: Գիտեմ, որ հետեւեալ հատուածը քիչ մը ւաւելի երկար է այն հատուածներէն, զորս յաճախ կը մէջբերեմ, բայց ամբողջ հատուածը կարդալը քեզի պիտի տայ անցած դարձածին համը եւ պիտի բացատրէ, թէ Յիսուս ինչո՞ւ այդպէս պատասխանեց:

«Երբ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, իր սովորութեանը պէս Շաբաթ օրը մտաւ ժողովարանը ու ելաւ որ կարդայ: Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը: Երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր. “Տիրոջը Հոգին իմ վրաս է. որովհետեւ զիս օծեց աղքատներուն աւելարարան քարոզելու, [...] գերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատելու, Տիրոջը ընդունելի տարին քարոզելու”: Եւ գիրքը գոցելով՝ տուաւ սպասաւորին ու նստաւ: Ժողովարանը եղողներուն ամէնքը աչքերնին տնկած անոր կը նայէին: Սկսաւ անոնց ըսել. “Այսօր այս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին”: Ամէնքը անոր համար կը վկայէին ու կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ ու կ’ըսէին. “Ասիկա Յովսէփին որդին չէ”: [Յիսուս] ըսաւ անոնց. “Իրաւ դուք ինձի պիտի ըսէք այս առակը. ‘Բժիշկ, քու անձդ բժշկէ’: Որչափ բաներ լսեցինք, որ Կափառնայումի մէջ եղան, հոս ալ ըրէ քու քաղաքիդ մէջ”: Յիսուս ըսաւ. “Ճշմարիտ կ’ըսեմ ձեզի, թէ՛ մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի չէ: Արդարեւ կ’ըսեմ ձեզի, թէ՛ շատ որբեւարիներ կային Եղիային օրերը Իսրայէլի մէջ, երբ երեք տարի ու վեց ամիս երկինք գոցուեցաւ, այնպէս որ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ. բայց Եղիա անոնցմէ մէկուն չորկուեցաւ, հապա միայն Սիդոնացիներու Սարեփթա քաղաքին մէջ որբեւարի կ’ընէր մը”»:

—Ղուկաս 4.16-26

(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այս հատուածը պատահեցաւ անապատին մէջ Յիսուսի փորձուելէն ետք երբ Ան Իր հայրենի քաղաքը վերադարձաւ, ուրկէ կը սկսինք պատմութիւնը:

Քանի որ Յիսուս Նազարէթի մէջ մեծցած էր, անոնք մօտէն ծանօթ էին Անոր եւ Անոր ընտանիքին, եւ կրնանք ենթադրել, որ Ան Սուրբ Գիրքը բազմաթիւ անգամներ կարդացած էր տեղական ժողովարանին մէջ: Կայ բան մը, որ պէտք է գիտնաս

այն հատուածին մասին, զոր Յիսուս ընտրեց՝ անոնց կարդալու համար: Ան կարդաց Եսայի 61.1-2-էն, եւ կարդաց մինչեւ այն տեղը, ուր կ'ըսէ. « [...] **Տիրոջը ընդունելի (բարեհաճութեան) տարին [...] հրապարակելու**», յետոյ Ան կանգ առաւ:

Անոր կանգ առած բաժինին հետաքրքրական մասը այն է, որ ատիկա նախադասութեան կիսուն էր, ուստի գիտենք, որ Ան ճիշդ այդ տեղը կեցաւ պատճառով մը:

Տիրոջը ընդունելի կամ բարեհաճութեան տարին յրբեւեան տարին էր, եւ ատիկա կը ներկայացնէր Աստուծոյ Թագաւորութեան վերականգնումը երկրի վրայ: Անիկա շուքն էր այն բաներուն, որ Մեսիան պիտի վերականգնէր երբ գար: Ուստի երբ Յիսուս այդ նախադասութեան վրայ կանգ առաւ եւ յետոյ ըսաւ. «**Այսօր այս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին**», Ան կը յայտարարէր, որ Ինք Մեսիանն է:

Յետոյ Ան շարունակեց եւ մարգարէացաւ այն բաները, որ ապագային Իրեն պիտի ըսէին, որ հիմնականօրէն հետեւեալն էր. «Մենք չենք հաւատար քեզի. փաստէ մեզի», քանի որ Անոր չէին հաւատար:

«[Յիսուս] ըսաւ անոնց. “Իրաւ դուք ինձի պիտի ըսէք այս առակը. ‘Բժիշկ, քու անձդ բժշկէ’: Որչափ բաներ լսեցինք, որ Կափառնայումի մէջ եղան, հոս ալ ըրէ քու քաղաքիդ մէջ”:

Կափառնայումը այն տեղն էր, ուր Յիսուս հիմնեց Իր առաքելութեան կեդրոնատեղին եւ ուր Անոր հրաշքներուն մեծ մասը կատարուեցան: Ան կը մարգարէանար անոնց, որ Կափառնայումի մէջ տեղի ունենալիք մեծ հրաշքներուն մասին պիտի լսեն, եւ երբ այդ բաները լսեն, Անոր պիտի ըսեն, որ գայ եւ ինչ որ հոն գործեր է, Նազարէթի մէջ ալ կատարէ, որպէսզի Իրեն հաւատան: Իրականութիւնը այն է, որ Ան կը դատապարտէր զանոնք իրենց կարծրացած սիրտերուն եւ անհաւատութեան համար: Ան գիտէր, որ անոնք չէին հաւատար Իրեն, եւ գիտէր, որ երբեք ալ պիտի չհաւատան: Ատիկա գիտենք, քանի որ Ան ւաւելցնելով ըսաւ, որ անոնք նաեւ պիտի ըսեն. «**Բժիշկ, քու անձդ**

բժշկէ» ակնարկելով այն խօսքին, որ Անոր խաչելութեան ատեն պիտի ըսուէր:

«Անոնք որոնք կ'անցնէին խաչին առջեւէն, կը նախապէհն զինք եւ իրենց գլուխը շարժելով կ'ըսէին. "Դուն տաճարը պիտի քանդէիր եւ երեք օրէն շինէիր, համ. եթէ Աստուծոյ Որդի ես՝ դուն քեզ ազատէ եւ վար իջիր խաչէն": Նոյնպէս աւագ քահանաները Օրէնքի ուսուցիչներուն եւ երէցներուն հետ կը ծաղրէին զինք ու կ'ըսէին. "Ուրիշները ազատեց, բայց ինքզինք չի կրնար ազատել: Եթէ Իսրայէլի թագաւորն է՝ թող հիմա խաչէն վար իջնէ, որպէսզի հաւատանք իրեն»»:

—Մատթէոս 27.39-42

Իր առաքելութեան սկիզբէն մինչեւ վերջ Ան կ'ըսէր, որ հակառակ այն բոլոր բաներուն, զորս պիտի լսէին, պիտի չընդունէին Իր պատգամը: Յետոյ Ան Իր պատգամը անլի յստակ դարձուց անոնց՝ պատմելով Եղիային եւ որբեարի կնոջ պատմութիւնը, ուր Աստուած ստիպուեցաւ Եղիան Իսրայէլէն դուրս դրկել, քանի որ Իսրայէլի ժողովուրդին սիրտը շատ կարծր էր եւ չէին կրնար հաւատալ: Ասիկա այնքան զայրացուց օրէնքի ուսուցիչները, որ անոնք Յիսուսը դուրս հանեցին, որպէսզի զԱյն սպաննեն, բայց Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Ան անոնց մէջէն անցաւ գնաց:

Հիմա կ'ուզեմ, որ բառ մը գրես եւ զայն դնես տեղ մը, որ պիտի յիշես, որովհետեւ ատիկա շատ կարեւոր է քու ֆինանսական ապագայիդ համար: Գրէ «ՂՐԿՈՒԱԾ» բառը: Այո՛, «ՂՐԿՈՒԱԾ» բառը: Ասիկա շատ կարեւոր է:

ՂՐԿՈՒԱԾ

Կարդանք Գ.Թագաւորաց 17.7-16-ը, ուր պիտի գտնենք խորհուրդ մը, որ այնքան հզօր է, որ ամբողջովին պիտի փոխէ կեանքդ:

«Ժամանակ մը ետքը հեղեղապըր ցամքեցաւ, որովհետեւ երկրին վրայ անձրեւ չեկաւ: Տիրոջը խօսքը անոր եղաւ՝ ըսելով. "Ելիր, Սիդոնացիներու Սարեփթան գնա ու հոն

նստի: Ահա հոն որբեւարի կնոջ մը հրամայէր եմ, որ քեզ կերակրէ”: Անիկա ելաւ Սարեփթա գնաց ու քաղաքին դուռը հասնելով՝ փեցաւ, որ որբեւարի կին մը փայտ կը հաւաքէր: Զանիկա կանչեց ու ըսաւ. “Կ’աղաչեմ, ինձի ամանով քիչ մը ջուր բեր, որպէսզի խմեմ”: Երբ անիկա բերելու գնաց, Եղիա անոր ետեւէն կանչեց ու ըսաւ. “Ձեռքդ պատրառ մըն ալ հաց ա՛ն ու ինձի բեր”: Կինը ըսաւ. “Քու Տէր Աստուածդ կենդանի է, որ նկանակ չունիմ, բայց միայն կարասին մէջ մէկ բուռի չափ ալիւր կայ ու կուժին մէջ ալ քիչ մը իւղ կայ: Ահա երկու կտոր փայտ կը հաւաքեմ, որպէսզի երթամ զանիկա ինձի ու իմ փղուս համար եփեմ եւ ուտենք ու երբը մեռնինք”: Եղիա անոր ըսաւ. “Մի՛ վախնար, գնա՛ ըսածիդ պէս ըրէ. բայց անկէ նախ ինձի համար պզտիկ շօթ մը շինէ՛ ու ինձի բեր եւ քեզի ու քու փղուդ համար երբը շինէ, քանի որ Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ’ըսէ. “Կարասէն ալիւրը պիտի չհատնի ու կուժէն իւղը պիտի չպակսի՝ մինչեւ այն օրը, երբ Տէրը երկրի վրայ անձրեւ տայ”»: Կինը գնաց ու Եղիային ըսածին պէս ըրաւ ու անիկա եւ ինք ու իր ընտանիքը երկար ատեն կերան: Կարասէն ալիւրը չհատնաւ ու կուժէն իւղը չպակսեցաւ, Տիրոջը՝ Եղիային միջոցով ըսած խօսքին համեմատ»:

– Գ.Թագաւորաց 17.7-16

Ներածական մը տամ: Սաստիկ երաշտ կար եւ այն հեղեղատը, ուր Եղիան կը մնար, ցամքեցաւ: Հիմա ան նոր տեղ մը պէտք է փոխադրուէր, որպէսզի կերակուր եւ ջուր գտնէր: Աստուած կը խօսի անոր հետ եւ կը հրամայէ՝ **“Ելի՛ր, Սիդոնացիներու Սարեփթան գնա ու հոն նստի՛: Ահա հոն որբեւարի կնոջ մը հրամայէր եմ, որ քեզ կերակրէ”**: Պէտք է նշել, որ այդ օրերուն Սարեփթան Քանանի քաղաքներէն մէկն էր եւ Իսրայէլին չէր պատկանէր:

Երբ Եղիան քաղաքին կը մօտենայ, կը տեսնէ, որ որբեւարի կին մը փայտ կը հաւաքէ եւ կը կանչէ զինք, որ իրեն ջուր տայ: **«Երբ անիկա բերելու գնաց, Եղիա անոր ետեւէն կանչեց ու ըսաւ. “Ձեռքդ պատրառ մըն ալ հաց ա՛ն ու ինձի բեր”»**: Կինը կը պատասխանէ, որ կերակուր չունի, իր ունեցածը հազիւ կը բաւէ,

որ մէկ կերակուր եւս պատրաստէ իր տղուն եւ իրեն համար:

Բայց յետոյ մարգարէն չափազանց տարօրինակ բան մը կ'ընէ, բան մը, որ կրնաս նոյնիսկ աներեւակայելի համարել՝ նկատի ունենալով տիրող պայմանները: Անոր կ'ըսէ, որ տուն երթայ եւ իրեն համար պատառ մը հաց պատրաստէ եւ իրեն բերէ նախքան իր ընտանիքին համար շինելը: Հասկնալով, որ կինը ինչպէս կրնար ընկալել իր ըսածը, ան իր թելադրանքները հետեւեալ խօսքերով կը սկսի. «Մի՛ վախնար»: Յետոյ հետեւեալը կը հոչակէ անոր վրայ.

«Որովհետեւ Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. «Կարասէն ալիւրը պիտի չհատնի ու կուժէն իւղը պիտի չպակսի՝ մինչեւ այն օրը, երբ Տէրը երկրի վրայ անձրեւ տայ»:

Ունու, կինը ինչ պիտի ընէ: Արդեօք պիտի հաւատայ անոր եւ իր տղուն վերջին կերակուրը անոր պիտի տայ:

«Կինը գնաց ու Եղիային ըսածին պէս ըրաւ ու անկկա [Եղիան] եւ ինք ու իր ընտանիքը երկար ատեն կերան: Կարասէն ալիւրը չհատաւ ու կուժէն իւղը չպակսեցաւ, Տիրոջը՝ Եղիային միջոցով ըսած խօսքին համեմատ» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Կինը իսկապէս հաւատաց անոր, եւ ուշադրութեամբ նայիր արդիւնքին՝ Եղիան եւ կինը ու իր ընտանիքը երկար ատեն կերան: Մէկ բառ պիտի փոխեմ եւ նորէն պիտի ըսեմ ատիկա. «Աստուծոյ պարտականութիւնը եւ կինը եւ իր ընտանիքը երկար ատեն կերան»:

Անցեալ գլուխին մէջ մենք խօսեցանք տալու վախին մասին, թէ՛ քու կարիքներդ հոգալու համար բաւարար պիտի չունենաս եթէ Աստուծոյ պարտականութիւններուն տաս: Ինչպէս կը տեսնես եւ միշտ ալ պիտի տեսնես, ատիկա երբեք պիտի չպատահի:

Ուստի քեզի հարցում մը հարցնեմ. «Կինը բնաւ վստահեց այդ վերջին կերակուրը տալով»: Ո՛չ, չվստահեց: Ատիկա իր կեանքը փրկեց:

Նախքան «ՂՐԿՈՒԱԾ» բառին մասին մեր քննարկումին սկսիմ, կ'ուզեմ ուրիշ հարցում մըն ալ հարցնել: Ինչո՞ւ մարգարէն պնդեց, որ կինը նախ իր շօթը պատրաստէ: Ոչ թէ իր շօթին հետ պատրաստէ, այլ՝ առանձին: Ան նոյնիսկ խնդրեց, որ կինը նախ ատիկա իրեն բերէ նախքան սկսի իրը եփել: (Յիշեցնեմ, որ պէտք է հոգետոր գիտնական ըլլաս եւ հարցումներ հարցնես):

Այս բոլոր պատմութիւնները քեզի ցոյց կու տան Թագաւորութեան օրէնքին եւ գործելաձեւին մասին կենսական խորաթափանցութիւններ կամ յայտնութիւններ: Արդե՞ծ Եղիան այնքան անօթի էր, որ չուզեց սպասել մինչեւ որ կինը ամբողջ ընտանիքին համար կերակուր պատրաստէր: Ո՛չ, անոր այդ ըրածին ետին շատ կարետոր պատճառ մը կար: Մարգարէն գիտէր, որ երբ կինը իր առաջին շօթը իրեն կու տար, նախքան իրը պատրաստելը, անոր այդ արարքը անոր ամբողջ ալիւրը եւ իւրը Աստուծոյ Թագաւորութեան եւ Անոր պարտականութեան օրինական իշխանութեան տակ կը դնէր: Նորէն պիտի ըսեմ:

Երբ կինը առաջին շօթը մարգարէին (Աստուծոյ պարտականութեան) տուաւ, անոր իւրը եւ ալիւրը թագաւորութիւններ փոխեցին: Հիմա անոնք Աստուծոյ թագաւորութեան օրինական իշխանութեան ներքեւ կը գտնուէին: Միայն այն ատեն Աստուած օրինական կերպով կրնար ալիւրը եւ իւրը բազմապատկել:

Պիտի տեսնես, որ այս նոյն սկզբունքը հետագային Յիսուսի առաքելութեան մէջ կը գործէ երբ Ան հինգ նկանակով եւ երկու ձուկով հինգ հազարը կը կերակրէ:

Եթէ կը յիշես պատմութիւնը, Յիսուս աշակերտներուն ըսաւ, որ երթան եւ տեսնեն, թէ ինչ ունին: Անոնք վերադարձան եւ ըսին, որ միայն հինգ նկանակ եւ երկու ձուկ ունին: Յիսուս Իր աշակերտներուն ըսաւ, որ հացը եւ ձուկերը Իրեն բերեն: Աստուածաշունչը կը նշէ, որ Ան առաւ զանոնք եւ օրհնեց եւ ապա աշակերտներուն վերադարձուց: Գիտեմ, որ Յիսուս ոչ մէկ բան կ'ընէր կրօնական ձեւով, ուրեմն ինչո՞ւ ըրաւ ատիկա:

Ան պէտք էր ատիկա ընէր, այլապէս հացը եւ ձուկերը պիտի չբազմապատկուէին: Գիտեմ, հինգ նկանակը եւ երկու ձուկը

օրինականօրէն մարդոց տիրութեան տակ կը գտնուէին այդ ժամանակ: Օրինականօրէն Աստուած ոչինչ կրնար ընել անոնց մասին: Բայց երբ անոնք յօժարաբար Յիսուսի տրուեցան եւ Ան օրինեց զանոնք, անոնք Աստուծոյ Թագաւորութեան օրինական իշխանութեան տակ անցան: Միայն այն ատեն հացը եւ ձուկերը կրնային բազմապատկուիլ:

Նոյն սկզբունքը կը տեսնենք Ղուկաս 5-ին մէջ, ուր Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը ամբողջ գիշերը աշխատած եւ ոչինչ որսացած էին: Յիսուս Պետրոսին նաակին մէջ մտնելով ցամաքէն քիչ մը կը հեռացնէ նաակը եւ բացմութեան կը քարոզէ, որմէ ետք Պետրոսին կ'ըսէ, որ իր ուռկանը խորունկ ջուրերուն մէջ նետէ, որպէսզի ձուկ որսայ:

Ինչպէս կը յիշես, վերջաւորութեան անոնք ունեցան երկու նաակ, որոնք այնքան մեծ քանակութեամբ ձուկով լեցուեցան, որ այլեւս պիտի ընկղմէին: Երբ Յիսուս նաակը փոխ առաւ, իրականութեան մէջ Ան փոխ կ'առնէր ձկնորսութեան գործը, զոր պիտի գործածէր այդ օրուան քարոզին համար: Այն պահուն, որ Ան տիրացաւ անոր, այդ ամբողջ գործը Աստուծոյ Թագաւորութեան օրինական իշխանութեան տակ դրուեցաւ: Ասիկա երկինքին օրինական իրաւունք տուաւ, որ գիտութեան խօսք դրկէ Յիսուսի, Անոր տեղեկացնելով, որ ձուկերը ճիշդ կը գտնուէին, եւ այդպիսով հսկայական որս ունեցան: (Միշտ կ'ըսեմ, որ ռեւէ մէկը կրնայ ձուկ որսալ եթէ Յիսուս անոր ըսէ, թէ ճիշդ են անոնք եւ թէ ինչպէս պէտք է որսայ զանոնք: Ասիկա այն սկզբունքն է, որ դուն ալ պիտի գործածես երբ Աստուծոյ պարտականութիւններուն համար կու տաս):

Հիմա, վերադառնալով Եղիայի մասին մեր պատմութեան, այդ որբեւարի կինը համագործակցեցաւ Եղիային եւ անոր պարտականութեան հետ եւ այդպիսով անոր հետ նոյն վարձատրութիւնը քաղեց: Այն ատեն Եղիան ԵԻ որբեւարի կինը եւ անոր ընտանիքը պարէն ստացան: Հասկնալի է:

Այս սկզբունքին մասին աւելի երկար պիտի խօսիմ այս գիրքին վերջաւորութեան, բայց կ'ուզեմ անցնիլ այս պատմութեան մեծ բանալիին, «ՂՐԿՈՒԱԾ» բառին:

Վերաքաղենք: Աստուած Եղիային պարտականութիւն տուած էր: Ան մատակարարումի պէտք ունէր՝ Անոր պարտականութիւնը

կատարելու համար: Գիտենք, որ Եղիան մարգարէ էր, ուստի ան Տիրոջ խօսքը կը տանէր ո՛ր որ Աստուած գինք ղրկէր: Սակայն Աստուծոյ համար անհրաժեշտ էր, որ Իր պարտականութիւնը ֆինանսաւորուէր, եւ ատիկա միշտ մարդոց միջոցով կ'ըլլայ:

Այս պարագային Աստուած Իսրայէլի մէջ չկրցաւ գտնել որբեւարի կին մը, որ բաւարար հաւատք ունէր Իրեն հնազանդելու: Աստուած գիտէր ինչ կ'ուզէր ընել, բայց Ան պէտք ունէր մէկու մը, որ երկինքի հետ պիտի համաձայնէր, որպէսզի Աստուած կարենար օրինական ձեւով բերել այն մատակարարումը, որուն Եղիան պէտք ունէր:

Յիշեցնեմ, որ ոչ մէկ տեղ կերակուր չկար: Ամէն տեղ մարդիկ կը մեռնէին: Որոշ տեսակի կերակուր գտնելու կամ շուկայ երթալու մասին չէր հարցը, քանի որ ոչ մէկ տեսակի ուտելիք չկար: Եղիային մատակարարումը պէտք էր Աստուծոյ Հոգիէն գար:

Քանի որ Իսրայէլի մէջ չկար մէկը, որ բաւարար հաւատք ունենար Անոր հաւատալու, Աստուած ստիպուեցաւ Իսրայէլէն դուրս ուրիշ երկիր մը երթալ, ուր որբեւարի կին մը գտաւ, որ հաւատացող սիրտ ունէր: Եւ ինչպէս նախապէս ըսինք, Եղիան այդ որոշակի կնոջ ղրկուեցաւ, քանի որ Աստուած գիտէր, որ ան պիտի հաւատար Իրեն:

Աստուծոյ առաջին տեղը տալով եւ Տիրոջ կողմէ իրեն ըսուած խօսքին հնազանդելով, Աստուծոյ պարտականութիւնը՝ Եղիան, ինչպէս նաեւ կնոջ ընտանիքը ամբողջ սովին ընթացքին հոգացուեցան:

Ուստի պատմութեան իմաստը հետեւեալն է ...

Երբ Աստուած ընելիքներ ունի, Ան երկրին կը նայի, որպէսզի գտնէ մէկը, որուն կրնայ վստահիլ, մէկը, որ Իրեն պիտի հնազանդի եւ Իր ծրագիրները պիտի կատարէ: Ան նաեւ պէտք ունի մարդոց, որոնք Իր ծրագիրը պիտի ֆինանսաւորեն:

Ուստի կ'ուզեմ հետեւեալը յստակացնել՝ եթէ կ'ուզես մեծ գաղափարներ ունենալ, եթէ կ'ուզես, որ Աստուած մէջդ գործարքի մեծ գաղափարներ ներբռնէ, պէտք է անոնց ատակ ըլլաս: Աստուած գիտէ սիրտդ եւ Ան երկիրը կը դիտէ եւ կը փնտռէ այն մարդիկը, որոնց կրնայ վստահիլ Իր պարտականութիւնները:

Ան կը նայի՝ տեսնելու, թէ որո՞ն կրնայ վստահիլ Իր պարտականութիւններուն ֆինանսատրումը: Երբ այդ անձը գտնէ, անոր պիտի դրկէ պէտք եղած դրամը հաւաքելու ծրագիրը: Հասկնալի է:

Յիշեցնեմ, որ Տիրոջ խօսքը ՂՐԿՈՒԵՑԱԻ այդ որբեարի կնոջ, եւ անոր կեանքը փրկեց:

Կը յիշեմ, Տիրոջ խօսքը, որ ինձի եկաւ ըսելու, որ քայլ առնեմ եւ սկսիմ իմ անձնական գործս նոր առաջնահերթութեամբ մը եւ նոր յանձնարարութեամբ մը: Այդպէս ըրի, եւ ատիկա կեանքս փրկեց:

Աստուած կը փնտռէ մարդիկ, որոնք հնազանդ սիրտ ունին՝ Իր պարտականութիւնները ֆինանսատրելու համար:

Եկէք վերաքաղենք այն սկզբունքները, զորս կը տեսնենք այս պատմութեան մէջ:

1. Աստուած երկրի վրայ պարտականութիւններ ունի, զորս կ'ուզէ իրագործել:
2. Բոլոր պարտականութիւնները մարդոց պէտք ունին:
3. Բոլոր պարտականութիւնները ֆինանսատրումի պէտք ունին:
4. Աստուած երկիրը կը դիտէ, որպէսզի գտնէ մարդիկ, որոնք Իր պարտականութիւնները պիտի կատարեն:
5. Աստուած երկիրը կը դիտէ, որպէսզի գտնէ մարդիկ, որոնք Իր պարտականութիւնները պիտի ֆինանսատրեն:
6. Երբ մենք Աստուծոյ պարտականութիւնները կը ֆինանսատրենք, երկինքին կու տանք օրինական իշխանութիւն ոչ միայն մեզ գործածելու, որ Աստուծոյ պարտականութիւնները ֆինանսատրէ, այլեւ անոր առատութենէն մեր անձնական կեանքերն ալ պիտի ֆինանսատրուին:

Առատաձեռն ըլլալը երբեք պիտի չվնասէ քեզի: Եկեղեցիս կ'ըսեմ. «Միշտ այդ ըսէք»:

ԳԼՈՒԽ 4

ՈՐՈՂԻ ԴՐԱՄՆ Է ԱՏԻԿԱ

Երբեւէ անդրադարձամձ ես, որ ներկայիս ունեցած դրամիդ մէկ մասը քուկդ չէ:

Գիտեմ, որ ատիկա խենթութիւն կը թուի ըլլալ, բայց երբեք անդրադարձամձ ես, որ Աստուած թերեւս այդ դրամը քու ձեռքերուդ մէջ դրած է ուրիշին համար:

Գիտեմ, գիտեմ, հաւանաբար կեանքին մասին այդ դիտանկիւնէն չես մտածած, բայց պէտք է մտածես, որովհետեւ ատիկա ուրիշ բանալի մըն է, որ կեանքիդ մէջ բարձրանաս:

Մտածէ ըսածիս մասին: Մենք կը խօսինք Աստուծոյ պարտականութիւնները ֆինանսաւորելու մասին, չէ՛: Եւ ըսինք, որ Աստուած երկիրը կը դիտէ, որպէսզի գտնէ մարդիկ, որոնք Թագաւորութեան հանդէպ մեծ փափաք ունին, անոր հանդէպ առատաձեռն են եւ Անոր պարտականութիւնները պիտի ֆինանսաւորեն: Գիտենք, որ դրամը մարդոց ձեռքերուն մէջն է, եւ եթէ Աստուած պիտի ֆինանսաւորէ Իր պարտականութիւնները, Ան պէտք է դրամ դնէ այն մարդոց ձեռքը, որոնք պատրաստ են այդ դրամէն հրաժարելու եւ Անոր եւ Անոր ժողովուրդին հանդէպ առատաձեռն ըլլալու:

Ուստի ի՞նչ ունիս ձեռքերուդ մէջ: Երբ ունեցածիդ նայիս, կ'անդրադառնամ, որ թերեւս Աստուած ատիկա ձեռքերուդ մէջ դրած է ուրիշի մը համար: Կամ թերեւս Ան ատիկա քեզի բերած է, որպէսզի ֆինանսաւորես ծրագիր մը, որ Ան կ'ուզէ, որ կատարուի:

Անշուշտ, օրինականօրէն, ունեցածդ քուկդ է եւ դուն կ'որոշես, թէ ի՞նչ կ'ուզես ընել անոր հետ: Սակայն եթէ Աստուած դրամ

պիտի դնէ մարդոց ձեռքերուն մէջ, ես կ'ուզեմ Անոր կողմէ ընտիր նկատուած մարդոց ցանկին մէջ ըլլալ: Դուն ալ պիտի չուզէի՞ր ըլլալ:

«Ուրեմն ան՝ որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունսը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պարուղները: Ամէն բանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առատաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ»:

– Բ. Կորնթացիներուն 9.10-11
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մենք արդէն իսկ քննեցինք այս հատուածը, բայց հոս բան մը կայ, որ կրնայ քեզմէ վրիպած ըլլալ: Տասներորդ համարը կ'ըսէ, որ Աստուած սերմնացանին սերմ կը հայթայթէ եւ կերակուրի համար՝ հաց:

Մտածէ, թէ ատիկա ինչ ըսել կ'ուզէ՝ Աստուած սերմնացանին սերմ կը հայթայթէ եւ կերակուրի համար՝ հաց: Կերակուրի համար հացը կը ներկայացնէ այն բոլոր բաները, որոնց պէտք ունիս ընտանիքիդ մէջ՝ ապրելու համար այն առատութեան կեանքը, որ Աստուած պատրաստած է քեզի համար: Սակայն Ան սերմնացանին սերմ կը հայթայթէ:

Երբեք բակիդ մէջ պարտէզ ցանամ թա կամ խոտի սերմ ցանամ ես: Կը սկսիս հողին մէջ սերմ դնել, եւ մինչ կը ցանես, ամէն անգամ որ ձեռքիդ մէջ եղածը կը ցանես, ձեռքդ կ'երկարես եւ ուրիշ ակի մը սերմ ես կ'առնես: Ատոր մէջ յատուկ հոսանք մը կայ: Երբ ձեռքիդ մէջ եղած սերմէն կը հրաժարիս, այն ատեն ձեռքդ պիտի լեցուի թարմ պաշարով մը, զոր դարձեալ պիտի ցանես: Այս նախադասութիւնը՝ «Աստուած սերմնացանին սերմ կը հայթայթէ», նոյն լրացուցիչ իմաստը ունի (նոյն բանին կ'ակնարկէ), այսինքն՝ Աստուած սերմ կու տայ մէկու մը, որ ցանելու գործընթացին մէջ է:

ԱՍՏՈՒԱԾ ՍԵՐՄ ՑԱՆՈՂԻՆ ՍԵՐՄ ԿՈՒ ՏԱՅ:

Պօղոս շարունակելով կ'ըսէ, թէ Աստուած նաեւ մեզի կու տայ մեզի պէտք եղած հացը, անշուշտ, բայց այս հատուածին մէջ

շեշտը ցանելուն վրայ է եւ այն ազդեցութիւնը, որ անիկա ունի մեր կեանքերուն վրայ, ինչպէս նաեւ անոնց, որոնց հանդէպ մենք առատաձեռն ենք: Ինչպէս նախապէս ըսինք, ատիկա մարդոց սիրտը կը շարժէ առ Աստուած:

Ատիկա ի մտի ունենալով, կարծեմ բոլորս ալ համաձայն ենք, որ Աստուած կ'ուզէ կարելի եղածին չափ շատ սերմ ցանել, որպէսզի հսկայական բերք հնձէ: Ուստի եթէ դուն Աստուծոյ տեղը ըլլայիր, որո՞ւ սերմ կու տայիր: Անոր որ ծոյլ է եւ երբեք ժամանակ չի գտներ ցանելու կամ անոր որ աշխուժօրէն կը ցանէ: Կարծեմ պատասխանը յստակ է:

Երբ մեր ունեցածին մէջ հաւատարիմ ըլլանք, Աստուած կ'ըսէ, թէ Ան պիտի շատցնէ մեր սերմերու պաշարը, որպէսզի կարենանք աւելի ցանել եւ աւելի մեծ ազդեցութիւն բերել հոս՝ երկրի վրայ Անոր Թագաւորութեան համար:

Նկատեցիր, որ Պօղոս կ'ըսէ, թէ երբ կը ցանես եւ կը հնձես քու սերմերուդ պաշարը պիտի շատնայ, որը քեզի հնարաւորութիւն պիտի տայ, որ ամէն առթիւ առատաձեռն ըլլաս: Եթէ ատիկա ճիշդ է (եւ անշուշտ ճիշդ է), ուրեմն քու սերմերուդ պաշարը այն դրամն է, որ հիմա կը պահես՝ սպասելով, որ ներկայանայ այն առիթը երբ առատաձեռն պիտի ըլլաս: Սերմերու պաշարդ պէտք է պատրաստ ըլլայ նախքան առատաձեռն ըլլալդ:

Դարձեալ, հետեւեալ կէտը կ'ուզեմ պարզել հոս՝ քու քով գտնուող դրամին բոլորը քուկդ չէ: Անոր մէկ մասը Աստուծոյ կողմէ քեզի տրուած է՝ ցանելու համար: Այս ցանելու եւ հնձելու շրջանը ընթացք մըն է: Կը ցանենք, յետոյ կը հնձենք. եւ երբ կը շարունակենք ատիկա ընել, այնքան ատեն որ մեր սերմը չենք ուտեր, մեր հունձքը շարունակ պիտի աւելնայ, ինչպէս նաեւ աւելի առատաձեռն ըլլալու մեր կարողութիւնը:

Անշուշտ երբ անօթի ես եւ հացի պէտք ունիս, նորասկիզբ գործէդ ալ կրնաս քեզի պէտք եղածը առնել: Երբ նորասկիզբ գործդ կը մեծնայ, նաեւ կը մեծնայ անկէ հաց առնելու կարողութիւնդ:

Սակայն կ'ուզեմ քիչ մը աւելի խորանալ այս մտածելակերպին մէջ:

Կ'ուզեմ նշել, որ Աստուած Իր սերմը կու տայ անոր, որ ցանելու փափաք ունի, ոչ թէ անոր, որ օր մը թերեւս ցանելու մասին մտածէ: Ան սերմնացանին կու տայ զայն:

Ուստի այս է հարցումը՝ կ'ուզես կեանքդ ապրիլ միայն քո դրամդ կառավարելով, թէ՛ կ'ուզես կեանքդ ապրիլ քու եւ Աստուծոյ դրամը կառավարելով:

Ճէյմզը եւ Էլլան մեր եկեղեցին եկան, որովհետեւ կը լսէին բաներ, զորս երբեք չէին լսած Ամիշ համայնքին մէջ, ուր մեծցած էին: Թագաւորութեան գաղափարները բոլորովին նոր էին անոնց համար, եւ անոնք Թագաւորութեան հիանալի աշակերտներ էին: Անոնք շարունակ մտիկ կ'ընէին այն պատգամները, զորս կը սորվեցնէինք Թագաւորութեան կեանքին մասին «Ֆէյթ Լայֆ» եկեղեցիին մէջ:

**Կ՝ՈՒՉԵՍ ԿԵԱՆՔԴ
ԱՊՐԻԼ ՄԻԱՅՆ
ՔՈՒ ԴՐԱՄԴ
ԿԱՌԱՎԱՐԵԼՈՎ, ԹԷ՛
ՔՈՒ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ
ԴՐԱՄԸ:**

Օր մը Ճէյմզը Տիրոջ ըսաւ, որ ան շատ պատմութիւններ կը լսէր ուրիշներէ, թէ ինչպէս Թագաւորութիւնը հիանալի բաներ ըրած է անոնց կեանքերուն մէջ, եւ ան կ'ուզէր նոյն վկայութիւնը ունենալ: Ան որոշեց, որ պիտի

փորձէ Թագաւորութեան օրէնքները, զորս կը լսէր: Անոնք արձակուրդի գացին եւ իրենց ժամանակին մեծ մասը անցուցին մտիկ ընելով կրկնապատիկ բաժինին մասին պատգամները, զորս այդ ժամանակ ես կը սորվեցնէի: Գիրքս, «*Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Հանգիստին Զորութիւնը*» տակաւին նոր լոյս տեսած էր, եւ ես անկէ կը սորվեցնէի: Ուստի որոշեցին, որ Խօսքին մէջ պիտի սուզուին նախքան որ սերմ ցանեն:

Անոնք որոշեցին, որ պիտի ցանեն՝ տասը հազար տոլար հնձելու համար, գումար մը, որուն պէտք ունէին՝ կարգ մը նորոգութիւններու եւ ուրիշ պէտքերու համար, զորս փոքր երեխաներ ունեցող բոլոր ընտանիքները ունին: Անոնք չէին գիտեր, թէ դրամը ո՛րքէ պիտի գար, բայց մինչ այդ, անոնք արդէն Թագաւորութիւնը բաւական երկար ժամանակէ ի վեր կ'ուսումնասիրէին, այնպէս որ կը զգային, որ կը հաւատան անոր:

Այն ժամանակ Ճէյմզը ինքնաշարժի նորոգութեան վերաբերեալ իր անձնական գործը ունէր: Այդ տասը հազար տոլարը ստանալու համար Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տալէն շատ չանցած՝ երբ ան գործի կ'երթար, Էլլային խոստովանեցաւ, որ կրկնապատիկ բաժինին մասին իր սերտողութիւնը ընելէ ետք, իրապէս զգացեր էր, որ պէտք է հաւատան, որ իրենց ցանած սերմին կրկնապատիկը պիտի ստանան: Ըսաւ, որ կը հաւատար, որ իրենց ցանածին փոխարէն քսան հազար տոլար պիտի ստանար: Էլլան ըսաւ, որ ինք քիչ մը ցնցուեցաւ եւ շփոթեցաւ, բայց ամուսինին գաղափարին աջակցեցաւ: Երբ ան դռնէն դուրս կ'ելլէր, Էլլան ըսաւ. «Լաւ, քսան հազար տոլար»:

Այդ օրը սովորական օր մըն էր խանութին մէջ: Ճէյմզին կանոնաւոր յաճախորդներէն մէկը ներս մտաւ նորոգութեան մը համար, եւ երբ ան պատուէրը գրելը աւարտեց, յաճախորդը Ճէյմզին գրասենեակը նստաւ եւ անոր ըսաւ, որ վերջերս շատ նեղացած էր իր կովերէն: Ըստ երեւոյթին անոնք կոտրած էին անոր բոլոր ցանկապատերը եւ դուրս ելած էին: Անոր կալուածը հանրային անտառին սահմանակից էր, ուստի այդ կովերը ռօր որ ուզէին կը թափառէին: Ճէյմզին յաճախորդը տարեց մարդ մըն էր, որ շարունակեց ըսելով, որ ինք այլեւս ծերացած էր եւ չէր կրնար այդ կովերը հետապնդել, եւ այլեւս կ'ուզէր հրաժարիլ անոնցմէ: Անոր յաջորդ խօսքերը ցնցեցին Ճէյմզը այն աստիճան, որ ինքն իրեն հարցուց, թէ արդեօք իր ընկերոջ ըսածը ճիշդ լսեց:

Անոր բարեկամը ըսաւ. «Ես կը հրաժարիմ այդ կովերէն, եւ անոր համար այսօր քեզի կու տամ զանոնք: Այսօրուրնէ անոնք քուկդ են»: Ճէյմզը չէր գիտեր, թէ ինչ ըսէր: Ան հող չունէր: Ան քաղաքին մէջ կ'ապրէր, քառորդ արտավար հողի մը վրայ, եւ մեքենագործ էր: Այո՛, ան իբրեւ Ամիշ մեծցած էր եւ կովերու շուրջ, բայց ատիկա տարիներ առաջ էր: Ան կը պատրաստուէր ըսելու, ո՛չ, շնորհակալ եմ երբ յիշեց իրենց սերմը: Թերեւս ասոր մէջ բան մը կար, որ պէտք է ստուգէր:

Ընկերոջը աւելի հարցաքննելէ ետք, յայտնաբերեց, որ ան կը խօսէր քսաներեք Պլէք Էնկըս կովերու եւ երեք ձիերու մասին: Ճէյմզը յիշեց, որ բաւական ժամանակ առաջ մէկը իրեն ըսած

էր, որ արջառներու հօտ մը կը փնտռէր գնելու համար: Ան չէր ուզեր ամէն անգամ քանի մը հատ գնել, այլ կ'ուզէր մէկու մը հօտը առնել: Ճէյմզը հեռաձայնեց անոր եւ այո՛, մարդը ըսաւ, որ հետաքրքրուած էր: Յետոյ Ճէյմզը անոր հարցուց, թէ դրքան պատրաստ էր վճարելու արջառին համար, եւ պահ մը մտածելէ ետք, մարդը ըսաւ. «Օ՛հ, հաւանաբար քսան հազար տոլար»:

Ճէյմզը իր լսածին չէր կրնար հաւատալ: Այդ բոլորը պատահեցաւ երբ այդ օրը ան տունէն դուրս ելաւ եւ Էլլային ըսաւ կրկնապատիկ բաժինին մասին Սուրբ Հոգիին կողմէ իր ստացած մղումին մասին: Ան ինծի ըսաւ, որ կովերը հաւաքելը եւ յետոյ զանոնք բեռնակառքով իրենց նոր տունը տանիլը բաւական ծանր աշխատանք էր, բայց կրցաւ ընել: Յետոյ Ճէյմզը ինծի ըսաւ, որ լիովին համոզուած էր, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կրնայ ամէն բան ընել եւ թէ այլեւս իր սեփական կարողականութեամբ սահմանափակուած չէր:

Երբ առաջին օրը ան տուն գնաց եւ կովերուն մասին պատմեց Էլլային, կ'ըսէ, որ ան ուղղակի ցնցուեցաւ: Եթէ Ճէյմզին եւ Էլլային հարցնէք Աստուծոյ շնորհքին մասին, պէտք է քանի մը ժամ տրամադրէք, որովհետեւ ըսելիք շատ բան ունին:

Ասիկա հիանալի օրինակ մըն է, ուր Սուրբ Հոգին մէկու մը ցոյց կու տայ, թէ Աստուծոյ հանդէպ իր առատաձեռնութիւնը ղրկէ պէտք է հնձէ: Երբ կը ցանենք, պէտք է յիշենք, որ այն, ինչ որ Սուրբ Հոգին մեզի ցոյց կու տայ, թերեւս, անլի լաւ բառ չկայ ասիկա բացատրելու, խենթութիւն թուի ըլլալ: Այսինքն՝ անկարելի է, որ Ճէյմզը այդ գաղափարը յղանար իր մատիտով եւ թուղթով, մինչ իր մեքենագործի գործիքով կ'աշխատէր եւ նոյն ատեն իր միտքին մէջ տարբերակներու (հաւանականութիւններուն) մասին կը մտածէր:

Եկէք առնենք Պետրոսի օրինակը: Վստահ եմ, որ ան բնաւ պիտի չմտածէր ձուկի մը բերանին մէջ նայիլ, որ դրամ գտնէ՝ իր տուրքերը վճարելու համար, կամ ծովեզերքը քալող վարդապետ մը կրնար իրեն ըսել, թէ ճիշդ ղրկու պէտք է նետեր իր ուռկանը՝ իր կեանքին լաւագոյն որսը բռնելու համար:

Նայիր Տրենտային եւ իմ օրինակիս երբ ինը տարի պարտքերու տակ ճնշումի եւ տագնապի կեանք մը ապրեցանք: Այն միտքը, որ

օր մը ընկերութիւն մը պիտի ունենայինք, որ մարդոց պիտի օգնէր, որ իրենց պարտքերէն դուրս գան կամ, աւելի ցնցիչ բան մը, որ «Դրամին Հարցը Լուծել» վերնագիրով հեռատեսիլի ծրագիր մը պիտի ունենայինք, որ աշխարհի բոլոր ժամանակի գօտիներուն մէջ պիտի սփռուէր, անկարելի կը թուէր ըլլալ:

Երբեք պիտի չուզես զԱստուած սահամանափակել:

Ուստի եկուր վերաքաղենք, եւ յիշենք, որ Աստուած սերմ կու տայ ցանողին՝ ան, որ արդէն կը ցանէ եւ կ'ուզէ ցանել:

Շարունակենք: Հիմա կ'ուզեմ քննել առակ մը, որ ըստ իս ամէնէն խորունկ առակներէն մէկն է, որ Յիսուս երբեւէ սորվեցուցած է Աստուծոյ՝ մարդուն հետ աշխատելուն մասին եւ թէ ինչպէս մարդը պէտք է ատակ ըլլայ Անոր կողմէ գործածուելու: Ասիկա վստահաբար քեզի կը ստիպէ, որ կանգ առնես եւ մտածես:

«Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց. «Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վրայ տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով, թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. 'Ինչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ': Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. 'Ինչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին զիս իրենց տնտեսին ներս': Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտապանները եւ առաջինին հարցուց. 'Ո՞րքան պարտք ունիս տիրոջս': Անիկա պատասխանեց. 'Երկու հարիւր թիթեղ ձէթ': Տնտեսը ըսաւ. 'Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր': Յետոյ հարցուց միւսին. 'Դի՛ն որքան պարտք ունիս': Անիկա պատասխանեց. 'Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն': Տնտեսը ըսաւ. 'Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն': Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ

դնդերը իր հնարամտության համար: Որովհետև այս աշխարհի մարդիկը իրարու հանդեպ իրենց վարմունքին մէջ անլի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. 'Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս' որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին: Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ՚նվ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՛ս կ'ուզէք, որ Աստուծ ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ոչ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետև՝ կամ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կամ՝ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին՝”:

«Փարիսեցիները, որոնք դրամատէր էին, երբ այս բոլորը լսեցին, սկսան հեզնել զինք: Յիսուս ըսաւ անոնց. “Դուք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տաք, սակայն Աստուծ գիտէ ձեր սիրտերը: Որովհետև մարդոց աչքին փառատորը Աստուծոյ աչքին անարգ է”»:

—Ղուկաս 16.1-15

Այս առակին մէջ շատ բան կայ, որոնց մասին պէտք է խօսինք: Նախ կը տեսնենք, որ հարուստ սեփականատէր մը կար, որ տնտես մը դրած էր, որ իր գործարքները կառավարէ, եւ ըստ երեւոյթին, տնտեսը կը վատնէր իր սեփականատիրոջ ունեցուածքը եւ այլեւս ինքզինք տնտեսութիւն ընելու անատակ դարձուցած էր: Գիտնալով, որ կը կորսնցնէր իր գործը, շուտով կանչեց այն բոլոր մարդիկը, որոնք իր տիրոջ դրամ պարտական էին եւ անոնց ըսաւ, որ կրնան իրենց հաշիւը փակել հսկայական զեղչով մը, երբեմն կէսը վճարելով եթէ վճարումը արագ կատարեն:

Անշուշտ սեփականատէրը բացարձակապէս անտեղեակ էր

տնտեսին ըրածէն: Բայց անիրաւ տնտեսը մտածեց, որ եթէ իր տիրոջ պարտականներուն շատ բան տայ, անոնք իրեն հանդէպ աւելի բարեացակամ վերաբերում պիտի ցուցաբերեն երբ իր տիրոջմէն հեռանայ, եւ կը յուսար, որ անոնք իրենց գործին մէջ իրեն գործ մը կ'առաջարկեն: Երբ սեփականատէրը լսեց անիրաւ տնտեսին ըրածը, զայն իր քով կանչեց եւ.

«Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար»:

«Հնարամտութիւն» բառին սահմանումն է՝ ճարպիկ գիտակցութիւն կամ հնարամտութիւն ունենալ կամ ցուցաբերել, մասնաւորաբար գործնական հարցերու մէջ: Հակամէտ կամ յայտնի ճարպիկ եւ խորամանկ գործելակերպով. Խորամանկ (խաբող):¹¹

Սեփականատէրը տեսաւ, որ տնտեսը կարողութիւնը ունէր ստեղծելու եւ իրականացնելու ծրագիր մը, որ շահ կը բերէր, այս պարագային՝ ոչ սեփականատիրոջ, այլ՝ իր անծին համար — բան մը, որ չէր տեսած, որ այդ տնտեսը կ'ընէ իրեն համար: Սակայն երբ հարցը կը վերաբերէր իր անծին հոգ տանելուն, ան աշխուժութեամբ իր ամբողջ ուժով կ'աշխատէր այդ մէկը յաջողցնելու եւ իրականութեան մէջ շատ ճարպիկօրէն եւ մանրամասն կերպով կ'աշխատէր: Երբ հարցը կը վերաբերէր իր սեփական գործերուն եւ իր անծին բարօրութեան, ան ձեռներէցութիւն կը ցուցաբերէր, բայց իր այդ կարողութիւններէն ոչ մէկը ցոյց տուաւ իր տիրոջ համար: Շատ ուղղակի եւ յայտնապէս պիտի խօսիմ հոս — ան վարձկան էր:

Հիմա իսկապէս դժուար հարցում մը պիտի հարցնեմ՝ «Դուն Քրիստոնէայ վարձկան ես»:

Աւելի մտահոգ ես ք՞ն բարօրութեամբդ, քան՝ Աստուծոյ գործով: Աւելի մտահոգ ես քու սեփական հոգերովդ եւ մտահոգութիւններովդ, քան Աստուծոյ հոգերով եւ մտահոգութիւններով: Աստուծոյ ունեցուածքը կը վատնես:

Ուսնու, գիտեմ, որ ատոնք դժուար հարցումներ են: Անոր

11 «Տի Ամերիքըն Հերիթեճ Տիքշընըրի աֆ տի Ինկլիշ Լէնկուէճ», Հինգերորդ Հրատարակութիւն

համար ըսի, որ այս առակը շատ խորունկ է, քանի որ անիկա կը թափանցէ մարդու սիրտէն ներս եւ կը յայտնէ բոլոր սխալ կեցուածքները, որոնք կրնան պահուած ըլլալ հոն:

Յիսուս ատիկա կը բացատրէ մեզի եւ Յովհաննէսի 10.11-13-ին մէջ կու տայ «վարձկան» բառին սահմանումը:

«'Ես եմ բարի հովիւր': բարի հովիւր իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ: Բայց վարձկանը, որ հովիւ չէ ու ոչխարները իրը չեն, երբ կը տեսնէ, որ գայլը կու գայ, կը թողու ոչխարները ու կը փախչի եւ գայլը կը յափշտակէ ոչխարները ու զանոնք կը ցրուէ: [Այդ մարդը] կը փախչի, [որովհետեւ վարձկան է] ու ինք հոգ չ'ընէր ոչխարներուն համար»:

— Յովհաննէս 10.11-13

Անգլերէն Աստուածաշունչի «Էն.Քէյ.Ճէյ.Վի» տարբերակին 13-րդ համարը հետեւեալ ձեւով կ'ըսէ.

«Վարձկանը կը փախչի, որովհետեւ վարձկան է ու չի մտախոզուի ոչխարներուն վիճակով»:

Անիրաւ տնտեսին պարագային, անոր արգիլուեցաւ սեփականատիրոջ դրամը կառավարել, քանի որ իսկապէս անոր հոգը չէր սեփականատիրոջ բարօրութիւնը. ան միայն իր անձին բարօրութեամբ մտախոզ էր: Ան տակաւին կարողութիւն ունէր երթալու եւ դրամ շահելու անշուշտ, բայց այլեւս հնարաւորութիւն պիտի չ'ունենար թէ՛ իր ԵՒ թէ՛ սեփականատիրոջ դրամը կառավարելու:

Կը հաւատամ, որ մենք կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ երբ վարձկանի մտածելակերպը անզուսպ կերպով կը տարածուի Ամերիկայի եւ ամբողջ աշխարհի մէջ:

Վստահ եմ, որ գտնուած եւ ճաշարաններու մէջ եւ տեսած եւ աղտոտ սեղաններ եւ աղտոտ գետին, եւ ետեւը տեսած եւ գործաւորներ, որոնք պարապ ժամանակ կը վատնեն եւ իրենց գործը չեն ըներ: Կամ արագ սնունդի ճաշարան մը կը մտնես թերեւս

գոցելէն երեսուն վայրկեան առաջ եւ կը ցնցուիս երբ կը տեսնես, որ բոլոր աթոռները սեղաններուն վրայ են, իսկ գործաւորները կարգի շարուած են իրենց ժամանումը եւ մեկնումը արձանագրող մեքենային առջեւ եւ կը սպասեն, որ մեկնին: Մէկու մը հարցնելու պէտք չունիս. դուն արդէն գիտես, որ սեփականատէրը հոն չէ: Անոնք բոլորը վարձկաններ են: Անոնք իրենց աշխատած տեղին շահը չեն փնտռեր: Անոնք հոն են միայն իրենց աշխատավարձը առնելու համար:

Բազմաթիւ գործատէրեր ինծի կ'ըսեն, որ այս վիճակը այնքան կը վատթարանայ, որ եթէ գործաւոր մը իր գործին ճիշդ ժամուն գայ, միւս բոլորէն տարբեր կ'ըլլայ եւ աչքի կը զարնէ: Գործատէրերը չափազանց կարիքը ունին սեփականատէրերու եւ ոչ թէ առնողներու: Անոնք կ'ուզեն ունենալ գործաւորներ, որոնք այնպէս կ'աշխատին եւ գործին համար կը հոգան, որ կարծես ատիկա իրենց սեփական գործը ըլլար: Անոնք ինծի կ'ըսեն, որ գործաւոր մը, որ այդպիսի կեցուածք եւ վարմունք կը ցուցաբերէ, պաշտօնի բարձրացում կը ստանայ եւ շատ փնտռուած անձ մը կ'ըլլայ:

Աստուած տարբեր չէ: Ան կը փնտռէ մարդիկ, որոնք կը սիրեն այն բաները, զորս Ինք կը սիրէ եւ կ'ատեն այն բաները, զորս Ինք կ'ատէ:

Ա.Թագաւորաց 15-ին մէջ Աստուած Սաւուղ Թագաւորին կ'ըսէ, որ ամաղեկացիներուն վրայ յարձակի այն բաներուն համար, որ անոնք Իսրայէլի ըրին երբ Իսրայէլ Եգիպտոսէն դուրս կու գար: Աստուած Սաւուղ Թագաւորին կ'ըսէ, որ թագաւորը եւ մարդիկը ողջ չձգէ: Անոնք ոչ մէկ անասուն պէտք է բերէին իրենց հետ, բայց Սաւուղ ճիշդ հակառակը կ'ընէ.

«Բայց Սաւուղ ժողովուրդին հետ Ազազը եւ ոչխարներուն ու արջառներուն աղէկներն ու գէրերը եւ գառներն ու ամէն պապուական բաները խնայեցին եւ չուզեցին զանոնք ջարդել, միայն բոլոր անարգ ու անպիպան անասունները ջարդեցին»:

— Ա.Թագաւորաց 15.9

Տէն այն ատեն Աստուած ինչ կ'ըսէ 10-11րդ համարներուն մէջ.

«Տիրոջը խօսքը Սամուելին եղաւ՝ ըսելով. “Սաւուղը թագաւոր ընելուս զղջացի, քանի որ ինձմէ ետ դարձաւ ու իմ խօսքերս չկատարեց”։ Սամուել փրկմեցաւ ու բոլոր գիշերը Տիրոջը աղաղակեց»։

Յետոյ կը տեսնենք, որ Աստուած Սամուելին կը խօսի Սաւուղին մասին Ա.Թագաւորաց 16.1-ին մէջ։

«Տէրը Սամուելին ըսաւ. “Մինչեւ երբ Սաւուղին համար սուգ պիտի ընես, քանի ես զանհկա մերժեցի, որպէսզի Խորայէլի վրայ չթագաւորէ։ Եղջիւրդ իւղով լեցուր ու եկուր քեզ Բեթլէհեմացի Յեսսէին դրկեմ. որովհետեւ անոր որդիներէն մէկը ինձի թագաւոր ընտրեցի”»։

Ճիշդ ինչպէս անիրաւ տնտեսին արգիլուեցաւ սեփականատիրոջ գործերը վարել, տնտեսը որակազրկուեցաւ, նոյնպէս ալ Սաւուղին արգիլուեցաւ. Սաւուղ որակազրկուեցաւ։ Եւ գիտցիր ինչ։ Դուն եւ ես ալ կրնանք որակազրկուիլ։

Աստուած ինչ կը փնտռէ։ Ան որո՞ւ կը վստահի։

«Յետոյ զանհկա [Սաւուղը] փոխեց, Դաւիթը տուաւ իրենց թագաւոր, որուն համար [Աստուած] վկայութիւն տալով՝ ըսաւ. “Յեսսէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ”»։

—Առաքեալներու Գործերը 13.22
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ կրնանք որակազրկուիլ, կրնանք նաեւ ատակ ըլլալ։ Կրնաս ըսել. «Կէրի՛, ինչպէս կ'ընեմ ատիկա»։ Այս առակը պատասխանը կու տայ քեզի։

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է։ Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի։ Այսինքն, եթէ հաւատարիմ

չեղաք աշխարհիկ հարստության, որ ձերը չէ, ինչպէս կ'ուզէք, որ Աստուած ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ոչ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ՝ կան մէկը պիտի ապրէ եւ միւր սիրէ, կամ՝ մէկը պիտի մեծարէ եւ միւրը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին»:

— Ղուկաս 16.10-13

Յստակացնեմ: Պէտք է հաւատարմութեան քննութիւնը յաջողութեամբ անցընես: Եթէ քիչ բանի մէջ հաւատարիմ ես, շատին մէջ ալ հաւատարիմ կ'ըլլաս: Քննութիւնը միշտ կը սկսի բնական մարզէն եւ յետոյ կ'անցնի հոգեւորին: Պէտք է աշխարհիկ հարստութիւնը գործածելու մէջ հաւատարիմ ըլլաս նախքան Աստուած քեզի տայ Իր հարստութիւնը: Եթէ օտարին բանին մէջ հաւատարիմ չըլլաս, քուկդ ո՛վ պիտի տայ քեզի: Անշուշտ ոչ Աստուած:

Լաւ, հիմա առակը կիրարկենք մեր սեփական կեանքերուն համար:

Քրիստոնեաներուն մեծ մասը իր անւցուքները կու տայ Աստուծոյ:

Քրիստոնեաներուն մեծ մասը կը նայի իր պիտոճէին եւ կ'որոշէ. «Ես այսքան կրնամ տալ»: Սակայն անոնք ոչ մէկ հարց չունին նոյն օրը երթալու եւ նուի-նոր նաւակ մը գնելու:

Իմ նպատակս ոեւէ մէկը դատապարտուած զգացնել չէ, եւ վստահ, որ Աստուած հետաքրքրուած չէ եթէ դուն շատ գեղեցիկ նաւակ մը ունիս: Ես պարզապէս քեզի կը հարցնեմ. «Կ'ուզես միայն քո՞ դրամդ կառավարել, թէ՛ քուկդ եւ Աստուծոյնը»:

Եթէ *կուկը* ի վրայ փնտոես, թէ սովորական Քրիստոնեան ի՞նչքան կու տայ, կրնաս ցնցուիլ: Ես տեսած եմ վիճակագրութիւն մը, որ կ'ըսէ, թէ սովորական Քրիստոնեան շաբաթական տասներեք տոլարէն քիչ մը անելի կու տայ եկեղեցիին:¹²

12 https://www.pastorrickyepowell.com/life_matters_with_pastor_/2009/10/startling-statistics

Տալու մասին բազմաթիւ վիճակագրություններու նայեցայ, եւ բոլորն ալ հիասթափեցնող էին: Ինչպէս ըսի, Քրիստոնեաներուն մեծ մասը իրենց աւելցուքները կու տան Աստուծոյ: Դարձեալ, կը խնդրեմ, հասկցիր, ես չեմ փորձեր դատապարտել կամ յանցաւոր զգացնել: Ես պարզապէս կէտ մը կը շեշտեմ — եւ կը կարծեմ, թէ Աստուծոյ Խօսքը կը հաստատէ իմ տեսակէտս — որ Աստուած վարձկաններ չի փնտռեր. Ան սեփականատէրեր կը փնտռէ:

Երկրորդ՝ Աստուած չի փնտռեր մարդիկ, որոնք յանցանքի զգացումէն մղուած՝ ստիպուած կը զգան տալու: Աստուած զուարթառատ կերպով նուիրողը կը սիրէ, ըստ Բ. Կորնթացիներուն 9.7-ին:

Սաւուղը որակագրկուեցաւ, քանի որ Աստուծոյ պահանջածը չըրաւ, բայց Դաւիթը ընտրուեցաւ, քանի որ ան կը հնազանդէր եւ կ'ընէր այն, ինչ որ Աստուած կ'ուզէր, որ ընէ:

Ուստի նոր տեսակէտ մը պիտի առաջարկեմ: Հապա եթէ մեր աշխարհը տակն ու վրայ ընենք եւ որոշենք ամէն բանէ առաջ Աստուծոյ համար ապրիլ եւ մե'նք ըլլանք աւելցուքներով ապրողները: Կ'ենթադրեմ, որ աւելցուքներդ քեզի պիտի հասնին եւ օրհնեալ կեանք մը պիտի ապրիս:

Ար.Ճի.Լեթուրնոն անոր մէջ յաջողութիւն գտաւ: Համեստ սկիզբով եւ միայն մինչեւ եօթներորդ դասարանի կրթութեամբ, ան ինքնաշխատութեամբ ինքզինք զարգացուց եւ վերջապէս արտադրական կայսրութիւն մը կառուցեց: Անոր հողատար մեքենաները օգնեցին, որ երկրորդ համաշխարհային պատերազմը շահուի եւ արդի Ամերիկայի մայրուղիի ենթակառուցումը շինուի: Իր կեանքին վերջաւորութեան ան երեք հարիւր արտօնագիրներ ունէր, որոնք իրեն առանձնաշնորհեալ իրաւունքներ կու տային:¹³

Անոր գաղտնիքը: Ան իր ամբողջ շահին իննիսուն տոկոսը Աստուծոյ կու տար:¹⁴

Ես քեզի չեմ ըսեր, որ նոյնը ընես: Ասիկա համաձայնութիւն մըն էր, որ ինք եւ Աստուած ըրին երբ ան երեսուն տարեկան էր

13 <http://centerforfaithandwork.com/article/who-was-rg-letourneau>

14 <https://centerforfaithandwork.com/article/why-rg-letourneau-gave-90-percent>

եւ պարտքերու մէջ թաղուած էր: Ան զԱստուած իր գործընկերը ըրաւ (ինչպէս ինք կ'ըսէ), եւ արդիւնքը շահաւէտ էր:

Երբ Աստուած զիս կանչեց, որ ոչինչէն եկեղեցի մը հիմնեմ, ես արդէն իմ անձնական ընկերութիւնս կը վարէի, «Ֆորուլըրտ Ֆայնենշըլ Կրուփ»ը: Մեր ընկերութիւնը մեծ յաջողութիւն գտած էր եւ ամբողջ երկրին տարածքին գտնուող հինգ հազար աշխատավայրերու մէջ առաջին դիրքը գրաւած էր մեր գլխաւոր վաճառքի ընկերութեան հետ: Երբ Աստուած զիս կանչեց, որ հովիւ ըլլամ, Անոր հարցուցի. «Հապա “Ֆորուլըրտ Ֆայնենշըլ Կրուփ”ը ... Պէտք է փակեմ զայն եւ կեդրոնանամ եկեղեցիս հովուելու վրայ»:

Տէրը ինծի պատասխանեց եւ ըսաւ. «Ո՛հ, շարունակէ գործել քու ընկերութեանդ մէջ, քանի որ ապրիկա շապ մարդոց կ'օգնէ»: Ուստի այդպէս ըրի:

Կը խոստովանիմ, որ երբեմն դժուար էր այդ երկուքը միասին ընելը, բայց տարիներու ընթացքին ատիկա հազարաւոր մարդոց օգնած է: Երբ սկսայ մեր եկեղեցին հովուել, կը կարծէի, թէ ընկերութեան արդիւնաբերութիւնը պիտի նուազի, քանի որ ես ազդուօրէն կը կրճատէի իմ մասնակցութիւնս: Բայց երբ Տրենտան եւ ես մեր կեանքերը զոհեցինք՝ Աստուծոյ յանձնարարութիւնները կատարելու համար, տեսայ, որ հակառակը եղաւ: Թէեւ միայն իմ ազատ ժամերուս կ'աշխատէի ընկերութեան հետ, անիկա տակաւին կը գործէր բացառիկ որակով եւ արագութեամբ:

Ամբողջ երկրին մէջ գտնուող հարիւրաւոր ընկերութիւններուն մէջ մենք առաջին հինգին կամ տասին մէջ կ'ըլլայինք եւ բեմին վրայ կը ճանչցուէինք: Սակայն ես կը ժպտայի, գիտնալով, որ ես ատիկա մասնակի ժամանակով կ'ընէի եւ աւելի քան լման ժամանակով հովուութիւն կ'ընէի: Աստուած զիս կը պատուէր շնորհքով եւ իմաստութեամբ, որպէսզի աշխարհի մէջ գտնուողները, որոնք իրենց ամբողջ սիրտով դրամը կը հետապնդեն, կանգ առնեն եւ զարմանան, թէ ես ինչպէս կ'ընեմ ատիկա:

Կը յիշեմ համաժողովի մը ընթացքին սեղանի մը շուրջ նստած էինք եւ քովս նստող մարդը ինծի հարցուց, թէ դժբան շուկայավարում եւ ծանուցում («մարքեթինկ») կ'ընեմ: Ստիպուած

ժպտացի երբ ըսի. «Բնաւ չեմ ըներ»: Յետոյ հարցուց. «Ուրեմն ինչպէս այսքան շատ գործ ունիս»: Անոր ըսի՝ խօսելով, այսինքն՝ մենք կամ ուրիշներ պարզապէս մարդոց կը խօսինք մեր ծառայութիւններուն եւ մեր արտադրութիւններուն մասին եւ Աստուած կ'օրհնէ մեզ: Ան պարզապէս գլուխը շարժեց, քանի որ չկրցաւ հասկնալ զիս:

Անգամ մը մեր արտադրութիւնները ծախող ընկերութիւններէն մէկուն նախագահը հեռաձայնեց եւ կ'ուզէր գիտնալ, թէ արդեօք

**ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՏԵՍՆԷ
ԱՏԻԿԱ: ԻՒՐԱՔԱՆՉԻՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՄԷՋ ԴՈՒՆ ԿԸ
ՊԱՏՐԱՍՏՈՒԻՍ
ՅԱԶՈՐԴԻՆ ՀԱՄԱՐ:
ՈՒՍՏԻ ՊՁՏԻԿ
ԲԱՆԵՐՈՒՆ ՕՐԸ ԵՐԲԵՔ
ՄԻ ԱՆԱՐԳԵՐ:**

կ'ուզեմ խօսիլ համաժողովի մը մասնակիցներուն եւ բացատրել, թէ ինչպէս կրցած եմ այսքան շատ արտադրութիւն ունենալ: Ըսի, որ սիրով կ'ուզէի ընել ատիկա: Յետոյ սկսաւ ինծի հարցնել, թէ ինչպէս մեր ընկերութիւնը կը գործէր եւ թէ ինչպէս կ'ընէինք մեր գործարքը: Անշուշտ ես իրեն ըսի, թէ ինչպէս Աստուծոյ կը վստահինք եւ ինչպէս Ան մեզ կ'օրհնէ Իր շնորհքով: Երբ

անոր ըսի, որ ես միայն շաբաթական քանի մը ժամ կ'աշխատիմ եւ լման ժամանակով հովի եմ, այն ատեն ըսաւ. «Ես կը կարծէի, որ դուք շատ նուրբ մանրամասնութիւններով «մարքեթինկ»ի ռազմավարութիւն մը ծրագրած էք եւ պիտի խօսիք անոր գործելաձեւին մասին: Ես ասիկա չունէի իմ միտքս, բայց կը գնահատեմ խօսելու ձեր պատրաստակամութիւնը»: Օ՛, լաւ, իրենք տուժեցին: Ես կրնայի շատերու օգնել:

Այս գիրքին մէջ շարունակ կը կրկնեմ, որ եթէ դուն Աստուծոյ գործը ընես, Ան ալ քրկնի պիտի ընէ:

Ուստի քեզի հարցնեմ այն հարցումը, որով այս գլուխը սկսանք՝ «Որո՞ն դրամն է ատիկա»:

Կը նախընտրես միայն քրկն դրամդ կառավարել, ինչպէս անիրաւ տնտեսին պարագային եղաւ, թէ՛ կ'ուզես Աստուծոյ դրամն ալ կառավարել: Երբ Աստուծոյ դրամը կը կառավարես, նորասկիզբ գործդ կը սկսի զօրանալ Աստուծոյ իմաստութեամբ եւ շնորհքով,

որը թոյլ կու տայ, որ քու անձնական հացի հունձքդ ալ հաւաքես այդ աճին հետ միասին:

Ես համոզուած եմ, որ Աստուծոյ հոգը չէ եթէ դուն միլիոններ ունիս այնքան ատեն որ քու սիրտդ Իրեն կը պատկանի:

Յիշեցնեմ, որ ատիկա կը սկսի փոքր պարտականութիւններով, ուր ոչ ոք գիտէ քու անունդ: Թէեւ կրնաս մտածել, որ մէկու մը հոգը չէ, թէ դուն ինչ կ'ընես քու մասնակի ժամանակով գործիդ մէջ, Աստուած կը տեսնէ ատիկա: Իւրաքանչիւր պարտականութեան մէջ դուն կը մարզուիս յաջորդին համար, ուստի պզտիկ բաներուն օրը երբեք մի' անարգեր: Մօտեցիր անոր այնպէս մը, որ կարծես քու սեփականդ ըլլար եւ լաւագոյնդ տուր անոր: Քեզի կը վստահեցնեմ, որ գիշերուան աստղին պէս պիտի փայլիս եւ դուն քեզ տրամադրելի պիտի դարձնես պաշտօնի բարձրացում եւ շնորհք ստանալու:

ԳԼՈՒԽ 5

ԴՈՒՆ ԳՈՐԾԱԿԻՑԻՄ ՄԸ ՊԷՏՔ ՈՒՆԻՍ

Ինչպէս գիտես, ես գրեթէ քառասուն տարիներէ ի վեր ֆինանսական գործով կը զբաղիմ: Տարիներու ընթացքին բազմաթիւ մարդիկ ինծի հարցուցած են, թէ ինչպէս պէտք է գործ մը սկսին եւ ինչն է, որ պատճառ կը դառնայ, որ գործ մը մեծնայ:

Անշուշտ կան շատ բաներ, զորս մարդիկ պէտք է գիտնան, բայց ամէնէն կարեւոր բանը, որ կրնամ իրենց ըսել, այն է, որ անոնք գործակիցի մը պէտք ունին:

Իբրեւ երկար տարիներու հովիւ, տեսած եմ մեծ թիւով մարդիկ, որոնք կը կարծեն, թէ հիանալի կ'ըլլայ եթէ իրենց եկեղեցւոյ ընկերոջ հետ գործ մը սկսին, եւ յետոյ ամէն բան ներսէն կը քայքայուի: Բարեկամներ իրարմէ կը վիրաւորուին, եւ շատ անգամ նոյնիսկ իրարու հետ չեն խօսիր, եւ յարաբերութիւնը կը քանդուի: Քանի որ ասիկա շատ անգամ տեսած եմ, շատ հազուադէպ պարագաներու է, որ կ'առաջարկեմ, որ մէկը իր ընկերոջ հետ գործ մը սկսի, բացի եթէ յստակ սահմաններ դրած են եւ զանոնք մանրամասնօրէն գրած են:

Սակայն կայ գործակից մը, որ ես միշտ կը պնդեմ, որ ունենաս, եւ անիկա Աստուած է:

Նախորդ գլուխներէն մէկուն մէջ մենք խօսեցանք այն կնոջ մասին, որ ընդունեց Եղիա մարգարէն եւ իր վերջին կերակուրը տուաւ անոր: Մենք տեսանք, թէ ինչպէս այդ հաւատքի քայլը ամէն օր կերակուր տուաւ մարգարէին՝ Աստուծոյ պարտականութեան,

Եւ կնոջ ընտանիքին: Կինը Եղիային հետ համագործակցեցաւ անոր պարտականութեան մէջ, եւ այդպիսով՝ այն օծութիւնը եւ մատակարարումը, որ Եղիային պարտականութեան վրայ կը գտնուէր, իրը դարձաւ: Անոնք գործակիցներ էին:

Այս ամբողջ գիրքին մէջ մենք կը խօսինք Աստուծոյ հանդէպ առատաձեռն ըլլալու մասին եւ Անոր պարտականութիւններուն մէջ սերմանելու մասին: Նաեւ քեզի ըսի, թէ ինչպէս առատաձեռն ըլլալը մարդոց սիրտերը կը բանայ քեզի եւ Աստուծոյ հանդէպ:

Այս գլուխին մէջ կ'ուզեմ խօսիլ Աստուծոյ Թագաւորութեան վերաբերող մէկ ուրիշ հզօր սկզբունքին մասին, որ ֆինանսներդ յառաջ պիտի մղէ դէպի բոլորովին նոր մակարդակ մը — գործակցութեան սկզբունքը:

«Յիսուս Գեննեսարէթի լիճին եզերքը կեցած էր, երբ ժողովուրդը սկսաւ իր շուրջ խառնուիլ՝ լսելու համար Աստուծոյ խօսքը: Անիկա երկու նաւակներ տեսաւ լիճին եզերքը. իսկ ձկնորսները նաւակէն դուրս ելած՝ իրենց ուղկանները կը լուային: Յիսուս մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որ Սիմոնին կը պատկանէր, եւ խնդրեց որ ցամաքէն քիչ մը հեռացնէ նաւակը: Եւ նաւակին մէջ նստած՝ սկսաւ ժողովուրդին ուսուցանել: Երբ իր խօսքը վերջացուց, Սիմոնին ըսաւ. “Քիչ մը ատի խորը տար նաւակը եւ ձուկ որսալու համար ձեր ուղկանները նետեցէք”: Սիմոն պատասխանեց. “Վարդապետ, ամբողջ գիշերը յոգնեցանք եւ ոչինչ որսացինք, բայց քու խօսքիդ համար ուղկանները նետենք”: [Երբ ըսուածը ըրին] Ուղկանները նետեցին եւ մեծ քանակութեամբ ձուկ բռնեցին մէջը, այնքան՝ որ իրենց ուղկանները կը պատռուէին: Նշան ըրին իրենց գործի ընկերներուն, որոնք միտ նաւակին մէջ էին, որպէսզի իրենց օգնութեան գան: Անոնք եկան եւ երկու նաւակները այնքան լեցուեցան, որ այլեւս պիտի ընկղմէին»:

—Ղուկաս 5.1-7

Գիտեմ, որ ասկէ առաջ արդէն այս պատմութիւնը պատմեցի երբ խօսեցայ նաւակներուն եւ ձկնորսութեան

գործին թագաւորութիւններ (կամ օրինական իշխանութիւններ) փոխելուն մասին երբ Պետրոսը (Սիմոնը) իր նաւակը փոխ տուաւ Յիսուսին, որպէսզի անոր մէջէն քարոզէ: Նաեւ խօսեցայ այդ մեծ քանակութեամբ ձուկեր բռնելուն մասին, որ տեղի ունեցաւ եւ գրեթէ պիտի ընկղմեցնէր երկու նաւակները: Յիշեցնեմ, Պետրոսը ըսաւ, որ ամբողջ գիշերը աշխատեցաւ եւ ոչինչ որսաց: Հիմա, միայն քանի մը ժամ ետք, ան այնքան շատ ձուկ ունէր, որ չէր հասներ զանոնք արագ կերպով ներս քաշելու: Ինչ էր տարբերութիւնը: Անշուշտ Թագաւորութիւնը, բայց նաեւ գործակցութիւնը: Բացատրեմ:

«Անհկա երկու նաւակներ տեսաւ լիճին եզերքը. իսկ ձկնորսները նաւակէն դուրս ելած՝ իրենց ուռկանները կը լուային: Յիսուս մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որ Սիմոնին կը պատկանէր, եւ խնդրեց որ ցամաքէն քիչ մը հեռացնէ նաւակը»:

Եկէք զիրենք շրջապատող միջավայրը յստակացնենք մեր միտքերուն մէջ: Ո՞ր էին անոնք, եւ ինչ կ'ընէին երբ Յիսուս եկաւ: Անոնք ձկնորսութիւն չէին ըներ. ամբողջ գիշերը աշխատել էւ ոչինչ որսալէ ետք, լիճին եզերքը կեցած իրենց ուռկանները կը լուային:

Յիսուս, նկատելով, որ նաւակները տրամադրելի են, Պետրոսին կը հարցնէ եթէ կրնայ ցամաքէն քիչ մը հեռացնել նաւակը, որպէսզի նաւակին մէջ նստած ժողովուրդին ուսուցանէ: Ուստի Յակոբոսը եւ Յովհաննէսը, անոր գործակիցները, ո՞ր էին երբ ան Յիսուսը նաւակով կը տանէր: Անոնք տակաւին լիճին եզերքն էին միւս նաւակին եւ իրենց ուռկաններուն հետ:

Քարոզելէ ետք, Յիսուս Պետրոսին ըսաւ, որ քիչ մը աւելի խորը տանի նաւակը եւ ձուկ որսալու համար իր ուռկանները նետէ: Եւ գիտես պատմութիւնը: Ան սկսաւ այնքան շատ ձուկ բռնել, որ իր ուռկանները կը պատռուէին: Ուստի իր գործակիցները կանչեց, որպէսզի իրեն օգնեն ձուկերը քաշելու: Եւ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ երկու նաւակները այնքան լեցուեցան, որ գրեթէ ընկղմելու մօտ էին:

«[Երբ ըստածը ըրին] Ուոկանները ներկեցին եւ մեծ քանակութեամբ ձուկ բռնեցին մէջը, այնքան՝ որ իրենց ուոկանները կը պատուրէին: Նշան ըրին իրենց գործի ընկերներուն, որոնք միւս նաւակին մէջ էին, որպէսզի իրենց օգնութեան գան: Անոնք եկան եւ երկու նաւակները այնքան լեցուեցան, որ այլեւս պիտի ընկղմէին» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ահա շատ կարեւոր հարցումը, որուն դժուար է պատասխանել՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը ղրքան հաւատք պէտք է ի գործ դնէին, որպէսզի իրենց նաւակը գրեթէ ընկղմելու չափ լեցուէր:

Մտածէ այդ մասին. անոնք տակաւին իրենց ուոկաններուն հետ լիճին եզերքն էին: Պետրոսն էր, որ ընդունեց Յիսուսը իրեն հետ տանիլ: Ան էր, որ ըսաւ. «*Բայց քու խօսքիդ համար ուոկանները ներկենք*»: Ուստի ճիշդ պատասխանն է՝ անոնք բնաւ հաւատք ի գործ չդրին: Յակոբոսը եւ Յովհաննէսը չէին, որ իրենց հաւատքով նաւակ մը լեցուն ձուկերը որսացին. Պետրոսին հաւատքն էր, որ ատիկա ըրաւ: Պետրոսը պարզապէս կանչեց իր գործընկերները, որոնք լիճին եզերքն էին, որպէսզի գան եւ իրեն օգնեն ձուկերը նաւակէն ներս քաշելու: Զարմանալի է, որ անոնց նաւակները լեցուեցան ճիշդ այնպէս, ինչպէս Պետրոսինը լեցուեցաւ, բերնէ բերան:

«Սիմոն պատասխանեց. “Վարդապետ, ամբողջ գիշերը յոգնեցանք եւ ոչինչ որսացինք, բայց քու խօսքիդ համար ուոկանները ներկենք”» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ուստի եթէ Պետրոսին հաւատքն էր, որ ձուկերը բերաւ եւ իր նաւակը լեցուց, ուրեմն ինչո՞ւ Յակոբոսին եւ Յովհաննէսին նաւակը ճիշդ նոյն քանակութեամբ ձուկով լեցուեցաւ, որքան Պետրոսինը լեցուեցաւ:

Աստուածաշնչական հատուածը այդ հարցումին պատասխանը կու տայ. կ'ըսէ, թէ անոնք գործընկերներ էին:

Անգլերէն Քոլինզ Բառարանը «գործընկեր» կամ «գործակից» (partner) բառը այսպէս կը սահմանէ.

Մէկը, որ ուրիշի մը հետ կը բաժնեկցի կամ անոր կ'ընկերակցի գործի մը կամ նախաձեռնութեան մը մէջ. սովորաբար անոր վտանգներուն եւ շահերուն մասնակցելով:

Գործակցութիւնը օրինական կառոյց մըն է եւ գործակցող կողմերը իրենց մասնակցութիւնը կը բերեն գործի մը *նիւսք*երուն, ծախսերուն, եւ շահին մէջ: Ուստի երբ Պետրոս Յիսուսի տուաւ նաւակը, որ գործածէ, իրականութեան մէջ, օրինական իմաստով, ան Յիսուսի փոխ կու տար գործը եւ ոչ միայն նաւակը: Փաստօրէն այն նաւակը, զոր Պետրոս թոյլ տուաւ, որ Յիսուս գործածէ, մասամբ Յակոբոսին եւ Յովհաննէսն ալ կը պատկանէր, եւ իրենց գործակցութեան պատճառով երկու նաւակներն ալ հաւասարապէս լեցուեցան:

Յակոբոսն ու Յովհաննէսը ճիշդ նոյն հունձքը հնձեցին ինչպէս Պետրոսը թէւ այդ կացութեան մէջ անոնք երբեք հաւատք ի գործ չդրին: Վստահ եմ, որ այդ օրը անոնք ուրախ էին, որ Պետրոսը իրենց գործընկերն էր: Դուն ինչ կ'ըսես: Ես այդպէս կը կարծեմ: Այս սկզբունքին մասին ւելի անձնական օրինակ մը տամ քեզի:

Տրենտան եւ ես ունինք վաթսուն արտավար տարածութեամբ գեղեցիկ հողատարածք մը, որուն մէջ կան անտառներ, ճահիճ, եւ արօտավայր: Ատիկա հիանալի տեղ է եղնիկ որսալու համար: Մեր կալուածին շուրջ կան ցանուած բոյսեր եւ հացահատիկներ, եւ անտառներն ու ճահիճները բնական մաքնիսներ են եղնիկներուն համար:

Իմ գրասենեակս մեր կառատան վրայ շինած եմ եւ անիկա ունի փայտէ գրադարակներ եւ պատին մէջ շինուած կազով վառող կրակարան մը: Անիկա խաղաղ, տաքուկ, մարդու քարայրի նմանող գրասենեակ մըն է, ուր կը սիրեմ աշխատիլ: Միակ բանը, որ կը պակսէր հոն, գրասեղանիս ետին գտնուող պատին վրայ կախուած գեղեցիկ այծքաղ մըն (արու եղնիկ) էր: Անկեղծ ըսած, երբեք հետաքրքրուած չեմ եղած մեծ այծքաղներ որսալով, քանի որ ես միսի որսորդ եմ: Եւ երբեք չեմ որսացած այծքաղ մը, որ բաւարարաչափ մեծ ըլլար պատին վրայ կախուելու համար:

Հինգ տարի անցած էր մեր այդ կալուածին վրայ բնակելուն երբ Տրենտան պնդեց, որ մեծ այծքաղ մը որսամ գրասենեակիս համար: Մինչեւ այն ատեն մեր կալուածին վրայ երբեք մեծ այծքաղ չէի տեսած: Ամէն եղնիկ որսալու եղանակին եղնիկ որսալու կ'երթայի եւ եղջիրներուն վրայ ութը սուր ծայր ունեցող քանի մը աղուոր այծքաղ որսացած եմ, բայց պատին վրայ կախուելու յարմար չէին անոնք:

Բայց այդ տարի ինչքան շատ կը մտածէի այդ մասին, այնքան անելի կը համաձայնէի Տրենտային ըսածին: Տրենտային ըսի, որ մեծ այծքաղ մը պիտի որսայի՝ պատէն կախելու համար: Դարձեալ, երբեք մեծ այծքաղ չէի տեսած անտառին մէջ: Մեր խոհանոցին պատուհանը անտառին եւ դաշտին դիմացն է, բայց երբեք այծքաղ չէի տեսած:

Ուստի Տրենտան եւ ես մեծ այծքաղ մը որսալու համար Աստուծոյ գործին մէջ սերմ ցանեցինք (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուինք): Իմ սերմիս չէքին վրայ գրեցի, որ եղջիրներուն վրայ տասը կամ անելի մատներ ունեցող այծքաղի մը համար կը ցանեմ: Այդ սերմին վրայ աղօթեցինք, եւ զայն գրասեղանիս վրայ դրի, որպէսզի *փոստով* ղրկեմ: Այդ պահարանը երեք օր հոն մնաց, եւ չկրցայ զայն ղրկել: Գիտէի, որ եղջիրներուն վրայ տասը մատներ ունեցող այծքաղ որսալու համար բաւարար հաւատք չունէի: Եղջիրներուն վրայ ութը, վեց կամ չորս մատներ ունեցող այծքաղ որսալու համար բաւարար հաւատք ունէի, բայց դժուարութիւն ունէի այդ մեծ այծքաղը տեսնելու այն հաւատքի վստահութեամբ, որ կ'ըսէ. «Շատ վստահ եմ, որ երբ դուրս ելլեմ, եղջիրներուն վրայ տասը մատներ ունեցող այծքաղ մը պիտի որսամ»:

Բաւարար փորձառութիւն ունէի Թագաւորութեան հետ, որպէսզի գիտնայի, որ չէի հաւատար: Ուստի այդ չէքը պատռեցի եւ փոխարէնը ուրիշ չէք մը գրեցի, որուն վրայ գրեցի. «Եղջիրներուն վրայ չորս կամ անելի մատներ ունեցող այծքաղի մը համար» եւ զայն *փոստով* ղրկեցի:

Որսի երթալէս մէկ գիշեր առաջ Տրենտային ըսի, որ ինչ ըրի: «Պարզապէս չեմ հաւատար, որ այդ մեծ այծքաղը պիտի որսամ», ըսի անոր: Տրենտան ինծի նայեցաւ եւ ըսաւ. «Դուն հաւատքդ

ի գործ դիր եղնիկին համար, եւ եւ հաւատքս ի գործ կը դնեմ այծքաղին համար: Աստուած կարող է քու խնդրածէդ ու քու խորհածէդ շատ աւելին ընել»:

Առաւօտը բացուեցաւ սկիւռներու եւ թռչուններու սովորական խշշոցով անտառին մէջ, մինչ աշնանային տերեւներուն հոտը ինծի յիշեցուց այն բազմաթիւ անգամները երբ եղնիկ որսալու գացած էի: Շատ ժամանակ չանցած, թերեւս քսան վայրկեան անցած էր, երբ անտառին մէջէն եկող այծքաղի ձայն մը լսեցի: Այծքաղը ուղիղ դէպի իմ ծառս կու գար, եւ ես պատրաստուեցայ հարուածելու:

Երբ այծքաղը մօտեցաւ, տեսայ, որ անիկա եղջիւրներուն վրայ չորս մատներ ունեցող այծքաղ էր, ճիշդ այն տեսակը, զոր կը հետապնդեմ, քանի որ անոնք շատ համեղ են ուտելու համար: Մօտաւորապէս քսանհինգ կանգուն հեռաւորութեան վրայ այծքաղը ծակի մը մէջ մտաւ, եւ ես նետը արձակեցի: Զգուանքով տեսայ, որ նետը բարձրէն թռաւ եւ ետ իջաւ, եւ գիտցայ, որ այդ այծքաղը գտնելու համար պէտք էր անոր հետքերուն հետեւէի:

Այծքաղը անտառին մէջէն վազեց գնաց եւ յետոյ ցատկեց եգիպտացորենի դաշտին մէջ, որ սահմանակից էր անտառին եւ աներեւոյթ եղաւ: Տակաւին անոր ձայնը կը լսէի, որ եգիպտացորեններուն մէջէն կը վազէր եւ անոր վազքին զօրութենէն գիտէի, որ տակաւին առջեւ երկար ճամբայ կար մինչեւ զինք գտնէի: Մօտաւորապէս քսան վայրկեան սպասեցի ծառին վրայ եւ յետոյ որոշեցի ծառէն վար իջնել՝ նետը ստուգելու համար: Վստահ էի, որ այծքաղին զարկած էի, եւ արեան հետք նկատեցի:

Երբ արեան հետքին հետեւեցայ, քաջալերուեցայ, քանի որ արեան հետքը բաւական յստակ էր: Բայց մօտաւորապէս հարիւր կանգուն ետք արեան հետքը չորցաւ: Շատ փնտոռեցի, բայց կաթիլ մը արին չգտայ: Երկու ժամ փնտոռելէ ետք անդրադարձայ, որ այծքաղը անհետացած էր: Բաւական յուսախաբ եղայ: Նախ, երբեք չեմ ուզեր եղնիկ մը վիրաւորել եւ զայն կորսնցնել, եւ երկրորդ՝ իմ հարուածէս յուսախաբ էի:

Երբ եգիպտացորենի դաշտին մէջ կանգնած էի, սկսայ քալելով

դէպի տուն վերադառնալ երբ միտք մը ունեցայ: Տակաւին առիթ ունիմ, կրնամ եղնիկի մը հանդիպիլ երբ եզրապտացորենի դաշտին մէջէն կ'անցնիմ եւ յետոյ ճահճային մասէն անցնելով դէպի տուն կ'երթամ:

Խաչաղեղս լեցուցի, որ ամէն պարագայի պատրաստ ըլլամ: Եւ երբ կամաց-կամաց մոլախոտերով ծածկուած հեղեղատին մէջէն կ'անցնէի, յանկարծ եղնիկ մը դուրս ցատկելով դիմացս ելաւ: Չգիտնալով, թէ ես ինչ եմ, եղնիկը կեցաւ եւ ինծի նայեցաւ: Քանի որ ծպտուած էի, եղնիկը, որ նկատեցի, որ այծքաղ էր, վարանեցաւ, քանի որ չկրցաւ գիտնալ, թէ ես ինչ եմ: Այդ բոլորը ակնթարթի մը մէջ պատահեցաւ, բայց ես եղջիրները տեսայ, թէ եւ չէի գիտեր, թէ ի՞նչքան մեծ էին անոնք կամ քանի՞ մատներ ունէին:

Գիտէի, որ շատ կարճ ժամանակ ունէի որոշելու, թէ ինչ պիտի ընեմ այծքաղին հետ: Ան իմ սովորական աղեղի հասողութենէս մօտաւորապէս յիսունհինգ կանգուն անդին էր եւ կողմնակի կեցած էր դիմացս: Շուտով աղեղս լարեցի եւ նշան առի դէպի անոր կռնակին վերի մասը եւ նետը արձակեցի:

Այծքաղը անմիջապէս գետին ինկաւ երբ նետը իրեն դպաւ եւ գետինը մնաց: Ես ցնցուեցայ: Չէի հաւատար, որ եղածը իրական էր:

Երբ այծքաղին քով գացի, առաջին բանը, որ ըսի, հետեւեալն էր. «Տրենտային հաւատքը»: Այծքաղը շատ մեծ էր: Անոր եղջիրներուն վրայ քսանվեց մատներ հաշուեցի, եւ ան դէպի վար աճած մատիկներ ալ ունէր իր եղջիրներուն վրայ: Այդքան մեծ այծքաղ երբէք չէի տեսած: Ըսելը, որ շատ ոգետրուած էի, թերզնահատանք պիտի ըլլայ:

Ինչպէս կրնաս կռահել, այծքաղը հիմա գրասենեակիս մէջ է՝ գրասեղանիս ետեւը գտնուող պատին վրայ:

Բայց պահ մը կ'ուզեմ խօսիլ այդ եղնիկին մասին: Ինչպէս կամ ինչո՞ւ անիկա յայտնուեցաւ:

Եղջիրներուն վրայ չորս մատներ ունեցող այծքաղը ճիշդ ժամանակին յայտնուեցաւ, թէ եւ զայն լաւ ձեւով չհարուածեցի:

Բայց Տրենտան ըսաւ, որ ինք կը հաւատար, որ յաղթանակ խորհրդանշող այծքաղը պիտի որսամ:

Տրենտան իմ վրաս առաւելութիւն մը ունէր: Ան եղնիկ չի որսար, ուստի իրեն համար յաղթանակ խորհրդանշող այծքաղը եղջիրներուն վրայ չորս մատներ ունեցող այծքաղ մը որսալու չափ դիրին կը թուի ըլլալ, քանի որ իրեն համար բոլորն ալ պարզապէս եղնիկ են: Քանի որ ան որսորդութիւն չ'ընէր, անոր միտքին մէջ չկար այն պատկերը, որ կ'ըսէ, թէ ատիկա անկարելի է: Ես ատկէ առաջ նոյնիսկ եղջիրներուն վրայ ութը մատ ունեցող մեծ այծքաղ չէի տեսած մեր կալուածին մէջ, բայց անոր հաւատքը կալուածին վրայ եղածին կամ չեղածին վրայ հիմնուած չէր: Ան կը հաւատար, որ Աստուած կրնար բերել զայն:

Այդ որսորդութիւնը տեղի ունեցաւ եղնիկներու արտադրութեան (յղութեան) եղանակին, երբ արուները սեռային առումով տաքցած կ'ըլլան, եւ այծքաղները կրնան մղոններ ճամբորդել՝ փնտռելով էգ եղջերուներ, որոնք իրենց նման սեռային առումով տաքցած են եւ կրնան զիրենք ընդունիլ եւ յղանալ: Ուստի միշտ մեծ հաւանականութիւն կայ, որ եղնիկներու յղութեան եղանակին տեսնես այծքաղներ, զորս սովորաբար չես տեսներ քու կալուածիդ մէջ, ինչպէս ինծի հետ պատահեցաւ:

Տրենտային հաւատքն էր, որ այդ այծքաղը բերաւ, թէեւ ես հաւատք չունէի այդ յաղթանակ խորհրդանշող այծքաղը որսալու:

Կ'ուզեմ, որ անգամ մը ես կարդաս ատիկա՝ ես հաւատք չունէի՝ այդ յաղթանակ խորհրդանշող այծքաղը որսալու:

Գիտեմ ինչ կը մտածես. «Մէկ վայրկեան, Կէրի: Շփոթեցայ: Եթէ այդ այծքաղը ստանալու համար հաւատք չունէիր, ուրեմն ինչո՞ւ անիկա յայտնուեցաւ»:

Այնպէս ինչպէս Յակոբոսին եւ Յովհաննէսին նաակը լեցուեցաւ Պետրոսին հաւատքով:

Այդ է գործակցութեան զօրութիւնը:

Քեզի ուրիշ օրինակ մըն ալ տամ, եւ յետոյ այդ մասին կը խօսինք:

«Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւերարանչութեան գործին: Եւ վստահ եմ՝ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, զայն իր կապարտումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին, եւ ձեզ սրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին, ըլլայ բանտարկութեանս ընթացքին, ըլլայ երբ ազատ վիճակով Աւերարանը կը պաշտպանէի ու կը հաստատէի»:

—Փիլիպպեցիներուն 1.3-7
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պօղոս կ'ըսէ, թէ ինք ուրախութեամբ կը յիշէ Փիլիպպէի եկեղեցին, որովհետեւ անոնք շարունակ իրենց մասնակցութիւնը կը բերէին իր առաքելութեան (կը գործակցէին իր առաքելութեան հետ): Ան կը շարունակէ ըսելով, թէ իրենց գործակցութեան շնորհիւ հիմա մասնակից էին իր ծառայութեան վրայ գտնուող Աստուծոյ շնորհքին:

Յիշեցնեմ, որ ըսինք, թէ շնորհքը Աստուծոյ զօրութիւնն է կամ Աստուծոյ կարողութիւնը, որ Պօղոսին վրայ կը գտնուէր, որպէսզի իր պարտականութիւնը կատարէր: Փիլիպպէի եկեղեցին այդ պարտականութեան ծախսերը հոգալու մէջ իր բաժինը կը բերէր եւ ինչպէս Յակոբոսը եւ Յովհաննէսը, նոյնպէս անոնք մասնակից կ'ըլլային այն օծութեան եւ շնորհքին, որոնք այդ ծառայութեան վրայ կը գտնուէին:

Հիմա անցնինք չորրորդ գլուխին, եւ պիտի տեսնես այն հիանալի արդիւնքը, որ գործակցութիւնը յառաջ կը բերէ:

«Սակայն լաւ ըրիք՝ որ հաղորդակից եղաք քառասանքիս: Դրոք ալ գիտէք, Փիլիպպեցիներ, թէ աւերարանին քարոզութեան սկիզբը, երբ մեկնեցայ Մակեդոնիայէն, ո՛չ մէկ եկեղեցի հաղորդակից եղաւ ինծի՝ քալու եւ ընդունելու համար, հապա միայն դրոք.

որովհետեւ նոյնիսկ մինչեւ Թեսաղոնիկէ դրկեցիք ինծի պէտք եղածը՝ մէկ-երկու անգամ: Ես կը փնտրեմ ո՛չ թէ նուէր, հապա կը փնտրեմ պտուղ, որ աւելնայ ձեր հաշիւին վրայ: Իսկ ես ամէն բան ունիմ, եւ առաջօրէն. լիացած եմ՝ ստանալով Եպափրոդիտոսի միջոցով ձեր դրկածները, որ անուշաբոյր հոտ մըն է, ընդունելի զոհ մը, հաճելի՝ Աստուծոյ: Եւ իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր բոլոր կարիքները՝ իր ճոխութեան համեմատ, փառքով՝ Քրիստոս Յիսուսի միջոցով»:

—Փիլիպպեցիներուն 4.14-19
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պօղոս տակաւին նոր ուրիշ նուէր մըն ալ ստացած էր Փիլիպպէի եկեղեցիէն: Նայէ ինչ կը պատասխանէ անոնց. «Իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր բոլոր կարիքները»:

Նկատի առ, որ Պօղոս չըսաւ. «Ձեր Աստուածը պիտի լեցնէ ձեր կարիքները, քանի որ դուք ինծի հանդէպ առատածեռն գտնուեցաք»: Ո՛՞: Կ՛ըսէ. «Հիմա Իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր կարիքները»:

Գիտէս, Փիլիպպեցիները Պօղոսին գործակիցներն էին, եւ իբրեւ գործակիցներ, անոնք մասնակից էին Պօղոսի պարտականութեան վրայ գտնուող շնորհքին: Ինչպէս Յակոբոսը եւ Յովհաննէսը այդ բոլոր ծուկերը որսացին՝ Պետրոսին հաւատքին շնորհիւ, նոյնպէս Պօղոս կը յայտնէ, թէ անոնց կարիքները պիտի լեցուին ի՞նչ հաւատքին շնորհիւ:

Յուսամ կը տեսնես այս սկզբունքին առաւելութիւնը:

Ենթադրենք, որ ինքնաշարժի մը պէտք ունիս եւ մեր առաքելութեան գործակից կը դառնաս: Նաեւ ենթադրենք, որ այդ ինքնաշարժը երեսուն հազար տոլար կ'արժէ: Երբ GaryKeesee.com առաքելութեան մէջ ներդրում կ'ընես, կը հասկնաս, թէ գործակցութիւնը ինչ կը նշանակէ. դուն մասնակից կը դառնաս այն օծութեան եւ շնորհքին, որ մեր առաքելութեան վրայ կը գտնուի:

Իբրեւ առաքելութիւն, մենք դիւրութեամբ կրնանք համաձայնիլ այդ երեսուն հազար տոլարին շուրջ, որովհետեւ շատոնց անցած

ենք երեսուն հազար տոլար պէտք ունենալու այդ հանգրուանը: Մենք դիրութեամբ կրնանք մեր հաւատքը ի գործ դնել եւ ակնկալել, որ Աստուած այդ երեսուն հազար տոլարը պիտի տայ, քանի որ ներկայիս մենք տարեկան միլիոնաւոր տոլարներ կը ծախսենք: Սակայն անցեալին կը յիշեմ, որ պէտք ունէի իմ հաւատքս ի գործ դնելու, որ Աստուած երեսուն հազար տոլար հայթայթէր ինծի, բան մը, որ այն ժամանակ հսկայ լեռան մը պէս էր ինծի համար:

Ուստի եթէ ինծի հարցնես, թէ արդեօք կրնամ հաւատքս ի գործ դնել, որ Աստուած երեսուն հազար տոլար տայ: Պատասխանը՝ անշուշտ է: Ուստի, Պօղոսի նման, երբ միասին կը համաձայնիք եւ գործակիցներ կը դառնանք, կրնամ յայտարարել, որ քու կարիքներդ լեցուած են (պէտքերդ հոգացուած են), ոչ թէ քո՛ւ հաւատքիդ շնորհիւ, այլ՝ իմ հաւատքիս:

Անշուշտ պէտք է հաւատացեալ ըլլաս երբ այդ երեսուն հազար տոլարին համար սերմ կը ցանես եւ ոչ միայն Աստուծոյ Խօսքին հանդէպ հաւատք պէտք է ունենաս, այլեւ՝ մեզի հանդէպ: Պէտք է ինծի հանդէպ հաւատք ունենաս, վստահ ըլլաս, որ ես օժեալ եմ եւ Աստուծոյ կողմէ կանչուած եմ, թէ պարկեշտութեամբ կը գործեմ, եւ պէտք է կեանքիս եւ առաքելութեանս մէջ երեւցող արդիւնքները տեսնես: Եթէ նայիս, թէ մենք ներկայիս ի՛նչ կ'ընենք եւ թէ ինչպիսի՛ անցեալ մը ունեցած ենք, պիտի գիտնաս, որ ես հաւատքս ի գործ կրնամ դնել՝ երեսուն հազար տոլար ստանալու համար:

Թերեւս երեսուն հազար տոլար ակնկալելու համար բաւարար հաւատք չունիս, բայց մենք կրնանք միասին համագործակցիլ եւ հիանալի բաներ տեսնել: Նոյնն էր պարագան յաղթանակ խորհրդանշող այծքաղին: Որսի երթալէս գիշեր մը առաջ Տրենտան ըսաւ. «Դուս հաւատքդ ի գործ դիր եղնիկին համար, եւ ես հաւատքս ի գործ կը դնեմ այծքաղին համար»: Գործակցութիւնը այսպէս կը գործէ:

Ուստի հիմնական կանոններ պիտի դնեմ՝ քեզի հարցում մը հարցնելով. «Եթէ համակարգիչի ընկերութիւն մը պիտի հիմնես, պիտի ուզէիր, որ դրամ չունեցող, նոր համալսարան յաճախող համակարգչային գիտութեան աշակերտ մը իբրեւ գործակից

ունենալ, թե՛ մէկը, որ բազմամիլիոն տոլար արժող համակարգիչի ընկերութիւն մը կառուցած է եւ ֆինանսական միջոցները ունի օգնելու քեզի, որ ընկերութիւնդ հիմնես»:

Անշուշտ բազմաթիւ փոփոխականներ (ազդակներ, որոնք արդիւնքին վրայ կ'ազդեն) կան այս օրինակին մէջ, պարզապէս օրինակ մը կու տամ: Սակայն կ'ենթադրեմ, որ ըստ երեւոյթին, յստակ ընտրութիւնը պիտի ըլլայ մէկը, որ փորձառութիւն ունի, ապացուցուած անցեալի յաջողութիւններ եւ գործունէութիւններ ունի, եւ սնանկանալու ճամբուն վրայ չէ: Նոյնը ճիշդ է երբ կ'ուզես գործակցիլ առաքելութեան մը հետ եւ անոր մէջ ներդրում կ'ընես:

Կը խնդրեմ, իմ ըսածս մի՛ շփոթեր Աստուծոյ կողմէ տրուած յստակ առաջնորդութեան մը հետ, ուր Աստուած քեզի կ'ըսէ, որ մէկու մը հետ գործակցիս: Այդպիսի առաջնորդութիւնը կը գերազանցէ իմ ըսածիս: Շատ անգամ Աստուած քեզ կ'առաջնորդէ, որ քու մասնակցութիւնդ բերես Իր պարտականութիւններուն մէջ, բայց երբեմն դուն պէտք է ընտրես: Խօսքս յատկապէս կը վերաբերի ընտրովի ցանելուն (երբ դուն քու ընտրութեամբդ կ'որոշես բանի մը համար ցանել), երբ հունձքի մը պէտքը ունիս եւ կ'ուզես յաջորդ մակարդակին անցնիլ:

Ես կը ցանեմ այնպիսի պարտականութիւններու մէջ, որոնց կը հաւատամ՝ որոշակի նպատակ ունենալով իմ անձնական կեանքիս մէջ անհրաժեշտ դրամը արագ ձեռով յառաջ բերելը: Կայ օրէնք մը, զոր բնաւ չեմ խախտեր՝ երբ կ'ուզեմ արագացնել բերքահաւաքս, միշտ կը ցանեմ պարտականութիւններու մէջ, որոնք կը հասկնան հաւատքը եւ համաձայնութիւնը: Այս տեսակի տալը նպատակաուղղուած տալ է եւ պէտք չէ զայն շփոթել աղքատներուն տալու հետ:

Կարիքաւորներուն տալը Աստուծոյ սիրտին փափաքն է, եւ անոր համար հատուցում կայ, բայց ես կ'ուզեմ գործակցիլ պարտականութեան մը հետ, որ իր մէջ հաւատքի ապացոյց ունի, որ գիտեմ, թէ կարողութիւնը ունի ինձի հետ համաձայնելու:

Այս ձեռով մտածէ՛ եթէ խնդրեմ մէկէ մը, որ ժամական երեք տոլար կը շահի եւ դրամ չունի եւ տարիներէ ի վեր դրամ չունի, որ ինձի հետ համաձայնի տասը միլիոն տոլարի համար, ինչ է

հաւանականութիւնը, որ այդ համաձայնութիւնը արդիւնք տայ:

Ես կրնամ ռեւէ մէկուն ծառայել, եւ կանչուած եմ այդ մէկը ընելու, բայց երբ հարցը կը վերաբերի համաձայնելուն, պէտք է համաձայնութիւն տեղի ունենայ: Հողագործը իր սերմը որեւէ հողի մէջ չի ցաներ: Ան կը փնտռէ ճիշդ կամ յարմար հողը, որ իր նախատեսած բերքը կը պահանջէ: Ես կը խօսիմ հոս՝ երկրի վրայ ուրիշի մը հաւատքին եւ օծութեան հետ գործակցելու մասին:

Ուրիշ բան մը, զոր կը փնտռեմ երբ պիտի ցանեմ, այն Աստուածային պարտականութիւնն է, որ ունի այն պտուղը, որ ես հաւատքով կ'ակնկալեմ, որ Աստուած ինձի պիտի տայ:

Օրինակ՝ իմ ընկերութիւնս երկու օդանաւ ունի: Նախքան զանոնք գնելս, ես սերմ ցանեցի Աստուծոյ մէկ յանձնարարութեան մէջ, առաքելութիւն մը, որ գիտէի, թէ անցեալին քանի մը միլիոն տոլար արժող տասնեակ մը օդանաւեր գնած էր: Երբ կ'ըսեմ բազմաթիւ, իսկապէս ըսել կ'ուզեմ բազմաթիւ. եւ անոնց բոլորին գինը կանխիկ վճարուած էր: Երբ հարցը կը վերաբերի օդանաւերուն, անոնք բացայայտ արդիւնքներ ունէին: Գիտէի, որ անոնք դիրութեամբ կրնային ինձի հետ համաձայնիլ օդանաւ մը ստանալու համար եւ իրենց հաւատքը ի գործ դնել, որպէսզի ատիկա իրականանար: Ես պիտի չգործակցեի առաքելութեան մը հետ, որ կ'ըսէր, թէ օդանաւերը շատ սուղ են, կամ չ'արժեր զանոնք ունենալ, կամ օդանաւ ունենալու գաղափարը Սատանայէն է: Ատիկա համաձայնութիւն չէ: Ո՛չ, ես կ'ուզէի համաձայնիլ առաքելութեան մը հետ, որ գիտէր, թէ հոգեւոր առումով ես ՚նր կը գտնուիմ, կրնար ինձի հետ կապուիլ՝ մեր հաւատքը ի գործ դնելու՝ Աստուծմէ օդանաւ մը ստանալու համար, եւ այդ մէկը ապացուցող պտուղը ունէր:

Ես տասնըինը տարեկանէս օդաչու եղած եմ եւ գիւղին մէջ սորված եմ երեք հազար ոտնաչափ մանր խիճերով ծածկուած թռչքուղիէն թռչիլ: Ամբողջ կեանքս օդանաւեր վարձած եմ մինչեւ օր մը մտածեցի՝ «Հէյ, գիտես ինչ: Պէտք է սերմ ցանեմ եւ հաւատքս ի գործ դնեմ, որ Աստուած ինձի իմ սեփական օդանաւս տայ»:

Այդպէս ալ ըրի: Գիտէի ճիշդ՝ որ օդանաւին համար սերմ պիտի ցանէի, ուստի ճիշդ այդ օդանաւին անունը գրեցի իմ չէքիս վրայ,

եւ Տրենտան եւ ես անոր շուրջ համաձայնեցանք: Յետոյ մենք այդ չէքը դրկեցինք այն առաքելութեան, որուն մասին քիչ առաջ խօսեցայ:

Անցաւ մօտ մէկ ամիս, եւ ես սովորական բժիշկի այցելութիւն մը ունէի: Երբ այդ օրը բժիշկին հետ կը խօսէի, ան պատահաբար ըսաւ. «Գիտէ՞ս մէկը, որ կ'ուզէ օղանաւ գնել»:

Հարցումը քիչ մը զարմանք պատճառեց ինծի, որովհետեւ կեանքիս մէջ մէկը երբեք ինծի չէ հարցուցած եթէ կը ճանչնամ մէկը, որ կ'ուզէ օղանաւ գնել: Հարցուցի, թէ ինչ տեսակի օղանաւ էր ատիկա, եւ յայտնաբերեցի, որ ատիկա ճիշդ այն օղանաւն էր, որուն համար ես սերմ ցանած էի:

Անկասկած ատիկա իմ ուշադրութիւնս գրաւեց: Գացի եւ տեսայ օղանաւը, սեփականատիրոջ հետ խօսեցայ, եւ ան զիս օղանաւով պտտցուց: Անթերի էր: Միայն մէկ հարց կար. այդ ժամանակ ես անոր գինը վճարելու դրամ չունէի:

Բայց Աստուած ծրագիր մը ունէր: Նախորդ աշնան, (այդ ժամանակ Մարտ էր), հօրմէս տուն մը գնած էի, որ գարնան գրասենեակներու պիտի վերածէի: Հայրս ինծի ըսած էր, որ ձմեռուրնէ առաջ ան ջուրը անջատած էր, ուստի երբեք չստուգեցի:

Օղանաւին նայելէս քանի մը օր ետք եղբայրս հեռաձայնեց եւ ըսաւ, որ տունս քանդուած էր: Ան շարունակեց ըսելով, որ տան մէջ գտնուող պատերուն վրայ ամրացուած բոլոր տախտակէ բարակ պատերը քանդուած եւ ինկած էին:

Ըստ երեւոյթին, ջուրը անջատուած չէր եւ խողովակները ձմռան սառած էին: Հիմա որ Մարտ էր եւ օդը կը տաքնար, ջուրը ով գիտէ ինչքան ժամանակէ կը հոսէր տան մէջ, գոնէ քանի մը շաբաթէ:

Եղբայրս չէր գիտեր, որ ես արդէն համաձայնագիր մը ստորագրած էի շինարարական ընկերութեան մը հետ՝ ամբողջ տունը մաքրելու համար պատերուն վրայ ամրացուած տախտակներէն ինչպէս նաեւ շէնքին արտաքին սալիկապատումէն՝ որպէս շէնքին վերակառուցման գործընթացին մէկ մասը, որպէսզի տունը վերածեն իմ նոր գրասենեակային համալիրիս:

Հոս է, որ հրաշալի բանը պատահեցա՛ւ՝ ապահովագրության ընկերությունը վճարեց ջուրի վնասին համար ներկայացուած պահանջքը, եւ ատիկա եղաւ այն կանխիկ գումարը, որ ես վճարեցի՝ օդանաւ գնելու համար:

Օդանաւը կանխիկ դրամով գնեցի:

Ուստի յիշեցնեմ, որ գործակցությունը հզօր հոգեւոր սկզբունք մըն է, որուն մասին պիտի ուզես իմանալ եւ անկէ օգտուիլ:

ԳԼՈՒԽ 6

ՏԱՍԱՆՈՐԴԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ես յաճախ ե-նամակ կը ստանամ մարդոցմէ, որոնք կը փորձեն զիս համոզել, թէ Թագաւորութեան այս օրէնքին՝ տասանորդին ժամանակը անցած է եւ այլեւս ի զօրու չէ:

Սակայն ես յայտնաբերած եմ, որ Թագաւորութեան վերաբերող այս սկզբունքը այնքան կարեւոր է, որ ամբողջ գլուխ մը յատկացուցած եմ անոր:

Գիտեմ, որ եթէ երբեք եկեղեցական կեանքի մէջ եղած ես, տասանորդի մասին լսած ես: Սակայն նաեւ գիտեմ, որ լսածդ հաւանաբար լիովին ճշգրիտ չէ, եւ կարեւոր է, որ մենք ուղղենք տասանորդի վերաբերեալ այն կարգ մը հին կրօնական մտածելակերպերը նախքան մեր շարունակելը:

Առաջին հերթին, եթէ չես գիտեր, «տասանորդ» բառը իրականութեան մէջ կը նշանակէ մէկ տասներորդ կամ տասը տոկոս: Այս բառը կը գործածուէր Աստուծոյ ժողովուրդին բացատրելու համար, թէ իրենց եկամուտին զի մասը պէտք է տային Աստուծոյ գործին համար՝ մէկ տասներորդը կամ տասանորդը:

Տասանորդի այս բացատրութիւնը շատ պարզ բառերով տրուած է, եւ ես կ'ուզեմ այս գլուխին մէջ շատ աւելի խորանալ այս նիւթին մէջ: Բայց առայժմ եթէ այս գաղափարը նոր է քեզի համար, տասանորդը հիմնականօրէն հետեւեալը կը նշանակէ՝ մէկ տասներորդ մասը տալ Աստուծոյ:

Երկրորդ՝ երբ շատեր տասանորդի մասին կը մտածեն, անոնք նաեւ կը մտածեն Հին Կտակարանին եւ Մովսէսի Օրէնքին

մասին, ուր Իսրայելի բոլոր քաղաքացիներէն տասանորդ կը պահանջուէր:

Այսօր Քրիստոսի մարմինին մէջ շատ շփոթութիւն կայ տասանորդին շուրջ, թէ արդեօք ինչ է անիկա, եւ եթէ տակաւին ի զօրու է կամ Յիսուսի գալուստով անոր ժամանակը անցած է:

Հաւանաբար լսած ես, որ կ'ըսեն՝ երբ Աստուած ինծի ըսաւ, որ Իր Թագաւորութեան գործելաձեւին մասին ամէն բան սորվիմ, ես իսկապէս հոգեւոր գիտնական մը դարձայ: Կ'ուզէի գիտնալ, թէ ամէն բան ինչպէս կը գործէ, եւ տասանորդը մեծ հարցում մըն էր ինծի համար, որուն պատասխանը պէտք է գտնէի:

Ուստի եկէք քննենք տասանորդի նիւթը, ուրկէ եկած է, ինչ կ'ընէ, ինչո՞ւ այսօրուայ համար է:

Թէեւ իրականութեան մէջ տասանորդը շատ յստակ ձեւով Մովսէսի Օրէնքին մէջ կը տեսնենք իբրեւ գրաւոր պահանջք, տասանորդը Մովսէսի Օրէնքով չսկսաւ: Անոր ծագումը գտնելու համար պէտք է վերադառնանք սկիզբին՝ Ադամի եւ Եայի կեանքին:

Ինչպէս նախապէս նշեցինք, Ադամը ստեղծուեցաւ եւ երկրի վրայ դրուեցաւ իբրեւ Աստուծոյ Թագաւորութիւնը ներկայացնող երկրին տիրակալը:

«Հրեշտակներէն քիչ մը վար ըրիր զայն. փառքով ու պատիւով պսակեցիր զայն, եւ քու ձեռքերուդ գործերուն վրայ նշանակեցիր զայն. ամէն բան հպատակեցուցիր անոր ոտքերուն ներքեւ»: Քանի որ բոլորը հպատակեցուց անոր, [Աստուած] անոր դէմ ըմբոստացող ոչինչ թողուց»:

—Եբրայեցիներուն 2.7-8

Ադամ փառքով ու պատիւով պսակուած էր, եւ անոր դէմ ըմբոստացող ոչինչ կար երկրի վրայ: «Պսակեցիր» բառը հիանալի պատկեր մը կու տայ մեզի, թէ ատիկա ինչպէս կը գործէր:

Եթէ բնական թագաւորի մը նայիս, ան թագ կը կրէ եւ թէեւ ան պարզապէս մարդ է, թագը ցոյց կու տայ, թէ ամբողջ կառավարութիւնը նեցուկ կը կանգնի անոր խօսքերուն: Նոյնն

էր պարագան Ադամին: Ան երկրի վրայ կը տիրէր կատարեալ իշխանութեամբ, եւ երկինքը անոր բոլոր ըրածներուն նեցուկ կը կանգնէր: Պէտք է յիշենք, որ ինք պարզապէս մարդ էր եւ կը տիրէր միայն իրեն տրուած իշխանութեան միջոցով: Աստուծոյ Թագաւորութեան փառքն (զօրութիւնն) ու պատիւը (դիրքը եւ իշխանութիւնը) նեցուկ կը կանգնէին անոր:

Հետաքրքրական է, որ կը տեսնենք, թէ Սատանան արդէն իսկ երկրի վրայ էր երբ Ադամ ստեղծուեցաւ, քանի որ ան երկիր ձգուած էր նախքան մարդուն ստեղծուիլը: Սատանան անարգանքով կը նայէր այդ ստորին արարածին (բնական), որ իր վրայ կը տիրէր Աստուծոյ կողմէ իրեն տրուած իշխանութեամբ: Ան կ'ուզէր միջոց մը գտնել՝ այդ իշխանութիւնը Ադամէն խլելու համար, հիմնականօրէն Ադամին տիրելու իշխանութիւնը ոչնչացնելու համար:

Անշուշտ Սատանան Ադամին դիրքը տկարացնելու կամ տապալելու զօրութիւնը չունէր, ուստի ան պէտք էր ծրագիր մը մշակէր Եւան խաբելու, որ հաւատար, թէ Աստուած անվստահելի է եւ թէ ինք եւ Ադամ պէտք է ըմբոստանան Աստուծոյ դէմ եւ իրեն հետեւին:

Սատանային ծրագիրը յաջողեցաւ: Ադամը եւ Եւան ըմբոստացան Աստուծոյ դէմ եւ իրենց իշխանութեան դիրքը կորսնցուցին: Այդ պահուն, քանի որ ամբողջ երկիրը Ադամին տիրապետութեան տակ էր, հիմնականօրէն Ադամը զԱստուած երկիրէն դուրս դրաւ՝ ինչ կը վերաբերի Աստուծոյ հոգեւոր իշխանութեան եւ մարդը Աստուծմէ բաժնուեցաւ:

Հոգեւոր առումով շատ բան պատահեցաւ այդ պահուն, բայց ժամանակ չունիմ այդ մասին խօսելու այս գիրքին մէջ, քանի որ կ'ուզեմ մեր տասանորդի նիւթին վրայ կեդրոնանալ: Ուստի վերադառնանք այդ պահին երբ Ադամը եւ Եւան ինկան եւ տեսնենք, թէ ինչ պատահեցաւ:

«Եւ Ադամի ըսաւ. “Որովհետեւ դուն կ'ոնջդ խօսքը մտրկ ըրիր, ու կերար այն ծառէն՝ որուն մասին քեզի պատուիրեցի. ‘Անկէ մի՛ ուտեր’, գեպիւնը քու պատճառովը

անիծեալ ըլլայ: Կեանքիդ բոլոր օրերը ցաւով պիտի ուրես անկէ. փուշ ու փափասկ պիտի բուսցնէ քեզի, եւ դաշտին բոյսը պիտի ուրես: Դէմքիդ քրտինքով պիտի ուրես քու հացդ, մինչեւ գետինը վերադառնալդ՝ ուրկէ առնուեցար. քանի որ դուն հող էիր, ու հողին պիտի վերադառնաս»:

— Ծնունդներու Գիրք 3.17-19

Արագ նայուածք մը նետելով կը տեսնենք, թէ մարդը կորսնցուց իր մատակարարումը (պարտէզէն դուրս դրուեցաւ), այնուհետեւ անոր նպատակը գոյատեւելը եղաւ, եւ այնուհետեւ ան ցաւով եւ իր դէմքին քրտինքով պիտի գոյատեւէր: Աստուած նաեւ անոր ըսաւ, որ հողին պիտի վերադառնար, որ օր մը պիտի մեռնէր: Մահուան եւ ցաւով գոյատեւելու գաղափարները բոլորովին օտար էին Ադամին համար, եւ վախը եւ անյուսութիւնը աշխարհի մտան:

Ինչպէս կը տեսնես եւ ինչպէս Ադամ յայտնաբերեց, աշխարհը արմատապէս փոխուած էր:

Հիմա կ'ուզեմ անցնիլ Ղուկաս 4-ին, ուր պիտի գտնենք ուրիշ կարեւոր փոփոխութիւն մը, որ տեղի ունեցաւ:

«Ապա Սաղանան հանեց զինք բարձր լեռ մը եւ ակընթարթի մը մէջ իրեն ցոյց տուաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ ըսաւ. «Այս բոլորին վրայ իշխանութիւն եւ անոնց փառքը քեզի կու տամ. անոնք ինծի տրուած են եւ որո՞ւ որ ուզեմ՝ կու տամ: Արդ, եթէ ինծի երկրպագութիւն ընես՝ այդ բոլորը քուկդ պիտի ըլլան»:

— Ղուկաս 4.5-7

Այս հատուածին մէջ Սատանան կը հռչակէ, թէ երկրի թագաւորութիւններուն (ազգերուն) պատկանող բոլոր դրամը իրն է եւ իր իրաւասութեան տակ կը գտնուի եւ կը հաստատէ, թէ այդ իշխանութիւնը իրեն տրուած է: Եւ այդ յայտարարութեան մէջ ան ճիշդ է, քանի որ Ադամն էր, որ այդ իշխանութիւնը իրեն տուաւ իր ըմբոստութեամբ:

Նկատի առ, այս համարը կ'ըսէ, թէ աշխարհի բոլոր ազգերուն կամ թագաւորութիւններուն փառքը հիմա իր օրինական իշխանութեան տակ կը գտնուէր: Ինչ է ազգի մը փառքը: Անոր հարստութիւնը:

Երկրի վրայ գտնուող բոլոր դրամներուն վրայ թագաւորութեան մը, ազգի մը կնիքը կայ, ուստի բոլոր դրամները մաս կը կազմեն կամ կը գտնուին երկրաւոր թագաւորութեան մը օրինական իշխանութեան տակ: Հիմա Սատանան կը պնդէ, որ ազգերուն դրամը կամ հարստութիւնը իր օրինական իշխանութեան տակ կը գտնուի եւ կը պնդէ, որ ինք որու որ ուզէ՝ կու տայ: Պարզ ըսելով՝ Սատանան կը հռչակէ, թէ ինք օրինական իշխանութիւն ունի ազգերուն հարստութեան եւ բարգաւաճումին վրայ: Ասիկա շատ կարեւոր է, որովհետեւ պիտի յայտնաբերենք, որ տասանորդը շատ յատուկ նպատակ մը ունի այս իրականութեան հետ կապուած:

«Ադամ գիտցաւ իր Եւա կինը, եւ ան յղացաւ, Կայէնը ծնաւ ու ըսաւ. “Մարդ ստացայ Տիրոջմէն”: Վերստին անոր Աբէլ եղբայրը ծնաւ. Աբէլ ոչխարներու հովիւ եղաւ, իսկ Կայէն հողը կը մշակէր: Ժամանակէ մը ետք՝ Կայէն գեղինի պտուղէն [քիչ մը] Տիրոջ ընծայ բերաւ: Աբէլ ինք ալ՝ իր ոչխարներուն առջինեկներէն եւ անոնց պարարտներէն բերաւ: Տէրը նայուածքը դարձուց Աբէլի ու անոր ընծային, բայց Կայէնի եւ անոր ընծային նայուածքը չդարձուց. ուստի Կայէն շատ բորբոքեցաւ ու երեսը կախեց: Տէրը Կայէնի ըսաւ. “Ինչո՞ւ բորբոքեցար, եւ ինչո՞ւ երեսդ կախեցիր. եթէ բարիք ընես, ընդունելի չ'ըլլամ: Եթէ բարիք չընես, մեղքը դրան քով պառկած է. ան քեզի կը բաղձայ, բայց դուն տիրէ՛ անոր վրայ»»:

—Ծնունդներու Գիրք 4.1-7
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Լաւ, ինչ կը կատարուէր հոն: Ասիկա զաւակներու առաջին սերունդն էր: Ինչո՞ւ անոնք ընծայ կու տային: Այն ժամանակ չկար գրուած օրէնք մը, որ անոնց կ'ըսէր, որ այդ մէկը ընեն, ուստի ինչո՞ւ անոնք կ'ընէին ասիկա:

Կրնանք ենթադրել, որ Ադամը եւ Եան, անոնց ծնողքը, անոնց սորվեցուցած էր ընծաներ տալ: Նաեւ կրնանք ենթադրել, որ Աստուած պարզապէս ծէս մը ընելու սիրոյն բան մը չ'ըներ եւ պէտք էր օրինական պատճառ մը ըլլար, թէ ինչո՞ւ Ադամը եւ Եան սորված էին ընծաներ տալ:

Եթէ հատուածին նայիս, պիտի տեսնես, որ երկու տղոց բերած ընծաներուն միջեւ մեծ տարբերութիւն կար: Ժամանակդ մի անցըներ անոնց ընծաներուն մասին մտածելով՝ մէկը կենդանիներ ընծայեց, իսկ միւսը՝ բոյսեր, քանի որ հարցը ատիկա չէր: Հարցը այն էր, որ անոնք ինչպէս ընծայեցին իրենց ունեցածը եւ առաջին հերթին ինչո՞ւ այդ մէկը կ'ընէին:

Նկատի առ, որ Կայէնը գետինի պտուղին մէկ մասը տուաւ: Սակայն Աբէլ իր ոչխարներուն առջինեկներէն եւ անոնց պարարտներէն բերաւ: Կը տեսնեն տարբերութիւնը: Մէկ պարագային քիչ մը, բաղդատելով «լաւագոյն բաժինին» հետ, որ ոչխարներուն առջինեկներէն եւ անոնց պարարտներէն էր:

Աբէլը ինչո՞ւ պարարտներէն պիտի բերէր եւ ինչո՞ւ առջինեկներէն:

Աստուած պէտք է որ Ադամին ըսած ըլլար այդ ընծային պահանջներուն մասին:

Կը տեսնեն: Առաջին անգամ հոս կը տեսնենք տասանորդը:

Եթէ ուսումնասիրես տասանորդը Մովսէսի Օրէնքին մէջ, ատիկա միշտ առաջին տասը տոկոսն էր, որ լաւագոյնէն կը տրուէր: Այս պատմութեան մէջ մենք յստակ կը տեսնենք, որ Աբէլ տասանորդ կու տար՝ առաջինը եւ լաւագոյնը: Սակայն Կայէնը ուրախ չէր իր բերքին մէկ մասէն հրաժարելով եւ զԱստուած պատուելու պարտաւորութեամբ, եւ որոշեց իր բերքին մէկ մասը բերել, եւ ոչ առաջինը կամ լաւագոյնը:

Ըստ երեւոյթին Կայէնը գիտէր ինչը եւ ինչպէս տասանորդ տալ Տիրոջ, քանի որ Աստուած անոր ըսաւ. «*Եթէ բարիք ընես, ընդունելի չ'ըլլամբ: Եթէ բարիք չընես, մեղքը դրան քով պատկած է. ան քեզի կը բաղձայ, բայց դուն տիրէ՛ անոր վրայ*»:

Բայց Կայէնը մերժեց Աստուծոյ քաջալերանքը՝ ընելու այն ինչ որ սորված էր եւ փոխարէնը սպաննեց Աբէլը՝ իր եղբայրը:

Հաւանաբար մտածեց, որ Աբէլը մէջտեղէն վերցնելով, պիտի կարենար թէ դաշտին եւ թէ անասուններուն տիրանալ, կամ անոր ազահութիւնը զինք փորձութեան ենթարկեց, որ իր բերքին միայն մէկ մասը բերէ, անցնելով հնազանդելու առաջարկներէն՝ իր սիրտը հեռու Աստուծմէ: Ասիկա պարզապէս ենթադրութիւն է: Կայ բան մը, որմէ վստահ ենք եւ ատիկա հետեւեալն է՝ Կայէն չէր ուզեր տասանորդ տալ այնպէս, ինչպէս սորված էր ընել:

Հոս կրնաս հարցնել. «Նախ եւ առաջ ինչո՞ւ պէտք է տասանորդ տալ: Ինչո՞ւ Աստուած անոնցմէ պահանջեց, որ տասանորդ տան»: Այդ հարցումներուն պիտի պատասխանեմ, բայց նախ տեսնենք, թէ ուրիշ ինչ կրնանք սորվիլ տասանորդին մասին նախքան այդ հարցումներուն անցնիմք:

Յաջորդ անգամ, որ կը տեսնենք տասանորդը կը յայտնուի, առաջին անգամն է, որ տասանորդ բառը կը գործածուի:

«Սողոմոն թագաւորը դուրս ելաւ դէպի Շաւէի հովիտը (այսինքն՝ Թագաւորի Հովիտը) զինք դիմաւորելու, երբ ինք [Աբրամ] Քողողագոմորն ու անոր հետ եղող թագաւորները զարնելէն ետք կը վերադառնար: Եւ Սաղէմի թագաւորը՝ Մելքիսեդեկ՝ հաց ու զինի բերաւ – ան Ամենաբարձր Աստուծոյ քահանան էր – եւ օրհնեց զայն ու ըսաւ. “Օրհնեա՛լ ըլլայ Աբրամ՝ երկինքի ու երկրի սեփականապէրը եղող Ամենաբարձր Աստուծմէն: Օրհնեա՛լ ըլլայ Ամենաբարձր Աստուծը, որ հակառակորդներդ քու ձեռքդ մաքնեց”: Եւ ինք [Աբրամ] բոլորէն տասանորդ տուաւ անոր»:

—Ծնունդներու Գիրք 14.17-20
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հարցումը, որ պէտք է հարցնենք հոս. «Աբրահամ ինչպէս գիտցաւ, որ պէտք է տասանորդ տայ եւ ինչո՞ւ»:

Ըստ երեւոյթին, տասանորդը սերունդէ սերունդ փոխանցուած էր Ադամին օրերէն սկսեալ: Եւ գիտենք, որ Աստուած Ադամին սորվեցուցած էր տասանորդին մասին, ըմբոստութենէն ետք: Հոս կը տեսնենք, որ բուն «տասանորդ» բառը գործածուած է, որ ցոյց

կու տայ, որ մէկ տասներորդ բաժինը կը տրուէր:

Շատեր կ'ըսեն, թէ տասանորդը Մովսէսի Օրէնքին մաս կը կազմէր, ըսել կ'ուզեն, թէ Նոր Կտակարանի հաւատացեալը պէտք չունի տասանորդ տալու: Երկու դէպքերը, զոր նշեցի, Կայէնը եւ Աբելը եւ յետոյ Աբրահամը, կը փաստեն, որ Մովսէսի Օրէնքին գրուելէն առաջ տասանորդ կու տային: Օ՛, համաձայն եմ, տասանորդի մասին Մովսէսի Օրէնքին մէջ գրուած է, եւ Իսրայէլի ժողովուրդէն կը պահանջուէր տասանորդ տալ: Բայց տասանորդը բան մըն էր, որ ժողովուրդը արդէն իսկ կու տար երբ Մովսէսը յայտնուեցաւ:

Ուրեմն ինչո՞ւ Մովսէսի Օրէնքին մէջ գրուեցաւ տասանորդին մասին: Մովսէսի Օրէնքը գրուեցաւ կառավարելու համար ամբողջ կեանքը Իսրայէլի նոր ժողովուրդին, որ տակաւին նոր դուրս եկած էր Եգիպտոսէն: Բոլոր օրինական եւ կառավարելու պահանջները կը դրուէին վարքագիծի գրաւոր կանոններուն մէջ, որոնց համաձայն ժողովուրդը պիտի ապրէր: Այսպիսով տասանորդին մասին գրուեցաւ Մովսէսի Օրէնքին մէջ, վստահ ըլլալու համար, որ ատիկա ժողովուրդին կեանքին մէկ մասը պիտի դառնար: Տասանորդը այնքան կարեւոր էր, որ Աստուած զայն գրել տուաւ ժողովուրդին օրէնքին մէջ: Մենք պիտի յայտնաբերենք, որ Աստուած ինչո՞ւ ուզեց վստահ ըլլալ, որ ատիկա շուտով պիտի կատարուէր, բայց եկէք քանի մը օրինակներ եւս տեսնենք տասանորդին մասին:

«Սակայն հիմա զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. «Մրածեցէ՛ք ձեր ընթացքին մասին. շափ սերմանեցիք, բայց քիչ հնձեցիք. կերաք, բայց չկշտացաք. խմեցիք, սակայն չյագեցաք. հագուեցաք, սակայն ո՛չ մէկը տարցաւ. ու վարձկանը ծակած քսակի համար կը վաստակի իր վարձքը»»: Զօրքերու Տէրը սա՛ կը յայտարարէ. «Մրածեցէ՛ք ձեր ընթացքին մասին. լե՛ռը ելէք, փայտ բերէք ու կառուցանեցէ՛ք տունը, եւ ատոր պիտի հաճիմ ու պիտի փառաւորուիմ,- կը յայտարարէ Տէրը: - Շափը կ'ակնկալէիք, բայց ահա՛ քիչը ստացաք. երբ տուն բերիք, վրան փչեցի: Ինչո՞ւ,- կը պատգամէ զօրքերու

Տէրը: - Իմ փանս պատճառով՝ որ ւերակ է, մինչ ձեզմէ իւրաքանչիւրը իր փունը կը փութայ: Հերեւաբար ձեր վերելը եղող երկինքը դադրեցուցած է իր ցողը, երկիրն ալ դադրեցուցած է իր արգասիքը: Ես չորութիւն բերի երկրին վրայ եւ լեռներուն վրայ, ցորենին, քաղցուին ու իւղին վրայ, գետինի արտադրութեան վրայ, մարդոց վրայ եւ անասուններուն վրայ, ձեռքերու ամբողջ վաստակին վրայ»:

—Անգէ 1.5-11

Այս հատուածին մէջ Անգէ մարգարէն կը յանդիմանէ Իսրայէլի ժողովուրդը՝ Բաբելոնեան արքային վերադառնալէն ետք տաճարը չվերաշինելուն համար: Անոնք չէին բարգաւաճեր, կարօտութեան մէջ էին, բերքը լաւ չէր, եւ ամբողջ ժողովուրդը կը տառապէր: Աստուած ժողովուրդին կ'ըսէ, որ մտածեն **իրենց ընթացքին** մասին, ականարկելով, որ կար բան մը, որ անոնք կ'ընէին կամ չէին ըներ, որ յառաջ կը բերէր այդ կարօտութիւնը:

Աստուած կ'ըսէ. «**Հերեւաբար [Ձեր պատճառով] ձեր վերելը եղող երկինքը դադրեցուցած է իր ցողը**»: Կ'ըսէ, թէ **անոնց** ըրածներուն պատճառով Ան ստիպուեցաւ չորութիւն բերել երկրին վրայ: Անոնք բոլորը իրենց սեփական տուները կը շինէին մինչ Աստուծոյ տունը ւերակ ձգած էին: Ասիկա ցոյց կու տայ, թէ անոնք տասանորդ չէին տար:

Գիտէ՞ս, տասանորդը Ղեւտացիներուն՝ քահանաներուն պէտք է բերուէր եւ տաճարին ծառայութեան համար գործածուէր: Քանի որ տասանորդը Ղեւտացիներուն չէր բերուէր, եւ տաճարը չէր շինուէր, Աստուած ստիպուած էր Իր օրինութեան ձեռքը քաշելու՝ անոնց ըրածներուն պատճառով:

Վստահ եղիր, որ կը հասկնաս, թէ Աստուծոյ կամքը չէր, որ Իր օրինութեան ձեռքը քաշէր Իսրայէլի ժողովուրդէն: Ան այլընտրանք չունէր, քանի որ ասիկա տասանորդին հետ կապուած օրինական հարց մըն էր:

Երբ կը շարունակենք կարդալ երկրորդ գլուխէն, կը տեսնենք, որ ըստ երեւոյթին, ժողովուրդը կը սկսի մտիկ ընել մարգարէին խօսքերուն:

«Ուրեմն այժմ ուշադրություն դարձուցէք այս օրէն եւրբ պատահելիքին, երբ դեռ Տիրոջ տաճարին մէջ քար քարի վրայ դրուած չէ: Այդ ատեն երբ մէկը քսան քոռ ցորենի դէզին քով երթար, տասը քոռ կը գտնուէր. երբ հնձանին քով երթար՝ գինիի կարասէն յիսուն մար հանելու, քսան մար կը գտնուէր: Ձեզ խորշակահարութեամբ, արմարիքի դալուկով ու կարկուտով զարկի ձեր ձեռքերուն ամբողջ գործին մէջ, սակայն ձեզմէ ո՛չ մէկը ինձի վերադարձաւ», - կը պատգամէ Տէրը: «Ուրեմն ուշադրութիւն դարձուցէք այս օրէն եւրբ,- Տիրոջ տաճարին հիմնադրութեան օրէն եւրբ,- իններորդ ամսուան քսանչորրորդ օրէն եւրբ ուշադրութիւն դարձուցէք. հունարը տակաւին ամբարին մէջ է. որթատունկը, թզենին, նոնենին ու ձիթենին դեռ պտուղ բերած չեն. սակայն այս օրէն սկսեալ ձեզ պիտի օրհնեմ»:

—Անգէ 2.15-19

Քանի որ տաճարը անգամ մը եւս առաջնակարգ տեղ գրաւեց անոնց կեանքին մէջ, Աստուած անոնց ըսաւ, որ նշեն այդ օրը եւ ժամը, որովհետեւ մեծ աճ պիտի տեսնէին իրենց բարգաւաճման մէջ: Ան կ'ուզէր, որ անոնք նշեն այդ կացութիւնը, որպէսզի զիրենք քաջալերէ եւ ոգեւորէ, որ յիշեն այդ փոփոխութիւնը, եւ անգամ մը եւս տասանորդ տալէն չդադրին, եւ ատիկա ոչ թէ Իր օգուտին համար, այլ՝ անոնց:

Հոս կան կարգ մը իրական բանալիներ, որոնց իմաստը քանի մը վայրկեանէն պիտի յայտնուի, բայց առաջին բանը, որուն կ'ուզեմ, անդրադառնաս այն է, որ տասանորդը օրինական հարց է: Երբ անոնք տասանորդ չէին տար, Աստուած ստիպուած էր Իր ձեռքը քաշել, ոչ թէ որովհետեւ Ան կ'ուզէր ատիկա ընել, հապա որովհետեւ ստիպուած էր:

«Արդարեւ ես Եհովան եմ, չեմ փոխուիր, իսկ դուք չէք դադրիր Յակոբի որդիներ ըլլալէ: Ձեր հայրերուն օրերէն ի վեր իմ կանոններէս շեղեցաք ու զանոնք չպահեցիք: Վերադարձէք ինձի, ես ալ ձեզի պիտի վերադառնամ», - կը յայտարարէ զօրքերու Տէրը: «Սակայն դուք կ'ըսէք. 'Ինչպէս վերադառնանք': Միթէ մարդ Աստուած

կը կողոպտէ՛. սակայն դուք զիս կողոպտեցիք, ու կ'ըսէք. 'Քեզմէ ինչ կողոպտեցինք'. "Տասանորդներ եւ բարձրացնելիք ընծաներ: Դուք անէծքով պատժուած էք, որովհետեւ կողոպտեցիք զիս՝ ամբողջ ազգով: Գանձարոննը բերէք բոլոր տասանորդները, որպէսզի իմ տանս մէջ կերակուր ըլլայ: Ուրեմն փորձարկեցէ՛ք զիս ասով",- կը յայտարարէ զօրքերու Տէրը,- "Թէ արդեօք ձեզի պիտի չբանամ երկինքի սահանադները ու ձեր վրայ օրհնութիւն թափեմ, այնքան շատ՝ որ բաւական տեղ չըլլայ: Լափող միջատը պիտի սաստեմ ձեր սիրոյն համար, որ ձեր գետիներն պտուղը չփճացնէ ու ձեր դաշտին մէջ որթատունկը անպտուղ չըլլայ",- կը յայտարարէ զօրքերու Տէրը: "Բոլոր ազգերը երանելի պիտի կոչեն ձեզ, քանի որ դուք բաղձալի երկիր պիտի ըլլաք", կը յայտարարէ զօրքերու Տէրը»:

—Մաղաքիա 3.6-12

(«Էն.Քէյ.Ճէյ.Վի.» տարբերակէն)

Հոս կը տեսնենք ուրիշ մարգարէ մը, որ կը յանդիմանէ ազգը ըսելով, թէ անոնք կը կողոպտեն Իր ժողովուրդը օրհնելու Աստուծոյ կարողութիւնը: Կ'ըսէ, թէ անոնք՝ ամբողջ ազգը, անէծքի տակ է, քանի որ կայ բան մը, որ չեն ըներ: Անոնց կը թելադրէ, որ բոլոր տասանորդները գանձատունը բերեն, որպէսզի Աստուծոյ տան մէջ կերակուր ըլլայ:

Դարձեալ, տասանորդը Ղեւտացիներուն՝ քահանաներուն պէտք է բերուէր: Ժողովուրդը իր ունեցածին մէկ մասը կը բերէր, բայց ոչ ամբողջ տասանորդը (յիշէ Կայէնին մեղքը): Տէրը ժողովուրդին կ'ըսէ, թէ եթէ ամբողջ տասանորդը բերեն, անգամ մը եւս երկինքի օրհնութիւնը պիտի վայելին: Երկինքը օրհնական իրաւասութիւն պիտի ունենայ իրենց միջեւ շրջելու: Աստուած անոնց կ'ըսէ, թէ եթէ Իրեն վերադառնան իրենց տասանորդով, այն ատեն այնքան շատ օրհնութիւն պիտի ունենան, որ զայն դնելու բաւարար տեղ պիտի չունենան:

Լաւ, եկէք հոս կանգ առնենք եւ պահ մը ասոր մասին խօսինք՝ նախքան շարունակելս:

Մինչեւ հիմա մենք տեսանք, որ տասանորդը յստակօրէն սկիզբէն սկսած էր, եւ հիմա կը տեսնենք, թէ ինչո՛ւ: Հոս կը տեսնենք, որ տասանորդը Աստուծոյ կու տայ օրինական իրաւասութիւն՝ մտնելու լափողին՝ Սատանային եւ Աստուծոյ ժողովուրդին միջեւ եւ սաստելու Սատանան:

Հիմնականօրէն, Աստուած կ'ըսէր. «Ձեռքերդ վերցնիր, Սատանա՛: Չես կրնար անոնց ունեցուածքին դպչիլ»:

Գիտե՛ս, երբ Ադամ ինկաւ, Սատանան կը ցանկար զայն կատարեալ սովի մատնելով երկրի երեսէն բնաջնջել: Սակայն Աստուած անմիջապէս տասանորդը կը հաստատէ՝ Ադամն ու Եան պաշտպանելու համար: Երբ Ադամն ու Եան ընտրեցին տասանորդ տալ, այդպիսով անոնք Աստուծոյ առաջին տեղը կու տային: Անոնք զԱստուած կ'ընտրէին:

Յիշեցնեմ, որ Սատանան նոյն ձեւով կրցաւ մուտք գործել երկրէն ներս: Ադամն ու Եան համոզելով, որ իրեն հաւատան, փոխանակ՝ Աստուծոյ, ան մտնելու օրինական իրաւունք ստացաւ: Ուստի տասանորդ տալը՝ իրենց ունեցածին տասը տոկոսը Աստուծոյ տալը, Աստուծոյ տուաւ օրինական իրաւունք Ադամին եւ Եային մթերքը պաշտպանելու:

Պէտք է յիշենք, որ տասանորդը օրէնք մըն էր, որ միայն կը վերաբերէր մարդուն մթերքին երկրի վրայ՝ Սատանային տարածքին մէջ: Անիկա չփոխեց անոնց վիճակը՝ հոգեւոր վերականգնում բերելու առումով: Նախ մեղքին համար զոհ պէտք է մատուցուէր նախքան ատիկա պատահէր: Սակայն տասանորդը Աստուծոյ

**ԱՅՆ ԱՏԵՆ ՏԱՍԱՆՈՐԴԸ
ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱԻ
ԻԲՐԵԻ ՕՐԻՆԱԿԱՆ
ՑԱՆԿԱՊԱՏ ՄԸ
ԱԴԱՄԻՆ ԵՒ ԵՒԱՅԻՆ
ՇՈՒՐՋ, ԵՒ ԱՆԻԿԱ
ՏԱԿԱԻՆ ԿԸ ԳՈՐԾԷ
ԻԲՐԵԻ ՕՐԻՆԱԿԱՆ
ՎԱՀԱՆ ՄԸ ՄԵՐ
ՇՈՒՐՋԸ ԱՅՍՕՐ:**

թոյլ տուաւ, որ կեցնէ Սատանան անոնցմէ մթերք գողնալէն, եւ ատիկա անոնց պիտի արտօնէր, որ երկրի վրայ գոյատեւեն:

Շատեր կ'ըսեն, թէ տասանորդը Հին Կտակարանի օրէնք էր եւ անոր ժամանակը անցած է հիմա, քանի որ Յիսուսի զոհաբերութեամբ անիկա ամբողջացաւ: Սակայն կը տեսնենք, թէ տասանորդի օրէնքը

յստակօրէն հաստատուեցաւ մարդուն անկումին ժամանակ նախքան Մովսէսի Օրէնքին գրուիլը:

Այն ատեն տասանորդը հաստատուեցաւ իբրեւ օրինական ցանկապատ մը կամ պարիսպ մը Ադամին եւ Եւային շուրջ, եւ անիկա տակաւին կը գործէ իբրեւ օրինական վահան մը մեր շուրջը այսօր:

Տասանորդը երկրի օրէնքներէն մէկն է եւ ի զօրու կը մնայ այնքան ատեն որ Սատանան երկրի վրայ արձակուած է, ինչպէս որ հիմա է: Այնքան ատեն որ Սատանան հոս է, տասանորդի օրէնքը տակաւին ի զօրու է:

Ուրիշ բան մը, որ թերեւս տեսնես եկեղեցիին մէջ, այն մարդիկն են, որոնք տասանորդ կու տան, բայց տակաւին չեն բարգաւաճիր: Ասոր պատճառը տասանորդի մասին սխալ ուսուցումն է: Մարդիկ կը կարծեն, թէ եթէ պարզապէս տասանորդ տան, Տիրոջ օրինութեան շնորհիւ յորդառատ բարգաւաճում պիտի վայելեն, այնքան շատ՝ որ բաւարար տեղ պիտի չունենան դնելու: Երբ կը սկսին տասանորդ տալ եւ յորդառատ բարգաւաճում չեն տեսներ, այն եզրակացութեան կը հասնին, որ տասանորդ տալը արդիւնաւէտ չէ: Սակայն անոնց ենթադրութիւնը ճշգրիտ չէ, եւ պէտք է անելի մօտէն քննենք հատուածը, պարզելու համար, թէ ինչո՞ւ:

Աստուած ժողովուրդին ըսաւ, որ եթէ տասանորդ տան. **«Լափող միջապը պիտի սաստեմ ձեր սիրոյն համար, որ **ձեր գետինին պտուղը** չփճացնէ ու **ձեր դաշտին մէջ որթապտունկը** անպտուղ չըլլայ»:**

Կը տեսնես: Կ'ըսէ, թէ երկինքի պատուհանները պիտի բացուին եւ Աստուած իրենց գետինին պտուղը պիտի օրհնէ: Կէտը, որ կ'ուզեմ շեշտել այն է, որ դուն տակաւին պէտք է բան մը աճեցնես տասանորդի ցանկապատէն ներս:

Ինքնին տասանորդը չի կրնար քեզ բարգաւաճեցնել: Անիկա միայն կը պաշտպանէ այն, ինչ որ ունիս ցանկապատէն՝ տասանորդէն ներս:

Ուստի եթէ երեք լոլիկի տունկ ունիս, անոնք պիտի բարգաւաճին:

Սակայն եթե ամբողջ ունեցածդ երեք լուրիկի բոյս է, երեք հիանալի բոյսեր պիտի ունենաս, բայց շատ պիտի չբարգաւաճիս:

Յանկապատէն ներս քու կառուցածդ կամ աճեցուցածդ է, որ պատճառ պիտի դառնայ, որ թափելու (յորդելու) չափ առատութիւն ունենաս:

Դժբախտաբար, սխալ ուսուցումի պատճառով, Աստուծոյ ժողովուրդէն շատերը տասանորդ կու տան եւ յետոյ կը նստին եւ պաղ թէյ կը խմեն եւ կը սպասեն, որ յորդելու չափ առատութիւնը սկսի: Թափելու չափ առատութիւնը պիտի սկսի երբ մենք կը հասկնանք մեր դերը այդ գործընթացին մէջ:

Ուստի դարձեալ, եկէք վերաքաղենք:

1. Տասանորդը աշխարհ մտաւ սկիզբը, մարդուն անկումով:
2. Անիկա գրուեցաւ Մովսէսի Օրէնքին մէջ, քանի որ Մովսէսի Օրէնքը կ'ըսէր, թէ Իսրայէլի ժողովուրդը ինչպէս պիտի ապրէր: Աստուած, փափաքելով վստահ ըլլալ, որ Ինք պիտի կարենար զիրենք օրհնել, զայն օրէնքին մէջ գրեց, որպէսզի վստահ ըլլար, որ ատիկա պիտի շարունակուէր: Տասանորդին ժամանակը անցած չէ: Բայց տասանորդը իբրեւ օրինական պահանջ տալու ժամանակը անցած է: Հիմա մենք ունինք տասանորդ տալու եւ անկէ օգտուելու ընտրութիւնը:
3. Տասանորդի օրէնքը երկրին վերաբերող օրէնք մըն է եւ պիտի մնայ այնքան ատեն որ Սատանան ազատ ձգուած է:
4. Տասանորդը ինքնաբերաբար բարգաւաճում չի բերեր քեզի, բայց Աստուծոյ կ'արտօնէ, որ Սատանային արգիլէ տասանորդի ցանկապատէն ներս քու աճեցուցած կամ կառուցած բաներուդ միջամուխ ըլլալէ:
5. Տասանորդը կապ չունի երկինք երթալու կամ չերթալու հետ: Երկինք կ'երթաս եթէ Յիսուսի անունը կանչես: Սակայն տասանորդը երկրի վրայ քու բարգաւաճումիդ կ'ազդէ:
6. Տասանորդը Աստուծոյ գանձատունին կը պատկանի: Հին Կտակարանին մէջ անիկա կը կերակրէր եւ հոգ կը տանէր քահանաներուն, որոնք կը ծառայէին: Այսօր

ալ նոյնն է պարագան: Տասանորդը պէտք է տրուի քու տեղական եկեղեցիիդ: Աստուած տասանորդը հաստատած է՝ ծառայութեան պէտքերը հոգալու համար:

Կարգ մը մարդիկ ինծի կ'ըսեն, թէ իրենց եկեղեցին չեն սիրեր եւ կը հարցնեն եթէ պէտք է այդ եկեղեցիին տասանորդ տան: Իմ պատասխանս՝ նոր եկեղեցի մը գտիր, եկեղեցի մը, որ հաւատքի եւ Թագաւորութեան մասին կը սորվեցնէ:

Եթէ մէկէ աւելի եկեղեցիներ կը յաճախես, կրնաս տասանորդ տալ առաքելութեան մը, որմէ սնունդ կ'առնես, բայց լաւ տեղական եկեղեցի ունենալը Աստուծոյ համար լաւագոյնն է: Եթէ շրջանիդ մէջ եկեղեցիներ չկան, կրնաս, դարձեալ, տասանորդ տալ հոն, ուրկէ սնունդ կ'առնես:

7. Չես կրնար անուն տալ տասանորդիդ: Օրինակ՝ երբ տասանորդդ կը սերմանես, չես կրնար ըսել. «Տասանորդս իբրեւ սերմ կը ցանեմ _____ ին համար»: Տասանորդը արդէն ունի իր պարտականութիւնը: Կրնաս անուն տալ քու ընծայիդ, բայց ոչ տասանորդին:
8. Տասանորդը քու շահածիդ տասը տոկոսն է: Տուրքերէն առաջ: Յիշեցնեմ, որ Աստուած Մաղաքիայի միջոցով կ'ըսէ. «Գանձատունը բերէք բոլոր տասանորդները»: Ինը տոկոսը տասանորդ չէ: Վեց տոկոսը տասանորդ չէ: Տասանորդը տասը տոկոսն է: Եթէ ըսես. «Ես չեմ կրնար այդ տասը տոկոսը տալ», ըրէ այն, ինչ որ Աստուած Իսրայէլին ըսաւ, որ ընէ երբ ան ամբողջ տասանորդը չէր տար. «Փորձարկեցէք զիս ասով», ըսաւ Ան: Հաւատքով տուր տասանորդդ՝ գիտնալով, որ Աստուած պիտի պատուէ զայն:
9. Ինչպէս կը գիտնամ ինչ բանի տասանորդը պիտի տամ: Փորձառութենէս մեկնելով հետեւեալ սկզբունքը որդեգրած եմ. «Այդ եկամուտին վրայ տուրք կայ»:
10. Եթէ հարկելի եկամուտ է (եթէ եկամուտին վրայ տուրք կայ), անոր տասանորդը կու տամ: Գործիս տասանորդը պէտք է տամ: Դարձեալ, անոր համար տուրք կու տամ: Ես իմ գործիս համախառն եկամուտին (եկամուտը առանց

տուրքերը պակսեցնելու) տասանորդը չեմ տար: Իմ գործէս դրամական սերմ կը ցանեմ ինչպէս որ կ'ուզեմ, բայց ատիկա տասանորդը չէ: Եթէ գործէս դրամ առնեմ, անոր տասանորդը կու տամ երբ դրամը առնեմ:

11. Հապա եթէ ներկայիս եկեղեցիի մը չեմ պատկանիր: Կրնաս տասանորդ տալ անոր, որ հոգեւոր սնունդ կու տայ քեզի մինչեւ որ եկեղեցի մը գտնես: Այո՛, շատեր հեռաւոր եկեղեցի մը իրենց գլխաւոր (հիմնական) եկեղեցին կը համարեն, որոնց կը հետեւին ժամանակակից ուղիղ եթերի եւ *ֆէյսպուքի* ուղիղ հեռարձակումներու միջոցով: Եթէ լաւ, Աստուածաշունչին վրայ հիմնուած եկեղեցի չկայ քաղաքիդ մէջ, կրնաս հեռաւոր եկեղեցիի մը տասանորդ տալ: Ճիշդ այդ պատճառով, շատեր գիւղական շրջաններու մէջ *Faithlifechurch.org*-ը իրենց մայր եկեղեցին դարձուցած են:

Լաւ, շարունակենք:

Աստուած ինձի ցոյց տուաւ, որ Քրիստոնեաներուն մեծամասնութիւնը իր տասանորդը կու տայ պարտքի մը պէս, որ պէտք է վճարէ (եթէ տասանորդ վճարող են, եւ մեծ մասը տասանորդ չի վճարեր): Ասիկա կը նշանակէ, թէ անոնք հաւատք ի գործ չեն դներ երբ ատիկա կ'ընեն, այլ պարզապէս գիտեն, որ պարտաւոր են տասանորդ տալու եւ պարզապէս զայն կը վճարեն ինչպէս պարտք մը կը վճարեն:

Թէեւ տասանորդ վճարելը լաւ բան է, բայց պէտք է զայն հաւատքով վճարես: Այլապէս դուն օրինական տեսակէտէ մղուած կու տաս՝ հաւատքի վրայ հիմնուած տեսակէտին փոխարէն:

Թող Աստուծոյ իւրաքանչիւր խօսքը քեզի յայտնէ այն, ինչ որ Աստուած մտադրած է քեզի համար: Տասանորդը ծանր կշիռք մը չէ, զոր պէտք է շալկես, եւ պէտք չէ տխրիմք երբ կու տանք: Աստուած չի փորձեր քեզմէ բան մը առնել, այլ ընդհակառակը, Ան կը փորձէ քեզի բան մը տալ: Պէտք է հաւատանք տասանորդին եւ հասկնանք անոր օգուտը եւ ուրախ ըլլանք անով: Տասանորդը պաշտամունքի արարք մըն է, որ կը հոչակէ, որ Աստուած է մեր աղբիւրը: Անիկա յստակօրէն սահմանուած բարիքներ ունի,

թե՛ երբ տասանորդ կու տանք, պէտք է հաւատքով կենանք՝ ստանալու համար:

Ես միշտ կ'առաջարկեմ, որ ընտանիքները իրենց տասանորդի չէքերը գրած ըլլան նախքան որ եկեղեցի գան: Նաեւ կ'առաջարկեմ, որ նախքան եկեղեցի գան, իրենց ձեռքերը դնեն այդ տասանորդին վրայ, հոչակեն անոր բարիքը, եւ հոչակեն, որ երկինքի պատուհանները բաց են եւ թէ Սատանան սաստուած է, որ հեռու մնայ իրենց հունձքէն: Նաեւ պէտք է հոչակեն, որ Սատանան չի կրնար իրենցմէ գողնալ եւ թէ ինչ բանի վրայ, որ ձեռք դնեն, պիտի բարգաւաճի Յիսուսի անունով:

Վերջապէս պիտի ամփոփեմ տասանորդի մասին մեր քննարկումը անդրադառնալով տասանորդի մասին գրուածին Նոր Կտակարանին մէջ: Օ՛հ, այո՛, տասանորդի մասին նշումս է հոն: Ասիկա այն հատուածն է, որ քիչ առաջ կարդացի.

«Սողոմոն թագաւորը դուրս ելաւ դէպի Շաւէի հովիտը (այսինքն՝ Թագաւորի Հովիտը) զինք դիմաւորելու, երբ ինք [Աբրամ] Քողողագոմորն ու անոր հետ եղող թագաւորները զարնելէն ետք կը վերադառնար: Եւ Սաղէմի թագաւորը՝ Մելքիսեդեկ՝ հաց ու գինի բերաւ – ան Ամենաբարձր Աստուծոյ քահանան էր – եւ օրհնեց զայն ու ըսաւ. “Օրհնեա՛լ ըլլայ Աբրամ՝ երկինքի ու երկրի սեփականապէրը եղող Ամենաբարձր Աստուծո՛մէն: Օրհնեա՛լ ըլլայ Ամենաբարձր Աստուծո՛ր, որ հակառակորդներդ քու ձեռքդ մատնեց”: Եւ ինք [Աբրամ] բոլորէն տասանորդ տուաւ անոր»:

—Ծնունդներու Գիրք 14.17-20
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եկէք տեսնենք, թէ Եբրայեցիներուն Գիրքը գրողը ինչ կ'ըսէ տասանորդին մասին:

«Այս “Մելքիսեդեկը Սաղէմի թագաւորն էր եւ բարձրեալ Աստուծոյ քահանան, որ Աբրահամը դիմաւորելու ելաւ, երբ անիկա պատերազմէն կը վերադառնար, թագաւորները պարտութեան մատնելէ

եպք. եւ Մելքիսեդեկ օրհնեց Աբրահամը: Իսկ Աբրահամ իր ամբողջ ասարին մէկ տասներորդը անոր տուաւ”: Նախ, Մելքիսեդեկ անունը կը նշանակէ՝ արդարութեան թագաւոր: Երկրորդ, Թագաւոր Սաղէմի՝ կը նշանակէ թագաւոր խաղաղութեան: Մելքիսեդեկի ո՛չ հայրը յայտնի է, ո՛չ մայրը եւ ո՛չ ալ ծագումը. իր կեանքին ո՛չ սկիզբը գիտենք եւ ո՛չ ալ վախճանը: Նման է Աստուծոյ Որդիին. մշտնջենական քահանայ է:

«Արդ, տեսէք թէ ինչպիսի մեծ մէկն էր Մելքիսեդեկը, որուն Աբրահամ նահապետ պատերազմական ասարէն տասանորդ տուաւ: Գիտենք, թէ Ղեւիի որդիներէն անոնք որ քահանայական պաշտօնը կ’առնեն՝ հրահանգ ունին Օրէնքին համաձայն տասանորդ առնելու ժողովուրդէն, այսինքն իրենց ազգակիցներէն, թէպէտեւ ասոնք ալ Աբրահամի զաւակներն են: Մելքիսեդեկ Ղեւիի սերունդէն չըլլալով հանդերձ՝ տասանորդ առաւ եւ օրհնեց Աբրահամը, որ Աստուծմէ խոստումները ստացած էր: Եւ կասկած չկայ որ օրհնողը շատ անելի բարձր է քան օրհնուողը:

«Տակաւին, Ղեւրացի քահանաները, որոնք տասանորդ կ’առնեն, մահկանացու մարդիկ են. մինչդեռ Մելքիսեդեկի համար կը վկայուի՝ թէ միշտ կենդանի է»:

—Եբրայեցիներուն 7.1-8

Ինդրեմ նկատի առ, որ այս հատուածը կ’ըսէ. «Տակաւին, Ղեւրացի քահանաները, որոնք տասանորդ կ’առնեն, մահկանացու մարդիկ են», նկատի ունենալով Հին Կտակարանի Ղեւտացիները: Յետոյ շարունակելով կ’ըսէ. «**Մինչդեռ Մելքիսեդեկի համար կը վկայուի՝ թէ միշտ կենդանի է**»:

Մելքիսեդեկը արդարութեան թագաւորն էր, խաղաղութեան թագաւորը, ո՛չ հայրը յայտնի է, ո՛չ մայրը. իր կեանքին ո՛չ սկիզբը գիտենք եւ ո՛չ ալ վախճանը, նման է Աստուծոյ Որդիին, մշտնջենական քահանայ է: Մելքիսեդեկը Յիսուս Քրիստոսն է, որ այդ օրը Աբրահամին առջեւ կեցաւ: Սակայն այն ատեն Ան իբրեւ Յիսուս չէր ճանչցուած:

Յիշէ, որ հրեշտակը Յովսէփին ըսաւ, որ տղայ մանուկին անունը Յիսուս դնէ երբ Ան ծնի: Յիսուս անունը կը նշանակէ՝ Փրկիչ, այսպիսով, Իր անունով ցոյց կու տար, թէ Ան ղվ պիտի ըլլար մեզի համար: Քրիստոսը Յիսուսի մականունը չէ: Երբ Յիսուս Քրիստոս կ'ըսենք, մենք բառացիօրէն կ'ըսենք՝ օծեալ Փրկիչը: Յիսուս ճանչցուած չէր Յիսուս անունով երբ Աբրահամին առջեւ կեցաւ, քանի որ այն ատեն այդ ծրագիրը տակաւին Սատանայէն ծածկուած էր:

Ուստի Մեքիսեդէկ անունը անուն մըն էր, որ պարզապէս կ'արտացոլացնէր Անոր ինքնութիւնը, Արդարութեան Թագաւորը եւ Խաղաղութեան Իշխանը: Սակայն մարգարէաբար, Մեքիսեդէկ կը հռչակէր Աբրահամի ապագան՝ անոր տալով հաց եւ գինի, որոնք նոր ուխտին մասին կը յայտնէին (հացը՝ Անոր մարմինը, որ մեզի համար կոտորուեցաւ, եւ գինին՝ Անոր արիւնը, որ մեզի համար տրուեցաւ), որ հետագային Աբրահամի ժառանգորդներուն հետ պիտի կնքուէր եւ պիտի կատարէր այն խոստումը, որ Աստուած Աբրահամի տուաւ՝ իր ժառանգորդներուն համար Ծնունդներու Գիրքին 12-րդ գլուխին մէջ:

Տասանորդին մասին Եբրայեցիներուն զրկուած նամակը կ'ըսէ, թէ հիմա տասանորդը կ'առնէ «Ան՝ որուն համար կը վկայուի՝ թէ միշտ կենդանի է»: Հիմա Յիսուսն է, որ կ'առնէ տասանորդը, Ան՝ որուն համար կը վկայուի՝ թէ միշտ կենդանի է: Ան թագաւորներու Թագաւորը եւ տէրերու Տէրն է:

Ուստի յիշեցնեմ, որ տասանորդի օրէնքը տակաւին ի զօրու է այսօր: Միակ բանը, որ փոխուած է, քահանայութիւնն է: Հին Կտակարանին մէջ Ղեւիի ցեղը կը հաւաքէր տասանորդը՝ Աստուծոյ գործին համար: Այսօր Յիսուս (որ Յուդայի ցեղէն էր, ոչ Ղեւիի, որ ցոյց կու տայ, թէ քահանայական նոր կարգ մը հաստատուած է) կ'առնէ տասանորդը Իր եկեղեցիէն՝ ծառայութեան համար: Անշուշտ գիտեմ, որ Յիսուս, մարդը, անձամբ հոս չէ տասանորդը հաւաքելու:

**ՏԱՍԱՆՈՐԴԸ
ՕՐԻՆԱԿԱՆ
ՅԱՆԿԱՊԱՏ ՄԸՆ Է ՔՈՒ
ԿԵԱՆՔԻԴ ՇՈՒՐՁ, ՈՐ
ՍԱՏԱՆԱՅԻՆ Կ'ԱՐԳԻԼԷ
ՆԵՐՍ ՄՏՆԵԼ՝ ՔՈՒ
ՄԹԵՐՔԻ ԳՈՂՆԱԼՈՒ:**

Սակայն յիշեցնեմ, որ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ եկեղեցին Քրիստոսի մարմինն է, այսինքն՝ Անոր օրինական դրսեւորումն է հոս՝ երկրի վրայ, այնպէս, ինչպէս մեր մարմինը մեզի կու տայ օրինական դրսեւորում հոս: Երբ Անոր եկեղեցիին՝ Անոր մարմինին կու տանք, իրականութեան մէջ Յիսուսի կու տանք: Այն ատեն Ղեւտացիները, հին ուխտին տակ, տասանորդ կը հաւաքէն՝ Աստուծոյ ծառայութեան համար, եւ ներկայիս եկեղեցին տասանորդ կը հաւաքէ՝ Աստուծոյ ծառայութեան համար:

Վերաքաղելով, տասանորդը օրինական ցանկապատ մըն է քու կեանքիդ շուրջ, որ Սատանային կ'արգիլէ ներս մտնել՝ քու մթերքդ գողնալու: Յիշեցնեմ, որ ինքնին տասանորդը չի՛ կրնար քեզ բարգաւաճեցնել: Ցանկապատէն ներս քու ըրածդ է, որ կ'որոշէ քու բարգաւաճումդ:

Տասանորդը օրէնք մըն է, որ կենսական է ֆինանսական կեանքիդ համար: Այդ է պատճառը, որ այդքան ժամանակ յատկացուցի՝ Թագաւորութեան այս կարեւոր օրէնքը քննարկելու:

Ուստի յաջորդ անգամ երբ եկեղեցի երթաս եւ հովիւը ըսէ, որ տասանորդ հաւաքելու ժամանակն է, պէտք է ցնծութեամբ աղաղակես, քանի որ հիմա գիտես տասանորդին բարիքները:

ԳԼՈՒԽ 7

ԴՈՒՆ ՔՍԱԿԻ ՄԸ ՊԷՏՔ ՈՒՆԻՍ. ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Իմ լաւագոյն բարեկամներէս մէկը՝ Հովիւ Փիթըրը Մորթլաքը, «Սիթի Իմփէքթ Չըրչ»-ին հովին է, Նոր Զելանտայի Օքլընտ քաղաքին մէջ: Ան հիանալի ծառայութիւն մը հիմնած է եւ Նոր Զելանտայի ամենամեծ եկեղեցիներէն մէկը ունի:

Տարիներու մեր բարեկամութեան ընթացքին մենք հաւանաբար մօտ քսան անգամ *մոթորսիքլէթ*ով ամբողջ Հիւսիսային Ամերիկայի եւ Նոր Զելանտայի տարածքին մէջ պտըտած ենք: Ան էր, որ վերջապէս ինծի համոզեց, որ *Հարլի մոթորսիքլէթ* մը գնեմ: Ես երկար տարիներ *Հոնդա մոթորսիքլէթ* կը քշէի, բայց մեր ճամբորդութեան ընթացքին ան միշտ կը պնդէր, որ *Հարլի* վարձեմ: Սկիզբը ես *Հարլին* իմ *Հոնդայի*ս չափ չէի սիրեր, բայց եթէ *Հարլի մոթորսիքլէթ*ներուն մասին գաղափար ունիս, քանի մը տարի առաջ ընկերութիւնը մեծ փոփոխութիւններ ըրաւ անոնց ձեւաւորումին մէջ, զորս ես սիրեցի: Ուստի անցեալ տարի Տրենտան նոփ-նոր *Հարլի մոթորսիքլէթ* մը գնեց ինծի համար, որուն հետ կը սիրենք ճամբորդել:

*Մոթորսիքլէթ*ով մեր պտոյտներուն ընթացքին նկատեցի, որ Հովիւ Փիթըրը միշտ կաշիէ պայուսակ մը կը կրէր, զոր ես տղամարդու դրամապանակ կը կոչէի, իր ուսերէն կախուած: Օր մը դրամապանակիս վրայ նստելէն երբ ցաւեցայ, անոր հարցուցի իր պայուսակին մասին: Այդ խօսակցութեան իբրեւ արդիւնք ան ինծի պայուսակ մը գնեց իբրեւ տարեդարձիս նուէր: Այդ պայուսակները շատ սիրուած չեն Միացեալ Նահանգներուն մէջ,

որքան Երոպայի եւ Նոր Զելանտայի մէջ, բայց ես կը սիրեմ զայն:

Ես սովորաբար միշտ արեւու ակնոցներս կը կորսնցնեմ՝ տեղ մը կը դնեմ զանոնք եւ կը մոռնամ, թէ ո՛ր դրի: Սակայն երբ սկսայ տղամարդու պայուսակս կամ տղամարդու դրամապանակս գործածել, ինչ անուն կ'ուզես տուր անոր, ակնոցներս բնաւ չեմ կորսնցուցած: Հիմա շատ լաւ կը հասկնամ, թէ ինչո՞ւ կ'իները կը սիրեն պայուսակ կրել: Ամէն բան անոր մէջ կը դնես: Հիանալի է: Չեմ փորձեր քեզ համոզել, որ տղամարդու պայուսակ գնես, բայց կ'առաջարկեմ, որ անոր մասին մտածես:

Գիտէ՞իր, որ Յիսուս մեզի պատուիրեց, որ մեզի հետ քսակ (պայուսակ) կրենք:

«Ա՛լ դուք մի՛ փնտրէք, թէ ի՛նչ պիտի ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք [մի՛ մտահոգուիք]։ որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտրեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ, թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի:»

«Մի՛ վախնար, պզտիկ հօտ, որովհետեւ ձեր Հայրը բարեհաճեցաւ՝ որ ձեզի տայ թագաւորութիւնը: Ծախեցէ՛ք ձեր ինչքը եւ ողորմութիւն տուէք. չմաշո՞ղ քսակներ պատրաստեցէ՛ք ձեզի համար, ու չպակսո՞ղ զանձ մը՝ երկինքը, ուր ո՛չ գողը կը մօտենայ եւ ո՛չ ցեցը կ'ապականէ: Որովհետեւ ո՛ր որ է ձեր զանձը, հո՛ն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

—Ղուկաս 12.29-34
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Չեմ կարծեր, որ Յիսուս նորաձեւութեան յայտարարութիւն մը կ'ընէր, այլ կ'ուզէր, որ գործընթաց մը հասկնաս: (Եւ կրնանք քսակ կամ պայուսակ բառը դրամապանակ բառով փոխարինել, եթէ կ'ուզես):

Այն միտքը, որ Յիսուս կը փորձէր հասցնել այն էր, որ քու զանձիդ հասնելու միջոցի մը պէտք ունիս:

Օրինակ՝ ես կրնամ մէկ միլիոն տոլար ունենալ դրամատան

մէջ, բայց ասիկա ոչ մէկ օգուտ ունի ինծի համար եթէ ես չեմ կրնար անոր հասնիլ եւ օգտագործել զայն, չէ՛: Այդ է պատճառը, որ հետդ դրամապանակ կը կրես – անիկա այն միջոցն է, որով կրնաս քու ունեցուածքիդ հասնիլ:

Դրամապանակ կորսնցնելը ամէնէն ճնշիչ բաներէն մէկն է, որ կրնայ պատահիլ: Ես միշտ լաւագոյնս կ'ընեմ, որ վստահ ըլլամ, որ ասիկա պիտի չպատահի: Դրամապանակս, որ իմ տղամարդու պայուսակիս մէջ է, միշտ հետս է:

Այս քանի մը բառերուն մէջ, զորս Յիսուսի խօսքերէն մէջբերեցի, Թագաւորութեան մէջ քու ունեցած դրամիդ վերաբերեալ մեծ իմաստութիւն եւ Թագաւորութեան վերաբերող բանալի սկզբունքներ կը գտնենք: Նախ, «Մի՛ մտահոգուիք» արտայայտութիւնը քանի մը անգամ գործածուած է: Յիսուս մեզի կ'ըսէ, թէ Աստուած գիտէ մենք ինչ բանի պէտք ունինք եւ որոշակի ուղղութիւն կու տայ, թէ ինչպէս կրնանք հասնիլ Իր նախապատրաստութեան:

«Ա՛լ դուք մի՛ փնտռէք, թէ ինչ պիտի ուրէք եւ ինչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք [մի՛ մտահոգուիք]. որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ, թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»:

Յիսուս կ'ըսէ՝ մի՛ մտահոգուիք, որովհետեւ Աստուած ամէն բանի պիտի հոգայ. Աստուած գիտէ դուն ինչ բանի պէտք ունիս: Բայց յետոյ Յիսուս կարգ մը թելադրանքներ կ'ընէ:

«Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»:

Յիսուս կ'ըսէ, թէ Աստուած ունի լուծումը, բայց զանոնք օրինական կերպով իբրեւ իրաւունք պահանջելու համար գործընթաց մը կայ: Աստուած ունի լուծումը, ԲԱՅՅ նախքան ասիկա պահանջելը, պէտք է գիտնաս Թագաւորութեան գործելաձեւը:

Նկատի առ, որ Յիսուս չըսաւ, որ նախ զԱստուած փնտռենք, այլ՝ Թագաւորութիւնը: Կարծեմ մեզմէ շատերը այդ համարը թարգմանած են նախ զԱստուած փնտռելու իմաստով, բայց համարը այդպէս չ'ըսեր: Յիսուս շատ յստակ ըսաւ ատիկա: Եթէ լուծումը միայն զԱստուած փնտռել ըլլար, պիտի ըսէր. «Ուրեմն խնդրեցէք զԱստուած, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»: Աստուած գիտէ, թէ ինչ բանի պէտք ունիս, բայց կայ օրինական գործընթաց մը, որ պէտք է տեղի ունենայ նախքան երկինքին ունեցածը օրինականօրէն քեզի փոխանցուի հոս՝ երկրի վրայ:

Յիշեցնեմ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կառավարութիւն մըն է, որ Թագաւոր ունի: Թագաւորին իշխանութիւնն ու կամքը կը փոխանցուին Թագաւորութեան բոլոր քաղաքացիներուն Թագաւորութեան օրէնքները կիրառելով:

Թագաւորութեան մասին նախորդ չորս գիրքերու մէջ ես քննարկեցի Թագաւորութեան կեանքին, հաւատքին եւ իրաւասութեան երեսները: Ինչո՞ւ: Որովհետեւ այս սկզբունքները բացարձակապէս կենսական են քու յաջողութեանդ եւ Թագաւորութեան կեանքը հասկնալու համար: Թագաւորութեան այս բանալի բաղկացուցիչ տարրերը քննարկեցի բոլոր գիրքերու մէջ գիտնալով, որ շատեր կրնան առնել այդ գիրքերէն որեւէ մէկը եւ պէտք է ունենան այն հիմնական գիտութիւնը, որ իրականութեան մէջ կեանքս փոխեց:

Պէտք է գիտնաս, թէ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ:

Այս գլուխին մէջ գտնուող տեղեկութիւնները առնուած են «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը» գիրքերու շարքիս պատկանող միւս գիրքերէս: Եթէ կարդացած ես զանոնք, կրնաս անցնիլ ութերորդ գլուխին: Եթէ չես կարդացած զանոնք, կամ եթէ կ'ուզես վերաքաղել այս հիմնական եւ կենսական սկզբունքները, շարունակէ կարդալ եօթներորդ գլուխը:

Իրաւասութեան հարցը

Ինչպէս նախապէս ըսի, ես գիւղը կ'ապրիմ՝ վաթսուն արտավար տարածութիւն ունեցող հողամասի մը վրայ, որ

Օհայոյի ամենագեղեցիկ հողատարածքներէն մէկն է: Սկիզբը յիսունհինգ արտավար տարածութիւն ունէր իմ հողս, բայց դրացիս կտոր մը հող ծախեց ինձի, որ իմ հողիս սահմանակից էր, եւ այդպիսով հողիս տարածութիւնը վաթսուն արտավար եղաւ: Վերջին քսաներկու տարիներուն ընթացքին մենք վայելած ենք եւ տակաւին կը վայելենք այս հողը: Մենք ունինք եղնիկներ որսալու համար անտառներ, բաղեր որսալու համար ճահիճ մը եւ նապաստակներ եւ փաստան թռչուններ որսալու, ինչպէս նաեւ չորս անիով յատուկ ինքնաշարժներ քշելու համար մարգագետիններ, որոնք հիանալի օրհնութիւն են մեզի համար:

Եթէ ուշադրութեամբ նայիս իմ կալուածիս, կալուածին սահմաններուն վրայ պիտի տեսնես ԱՅՍ ՍԱՀՄԱՆԷՆ ԱՆՑՆԻԼԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ Է գրութիւնները: Այդ գրութիւնները դրուած են, որպէսզի մարդիկ գիտնան, թէ իմ կալուածիս սահմանը ուրկէ կը սկսի: Օհայոյի օրէնքը կ'ըսէ, թէ այն անձը, որ կ'ուզէ իմ հողիս վրայ գտնուիլ, պէտք է իր վրայ կրէ գրաւոր արտօնագիր մը այնքան ատեն որ կալուածին վրայ կը գտնուի: Եթէ այդ թուղթը չկրէ իր վրայ, օրինազանց կը համարուի, եւ ըստ օրէնքին կրնայ դուրս դրուիլ եւ պատիժի եւ տուգանքի ենթարկուիլ:

Ուստի մէկ խօսքով ...

Չես կրնար գրաւել բան մը, որուն վրայ օրինական իրաւասութիւն չունիս:

Ուստի ինչպէս ըսի, իմ կողմէս ստորագրուած արտօնագիր մը ունենալը, քեզի կու տայ օրինական իրաւունք իմ կալուածէս ներս մտնելու: Եթէ կալուածիս վրայ գտնուած ատենդ մէկը քեզ կեցնէ եւ հարցնէ, թէ ինչնի հոն ես, եւ դուն պատասխանես, որ ես քեզի ըսի, թէ կրնաս հոն որսորդութիւն ընել, ատիկա բաւարար պիտի չհամարուի: Օրէնքը կ'ըսէ, թէ պէտք է ստորագրուած թուղթ մը ունենաս՝ ներս մտնելու համար:

**ԳԻՏՏԻՐ, ԹԷ ԻՆՉԸ
ՔԵՂԻ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԵՒ
ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՍ
ՉԱՅՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ:
ԱՅՆ ԱՏԵՆ ԱՅԴ ԲՈԼՈՐ
ԲԱՆԵՐՆ ԱԼ ՊԻՏԻ
ՏՐՈՒԻՆ ՔԵՂԻ:**

Այս նոյն գործընթացը կը կատարուի եթէ դրամատուն պիտի երթաս եւ քու դրամդ ուզես. քեզմէ պիտի խնդրեն, որ ինքնութեան թուղթդ ցոյց տաս: Փոքրաքանակ առետուրի վաճառատան օգնականը նոյն իրաւունքը ունի քեզի հարցնելու, որ ինքնութեան թուղթդ ցոյց տաս երբ *քրեպիդ քարպր* կը գործածես՝ ապրանք գնելու համար: Ինքնութեան թուղթդ ցոյց տալը քեզ քու ունեցած հաշիւներէդ զրկելու համար չէ, այլ քեզ պաշտպանելու, որ ուրիշներ միջոց չունենան խարդախութեամբ քու ունեցուածքիդ հասնելու:

Երբ Յիսուս ըսաւ, որ նախ խնդրենք Աստուծոյ Թագաւորութիւնը, իրականութեան մէջ Ան ըսել կ'ուզէր. *«Սերտեցէք Թագաւորութեան օրէնքները, որպէսզի գիտնաք, թէ ինչպէս օրինական կերպով եւ ազդուօրէն պիտի գործէք ձեր օրինական իրաւունքներու ծիրէն ներս իբրեւ Թագաւորութեան քաղաքացիներ»*: Գիտցի՛ր, թէ ինչը քեզի կը պատկանի եւ թէ ինչպէս կրնաս զայն ձեռք բերել: Այն ատեն այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին քեզի:

Ուրիշ օրինակ մը տամ՝ եթէ տղուս համար դրամագլուխ մը դրած եմ: Երբ օրէնքին համաձայն ան չափահաս դառնայ, եւ օրինական ըլլայ, որ այդ հաշիւը իրեն փոխանցուի, ես պէտք է անոր ըսեմ, թէ հաշիւը ո՛ր դրամատան մէջ կը գտնուի, իրեն ցոյց տամ, թէ ինչպէս կրնայ իր հաշիւէն դրամ քաշել եւ ինչպէս կրնայ իր հաշիւին մէջ դրամ դնել: Թէեւ օրինականօրէն այդ հաշիւը իրեն կը պատկանի, տակաւին ան հաշուետու է օրէնքին իրաւական գործընթացին՝ իր հաշիւին հասնելու համար:

Ամփոփեմ ըսածս: Երբ Յիսուս ըսաւ, որ խնդրենք Թագաւորութիւնը, Ան ըսել կ'ուզէր, որ պէտք է սորվինք, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, ակնարկելով Թագաւորութեան մէջ գտնուող օրէնքներուն եւ գործընթացներուն, զորս պէտք է գիտնաս, որպէսզի օրինականօրէն ձեռք բերես այն, ինչ որ արդէն իսկ քուկդ է: Ուստի ինչպէս տեսանք դրամատան մէջ հաշիւ ունենալու օրինակիս մէջ, դուն կրնաս օրինական իրաւասութիւն ունենալ ստացուածքի մը վրայ, բայց տակաւին զայն չգրաւել, որովհետեւ օրինական գործընթացին չհետեւեցար՝ զայն գրաւելու համար: Օրինակ՝ եթէ ինքնութեան թուղթդ տունը մոռցած ես, երբ

դրամատուն երթաս, քեզի պիտի չարտօնեն, որ հաշիւէդ դրամ առնես, թէեւ ատիկա քու դրամդ է:

Աստուծոյ Թագաւորութեան մէջ գտնուող իրաւասութեան հարցը հասկնալը նախապայման է Աստուծոյ Թագաւորութեան մէջ ազդուօրէն գործելու համար:

Վստահ եմ, որ հաւանաբար այսպիսի պատմութիւն մը լսած ես. հանրածանօթ մէկը կը հիւանդանայ, եւ անոր համար աղօթք կը խնդրուի: Միլիոնաւոր մարդիկ աղօթքով կը միանան, որպէսզի այս անձը բժշկուի, բայց տակաւին ան կը մեռնի: Ինչո՞ւ:

Կամ մէկը քեզի կ'ըսէ, որ իր մեծ մայրը մեռաւ, թէեւ անոր համար կ'աղօթէր, եւ կ'ուզէ գիտնալ, թէ ինչո՞ւ: Կամ մէկը քեզի կ'ըսէ, որ Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուած է, որպէսզի Աստուած իր նիւթական կարիքը հոգայ, բայց տակաւին դրամ չունի: Այսպիսի հարցումներու համար պատասխաններ կան:

Նախքան այդ հարցումին պատասխանելս, եկէք ընդունինք, որ մենք չենք գիտեր ամէն բան, որ տեղի կ'ունենայ հոգեւոր մարզին մէջ, եւ ես չեմ ձեռացներ, որ ես գիտեմ: Սակայն Աստուծոյ Խօսքին համաձայն, գիտենք, որ եթէ մէկը հիւանդ է, Յիսուս արդէն անոր բուժումին գինը վճարած է: Գիտենք, որ եթէ առատաձեռն ըլլանք եւ տանք, Աստուածաշունչը կ'ըսէ, թէ պիտի ստանանք: Տակաւին ամէն օր բազմաթիւ մարդոց կեանքերուն մէջ կը տեսնենք, թէ կարծես Աստուծոյ Խօսքը բացայայտօրէն կը ձախողի ընելու այն բաները, որ գրուած է, թէ պիտի ընէ: Արդեօք Աստուած է մեղաւորը:

Մինչ այս նիւթը կը քննարկեմ այս գլուխին մէջ, պիտի տեսնես, թէ պատասխանը վճռական «Ո՛Չ» մըն է: Եթէ պատասխանը «Ո՛՛» է, ուրեմն ի՞նչ է հարցը: Ի վերջոյ, շատեր զԱստուած կը մեղադրեն պատահած ողբերգութիւններուն համար: Անոնք գիտեն, թէ Աստուած ունի զօրութիւնը այդ վատ բաները կեցնելու, որպէսզի չպատահին եւ Ան չ'ընէր այդ մէկը, ուստի անոնք կը կարծեն, թէ Ան կ'ընտրէ չկեցնել: Հոսկէ կու գայ այն սխալ վարդապետութիւնը, որ կ'ըսէ. «Աստուած կ'արտօնէ, որ վատ բաներ պատահին լաւ մարդոց»: Մարդիկ կը հաւատան, որ եթէ Աստուած բան մը չկեցուց կամ չմիջամտեց, ուրեմն արտօնութիւն տուած պէտք է ըլլայ, որ ատիկա պատահի: Սակայն եթէ ունիս այն հասկացողութիւնը, որ

Աստուած միշտ բարի է եւ Ան երբեք սուտ չի խօսիր, կը գիտնաս, որ հարցը Ինքնին Աստուած չէ, այլ ուրիշ տեղէ մը կու գայ. եւ կը սկսիս փնտռտուքի, որպէսզի պատասխանը գտնես:

Ճիշդ ինչպէս երբ սենեակ մը կը մտնես եւ մութ է, անմիջապէս չես ըսեր, որ ելեկտրականութեան ընկերութիւնը թերացած է քեզի հանդէպ: Ոչ, կը գտնես կոճակը եւ եթէ չաշխատի, լոյսը կը ստուգես: Գիտես, որ շատ հաւանաբար հարցը քու քովէդ է:

Եթէ գիտնաս, որ յանցաւորը երբեք Աստուած չի կրնար ըլլալ, քանի որ Ան մեզի տուած է Իր Խօսքն ու խոստումները, որոնք կը յայտնեն մեզի համար Իր ունեցած կամքը, այն ատեն պիտի սկսիս ջանասիրութեամբ փնտռել այն խոչընդոտը, որ արգելք եղած է, որ Աստուծոյ պատասխանը ստանաս:

Աշակերտներուն քով այս մտածելակերպը երեւցաւ երբ չկրցան դելը դուրս հանել Մատթէոս 17.14-23-ին մէջ նշուած տղայէն: Փոխանակ հարցնեն. «Աստուած ինչո՞ւ որոշեց այդ դելը հոն ձգել», անոնք Յիսուսի հարցուցին. «Մենք ինչու չկրցանք դուրս հանել չար ոգին»: Երբ պարագաները Աստուծոյ Խօսքին հակառակ կը թուին ըլլալ, պէտք է անմիջապէս այս հարցումը հարցնենք:

Ուստի դարձեալ, շատ կարեւոր է, որ նախ պէտք է գիտնանք, որ Աստուած բարի է, երկրորդ՝ որ Ան սուտ չի խօսիր: Պէտք է Աստուածաշունչ կարդաս եւ հարցումներ հարցնես եթէ կ'ուզես գիտնալ, թէ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ: Յիշեցնեմ, որ Աստուածաշունչի այդ հիանալի պատմութիւնները հոն դրուած են պատճառով մը. Յիսուս կը փորձէ բան մը ցոյց տալ քեզի:

Դարձեալ, Աստուծոյ Թագաւորութիւնը թագաւորութիւն է եւ կը գործէ օրէնքներով եւ սկզբունքներով, որոնք երբեք չեն փոխուիր: Այդ սկզբունքները, ինչպէս ըսի, կարելի է սորվիլ եւ գործածել ճիշդ ինչպէս հողագործը կը հասկնայ ցանելու եւ հնձելու ժամանակներուն հետ կապուած օրէնքները երկրի վրայ եւ այդ օրէնքները կը գործածէ բարգաւաճելու համար: Քանի որ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէ օրէնքներու համաձայն, որոնք բոլոր քաղաքացիներուն տրուած են, որպէսզի հասկնան եւ գործածեն զանոնք Թագաւորութեան մէջ, ոեւէ մէկը կրնայ սորվիլ զանոնք: Երբեմն գիտնալը, թէ այդ օրէնքները ինչպէս

կը գործեն, կրնայ կենաց եւ մահու հարց ըլլալ:

Մարքը եւ Հենան մեր եկեղեցին եկան եւ կ'ուզէին զաւակ մը ունենալ: Մինչեւ այն ատեն բժիշկները Հենային ըսած էին, որ քանի որ անոր մարմինին մէջ զանազան հարցեր կային, գրեթէ անկարելի էր, որ ան յղանար: Բայց երբ անոնք լսեցին Աստուծոյ բարութեան մասին եւ սորվեցան Թագաւորութեան օրէնքը «Ֆէյթ Լայֆ» եկեղեցիին մէջ, Հենան յայտնաբերեց, որ ինք յղի էր: Ան չափազանց ոգեւորուած էր: Սակայն շատ չանցած, ան սկսաւ սոսկալի փորի ցաւեր ունենալ, քանի մը անգամ անոնք այնքան սոսկալի էին, որ ան մարեցաւ:

Այդ միջադէպերէն մէկէն ետք Հենան ուզեց բժշկական քննութեան մը ենթարկուիլ, ուստի իր բժիշկին գրասենեակը գնաց: Բժիշկը հոն չէր, բայց հերթապահ բժիշկը ուզեց քննութիւն մը ընել, որպէսզի գիտնար, թէ ինչ կը կատարուէր:

Բժիշկը արեան մեծ լերդացում մը կը տեսնէ եւ անոր կ'ըսէ, թէ վիժում ունեցած է: Սրտի զարկ չկար:

Բժիշկը կ'առաջարկէ, որ յաջորդ օրը գայ, որպէսզի մեռած մանուկը հանէ անոր արգանդէն, բայց Հենան կը մերժէ: Փոխարէնը անոր ամուսինը՝ Մարքը զինք Աստուծոյ Խօսքով եւ խոստումներով կը քաջալերէ, որպէսզի Աստուծոյ Խօսքին հանդէպ իր վստահութենէն չհրաժարի ինչ կը վերաբերի մանուկին:

Այդ շաբաթավերջին Հենային համար աղօթեցին եկեղեցիին մէջ եւ համոզուեցաւ, որ ինք առողջ մանուկ մը պիտի ունենար, հակառակ բժիշկին իրեն ըսածին:

Այդ Երկուշաբթի օրը ան գնաց իր անձնական բժիշկը տեսնելու, քանի որ այն օրը, որ ինք բժիշկին գրասենեակը գացած էր, ինք հոն չէր: Բժիշկը կ'առաջարկէ, որ նորէն քննութիւն ընեն: Բժիշկը կը ցնցուի երբ քննութեան արդիւնքին կը նայի եւ անմիջապէս կը նայի այն արդիւնքներուն, որոնք քանի մը օր առաջ ելած էին: Յետոյ ան հետեւեալը կ'ըսէ Հենային. «Ես այս գործը երեսուն տարիէ ի վեր կ'ընեմ, եւ ասկէ առաջ երբեք այսպիսի բան չեմ տեսած: Անցեալ շաբթուայ արդիւնքներուն մէջ կը տեսնեմ այդ մեծ արեան լերդացումը եւ սրտի զարկի չգոյութիւնը: Երբ այսօր քեզի կը նայիմ, արեան լերդացումը բոլորովին անհետացած է, եւ

արգանդիդ մէջ կատարեալ ողջ մանուկ մը կայ, որ կատարեալ սրտի զարկեր ունի»:

Քանի մը ամիս ետք Հենան կատարեալ աղջիկ մանուկ մը ծնաւ, որուն անունը Էվլին դրաւ: Օր մը ան հետաքրքրուեցաւ՝ տեսնելու համար, թէ Էվլին անունը ինչ կը նշանակէ: Փնտոեց անոր իմաստը եւ զարմանքով յայտնաբերեց, որ անունը իրականութեան մէջ կեանք կը նշանակէ: Մինչ այս տողերը կը գրեմ, Հենան իր երկրորդ մանուկին ծնունդը կը սպասէ:

Այս հիանալի պատմութիւնը բացայայտօրէն Աստուծոյ գործն էր: Բայց իբրեւ հոգեւոր գիտնական, պէտք է այս պահուս քանի մը հարցում անցնին միտքէդ, ինչպէս. «Ինչո՞ւ ատիկա պատահեցաւ: Արդեօք Հենան Աստուծոյ նախասիրած անձերէն մէկն է: Արդեօք Աստուած պատահականօրէն ընտրեց անոր մանուկը բժշկել»:

Այս հարցումներուն պէտք է պատասխան տալ:

Դարձեալ, սովորական Քրիստոնեային համար պատահածը հրաշք էր: Բայց ես կը քաջալերեմ, որ մարդիկ վերանային «հրաշք» բառին՝ իբրեւ բառ մը, որ կ'ակնարկէ արտասովոր բանի մը: Սակայն Աստուծոյ Թագաւորութեան մէջ ասիկա պարզապէս Թագաւորութեան օրէնքին արդիւնքն է:

Եթէ քար մը ձգեմ եւ գետին իյնայ, պիտի մտածես, որ խենթացած եմ եթէ պոռամ. «ՈՒԱ՛ՈՒ, տեսա՞ր ինչ եղաւ: Քարը գետինն ինկաւ: Հրա՛շք է»: Դուն համաձայն պիտի չըլլաս, որ ատիկա հրաշք էր, որովհետեւ գիտես, որ ատիկա պարզապէս ձգողութեան օրէնքին արդիւնքն էր, եւ ատիկա ամէն անգամ եւ ամէն մարդու համար նոյն ձեւով կը գործէ: Քարը միշտ գետին պիտի իյնայ:

Ուստի իբրեւ հոգեւոր գիտնականներ, մենք պէտք է բանալիներ փնտոենք, թէ ինչ պատահեցաւ, հոգեւոր բանալիներ, որոնք պիտի յայտնաբերեն Թագաւորութեան օրէնքը կամ օրէնքները, որոնք ներկայ էին պատմութեան մէջ:

Աստուածաշունչի ամենահիանալի պատմութիւններէն մէկը, որ մեզի պիտի օգնէ, որ հաւատքի եւ իրաւասութեան մասին պատասխաններ գտնենք, կը գտնուի Ղուկասի Աւետարանին 8-րդ գլուխին մէջ:

«Երբ Յիսուս կ'երթար, բազմութիւնը կը սեղմէր զինք: Կին մը, որ արինահոսութիւն ունէր փասներկու փարիէ ի վեր, եւ իր ամբողջ ունեցածը ծախսած էր բժիշկներուն, բայց ոչ մէկէն կրցած էր բուժուիլ, երեսէն մօտենալով՝ անոր հանդերձին քղանցքին դպաւ, եւ իր արինահոսութիւնը անմիջապէս դադրեցաւ: Ու Յիսուս ըսաւ. «Ո՛վ էր ան՝ որ դպաւ ինձի»: Երբ բոլորը կ'ուրանային, Պետրոս եւ իրեն հետ եղողները ըսին. «Վարդապետ, բազմութիւնը քեզ կը սեղմէ ու կը ճնշէ, եւ կ'ըսես. «Ո՛վ դպաւ ինձի»»: Յիսուս ըսաւ. «Մէկը դպաւ ինձի, որովհետեւ զիտակցեցայ, թէ զօրութիւն մը դուրս ելաւ ինձմէ»: Երբ կինը տեսաւ, թէ ըրածը անկէ թաքուն չմնաց, դողալով եկաւ, անոր առջեւ ինկաւ, եւ ամբողջ ժողովուրդին առջեւ յայտարարեց անոր, թէ ինչ պատճառով դպեր էր անոր, եւ թէ ինչպէս անմիջապէս բժշկուեցաւ: Յիսուս ըսաւ անոր. «Քաջալերուէ, աղօջիկ[ւ]ս, հաւարքը բժշկեց քեզ. գնա՛ խաղաղութեամբ»»:

—Ղուկաս 8.42-48
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այս պատմութեան մէջ կը տեսնենք կին մը, որ երկար տարիներէ ի վեր շատ հիւանդ էր եւ չէր առողջանար: Յիսուսի ետեւէն մօտենալով՝ Անոր հանդերձին քղանցքին դպաւ, եւ անմիջապէս բժշկուեցաւ: Այս պատմութեան մէջ Թագաւորութեան գործունէութեան ակնարկող շատ խորունկ նշաններ կան, որոնցմէ կրնանք սորվիլ եւ որոնք պիտի յայտնաբերեն մեր փնտռած պատասխաններէն մէկ քանիները:

Նախ եւ առաջ, Յիսուսը շրջապատող ամբոխին մարդիկը բոլորը կը դաչէին Անոր, ինչպէս պատմութիւնը կ'ըսէ՝ ժողովուրդը, որ կը սեղմէր զինք, քիչ մնաց զինք պիտի ճզմէր: Երբ Յիսուս հարցուց. «Ո՛վ դպաւ ինձի», Պետրոս զարմացաւ այդ հարցումին վրայ, որովհետեւ քուրը կը դաչէին Անոր: Բայց Յիսուս ըսաւ, որ յատուկ անձ մը տարբեր ձեւով մը դպած էր Իրեն. Ան զգացած էր, որ Սուրբ Հոգիին զօրութիւնը Իրմէ դուրս կը հոսի:

Այս պատմութիւնը կարդալէ ետք, ամէն տեսակի զանգակներ եւ սուլիչներ պէտք է հնչեն քու հոգիիդ մէջ, որոնք քեզ պիտի մղեն,

որ կենաս եւ եղածին մասին մտածես: Միտքդ պէտք է անմիջապէս քննական վիճակի մէջ ըլլայ՝ բազմաթիւ հարցումներ հարցնելով: Իբրեւ հոգեւոր գիտնականներ, պէտք է գիտնանք, թէ ինչո՞ւ այս կինը բժշկուեցաւ եւ ուրիշ ոչ ոք բժշկուեցաւ: Կ'ենթադրեմ, որ հոն ուրիշ շատեր կային, որոնք ֆիզիքապէս կը դաչէին Անոր եւ իրենք ալ հիւանդ էին, բայց չբժշկուեցան: Ուստի պէտք է հարցնենք. «Ինչո՞ւ օծութիւնը միայն դէպի այս կինը հոսեցաւ եւ ոչ ուրիշ ոեւէ մէկուն, որ այդ պահուն Յիսուսի դպաւ»:

Աւանդական կրօնական պատասխանը կ'ըսէ, թէ կինը բժշկուեցաւ, քանի որ Յիսուս բժշկեց զինք: Բայց արդեօք Յիսուս բժշկեց զինք: Արդեօք Յիսուս դիտումնաւոր կերպով անոր կը ծառայէր երբ ան բժշկուեցաւ: Ան ձեռք դրա՞ւ անոր վրայ: Ան հրամայեց, որ հիւանդութիւնը անոր մարմինէն հեռանայ: Պատասխանը «Ո՛չ» է: Իրականութեան մէջ Յիսուս նոյնիսկ չէր գիտեր, որ ան հոն էր: Ան ստիպուեցաւ հարցնել, թէ ո՞վ դպաւ Իրեն:

Ուստի Յիսուս իրապէս ընտրեց զինք բուժել այդ պահուն: Դարձեալ, Ան նոյնիսկ չէր գիտեր, որ ան հոն էր: Ուրեմն ինչպէս բժշկուեցաւ: Ինչո՞ւ ան բժշկուեցաւ: Իբրեւ հոգեւոր գիտնականներ, մենք կրնանք բացատրել այն միտքը, որ ան Աստուծոյ յատուկ զաւակներէն մէկն էր կամ որ ան յատուկ կապ մը ունէր Յիսուսի հետ, քանի որ Առաքեալներու Գործերը Գիրքը կ'ըսէ, թէ Աստուած խտրութիւն չի դներ մարդոց միջեւ:

Նաեւ կրնանք ենթադրել, որ քանի որ Յիսուս նոյնիսկ չէր գիտեր, թէ կինը հոն էր, Ան դեր չունէր այդ օրը բժշկուելու անոր որոշումին մէջ: Մենք կրնանք համաձայնիլ, որ Յիսուս օծութեան ջրամբարն էր, բայց Ան մաս չկազմեց այն որոշումին, որ կինը կայացուց այդ պահուն բուժուելու:

Յիսուս մեզի կ'ըսէ, թէ կինը ճիշդ ինչպէս օգտուեցաւ Թագաւորութեան իշխանութենէն եւ զօրութենէն: Ան ըսաւ. «Աղջիկ[ս], հաւատքդ բժշկեց քեզ. գնա՛ խաղաղութեամբ»: Այս նախադասութիւնը մեզի կ'ըսէ ամէն բան, որ մենք պէտք ունինք գիտնալու եւ կը պատասխանէ մեր հարցումին, թէ՛ ինչո՞ւ եւ ինչպէս ան բժշկութիւն ստացաւ այդ օրը: Իբրեւ հոգեւոր գիտնականներ, եկէք սկսինք անելի մօտէն նայիլ այս պատմութեան եւ տեսնենք,

թէ արդեօք կրնամք գտնել նշաններ (յուշումներ), թէ ինչո՞ւ ան իր բժշկութիւնը ստացաւ:

Նախ եւ առաջ, Յիսուս զինք աղջիկ կոչեց, այսինքն՝ ան մաս կը կազմէր Իսրայէլի ժողովուրդին, Աբրահամի սերունդէն էր: Իբրեւ Աբրահամի զաւակ, ան ունէր Աբրահամին տրուած օրհնութիւնը եւ Աստուծոյ Աբրահամին հետ ըրած ուխտին բարիքները:

«Ան ըսաւ. “Եթէ Տիրոջ՝ քու Աստուծոյդ խօսքը ուշադրութեամբ մտիկ ընես, ինչ որ անոր առջեւ ուղիղ է՝ ընես, անոր պատուիրանները ունկնդրես եւ անոր բոլոր կանոնները պահես, այն հիւանդութիւններէն ո՛չ մէկը քու վրադ պիտի բերեմ, որ Եգիպտացիներուն վրայ բերի. որովհետեւ ես եմ Տէրը՝ որ քեզ կը բուժեմ”»:

—Ելքի Գիրք 15.26

Ուստի երբ Յիսուս զինք «աղջիկ» կանչեց, ատիկա կը նշանակէր, թէ ան ունէր օրինական իրաւունք ստանալու այն բոլոր բաները, որոնք կը գտնուէին Աստուծոյ Աբրահամի հետ ըրած ուխտին մէջ: Բայց ինքնին այս իրականութիւնը առանձինը չի կրնար միակ պատճառը ըլլալ, որ ան ստացաւ, քանի որ այդ օրը բոլոր հոն գտնուողները, որոնք կը ճնշէին Յիսուսը նոյն օրինականութիւնը ունէին: Պէտք էր որ ուիրշ բան մը ըլլար, որ պատճառ եղաւ, որ Աստուծոյ Թագաւորութեան զօրութիւնը հոսի: Յետոյ Յիսուս մեզի ուրիշ պատճառ մըն ալ կը յայտնէ, թէ ան ինչո՞ւ ստացաւ: Իրականութեան մէջ Յիսուս ըսաւ, որ ասիկա էր քուն պատճառը, որ անձամբ ան ստացաւ:

Ան ըսաւ, թէ անոր հաւատքը բժշկեց զինք:

Ուստի հիմա գիտենք պատճառը, թէ ինչո՞ւ ան կրցաւ ստանալ. անոր օրինական իրաւունքն էր ստանալ, քանի որ ան Աբրահամի աղջիկ էր, եւ անոր հաւատքը այն կոճակն էր, որ թոյլ տուաւ, որ այդ զօրութիւնը հոսի անձնապէս անոր մարմինէն ներս ճիշդ այդ պահուն:

Այն իրականութիւնը, որ ան դուստր էր, կարելի է նմանցնել ելեկտրական ընկերութեան, որ ելեկտրականութեան հոսանքը բացած է եւ ելեկտրական թելերը քու տունդ հասած են:

Ելեկտրական հոսանքը հասանելի է, բայց ատիկա չի նշանակեր, որ քու լոյսերդ պիտի վառին: Դուն պետք է նաեւ լոյսին կոճակը կոխես նախքան որ լոյսերը վառին:

Ուստի իբրեւ Աբրահամի օրինական զարմը, այս կինը ունէր օրինական իրաւունք բժշկուելու: Սակայն քանի որ ան երկրի վրայ եւ իր սեփական կեանքին վրայ իրաւասութիւն ունէր, ան պետք էր անձնապէս կոխէր կոճակը, որպէսզի այդ զօրութիւնը արձակէր:

Բայց ո՞ր է կոճակը: Ինչպէս կը կոխենք զայն:

Գիտնալու համար, պետք է սահմանենք մեր բառերը:

Ինչ է հաւատքը:

Հաւատքը բառ մըն է, որ Քրիստոնէաները շատ յաճախ թուփօրէն կը գործածեն, յաճախ անտեղի կերպով՝ ուրիշները տպաւորելու համար, եւ ես համոզուած եմ, որ շատեր, եթէ ոչ մեծամասնութիւնը, չեն գիտեր, թէ իրականութեան մէջ ինչ է հաւատքը, ինչո՞ւ անհրաժեշտ է, ինչպէս կը գիտնան եթէ հաւատքի մէջ են, եւ ինչպէս հաւատք ձեռք կը բերեն: Եթէ հաւատքը այն կոճակն է, որ թոյլ տուաւ, որ օծութիւնը հոսի եւ բժշկէ այդ կինը, ուրեմն պետք է ուշադրութեամբ քննենք հաւատքը:

«Հաւատք» բառին սահմանումը կը գտնենք Հռոմայեցիներուն 4-րդ գլուխին մէջ:

«Արդարեւ, հակառակ որեւէ յոյս չըլլալուն՝ Աբրահամ յուսաց եւ հաւատաց, թէ “բազմաթիւ ազգերու հայր” պիտի ըլլայ, ինչպէս որ Աստուած իրեն ըսած էր. “Այսպէս պիտի բազմացնեմ քու սերունդդ”: Եւ Աբրահամ իր հաւատքին մէջ չտրտուեցաւ. հակառակ շուրջ հարիւր տարեկան ըլլալուն՝ չնայեցաւ իր մարմնին, որ արդէն մեռածի պէս էր, ո՛չ ալ նայեցաւ Սառայի արգանդին ամրութեան: Բնաւ անհաւատութեամբ չտարակուսեցաւ Աստուծոյ խոստումին, այլ հաւատքով զօրացաւ եւ փառք տուաւ Աստուծոյ. այն հաստատ համոզումով՝ թէ Աստուած, որ խոստացաւ՝ կրնայ նաեւ կատարել»:

—Հռոմայեցիներուն 4.18-21
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եկէք հասկնանք, թէ այս պատմութիւնը երբ եւ ո՞ր պատահեցաւ: Աբրահամը եւ Սառան զաւակ չէին կրնար ունենալ: Ըսել չեմ ուզեր, որ Սառան դժուարութիւն կ'ունենար յղի մնալու եւ պէտք է շարունակէին փորձել: Ըսել կ'ուզեմ, որ անոնք գրեթէ հարիւր տարեկան էին, եւ այլեւս զաւակ ունենալու յոյս չկար: Այլեւս անոնց մարմինները զաւակ չէին կրնար յառաջ բերել. անկարելի էր: Սակայն Աստուած Աբրահամին զաւակ մը խոստացաւ, թէ եւ բնականին մէջ, ատիկա ամբողջովին անկարելի էր:

Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Աբրահամ հաստատ համոզում ունէր, թէ Աստուած կրնար կատարել այն, ինչ որ ըսաւ՝ հակառակ բնական իրականութիւններուն, որոնք կ'ըսէին, թէ ատիկա կարելի չէր: Ուրեմն ահա մեր հաւատքի սահմանումը՝ հաստատ համոզում ունենալ, թէ Աստուած, որ խոստացաւ՝ կրնայ նաեւ կատարել:

Ես ատիկա այսպէս կ'ըսեմ. «**Սիրտիդ համաձայնիլը երկինքի հետ**»: Ոչ միայն միտքով համաձայնիլ Աստուծոյ ըսածին հետ, այլեւ հաստատ համոզում ունենալ:

Հաւատքի մեր սահմանումը

Ինծի հետ բարձրաձայն ըսէ, որպէսզի վստահ ըլլաս, որ հասկցար. «Հաւատքը Աստուծոյ ըսածին հանդէպ հաստատ համոզում ունենալ է: Ատիկա մեր սիրտին եւ միտքին համաձայնութիւնն է երկինքի հետ, հաստատ համոզումով»:

Ինչո՞ւ հաւատքի պէտք ունինք:

Ինչո՞ւ Աստուած չի կրնար հիւանդանոցի մէջ գտնուող բոլոր մարդիկը բժշկել երբ որ Ինք ուզէ: Ինչո՞ւ Ան չի կրնար պատերազմները կեցնել: Ինչո՞ւ Ան չի կրնար հրեշտակներ դրկել, որպէսզի մեզի Աւետարանը քարոզեն: Վստահ եմ, որ ասկէ առաջ այս բոլոր հարցումները լսած ես: Պատասխանը՝ չի կրնար:

Այնպէս չէ, որ Աստուած զօրութիւնը չունի ատիկա ընելու: Ան իրաւասութիւնը չունի այդ մէկը ընելու:

Ըսածս հասկնալու համար պէտք է կարդանք Եբրայեցիներուն դրկուած նամակէն:

«Հապա մեկը տեղ մը վկայեց եւ ըսաւ. “Մարդը ինչ է՝ որ կը յիշես զայն, կամ մարդու որդին՝ որ կ’այցելես անոր: Հրեշտակներէն քիչ մը վար ըրիր զայն. փառքով ու պատիւով պատկեցիր զայն, եւ քու ձեռքերուդ գործերուն վրայ նշանակեցիր զայն. ամէն բան հպատակեցուցիր անոր ոտքերուն ներքեւ”: Քանի որ բոլորը հպատակեցուց անոր, անոր դէմ ըմբոստացող ոչինչ թողուց. բայց հիմա բոլորը անոր հպատակած չենք տեսներ»:

—Եբրայեցիներուն 2.6-8

Երբ մարդը երկրի վրայ դրուեցաւ, Աստուած անոր տուաւ կատարեալ օրինական իրաւասութիւն ամբողջ երկրի վրայ: Չկար բան մը, որ անոր իրաւասութեան տակ չէր: Ան այդ մարզին վրայ կը տիրէր կատարեալ իրաւասութեամբ եւ իշխանութեամբ: Իշխանութեամբ տիրելու անոր կարողութիւնը ամրապնդուած էր այն կառավարութեան կողմէ, որ զայն հոն դրած էր: Հիմնականօրէն ան կը տիրէր Աստուծոյ Թագաւորութեան կողմէ տրուած իշխանութեամբ: Ան կը կրէր այդ կառավարութեան պսակը, որ կը ներկայացնէր Աստուծոյ փառքը, օծութիւնը, եւ այն պատիւի եւ իշխանութեան դիրքը, զոր ան կը կրէր:

Անշուշտ իրականութեան մէջ ան բառացիօրէն մետաղէ պսակ չէր կրեր, բայց ան իրապէս պսակ ունէր՝ պսակին տրուած իմաստը նկատի ունենալով: Այդ մասին յստակ պատկերացում ունենալու համար, բնական թագաւորի մը մասին մտածէ: Թէ՛եւ ան բնական մարդ է եւ իրական զօրութիւն չունի իր բնական էութեան մէջ, ան

**ԵՐԿԻՆՔԸ ՈՉ ՄԷԿ
ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ
ԵՐԿՐԻ ՎՐԱՅ, ԲԱՅԻ
ԵԹԷ ՏՂԱՄԱՐԴ ՄԸ
ԿԱՄ ԿԻՆ ՄԸ ՀԱՍՏԱՏ
ՀԱՄՈՂՈՒՄ ՈՒՆԵՆԱՅ
ԵՐԿԻՆՔԻՆ ԸՍԱԾԻՆ
ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐ ԿԸ
ԿՈՉՈՒԻ ՀԱԻԱՏՔ:**

պսակ կը կրէ, որ ցոյց կու տայ, թէ ան ոչ միայն ինքզինք կը ներկայացնէ, այլեւ ամբողջ թագաւորութիւն մը եւ կառավարութիւն մը: Անոր խօսքերը իշխանութիւն ունին միայն որովհետեւ անոնք ամրապնդուած են իր ներկայացուցած կառավարութեան եւ թագաւորութեան ամբողջ զօրութեամբ եւ բնական աղբիւրներով:

Եթէ մտածես *շերիֆի* մը մասին, որ երթելեկը կը ղեկավարէ, ան մեծ *թրաքթոր* մը կը կեցնէ միայն քանի մը բառով. «Կեցի՛ր, օրէնքին անունով»:

Այո, բեռնակառքը շատ աւելի մեծ է, քան՝ մարդը եւ մարդը առանձին չի կրնար բաղդատուիլ բեռնակառքին հետ: Բայց բեռնակառքը կանգ կ'առնէ ոչ թէ մարդուն պատճառով, այլ անոր կրած նշանին պատճառով, որ կը ներկայացնէ անոր նեցուկ կանգնող կառավարութիւնը: Այս պարագային կառավարութիւնը շատ աւելի մեծ է, քան՝ այդ նշան կրող մարդը: Բեռնակառքը քշողը մարդէն չի վախնար, այլ՝ այդ մարդուն ներկայացուցած կառավարութենէն, ուստի կը կեցնէ բեռնակառքը: Նոյնն է պարագան հոս: Ադամը երկրի վրայ ստեղծուած բոլոր բաներուն վրայ կը տիրէր: Փառքի եւ պատիւի պսակը, որ կը ներկայացնէր Աստուծոյ զօրութիւնն ու տէրութիւնը, մարդուն կը վստահեցնէր, որ իր խօսքերը Աստուծոյ Թագաւորութեան փոխարէն կ'իշխէին:

*«Երկինքը **Տիրոջ** երկինքն է, բայց երկիրը **մարդոց որդիներուն տուաւ**»:*

—Սաղմոս 115.16
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մարդուն երկրին վրայ ունեցած իրաւասութեան այս սկզբունքը կենսական է՝ Թագաւորութեան օրէնքը հասկնալու համար, մասնաւորաբար, թէ ինչն է հաւատք կը պահանջուի, որպէսզի Աստուած օրինական իրաւասութիւն ձեռք բերէ կացութեան մը մէջ:

«[...] Յիսուս ըսաւ անոնց. “Մարգարէ մը առանց պատիւի չէ, բացի իր բնագաւառին, իր ազգականներուն եւ իր տան մէջ”: **Հոն չէր կրնար հրաշք գործել.** *բայց միայն քանի մը հիւանդի վրայ ձեռք դրաւ ու բուժեց զանոնք: Եւ անոնց անհաւատութեան վրայ կը զարմանար [...]*»:

—Մարկոս 6.4-6
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ փողոցը մարդոց հարցնէի, թէ արդեօք Յիսուս կրնամր

բան մը ընել, հաւանաբար պիտի ըսէին. «Կրնար»: Այն ատեն եթէ հարցնէի, թէ արդեօք Աստուածաշունչին մէջ կայ տեղ մը, ուր Յիսուս փորձեց, բայց չկրցաւ հրաշք գործել, ինչ պիտի ըսէին:

Կը վստահեցնենք քեզ, անոնք ինձի պիտի ըսեն, որ այդպէս բան մը չկայ Աստուածաշունչին մէջ, բայց դուն տակաւին հիմա կարդացիր այդպիսի համար մը: Յիսուս չկրցաւ զանոնք բժշկել: Իբրեւ հոգեւոր գիտնական, ես կ'ուզեմ գիտնալ, թէ ինչն է:

Պատասխանը պարզ է՝ Ան չկրցաւ, եւ հիմա գիտես, որ ատոր պատճառը անոնց անհաւատութիւնն էր, անոնք երկինքի հետ համաձայնութիւն չունէին, ուստի երկինքը որեւէ օրինական իրաւասութիւն չունէր այդ կացութեան մէջ:

Վստահ եղիր, որ մեր յայտնաբերածին մասին յստակ հասկացողութիւն ունիս:

Երկինքը ոչ մէկ իրաւասութիւն ունի երկրի վրայ, բացի եթէ տղամարդ մը կամ կին մը հաստատ համոզում ունենայ երկինքին ըսածին նկատմամբ, որ կը կոչուի ՀԱՒԱՏՔ:

Ինչպէս մեր նախորդ օրինակին մէջ տեսանք, ենթադրենք, որ մէկը, որ կը ճանչնաս, հիւանդ է, եւ ան աշխարհի մէջ հանրաճանօթ է: Միլիոնաւոր մարդոցմէ կը խնդրուի, որ անոր համար աղօթեն եւ կ'աղօթեն, բայց ատով հանդերձ անձը կը մեռնի: Արդեօք Աստուծոյ Խօսքը ձախողեցա՞մ: Ո՛չ: Ատիկա անկարելի է: Ուստի ուրիշ տեղ մը պէտք է գտնենք մեր պատասխանը:

«Երբ աղօթէք, շարախօս մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որովհետեւ կը կարծեն, թէ պիտի ընդունուին՝ իրենց շարախօսելուն համար: Ուրեմն մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ձեր պէտքերը՝ դեռ դուք չխնդրած իրմէ»:

—Մատթէոս 6.7-8

Շատեր կը հաւատան, թէ որքան աղօթողներուն թիւը մեծ ըլլայ, այնքան Աստուծոյ լսելու եւ օգնութեան մղուելու հաւանականութիւնը կը մեծնայ: Յուսամ մինչեւ հիմա ըսածներս բաւարար են, որ գիտնաս, թէ ասիկա ամբողջովին սխալ է: Եւ

երբ կ'ըսեմ, թե հաւատք չկար, առաջին հերթին, ես կը խօսիմ այն անձին մասին, որ Աստուծմէ ստանալու համար հաւատքի պէտք ունի: Անկասկած համաձայն ես, որ Յիսուս մեծ հաւատք ունէր Մարկոս 6-ին մէջ գտնուող մեր պատմութեան մէջ, սակայն Ան չկրցաւ զանոնք բժշկել:

Ուստի եթէ դուն եւ ես խօսէինք հիւանդ բարեկամիդ մասին մինչ միլիոնաւորներ կ'աղօթէին անոր համար, քեզի պիտի հարցնէի. «Ան (հիւանդ բարեկամը) ինչ կ'ըսէ»:

Քսան միլիառ հոգի կրնայ աղօթել մէկու մը համար, բայց եթէ հիւանդը կ'ըսէ, թէ ինք (աղջիկ կամ տղայ) պիտի մեռնի, ան պիտի մեռնի:

Դարձեալ, եկէք խօսինք մեր օրինակին մասին, զոր քիչ առաջ տեսանք Մարկոս 6-ին մէջ: Մենք գիտենք, թէ Յիսուս բժշկելու հաւատք ունէր, բայց Ան ոչինչ կրնար ընել մարդոց համար եթէ անոնք իրենց հաւատքը ի գործ չդնեն:

Բազմաթիւ մարդիկ ինծի եկած եւ ըսած են, թէ իրենց մեծ մայրը կամ մեծ հայրը կամ իրենց մէկ ազգականը հիւանդ է եւ թէ իրենք կ'աղօթեն անոնց համար, բայց բան մը չ'ըլլար: Միշտ կը հարցնեմ. «Մեծ մայրդ ինչ կ'ըսէ: Մեծ հայրդ ինչ կ'ըսէ: Հաւատք կ'այ հոն»:

Գիտե՛ս, դուն հոգեւոր իշխանութիւն չունիս ուրիշի մը վրայ: Կրնաս անոնց ծառայել, բայց անոնք պէտք է իրենց մասնակցութիւնը բերեն անոր մէջ: Երբ մարդոց համար կ'աղօթեմ, իրենց կ'ըսեմ, որ պատկերը փոխեն: Խօսքս այն պատկերին մասին է, որ իրենց միտքին մէջ կը տեսնեն իրենց կացութեան մասին: Ես կ'ուզեմ այդ պատկերը մահէն դէպի կեանք փոխել:

«Յովհաննէսի աշակերտները պատմեցին իրեն այս բոլոր բաներուն մասին: Յովհաննէս ալ իր աշակերտներէն երկուքը կանչեց իրեն ու դրկեց Յիսուսի՝ ըսելով. “Դո՛ն ես ան՝ որ պիտի գար, թէ ուրիշի՛ մը սպասենք”: Երբ այդ մարդիկը եկան անոր քով՝ ըսին. “Յովհաննէս Մկրտիչը մեզ դրկեց քեզի՛ ըսելով. “Դո՛ն ես ան՝ որ պիտի գար, թէ ուրիշի՛ մը սպասենք”: Նոյն ժամուն շարեր բժշկեց իրենց ախտերէն, փանջանքներէն եւ չար

ոգիներէն, ու շար կոյրերու տեսութիւն շնորհեց: Ապա Յիսուս պատասխանեց անոնց. “Գացէ՛ք, պատմեցէ՛ք Յովհաննէսի ինչ որ տեսաք եւ լսեցիք, թէ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոպները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կ’առնեն, աղքատներուն կ’աւելարանուի”»:

—Ղուկաս 7.18-22

Նկատի առ, որ Յիսուս աստուածաշնչական համար մը չմէջբերեց: Կրնար ըսել. «Գացէ՛ք Յովհաննէսին ըսէ՛ք այս կամ այն աստուածաշնչական համարը»: Բայց այդպէս չըրաւ, անոնց ըսաւ, որ Յովհաննէսին ըսեն այն բոլոր լաւ բաներուն մասին, որոնք կը կատարուէին Աստուծոյ Թագաւորութեան զօրութեամբ եւ իշխանութեամբ:

Ընկերոջ մը կամ ընտանիքիդ անդամներէն մէկուն օգնելու համար, դուն ալ նոյնը պէտք է ընես: Հիւանդ ընկերոջդ պատմութիւն մը պատմէ, թէ Յիսուս ինչպէս ուրիշ մէկու մը բժշկեց: Եթէ հնարաւոր է, անոր պատմէ պատմութիւն մը մէկու մը մասին, որ ճիշդ իր հիւանդութենէն կը տառապէր եւ բժշկուեցաւ: Այդ պատկերը տալը պիտի ներշնչէ եւ յուսադրէ զինք: Յոյսը միշտ պատկեր մը կ’ունենայ իրեն հետ, եւ այս է այն պատկերը, որ կ’ուզես, որ բարեկամդ կամ ընտանիքիդ մէկ անդամը տեսնէ, թէ բուժու՞մ կայ այդ հիւանդութեան համար:

Երբ բարեկամդ կամ ընտանիքիդ մէկ անդամը տեսնէ, թէ կարելի է բժշկուիլ, քեզի պիտի հարցնէ, թէ ինչպէս կրնայ ըլլալ ատիկա: Ասիկա այն պահն է, որուն դուն մինչեւ հիմա կը սպասէիր. հիմա ան բաց է Աստուծոյ Խօսքին եւ Թագաւորութեան վերաբերող սկզբունքներուն մասին ցուցմունքներ ստանալու: Նախ պէտք է զիրենք Թագաւորութենէն ներս բերես՝ եթէ վերստին ծնած չեն, եւ երկրորդ՝ իրենց հետ ժամանակ անցընես՝ իրենց բացատրելով բժշկութեան վերաբերող աստուածաշնչական համարները: Եթէ կարելի է, անոնց տուր կարգ մը նիւթեր՝ ըսածներդ ամրապնդելու համար: Ասիկա ընելով, մենք տեսած ենք, որ հարիւրաւոր մարդիկ բժշկուած են ամէն տեսակի հիւանդութիւններէ եւ ազատագրուած են: Ուրիշ բան մը, որ կ’ընեն, նախքան անոնց համար աղօթեմ,

անոնց կը հարցնեն, թե ինչո՞ւ կը հաւատան, որ պիտի բժշկուին երբ աղօթենք: Կ'ուզեմ, որ իրենց հաւատքը Աստուածաշունչին վրայ խարսխուի, եւ ոչ թէ պարզապէս աղօթելու գործողութեան վրայ:

Հիմա մենք գիտենք, թե ինչ է հաւատքը՝ երկինքի հետ համաձայնութիւն, մինչ սիրտդ Աստուծոյ ըսածներուն նկատմամբ հաստատ համոզում ունի: Մենք հիմա նաեւ կը հասկնանք, թէ հաւատք կը պահանջուի՝ Աստուծոյ օրինական իրաւասութիւն տալու համար երկրի վրայ այն անձին միջոցով, որ երկինքի հետ համաձայն է:

Ինչպէս հաւատք կ'ունենանք:

«[...] Հեքեաբար, [...] հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն. իսկ քարոզութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են, որ կը քարոզուին»:

—Հռոմայեցիներուն 10.17

Ինչպէս կու գայ հաւատքը. Աստուծոյ խօսքը լսելէն: Ինչ է գործընթացը: Պարզապէս խօսքը լսելը բաւարար է, որ հաւատքը զարգանայ մարդուն հոգիին մէջ:

Հասկնալու համար, թէ հաւատքը ինչպէս կու գայ եւ Հռոմայեցիներուն 10.17-ը ինչի՞ մասին կը խօսի, կրնանք կարդալ Մարկոսի Աւետարան 4-րդ գլուխը: Ես միշտ կ'ըսեմ, թէ՛ եթէ Աստուածաշունչդ դէպի վեր նետես, երբ իյնայ, պէտք է Մարկոս 4-րդ գլուխը բացուի. ատիկա այդքան կարեւոր է:

Մարկոս 4.13-ին մէջ Յիսուս կ'ըսէ, թէ եթէ չհասկնաս այն, ինչ որ ինք կը սորվեցնէ այս առակին մէջ, ուրիշ ոչ մէկ առակ պիտի հասկնաս Աստուածաշունչէն: Ըստ իս, ատիկա շատ կարեւոր է: Ինչո՞ւ այս գլուխը այդքան կարեւոր է: Քանի որ մեզի կ'ըսէ, թէ երկինքը ինչպէս կը յարաբերի երկրին հետ, ինչպէս իրաւասութիւն կը շահի, եւ ո՞ր տեղի կ'ունենայ ատիկա: Կեանքիդ համար ոչինչ աւելի կարեւոր է, քան գիտնալը, թէ այս ամբողջ գլուխը ինչի՞ մասին կը խօսի:

Այս գլուխին մէջ մարդկային հոգիին մէջ հաւատքին ծնելուն մասին երեք առակներ կը պատմէ մեզի Յիսուս, ինչ որ, ինչպէս գիտես հիմա, անհրաժեշտ պայման է, որ երկինքը օրինական կերպով երկիր ներխուժէ: Այս գլուխին մէջ գտնուող երեք պատմութիւններն են՝ սերմնացանին առակը, սերմ ցանողին առակը (աճող սերմին առակը), եւ մանանեխի հատիկին առակը:

Սկսինք կարդալ երկրորդ պատմութիւնը, որ Յիսուս կը պատմէ Մարկոս 4-ին մէջ, սերմ ցանողին (աճող սերմին) պատմութիւնը:

«Նաեւ կ'ըսէր. “Աստուծոյ թագաւորութիւնը այնպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ հունտը ցանէ. քնանայ թէ արթննայ, գիշեր ու ցերեկ, հունտը կը ծաղկի եւ կը մեծնայ, ու ինք չի գիտեր, թէ ինչպէս: Քանի որ հողը ինքնիրմէ պտուղ կ'արտադրէ. նախ՝ խոտը, յետոյ՝ հասկը, անկէ ետք՝ լեցուն ցորենը հասկին մէջ: Երբ պտուղը հասուննայ՝ իսկոյն մանգաղը կը դրկէ, որովհետեւ հունձքի արեւը հասած է”»:

—Մարկոս 4.26-29

Առաջին բանը, որ պէտք է ընենք, մեր բառերը սահմանելն է: Ինչ է այն հունտը, որուն մասին կը խօսի Յիսուս, եւ ինչ է հողը: Իրականութեան մէջ Յիսուս այդ երկու բառերը կը սահմանէ նախորդ առակին մէջ՝ սերմնացանին առակին մէջ, որ նոյն գլուխին մէջ կը գտնուի:

Հունտը Աստուծոյ Խօսքն է, եւ հողը մարդուն սիրտը կամ մարդուն հոգին է: Ուստի այս առակին մէջ, Յիսուս կ'ըսէ, թէ մարդ մը Աստուծոյ Խօսքը կը ցանէ իր սիրտին մէջ: Յետոյ հողը կամ մարդուն սիրտը ինքնիրմէ կը սկսի հաւատք կամ երկինքին հետ համաձայնութիւն արտադրել: Ասիկա քու մարդկային հոգիիդ բնական գործընթացն ու գործն է. անիկա բարենպաստ պայմաններ կը ստեղծէ, որ այն, ինչ որ հոն դնես, աճի եւ զարգանայ:

Նախքան շարունակեմ, կարեւոր է, որ յիշես մեր հաւատքին սահմանումը՝ տղամարդու մը կամ կնոջ մը սիրտը, որ երկինքին ըսածին նկատմամբ հաստատ համոզում ունի:

Հոս պէտք է յիշենք, թէ երկինքին հետ համաձայնիլը եւ Աստուծոյ Խօսքին հետ միտքով համաձայնիլը նոյն բանը չեն: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Աբրահամ հաստատ համոզում ունէր: Որպէսզի յստակ պատկեր մը ունենաս, թէ հաստատ համոզումը ինչպէս կ'ըլլայ եւ ինչ կը նշանակէ, ենթադրենք, որ քեզի կ'ըսեմ, որ Նիւ Եորքի մէջ գտնուող «Էմփայր Սթէյթ Պիլտինկ»ին գազաթէն վար ցատկես: Որպէսզի քեզ համոզեմ, որ ասիկա փորձես, քեզի կ'ըսեմ, որ եթէ թելերդ լաւ թափահարես, կրնաս թռչիլ եւ ապահով կերպով գետին հասնիլ: Դուն վրաս պիտի խնդաս, քանի որ ԳԻՏԵՍ, թէ ինչ պիտի պատահի քեզի: Դուն արդիւնքին մասին հաստատ համոզում ունիս: Հաստատ համոզումը այդ կը նշանակէ: Դուն գիտես, դուն համոզուած ես, ուրիշ հաւանականութիւն չկայ. եթէ ցատկես, պիտի մեռնիս:

Ուստի ուրիշ կացութիւն մը առնենք եւ տեսնենք, թէ ինչպէս պիտի հասկնաս ատիկա: Ենթադրենք, որ շատ տեսանելի, մեծ ուռեցք մը ունիս մարմինիդ վրայ, եւ բժիշկը կ'ըսէ, որ միայն մէկ ամսուայ կեանք ունիս: Քաղցկեղ ունիս: Իրականութեան մէջ քու ունեցած քաղցկեղիդ տեսակը այնքան հազուագիւտ է, որ չկայ մէկը, որ անով արտաճանաչուած է: Ենթադրենք, որ գիտես, թէ Ա. Պետրոս 2.24-ը ինչ կ'ըսէ:

«Մեր մեղքերը ինք կրեց՝ իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք: “Անոր վերքերովն էր, որ բժշկուեցանք”»:

—Ա. Պետրոսի 2.24

Աստուածաշունչը մեզի կու տայ պատասխանը, բայց դուն եւ ես լուրջ հարց մը ունինք. մենք խաւարի թագաւորութեան մէջ մեծցած ենք, եւ այլասերումն ու մահը ամէն կողմէ մեզ կը շրջապատեն: Մենք մեծցած ենք վախի թագաւորութեան մէջ եւ վախին ըսածներուն լման համոզուած ենք: Ուստի վերի օրինակին մէջ մենք մարզուած ենք, որ քաղցկեղը կրնայ սպաննել: Բոլոր լրատուամիջոցներու հաղորդումները կը հաստատեն, թէ ասիկա ճիշդ է: Ուստի ինչպէս կրնանք փոխել մեր համաձայնութիւնը:

Ինչպէս կրնանք Աստուծոյ ըսածներուն նկատմամբ հաստատ համոզում ունենալ: Իրականութեան մէջ մենք առանձին չենք կրնար ընել աստիկա: Բայց Աստուծոյ Խօսքը ողջ է եւ զօրութեամբ լեցուն է, եւ զայն մեր հոգիին մէջ ցանելով՝ ինքնիրմէ հոգիդ եւ Խօսքը կը սկսին համաձայնութիւն արտադրել երկինքի ըսածներուն հետ:

*«Նաեւ կ'ըսէր. “Աստուծոյ թագաւորութիւնը այնպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ հունսը ցանէ. քանայ թէ արթննայ, գիշեր ու ցերեկ, հունսը կը ծաղկի եւ կը մեծնայ, ու ինք չի գիտեր, թէ ինչպէս: Քանի որ **հողը ինքնիրմէ պտուղ կ'արտադրէ**. նախ՝ խոտը, յետոյ՝ հասկը, անկէ ետք՝ լեցուն ցորենը հասկին մէջ: Երբ պտուղը հասուննայ՝ իսկոյն մանգաղը կը դրկէ, որովհետեւ հունձքի արեւնը հասած է”»:*

—Մարկոս 4.26-29
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հողը (սիրտդ) ինքնիրմէ համաձայնութիւն կ'արտադրէ: Նկատի առ, չես կրնար հաւատքի համար աղօթել. աստիկա սիրտիդ եւ Խօսքին հետ կապ ունի: Երբ կը նայինք այս հատուածին, կը տեսնենք, թէ մեր սիրտերուն եւ երկինքին միջեւ համաձայնութիւնը գործընթաց մըն է: Ատիկա անմիջապէս չ'ըլլար: Այս օրինակը մեզի կ'ըսէ, թէ սկիզբը, երբ մեր սիրտերը Խօսքը կ'ընդունին, հաւատքը կը սկսի աճիլ այնպէս, ինչպէս նոր ցանուած հունտի մը բարակ, սուր տերեւը կամ ծիլը կը սկսի մեծնալ: Յետոյ ան շարունակելով ցօղունի կը վերածուի, եւ յետոյ գլուխը կը կազմուի: Գլուխը այն մասն է, ուր հունտը կամ պտուղը կը սկսի ձեւաւորուիլ: Բոյսին կեանքին այս հանգրուանին մէջ տակաւին չկայ բան մը, զոր կրնաս ուտել: Բոյսը տակաւին իր չափահաս, հասուն պտուղը չէ արտադրած, բայց կը մեծնայ:

Նոյնն է պարագան Աստուծոյ Խօսքին: Տակաւին չկայ տեսանելի փոփոխութիւն բնական մարզին մէջ երբ հաւատքը աճելու հանգրուանին մէջ է: Տակաւին չկայ համաձայնութիւն, բայց վստահ եղիր, որ բոյսը կը մեծնայ, հաւատք կ'արտադրուի,

Եւ համաձայնութիւն կը գոյանայ: Յիսուս շարունակելով կը բացատրէ, թէ երբ գլուխին մէջ գտնուող հունտը կատարեալ չափահասութեան կամ հասունութեան կը հասնի, կը նշանակէ, թէ հունձքի ատենը հասած է, համաձայնութիւն կայ եւ հիմա հաւատք կայ:

Երբ հողին մէջ հունտ կը ցանես, ծլարձակումի գործընթացին միջոցով բոյսը կը սկսի աճիլ, բայց տակաւին պտուղ չկայ: Բոյսը կը շարունակէ աճիլ այնքան ատեն որ ճիշդ միջավայրին մէջ կը մնայ: Երբ չափահաս կը դառնայ, իր պտուղը դուրս կը հանէ:

Ենթադրենք, որ եգիպտացորեն կը ցանես: Եգիպտացորենի բոյսը եգիպտացորենի հասկ կու տայ, բայց սկիզբը ատիկա պարզապէս պզտիկ հասկ մըն է՝ առանց հասուն եգիպտացորենի, զոր կրնաս ուտել: Բայց որոշ ժամանակ մը ետք հասկին վրայի եգիպտացորենը չափահաս եւ հասուն կը դառնայ: Կ'ուզեմ, որ հետեւեալ կէտը ըմբռնես: Այն պահուն որ հասկին վրայ գտնուող եգիպտացորենին հատիկը եւ հողին մէջ ցանուած եգիպտացորենին հատիկը նոյնը կ'ըլլան, հոն համաձայնութիւն կայ:

Երբ բոյսին գլխուն մէջի հունտը հասուննայ, ճիշդ – ՃԻՇԴ – ցանուած հունտին պիտի նմանի:

Եգիպտացորենի բոյս մը ցանէ, եւ հասկին մէջ գտնուող հասուն հունտը պիտի համապատասխանէ քու ցանած հունտիդ: Երկուքը նոյնն են: Ճիշդ իրարու կը նմանին եւ նոյն համը ունին, այնքան որ չես կրնար զանոնք զանազանել:

Ուստի պիտի պարզաբանեմ Յիսուսի ըսածը: Երբ կը լսենք Աստուծոյ Խօսքը (<ճ 10.17), իրականութեան մէջ մենք կը ցանենք Աստուծոյ Խօսքը մեր հոգեւոր էութեան մէջ՝ մեր սիրտին մէջ: Եթէ այդ Խօսքը մեր սիրտին մէջ պահենք, պիտի աճի եւ հասուննայ. եւ երբ հասուննայ, մեր սիրտը երկինքին ըսածներուն նկատմամբ հաստատ համոզում պիտի ունենայ: Երկինքը եւ երկիրը պիտի հաւասարին, եւ այն ատեն երկինքը օրինական իրաւասութիւն ձեռք բերած պիտի ըլլայ երկրի վրայ այն անձին միջոցով, որ հաստատ համոզում ունի: Մեր միտքերը եւ հաւատքը լիովին կը յարմարին երկինքին ըսածին՝ կատարեալ վստահութեամբ:

Ասիկա միտքին հետ կապ չունի: Հիմա ասիկա պիտի դառնայ բան մը, որուն մենք իսկապէս կը հաւատանք ճիշդ ինչպէս կը հաւատանք, որ եթէ քարը ձգենք, պիտի ինչայ: Երկինքը Խօսքը կը ցանէ երկինքէն դէպի երկիր, ուր անիկա յառաջ պիտի բերէ, պիտի իրականացնէ համաձայնութիւն եւ Աստուծոյ կամքը: Եթէ երկինքը ըսէ, թէ դուն բժշկուած ես, ուրեմն երբ այդ Խօսքը հասուննայ քու սիրտիդ մէջ, միակ բանը, որ պիտի տեսնես, երկինքին ըսածը պիտի ըլլայ: Այլեւս վախ պիտի չըլլայ: Երբ աչքերդ զոցես, դուն քեզ բժշկուած պիտի տեսնես: Այդ է պատճառը, որ Եբր 11.1-ը (անգլերէն Աստուածաշունչի «Քէյ.Ճէյ.Վի.» տարբերակէն) կ'ըսէ.

«Իսկ հաւատքը՝ յուսացուած բաներուն խարխիսն է, եւ անտեսանելի բաներուն ապացոյցը» (Շեշտադրումը՝ մեր կողմէ):

Թերեւս տակաւին բնականին մէջ չես տեսներ ատիկա, բայց ատիկա տեսած ես քու հոգիիդ մէջ. եւ ատիկա այնքան իրական է, որ կարծես ձեռքիդ մէջ բռնած ըլլայիր զանիկա: Այդ համաձայնութիւնը կը կոչուի հաւատք, եւ այդ հաւատքը այդ պատկերը պիտի իրականացնէ հոս՝ երկրի վրայ, քնն կեանքիդ մէջ:

Բայց Մարկոսի 4-րդ գլուխը հոս չի վերջանար: Մեզի սորվեցնելէ ետք, թէ մեր սիրտերը ինչպէս կը համաձայնին երկինքի հետ եւ թէ հոն հաւատք պէտք է ըլլայ, մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է քաղենք այդ պտուղը:

«Երբ պտուղը հասուննայ՝ իսկոյն մանգաղը կը դրկէ, որովհետեւ հունձքի ապենը հասած է»:

—Մարկոս 4.29
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նկատի առ, որ թէւս սիրտը երկինքին հետ համաձայն է եւ հաւատք կայ, տակաւին ոչինչ կը պատահի: Ինչո՞ւ: Ինչպէս մինչեւ հիմա ըսի՝ օրինական իրաւասութիւնը դուն ունիս հոս՝ երկրի վրայ:

Կը յիշեն մեր քննարկումը տեռատես կնոջ մասին Ղուկաս

8-ին մէջ: Յիշեցնեմ, Յիսուս ըսաւ. «[...] Աղջիկ[ս], *հաւատքդ բժշկեց քեզ*»: Այն ատեն քեզի ըսի, թէ երբ Յիսուս «աղջիկս» բառը գործածեց, Ան նկատի ունէր օրինական դիրք մը երկինքին առջեւ: Ան Աբրահամի աղջիկ էր: Ան օրինական իրաւունքներ ունէր: Ես ատիկա բաղդատեցի Ելեկտրակայանէն թելեր քու տանդ կապուելուն: Ելեկտրականութիւն կայ եւ հասանելի է, բայց տակաւին դուն պէտք է անձամբ լոյսերը վառես: Նոյնպէս երբ հաւատքը հաստատուի, զօրութիւնը հասանելի է, բայց ոչինչ կը պատահի մինչեւ որ դուն կոճակը կոխես:

ԴՌԻՆ պէտք է արձակես Աստուծոյ Թագաւորութեան զօրութիւնը հոս՝ երկրի վրայ, որովհետեւ միայն դրն՝ տղամարդը կամ կինը երկրի վրայ, կրնայ օրինական կերպով ընել ատիկա: Ճիշդ այս սկզբունքին համաձայն է, որ փրկուեցար, ինչպէս նշուած է Հռոմայեցիներուն 10.10-ին մէջ:

«Որովհետեւ սիրտով կը հաւատայ մէկը՝ արդարանալու համար, ու բերանով կը դաւանի՝ փրկուելու համար»:

—Հռոմայեցիներուն 10.10

Սիրտով կը հաւատայ մէկը Խօսքին՝ արդարանալու համար: «Արդարանալ» բառը իրաւաբանական եզր մըն է, որ կը նշանակէ՝ օրէնքի կիրառում: Ուստի երբ տղամարդու մը կամ կնոջ մը սիրտը երկինքին հետ համաձայն է՝ երբ կը հաւատայ երկինքին ըսածին, ան երկինքին եւ երկրին առջեւ կ'արդարանայ: Հիմա այլեւս երկինքին համար օրինական է, որ իր կեանքին մէջ եւ իր կեանքին ընդմէջէն հոսի եւ Աստուծոյ Թագաւորութեան համար երկրին վրայ ազդեցութիւն բերէ: Բայց տարօրինակ կերպով, թէեւ հիմա օրինական է եւ ան հաւատք ունի, տակաւին ոչինչ կը պատահի: «Բայց, Կէրի՛, ես կարծեցի, որ ըսիր, թէ եթէ ես կը հաւատամ, ատիկա երկինքին օրինական իրաւասութիւն կու տայ երկրի վրայ»: Ճիշդ է, բայց երբ հաւատք կայ, մէկը պէտք է երկինքի իշխանութիւնը արձակէ հոս: Եկէ՛ք անգամ մը եւս կարդանք մեր աստուածաշնչական համարը:

«Որովհետեւ սիրտով կը հաւատայ մէկը՝ արդարանալու համար, ու բերանով կը դաւանի՝ փրկուելու համար»:

—Հռոմայեցիներուն 10.10
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Երբ հաւատք ունիս կամ արդարացած ես, այն ատեն երկինքին համար օրինական պիտի ըլլայ, որ երկիր ներխուժէ: Բայց նկատի առ, որ յետոյ կ'ըսէ, թէ բերանով կը դաւանիս՝ փրկուելու համար: Երկու մասերը կը տեսնես: Երկինքին դերը խօսքը սիրտէդ ներս բերելն է, ուր անիկա համաձայնութիւն

**ԵՐԲ ՀԱՒԱՏՔ ՈՒՆԻՍ
ԿԱՍ ԱՐԴԱՐԱՑԱԾ ԵՍ,
ԱՅՆ ԱՏԵՆ ԵՐԿԻՆՔԻՆ
ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ
ՊԻՏԻ ԸԼԼԱՅ, ՈՐ
ԵՐԿԻՐ ՆԵՐԽՈՒԺԷ:**

կ'աճեցնէ եւ կը հասունացնէ երկրի վրայ: Յետոյ երբ համաձայնութիւն կամ հաւատք կը գոյանայ, պէտք է այդ համաձայնութեան համաձայն քայլ առնես եւ արձակես երկինքին իշխանութիւնը քու կացութեանդ վրայ, որպէսզի իրապէս ստանաս երկինքին ըսածը:

Մարկոս 4-ի մեր համարին մէջ կ'ըսէ, թէ երբ հունձքի ատենը հասած է, մարդը (երկրի վրայ) մանգաղը կը դրկէ: Ան է, որ պէտք է Աստուծոյ խօսքին համաձայն քայլ առնէ երբ հաւատք ունի եւ իրապէս այդ հունձքը ստանայ:

Պահ մը վերադառնամ եւ խօսիմ մանգաղին մասին, որ մէջբերուած է Մարկոս 4-ին մէջ: Կը հաւատամ, որ եկեղեցական աշխարհին մեծ մասը սորված չէ, թէ ինչպէս պէտք է գործածէ մանգաղը, այսինքն՝ սորված չէ, թէ ինչպէս պէտք է հնձէ իր պէտքը: Ես ալ ասիկա չէի գիտեր մինչեւ որ Տէրը սկսաւ ինծի սորվեցնել, թէ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ: Թագաւորութեան մէջ գտնուող այս կարեւոր գործընթացին մասին իմ առաջին յայտնութիւնս պատահեցաւ տարիներ առաջ երբ հրաւիրուեցայ՝ Աթլանթայի մէջ գտնուող եկեղեցոյ մը մէջ խօսելու Զորեքշաբթի երեկոյեան պաշտամունքի մը ընթացքին:

Եկեղեցին այդքան ալ մեծ չէր, բայց ես հարց չունէի: Ես կը սիրեմ մարդոց Թագաւորութեան մասին սորվեցնել: Երբ եկեղեցի

հասայ, ինձի տարօրինակ թուաց, որ դռները կղպուած էին եւ ոչ ոք կար: Ծառայութեան սկսելուն տասը վայրկեան մնացած էր:

Ետեւս բեռնակառքի շատ բարձր ձայն մը լսեցի, եւ արագ նայուածք մը նետեցի եւ տեսայ, որ հին *փիքափ* բեռնակառք մը եկեղեցիին նրբանցքին ետեւը կը կենար: Շատ ուշադրութիւն չդարձուցի անոր: Ի վերջոյ, Աթլանթայի կեդրոնը կը գտնուէի:

Մինչ կը սպասէի, մարդ մը քալելով եկաւ շէնքին ետեւէն եւ ինքզինքը ներկայացուց իբրեւ հովիւր: Ներողութիւն խնդրեց ուշանալուն համար, եւ ըսաւ, որ իր հին բեռնակառքը չէր աշխատեր: Ըսաւ, որ ստիպուեցաւ իր բեռնակառքը բլուրի մը վրայէն վար հրել, քանի որ շարժակին սեղմիչը արուած էր: Շարունակեց ըսելով, թէ երբեմն երբեք չէր աշխատեր, եւ եկեղեցի հասնելու համար ստիպուած կ'ըլլար հինգ մղոն քալելու:

Այս խօսակցութիւնը քիչ մը զարմացուց զիս: Ան շարունակեց բացատրել, թէ իր ծառայութիւնը իրականութեան մէջ գլխաւորաբար ակտարանչական ծառայութիւն էր եւ թէ ինք ամէն ամիս հազարաւոր մարդիկ կը կերակրէր, յաճախ տասը հազարէ ակտի ճաշ կը բաշխէր այդ մէկ վայրէն:

Երբ հովիւր կը խօսէր, ես կը նեղանայի: Ահա Աստուծոյ մարդ մը, որ ամէն ամիս տասը հազար հոգի կը կերակրէր, եւ նոյնիսկ պատշաճ ինքնաշարժ մը չունէր: Ես կրնայի այդ հարցը լուծել: Ես գրեթէ նոր ինքնաշարժ մը ունէի տունս, որ երեսուներկու հազար հարիւր ութսունեօթը քիլոմետր քալած էր, որ կրնայի իրեն տալ:

Իրեն յայտնեցի ծրագիրս եւ ըսի, թէ անձնակազմէս մէկը պիտի դրկէի, որ ինքնաշարժը Աթլանթա բերէ: Անշուշտ ան շատ ուրախացաւ: Այդ գիշեր ես իրեն եւ իր փոքր եկեղեցիին Աստուծոյ Թագաւորութեան մասին սորվեցուցի եւ թէ ինչպէս անիկա կը գործէր դրամի հետ կապակցաբար: Գիտէի, որ շատ կարեւոր էր, որ անոնք սկսէին ցոյց տալ Թագաւորութիւնը անոնց, որոնք անոր շատ պէտքը ունէին:

Երբ տուն վերադարձայ, դասաւորեցի, որ ինքնաշարժը քշելով Աթլանթա տարուի: Երբ անձնակազմիս անդամներէն մէկը եկաւ, որ ինքնաշարժը առնէ, գիտէի, որ հոգեւոր գործարք մը կ'ընէի երկինքի մէջ: Գիտէի, որ երբ այդ ինքնաշարժը արձակեցի դէպի

Աստուծոյ Թագաւորութիւնը, կրնայի հաւատալ, որ Աստուած ինծի ինքնաշարժ մը պիտի տար, որուն ես ալ պէտք ունէի:

Ես ինքնաշարժներու մասին շատ մեծ հետաքրքրութիւն չունիմ, այսինքն՝ ինքնաշարժներու սիրահար չեմ: Կարգ մը մարդիկ սիրահար են, բայց ես չեմ: Ուստի երբ անձնակազմիս այդ անդամը եկաւ, որ ինքնաշարժը առնէ, ձեռքս ինքնաշարժին վրայ դրի եւ հիմնականօրէն ըսի. «Հայր, այս ինքնաշարժը կ'արձակեմ, որ Աթլանթայի մէջ գտնուող պարտականութիւնը կատարէ: Մինչ կ'արձակեմ, զայն իբրեւ հունտ կը ցանեմ եւ կը հաւատամ, որ պիտի ստանամ ...»: Միտքս ինքնաշարժ մը չեկաւ, որ կ'ուզէի ունենալ, ուստի ըսի. «Վերջը Քեզի կ'ըսեմ այդ մասին»:

Յաջորդ քանի մը ամիսներուն ընթացքին իրականութեան մէջ ինքնաշարժի մասին չմտածեցի, բայց առտու մը Տրենտային հարցուցի, թէ ինչ տեսակ ինքնաշարժ կ'ուզէր ունենալ: Քիչ մը մտածելէ ետք, ըսաւ, թէ ծալուող տանիքով ինքնաշարժ մը կ'ուզէր ունենալ: Իրեն հարցուցի, թէ ինչ վաճառանիշ կրող ինքնաշարժ կ'ուզէր ունենալ եւ երկուքս ալ չկրցանք որոշել, թէ շուկան գտնուող վաճառանիշներէն որ մէկը կ'ուզենք: Քանի որ ինքնաշարժը Տրենտային համար պիտի գնէի, կ'ուզէի վստահ ըլլալ, որ իր սիրած ինքնաշարժը պիտի ըլլար: Ուստի անոր ըսի, որ առցանց փնտռէ կամ իր շուրջը փնտռէ եւ ինծի լուր տայ եթէ իր սիրած ինքնաշարժը գտնէ: Միեւնոյն ժամանակ մենք մէկու մը չըսինք, թէ կ'ուզէինք նոր ինքնաշարժ մը գնել, բայց երբ ինքնաշարժով կը շրջէինք, ուշադրութեամբ կը նայէինք, թէ արդեօք ինքնաշարժ մը կար, որ մեր ուշադրութիւնը պիտի գրաւէր:

Օր մը մենք տեղական ճաշարան մը կ'երթայինք՝ ճաշելու, եւ յանկարծ Տրենտան պոռաց. «Ահա հոն է»:

«Ինչը հոն է», հարցուցի:

«Իմ սիրած ինքնաշարժս»: Ան մատով ցոյց տուաւ կառատան միւս կողմը: Ես քշելով գացի եւ «Պի.Էմ.Տապըլեու. 6 սիրիզ Սի.այ.» ծալուող տանիքով գեղեցիկ ինքնաշարժի մը ետեւը կեցայ: Եւ ատելցնեմ, որ սուղ ինքնաշարժ էր: Ես զինք գովեցի իր ճաշակին համար եւ ըսի, որ գեղեցիկ ինքնաշարժ էր:

Կ'ուզեմ գիտնաս, թէ Տրենտան եւ ես ինքնաշարժներու

համար մեծ գումարներ չենք ծախսեր: Ինչպես ըսի, ես երբեք ինքնաշարժներու հանդէպ մեծ հետաքրքրութիւն չեմ ունեցած: Ֆինանսական մարզին մէջ ըլլալով, նաեւ գիտեմ, թէ անոնք որքան արագ կերպով կ'արժեզրկուին եւ միշտ լաւ կ'ըլլայ մէկ կամ երկու տարուայ ինքնաշարժ մը գնել: Ուստի այդ էր ծրագիրս, աղուոր, գործածուած ինքնաշարժ մը փնտռել:

Շաբաթ մը ետք եկեղեցիէն մէկը ինծի հեռաձայնեց եւ ըսաւ. «Գոայ՝ Տրենտային ինքնաշարժը»: Մենք շփոթեցանք, քանի որ մէկու մը չէինք ըսած այդ «Պի.Էմ.Տապըլեու.»ին մասին, որ այն օրը, ճաշի ատեն, տեսած էինք:

Անոր հարցուցի, թէ ինչ էր այդ ինքնաշարժին վաճառանիշը եւ ըսաւ, թէ՛ «Պի.Էմ.Տապըլեու. 6 սիրիզ Սի.այ.» ծալլուող տանիքով ինքնաշարժ էր: Ըսաւ, որ երբ ինքնաշարժով կը շրջէր, տեսաւ զայն եւ Տէրը իրեն ըսաւ, որ ատիկա Տրենտային ինքնաշարժն էր:

«Լաւ, հիմա ուշադրութիւնս գրաւեցիր», ըսի անոր: Անիկա մէկ տարուայ ինքնաշարժ էր եւ հիանալի վիճակի մէջ էր, գրեթէ նոր էր: Անոր գինը կանխիկ վճարեցի: Տրենտան իր ինքնաշարժը ունեցաւ: Ինչպէս պատահեցաւ ատիկա: Եկէք այս պատմութիւնը բաղդատենք հաւատքի մէջ ըլլալու եւ մանգաղը դրկելու մասին մեր սորվածին հետ:

Երբ ինքնաշարժս նուիրեցի, հաւատքով ըրի ատիկա: Բայց երբ Տրենտան բարձրաձայն ըսաւ. «Ատիկա՛ է», ան մանգաղը կը դրկէր, եւ քանի մը օր ետք ինքնաշարժը յայտնուեցաւ:

Թէեւ լսեցի, որ բարձրաձայն կ'ըսէ. «Ատիկա՛ է», ես երբեք անոր յայտարարութիւնը Մարկոս 4-ին եւ մանգաղին հետ չկապեցի: Բայց այս յաջորդ պատմութիւնը ատիկա շատ յստակ դարձուց:

Քանի մը անգամ նշած եմ, որ ես վաթսուն արտավար տարածութեամբ հող մը ունիմ: Մօտաւորապէս հողին տասը արտավարը ճահիճ է: Ես կը սիրեմ աշնան որսորդութիւն ընել, բայց թէեւ դպրոցական օրերուս բազ որսացած եմ, Օհայոյի մէջ բնաւ բազ չէի որսացած: Սակայն տարի մը, ճահիճը ջուրով լեցուած էր, եւ բազերու մեծ երամակներ թռչելով անոր մէջ կը մտնէին: Օրական հարիւրաւորներ կու գային՝ գիշերը հանգչելու

համար: Ուստի գիշեր մը որսորդական հրացանս առի եւ դուրս ելայ եւ ընթրիքի համար քանի մը բադ որսալով հիանալի ժամանակ անցուցի: Այդ աշնան երկու տղաքս եւ ես լաւ բադի որսորդութիւն վայելեցինք:

Սակայն բան մը նկատեցի, թէ՛ շատ անգամ բադերը նշանառութեան դաշտիս առաւելագոյն մասին մէջ կը գտնուէին: Երբ բադ կ'որսաս, օրէնքով, քեզի արտօնուած է միայն պողպատէ գնդիկներ ունեցող փամփուշտ գործածել՝ ի տարբերութիւն ասանդական կապարէ գնդիկներուն: Կապարէ գնդիկը ւելի ծանր է եւ իր ուժը շատ ւելի երկար ժամանակ կը պահէ, քան թէ պողպատէ գնդիկը: Հետեւաբար այս է հեռահաս կրակոցներուն հարցը բադեր որսալու ժամանակ: Սակայն այդ աշնան ընթացքին, երբ քանի մը բադ որսացող բարեկամներու հետ կը խօսէի, ինձի պատմեցին նոր հրացաններու մասին, որոնք ձեւաւորուած են միայն բադ որսալու համար: Անոնք կրնային ւելի ծանր կրակոցներ արձակել (փամփուշտը ւելի հեռու կ'երթայ եւ ւելի երկար ժամանակ իր ուժը կը պահէ) եւ նոյն ատեն ծպտուած էին: Շատ կ'ուզէի այդ հրացաններէն գնել, բայց Դեկտեմբեր էր եւ բադ որսալու եղանակը իր վերջաւորութեան հասած էր, ուստի դադրեցայ անոր մասին մտածելէ:

Յունուար ամսուան սկիզբը պատահմամբ հանդիպեցայ «Քապելա՛զ» խանութը, որ մեր տեղական մարզական առարկաներ ծախող խանութն է՝ բան մը գնելու համար, եւ յիշեցի այդ բադ որսալու հրացանները: Ուզեցի տեսնել այդ հրացանը: Ուստի դուրս ելած ատենս գէնքի վաճառասեղանին քովէն անցայ եւ տեսայ նոր հրացաններու ամբողջ բաժին մը, որ նուիրուած էր ջրային թռչուններ որսալու: Կը յիշեմ, առանց մտածելու, մատովս ցոյց տուի այն հրացանը, որ լաւագոյն տեսքը ունէր եւ բարձրաձայն ըսի. «Տէ՛ր, ասիկա կ'ուզեմ»: Առանց մտածելու ըսի. պարզապէս բերնէս ելաւ: Բադ որսալու եղանակը պիտի չսկսէր մինչեւ աշուն, ուստի ես չէի մտածած այդ հրացանը գնել մինչեւ որ եղանակը քիչ մը մօտենար:

Երկու շաբաթ ետք ես հրաւիրուեցայ գործարար համաժողովի մը ընթացքին խօսելու: Երբ խօսքս ւարտեցի, գործադիր

տնօրէնը եկաւ շնորհակալութիւն յայտնելու ինծի եւ ըսաւ, որ նուէր մը պիտի տար ինծի: Զարմանալիօրէն ան բերաւ ճիշդ այն հրացանը, ճիշդ այն վաճառանիշով, որ ես մատնանշած էի երկու շաբաթ առաջ «Քապելա՛զ» խանութին մէջ: Անշուշտ ես շատ զարմացայ այդպիսի առատաձեռն նուէրի մը համար, բայց գիտէի նաեւ, որ ատիկա զուգահիստութիւն չէր: Յիշեցի ինչ որ «Քապելա՛զ»ի մէջ ըսած էի եւ ըրածիս անդրադարձայ: Ես մանգաղը դրկած էի:

Այս գլուխին մէջ կարդացածդ հասկնալը, ինչպէս նախապէս ըսի, չատ կարելոր է, որ դուն որեւէ բան ստանաս Աստուծմէ: Որեւէ բան, որ կը ստանաս Աստուծմէ, նոյն այս գործընթացէն պիտի անցնի, ուստի վստահ եղիր, որ վերջին կարդացածդ կը հասկնաս: Եթէ պէտք է, նորէն կարդայ զայն: Ասիկա այդքան կարելոր է:

ԳԼՈՒԽ 8

ԴՈՒՆ ՔՍԱԿԻ ՄԸ ՊԷՏՔ ՈՒՆԻՍ. ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Մենք պետք է այդ երկար բացատրությունը տայինք, քանի որ գիտեմ, թե քեզի համար շատ կարեւոր է, որ Թագաւորութեան իսկական իմաստը հասկնաս: Դարձեալ, Քրիստոնեաներուն մեծամասնութիւնը երկրի վրայ Թագաւորութեան օրինական գործելակերպին մասին հասկացողութիւն չունի, ինչպէս նաեւ Թագաւորութեան մէջ անձնապէս իր ունեցած դիրքին մասին հասկացողութիւն չունի: Գիտես, թե ես ինչնո՞ւ ստիպուեցայ այդ երկար ճամբան առնել, որպէսզի հաւատքի եւ իրաւասութեան նիւթերուն հասնիմ: Քանի որ առանց այդ հիմնական հասկացողութեան, բնաւ գաղափար պիտի չունենաս, թէ Ղուկասի մէջ գտնուող մեր աստուածաշնչական համարը ի՞նչ ըսել կ'ուզէ երբ կ'ըսէ, թէ՛ նախ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի:

Հիմա որ գիտես անոր իմաստը, վերդառնանք մեր հատուածին:

«Ա՛լ դուք մի՛ փնտռէք, թէ ի՞նչ պիտի ուրէք եւ ի՞նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք [մի՛ մտաւորութիւնը]. որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ, թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի:»

«Մի՛ վախնար, պզտիկ հօր, որովհետեւ ձեր Հայրը բարեհաճեցաւ՝ որ ձեզի տայ թագաւորութիւնը:»

Ծախեցէ՛ք ձեր ինչքը եւ ողորմութիւն փութք. չմաշող քսակներ պատրաստեցէ՛ք ձեզի համար, ու չպակտող գանձ մը՝ երկինքը, ուր ո՛չ գողը կը մօտենայ եւ ո՛չ ցեցը կ'ապականէ: Որովհետեւ ո՛ր որ է ձեր գանձը, հրէն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

—Ղուկաս 12.29-34
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դարձեալ, Հայրը արդէն գիտէ քու պետքդ եւ ինչ բանի, որ պետք ունիս, արդէն իսկ Հօր կողմէ տրամադրուած է քեզի եւ արդէն քուկդ է, բայց դուն պետք է գիտնաս եւ հասկնաս երկինքէն ստանալու օրինական գործընթացը, որպէսզի վայելես այն բոլոր բաները, որ Ան ունի:

Երեսուներկրորդ համարը յստակօրէն կը բացատրէ այն հիանալի ժառանգութիւնը, որ դուն՝ իբրեւ Թագաւորի որդի կամ դուստր ստացած ես: Ան կ'ըսէ. **«Ձեր Հայրը բարեհաճեցաւ՝ որ ձեզի փայ թագաւորութիւնը»:**

«Նոյնիքն Հոգին վկայութիւն կու փայ մեր հոգիին հետ, թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. ու եթէ զաւակներ՝ ուրեմն ժառանգորդներ, Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ, որպէսզի եթէ չարչարուինք իրեն հետ, նաեւ փառաւորուինք իրեն հետ»:

—Հոռմայեցիներուն 8.16-17 (անգլերէն
Աստուծաշունչի «Քէյ.Ճէյ.Վի.» տարբերակէն)

Պօղոս կ'ըսէ, թէ մենք Քրիստոսի ժառանգակիցներ ենք: Իբրեւ որդի կամ դուստր, դուն ժառանգութիւն ունիս՝ Թագաւորութիւնը:

Պահ մը կանգ առ եւ մտածէ այդ մասին: Դուն արդէն օրինականօրէն իրաւունք ունիս Աստուծոյ Թագաւորութեան մէջ գտնուող բոլոր բաները ստանալու: Պէտք չունիս աղաչելու: Անիկա արդէն քուկդ է:

Օ՛հ, որքան կ'ուզեմ, որ իսկապէս ըմբռնես այս խօսքը: Ատոր համար է, որ Բ.Կորնթացիներուն 1.20-ը հետեւեալը կ'ըսէ.

«Արդարեւ Աստուծոյ բոլոր խոստումները՝ իր [Քրիստոսի] մէջ “այո՛” են, եւ իր մէջ “ամէն” են՝ Աստուծոյ փառքին համար մեր միջոցով»:

—Բ. Կորնթացիներուն 1.20

Ատոր համար վերջին գիրքիս մէջ, *«Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Մատակարարման Զօրութիւնը»*, քեզի ըսի, թէ Տէրունական Աղօթքը օրինական պահանջի կամ դիմումի ձեւ մըն է: Անկա չի խնդրեր երբ կ'ըսէ. *«Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր»*: Ասկա հարցում չէ, այլ՝ պահանջ:

Ճիշդ ինչպէս իմ զաւակներս պէտք չունին ինծի աղաչելու, որ իրենց նախաճաշ տամ (անոնք այնպէս կը վարուին, որ կարծես ատկա իրենցը ըլլար երբ կ'ըսեն. «Հայր, հաւկիթները փոխանցէ»), նոյնն է Թագաւորութեան պարագային. դուն արդէն Քրիստոսով օրինական իրաւունք ունիս Թագաւորութեան մէջ գտնուող բոլոր բաները ունենալու:

Բացի անկէ, որ դուն օրինական ձեով կրնաս ձեռք բերել Թագաւորութեան մէջ եղածները, դուն նաեւ Թագաւորութեան քաղաքացի ես, որ իր մէջ շատ անլի մեծ թիով բարիքներ կը պարունակէ, ճիշդ ինչպէս Միացեալ Նահանգներու քաղաքացի ըլլալդ ունի բարիքներ, որոնցմէ պիտի չ'օգտուէիր եթէ քաղաքացի չ'ըլլայիր:

«Հերեւաբար այլեւս Աստուծոյ համար օտար եւ խորթ չէք, այլ՝ Աստուծոյ ժողովուրդին հետ համաքաղաքացի էք եւ Աստուծոյ ընտանիքին հարազատ անդամները»:

—Եփեսացիներուն 2.19

Վերջապէս, պիտի խօսինք այդ քսակին մասին: Յիսուս ըսաւ, որ քսակի պէտք ունիս, կը յիշեն:

«Ծախեցէք ձեր ինչքը եւ ողորմութիւն տուէք. չմաշող քսակներ պատրաստեցէք ձեզի համար, ու չպակսող գանձ մը՝ երկինքը, ուր ո՛չ գողը կը մօտենայ եւ ո՛չ ցեցը

Կ'ապականէ: Որովհետեւ ո՛ր որ է ձեր գանձը, հո՛ն պիտի ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

—Ղուկաս 12.33-34
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Քսակներ պատրաստեցէք ձեզի համար, չպակսող գանձ մը՝ երկինքը, ուր ոչ ոք կրնայ զայն ձեզմէ առնել: Եկէք մէկ բան սկիզբէն յստակացնենք՝ Յիսուս չ'ըսեր, որ պէտք է ամէն ունեցածդ ծախես եւ մինչեւ երկինք երթալդ սնանկացած մնաս: Յիշեցնեմ, որ Պօղոս նոյն անձն է, որ գրեց Բ.Կորնթացիներուն 9-ը, ուր կ'ըսէ, թէ ամէն բանի մէջ պիտի հարստանանք, որպէսզի ամէն առիթով առատաձեռն ըլլանք: Ուստի գիտցիր, որ Պօղոս ըսել չ'ուզեր, որ դրամ կամ բաներ ունենալը մեղք է եւ սխալ է: Յիսուս կ'ըսէ, թէ եթէ դրամը եւ ունեցուածքը գրաւած են քեզ, աւելի լաւ է եթէ զանոնք ծախես եւ սիրտդ անգամ մը եւս համապատասխան ըլլայ գանձի մը հետ, որ չես կրնար կորսնցնել եւ որ յաւիտենական է:

Մենք մեծցած ենք՝ դրամը կուռք ընելով: Դրամը կ'օգնէ մեր կեանքի պէտքերը ապահովելու. բայց ինչպէս շատեր յայտնաբերած են, դրամը անպիտան աստուած է: Ատոր համար է, որ Պօղոս Տիմոթէոսի կ'ըսէ, որ հարուստ մարդիկը զգուշացնէ, որ տան եւ առատաձեռն ըլլան, որպէսզի հոգեւորապէս առողջ մնան: Սիրտին համար շատ դիւրին է դրամը իբրեւ կուռք տեսնելը: Առատաձեռն ըլլալը ազահութեան դէմ թունադեղ (թոյնի դէմ դեղ) է: Յաճախ կիրառէ ասիկա:

«Այս աշխարհի հարուստներուն պատուիրէ, որ շար չհպարտանան եւ անկայուն հարստութեան չվստահին, այլ՝ վստահին Աստուծոյ, որ ամէն ինչ առաքօրէն կու տայ մեզի, որպէսզի վայելենք: Պատուիրէ, որ բարիք գործեն, լաւ գործերով հարստանան, եւ ըլլան առաքածեռն, սիրալիր եւ իրենց ունեցածով ուրիշներուն օգնելու պատրաստ: Այդպիսով իրենք իրենց համար կ'ամբարեն գանձ մը՝ որով ամուր հիմ նետած կ'ըլլան հանդերձեալին մէջ, ճշմարիտ կեանքը ձեռք ձգելու համար»:

—Ա.Տիմոթէոսի 6.17-19

Նկատի առ, որ Պօղոս Տիմոթեոսի կ'ըսէ, որ պատուիրէ, ոչ թէ առաջարկէ, որ հարուստները ըլլան առատաձեռն, սիրալիր եւ իրենց ունեցածով ուրիշներուն օգնելու պատրաստ: Յիշէ, որ դրամը պէտք է, բայց աստիկա կեանքը չէ:

Ուստի ո՞ր է քու գանձդ:

Տալը ոչ միայն կը փափկացնէ սիրտդ Աստուծոյ եւ մարդոց հանդէպ, այլեւ կը թուլցնէ դրամին տիրապետութիւնը սիրտիդ վրայ: Սիրտը կը նախանձի եւ կը պաշտէ այն, ինչ որ անոր առջեւ կը դնես, ուստի չենք կրնար արտօնել, որ մեր սիրտերը աննպատակ թափառին: Պէտք է շարունակ մեր սիրտերը մարզենք Աստուծով՝ իբրեւ մեր աղբիւրը: Տալը դէմ կը դնէ ազահութեան, որ շատ դիւրութեամբ մեր զգացումները կը շարժէ:

Ուստի ինչո՞ւ պէտք է տանք: Ինչո՞ւ Աստուած չի կրնար մեզի ֆինանսապէս օգնել, առանց որ տանք: Լաւ հարցում է, եւ պատասխանը կը գտնենք Ղուկաս 4-ին մէջ:

Առաջին՝ Աստուած դրամ չունի, ինչպէս նախապէս ըսի: Երկրորդ՝ Ան Ադամին տուաւ բացարձակ տէրութիւն երկրի վրայ, ինչպէս Եբրայեցիներուն 2.7-8-ը կ'ըսէ:

«Չարախօսը՝ հանելով զայն բարձր լեռ մը՝ ցուցուց անոր երկրագունդին բոլոր թագաւորութիւնները վայրկեանի մը մէջ, ու Չարախօսը ըսաւ անոր. «Այս ամբողջ իշխանութիւնը եւ անոնց փառքը պիտի տամ քեզի. որովհետեւ ինձի յանձնուած է, ու որո՞ն որ ուզեմ՝ կու տամ զայն: Ուրեմն եթէ դուն իմ առջեւս իյնալով երկրպագես, բոլորը քուդ պիտի ըլլան»: Յիսուս պատասխանեց անոր. «Գրուած է. ‘Տիրոջ՝ քու Աստուծոյդ երկրպագէ, եւ միայն զինք պաշտէ’»»:

—Ղուկաս 4.5-8

(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուածաշունչին այս հատուածը տեղի կ'ունենայ երբ Սատանան անապատին մէջ Յիսուսը կը փորձէ: Սատանան Յիսուսի կ'ըսէ, որ աշխարհի բոլոր ազգերուն ամբողջ

իշխանությունը եւ անոնց փառքը իրեն յանձնուած են: Եւ, այո՛, ատիկա ճիշդ է: Այդ դիրքը Ադամին կը պատկանէր, բայց ատիկա Սատանային յանձնեց երբ Աստուծոյ Թագաւորութեան դէմ դաւաճանութիւն գործեց:

Ազգի մը փառքը անոր հարստութիւնն է, եւ ազգերուն հարստութեան վրայ իշխելու կարողութիւնը հիմա Սատանային տիրապետութեան տակ կը գտնուէր: Մի՛ շուարիր. հատուածը չ'ըսեր, որ Սատանան իշխանութիւն ձեռք բերաւ ինքնին երկրին փառքին վրայ: Երկիրը եւ անոր լիութիւնը Աստուծոյ կը պատկանի: Բայց հատուածը կ'ըսէ, թէ Սատանան օրինական պահանջք կը ներկայացնէ, որ ազգերուն հարստութիւնը իրն է:

Եթէ դրամի մը նայիս, անիկա միշտ կոխուած կամ տպուած կ'ըլլայ երկրի մը կողմէ, որ իր սեփական դրամին վրայ կատարեալ իշխանութիւն ունի: Ադամին ըրածին պատճառով Աստուած չի կրնար օրինականօրէն պահանջք ներկայացնել երկրի մը դրամին համար կամ կեղծել կամ ընդօրինակել զայն: Սակայն եթէ Աստուած երկրի վրայ գտնէ մէկը, որ Իրեն կը հաւատայ եւ պատրաստ է դրամ ցանելու (Աստուծոյ գործին համար գումար տալու) Իր իրաւասութեան եւ իշխանութեան մէջ, այն ատեն Աստուած օրինական կերպով մտնելու իրաւունք ձեռք կը բերէ եւ կրնայ ստանձնել այդ կացութիւնը:

Սակայն, դարձեալ, Աստուած դրամ չունի, ուստի ինչ ըսել կ'ուզեն երբ կ'ըսեն, թէ Ան կրնայ Իր մասնակցութիւնը բերել մեր դրամական հարցերուն մէջ: Թէեւ Աստուած չի կրնար պարզապէս կախարդութեամբ դրամ գոյացնել (ատիկա անօրինական

**ՄԵՐ ՏԱԼԸ ԱՍՏՈՒԾՈՅ
ԿԸ ԲԱՆԱՅ
ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ
ԴՈՒՌԸ, ՈՐ ՇԱՏ
ԿԱՐԵՒՈՐ ՕՐԵՆՔ
ՄԸՆ Է ԱՍՏՈՒԾՈՅ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ՄԷՋ: ԿԸ ՀՆՁԵՆՔ ԻՆՉ
ՈՐ ԿԸ ՅԱՆԵՆՔ:**

կ'ըլլայ՝ Սատանային օրինական պահանջին պատճառով), Ան կրնայ քեզի օգնել, որ հարստութիւն առնես կամ ստեղծես:

Ճիշդ այն պատմութիւններուն պէս, զորս այս գիրքին սկիզբը պատմեցի, առատաձեռնութիւնը երկինքին կու տայ օրինական իրաւասութիւն՝ թելադրանքներ եւ

ուղղութիւն ներբեռնելու ֆինանսական մարզին մէջ աշխատող մէկու մը երբ այդ անձը կու տայ: Յիշէ ձուկերուն պատմութիւնը Ղուկաս 5-ին մէջ: Պետրոսին պատրաստակամութիւնը Յիսուսի փոխ տալու իր գործի նաակը, որպէսզի անոր մէջէն քարոզէ, բացաւ օրինական դուռը, որ Սուրբ Հոգին ցոյց տայ այն ձուկերը, որոնք խորունկ ջուրերուն մէջ կը գտնուէին:

Մեր տալը Աստուծոյ կը բանայ փոխադարձութեան դուռը, որ շատ կարեւոր օրէնք մըն է Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Կը հնձենք ինչ որ կը ցանենք:

Ուստի, կարճ ըսելով, Աստուծոյ Թագաւորութեան եւ գործին համար տալով՝ մենք մեզի քսակներ կը պատրաստենք: Մեր տալը մեզի կու տայ հնարաւորութիւնը, որ մուտք գործենք դէպի երկնային հարստութիւնը, եւ այդ է պատճառը, որ Պօղոս «տալ»ը մեր քսակը կը կոչէ: Ասիկա ամէն բան կը փոխէ մեր կեանքերուն մէջ: Մենք այլեւս մեր հասկացողութեամբ սահմանափակուած չենք: Ինքնին Աստուած հիմա մեզի կ'օգնէ, որ բարգաւաճինք:

«Ամէն բանի մէջ հարստացած էք [պիտի հարստանաք] ամէն տեսակ առաքաձեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ»:

—Բ.Կորնթացիներուն 9.11

(անգլերէն Աստուածաշունչի «Ի.Էյշ.Վի.» տարբերակէն)

Նկատի առ, Աստուածաշունչը կ'ըսէ՝ պիտի հարստանաք, ոչ թէ պէտք է աշխատիք, որ ձեր սեփական ուժով եւ իմաստութեամբ հարստանաք: Ոչ, դուն նոր գործակից մը ունիս՝ Սուրբ Հոգին, եւ Ան շատ աւելի գիտէ, քան դուն:

Կը յիշեմ երբ այդ ճնշումով լեցուն ինը տարիներուն ընթացքին դրամ չունէինք: Դրամը, կամ բաւարար դրամ չունենալու վախը ուժեղ կերպով սիրտիս տիրած էր: Թէեւ Քրիստոնեայ էի, բայց Աստուծոյ հանդէպ վստահութիւնս բաւարար կերպով չէի զարգացուցած, որպէսզի սիրտս կարենար փոխել իր ենթարկումը աշխատի կոտորուած անէծքի համակարգէն: Ես սխալ գանձին կը վստահէի: Այն ատեն վստահութիւնս իմ անձիս վրայ էր, եւ անշուշտ ատիկա վատ ընտրութիւն էր:

Աստուած պէտք էր սորվեցնէր ինծի ինչպէս ինծի համար քսակ պատրաստել, որպէսզի Իր շնորհքին եւ կարողութեան հասնիմ: Եւ թէեւ բոլոր անոնք, որոնք կը ճանչնան զիս, զիտեն, թէ Աստուած ինչպէս ըրաւ ատիկա, կ'ուզեմ անգամ մը եւս պատմել այդ պատմութիւնը, որ կրնաս լսած չըլլալ: Գիտես, Աստուած ռազմավարական ձեւով կը գործէ. Ան զիտէ, թէ ճիշդ ինչպէս պէտք է հասնի մեզմէ իւրաքանչիւրին:

Ես կը սիրեմ եղնիկ որսալ, բայց տարիներ շարունակ պարապ ձեռքով վերադարձած եմ: Դուրս կ'ելլէի, պաղին կը նստէի եւ ամէն օր կ'երթայի, բայց բան մը չէի որսար: Ատիկա չէի ըներ, որովհետեւ պարզապէս որսորդութիւնը կը սիրեմ. մանուկներ ունէի կերակրելու եւ անշուշտ եղնիկի միսը կրնայի գործածել: Թէեւ անցեալին որոշ չափով յաջողութիւն գտած էի եղնիկ որսալու մէջ, բայց տարիներէ ի վեր եղնիկ որսալու յաջող եղանակ չեմ ունեցած եւ չեմ կրցած միս բերել տուն:

Օր մը երբ կը մտածէի յառաջիկայ եղնիկ որսալու եղանակին մասին, Տիրոջ ձայնը լսեցի: Ըսաւ. «Թոյլ տուր, որ այս տարի Ես քեզի ցոյց տամ, թէ ինչպէս պէտք է եղնիկ որսաս»:

Ատիկա ցնցեց զիս: «Ինծի ցոյց պիտի տայ, թէ ինչպէս իմ եղնիկս պիտի որսամ այդ տարի»: Ինչ կը նշանակէ ատիկա: Այդ բառերուն համար աղօթեցի եւ մղուեցայ ֆինանսական սերմ մը ցանելու կամ Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տալու՝ այդ եղնիկը որսալու համար: Զգացի, որ Տէրը ինծի կ'ըսէր, թէ երբ եղնիկիս համար ներդրում ընեմ, պէտք է հաւատամ, որ ես արդէն ստացած եմ զայն, նախքան իրականութեան մէջ ստանալս, ըստ Մարկոս 11.24-ին:

«Այս պարճառով կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ աղօթքով խնդրէք, հաւատացէք, որ պիտի ստանաք եւ ձեր խնդրածը պիտի փրուի ձեզի»:

—Մարկոս 11.24

Թէեւ իբրեւ Քրիստոնէայ, ես միշտ տուած եւ աջակցած եմ իմ եկեղեցիիս, այսպէս կեդրոնացած մտադրութեամբ ցանելը եւ հաւատալը, որ կը ստանամ երբ կ'աղօթեմ, ինծի համար նորութիւն էր:

Ձէք մը առի եւ նօթագրութեան բաժինին մէջ գրեցի. «Իմ 1987-ի եղնիկիս համար»: Ձեռքերս անոր վրայ դրի եւ հոչակեցի, որ ես ստացայ իմ եղնիկս երբ այդ չէքը ուղարկեցի առաքելութեան մը, որուն կը վստահէի:

Այն ատեն ես կ'ապրէի Օքլահոմա նահանգին Թալսա քաղաքին մէջ, քաղաքին սահմաններուն վրայ, եւ չկար տեղ մը, ուր կրնայի որսալ: Բայց եկեղեցոյ բարեկամներէս մէկը Գոհունակութեան Տօնին (Thanksgiving) առթիւ զիս իր մեծ մօրը տունը հրաւիրեց, որ գիւղը կը գտնուէր, եւ ըսաւ որ քանի մը եղնիկներ կային ագարակին շուրջ: Ուստի Գոհունակութեան Տօնին առաւօտեան ընտանիքս դէպի հոն ուղղուեցաւ՝ կերակուրի եւ ընկերութեան հիանալի օր մը վայելելու, եւ իմ եղնիկս որսալու համար:

Բարեկամս իրականութեան մէջ չէր գիտեր, թէ ո՞ր պէտք է ըսէր, որ երթամ, բայց արօտավայր մը կար, որուն շուրջ անտառներ կային, եւ առաջարկեց, որ դէպի արօտավայրը երթամ եւ հոն գտնուող մեծ ծառին քով նստիմ:

Կ'ուզեմ, որ հասկնաս կացութիւնը: Ես նստած էի խոտերը կտրուած արօտավայրի մը մէջ, որ մէջտեղը մէկ մեծ ծառ ունէր: Կը յիշեմ, բաց դաշտին մէջ, ծառի մը քով նստած էի: Երբ առաւօտ եղաւ, մտածեցի՝ հոս՝ բաց դաշտին մէջ նստիլը բացարձակապէս անօգուտ է: Պէտք է ասելի լաւ տեղ մը գտնեմ նստելու:

Երբ կը մտածէի ոտքի ելլել եւ դէպի անտառը երթալ, ետեւ՝ ծառին միւս կողմը տեղի ունեցածէն տեղեակ չէի: Առանց գիտնալուս ետեւս այծքաղ մը կը վազէր դաշտին մէջ: Իմ եւ այծքաղին միջեւ ծառը կար, ուստի այծքաղը չտեսաւ զիս, եւ ես ալ զինք չտեսայ: Այծքաղը դէպը ծառը վազեց, հոտս առաւ, եւ յանկարծ կեցաւ, քանի որ կ'ուզէր գիտնալ, թէ ինչ կը պատահէր:

Երբ այծքաղը կեցաւ եւ ծառին շուրջը նայեցաւ, մեր աչքերը իրարու հանդիպեցան: Այծքաղը միայն չորս ու կէս մէթր հեռաւորութեան վրայ էր: Ան անմիջապէս պատրաստուեցաւ մեծ արագութեամբ վազելու: Բարձրաձայն խոնչելով մեծ արագութեամբ փախաւ:

Պէտք է խոստովանիմ, որ ես շատ լաւ նշանառու չեմ: Մեծ արագութեամբ վազող այծքաղ մը հարուածելը դիւրին չէր ինծի

համար: Երկրորդ՝ 30-06 տեսակի փամփուշտով, լաւ հեռադիտակ չունեցող հրացանով հարուածելը դիւրին բան չէ: Բայց երբ կրակեցի, այծքաղը ինկաւ եւ չէր շարժեր: Յնցուեցայ: Հրացանին ձայնէն բարեկամս եկաւ եւ զիս շնորհատրեց այծքաղին համար, երբ զայն տեսաւ գետինը փռուած: Ընկերոջս չէի ըսած, թէ Տէրը ինչ ըսած էր ինձի, բայց իրեն նայեցայ եւ ըսի. «Չեմ կարծեր, որ այս եղնիկը իմ լաւ որսորդ ըլլալուս արդիւքն էր»:

Որսորդութեան վերարկուիս մէջէն հանեցի այն թուղթը, որուն վրայ գրած էի այն օրը, որ այդ չէքը դրկեցի: Հետեւեալը գրուած էր անոր վրայ. «Կը հաւատամ, որ կը ստանամ իմ 1987 թուականի եղնիկս Յիսուսի անունով»: Նաեւ անոր վրայ գրուած էր աղօթքիս թուականը եւ ժամը: Թուղթը ընկերոջս ցոյց տուի, յետոյ իրեն պատմեցի այն, ինչ որ Տէրը ինձը ըսաւ, որ ընեմ:

Այս եղելութիւնը ուշադրութիւնս գրաւեց: Ես գիտեմ, առանց որեւէ կասկածի, թէ այդ այծքաղը որսալը Աստուծոյ գործն էր: Անշուշտ երբ այդպիսի բան մը կը տեսնես, միտքդ կը փորձէ առաջարկել, որ ատիկա պարզապէս զուգահիւսութիւն էր: Բայց վերջին երեսունչորս տարիներուն ընթացքին ես նոյն ձեւը գործածելով որսացած եմ իմ եղնիկներս, ինչպէս ըրի 1987 թուականի եղնիկին պարագային, առանց բացառութեան, ընդհանրապէս հազիւ մէկ ժամ անցընելէ ետք անտառին մէջ:

Աստուած նոյն ձեւը գործածեց՝ Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին հասնելու համար այն օրը Գեննեսարէթի լիճին վրայ: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ անոնք այլայլած էին իրենց տեսածին համար:

«Որովհետեւ այլայլած էր, ինչպէս նաեւ բոլոր իրեն հետ եղողները, իրենց բռնած ձուկերու առաքութեան համար. նոյնպէս ալ Ջեբեղէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, որոնք Սիմոնի ընկերներն էին: Յիսուս ըսաւ Սիմոնի. “Մի՛ վախնար, ասկէ ետք մարդոց որսորդ պիտի ըլլաս”: Ու նաւերը ցամաք հանելով՝ թողուցին ամէն ինչ եւ հետեւեցան անոր»:

—Ղուկաս 5.9-11

Անոնք այնքան այլալյաժ էին, որ թողուցին ամէն բան եւ հետեւեցան Յիսուսի: Անոնք բաներ ընելու աւելի լաւ ձեւ մը տեսան, շատ աւելի լաւ ձեւ մը:

Երբ Աստուած ինծի ցոյց տուաւ Թագաւորութիւնը եւ թէ ինչպէս պիտի պատրաստէի այն քսակը (երկինքի մէջ գտնուող իմ գանձիս հասնելու միջոցը), որուն ես պէտք ունէի, իմ սիրտիս մէջ իմ երկնային աղբիւրներուս հանդէպ վստահութիւնս աւելի մեծ եղաւ, քան՝ իմ ձեռքիս մէջ ունեցածիս:

Աստուած ինծի սորվեցուց, թէ կրնամ ցանել որեւէ բանի համար, որուն պէտք ունիմ, եւ Ինք ինծի պիտի տայ կամ դրամը յառաջ բերելու ծրագիր մը, կամ ալ դրամը գրաւելու ծրագիր մը:

Հոս բաւարար տեղ չունիմ պատմելու այն բոլոր հիանալի բաները, զորս տեսած եմ իբրեւ Թագաւորութեան արդիւնք, բայց կրնամ ըսել, որ Տրենտան եւ ես ֆինանսական առումով սքանչելի բաներ տեսած ենք: Բոլորովին եւ բացարձակապէս սնանկացած վիճակի մէջ ըլլալէն դէպի ֆինանսապէս ազատ ըլլալը եւ տարիներու ընթացքին առաքելութեան միլիոնաւոր տոլարներ կարենալ տալը հիանալի բան է:

Յատուկ արդիւնք մը ձեռք բերելու համար հաւատքով ցանելը առաջին բաներէն մէկն էր, զոր Աստուած սորվեցուց ինծի երբ սկսայ Թագաւորութեան մասին սորվիլ: Թէեւ այս գիրքին մէջ ժամանակ չունիմ ամէն բանի մասին խօսելու, միւս գիրքերուս մէջ պիտի գտնէք պատմութիւններ, որոնք ցոյց կու տան, թէ Թագաւորութիւնը հրքան որոշակի կերպով կը գործէ եւ թէ հրքան որոշակի պէտք է ըլլայ քու հունտդ: *«Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Մատակարարման Զորութիւնը»* վերնագիրով գիրքիս մէջ ես աւելի ընդարձակ կերպով կը խօսիմ այն քայլերուն մասին, զորս պէտք է առնես՝ քու հաւատքդ արձակելու համար եւ թէ ինչպէս որոշակի կերպով պէտք է ցանես քու հունտդ, քան այս գիրքին մէջ: Կը քաջալերեմ քեզ, որ այդ գիրքէն օրինակ մը առնես եւ այս նիւթին մասին աւելի սորվիս:

Այս գիրքը կ'ընդգրկէ առատաձեռն ըլլալու եւ տալու մասին

Թագաւորութեան վերաբերող բանալի սկզբունքներ, զորս Աստուած սորվեցուցած է ինծի: Յուսամ անոնք կը քաջալերեն եւ կը ներշնչեն քեզ, որ ուզես անելին գիտնալ եւ ըլլաս այն, ինչ որ Աստուած նախասահմանած է քեզի համար:

ԳԼՈՒԽ 9

ՉԱՓԻ ՕՐԷՆՔԸ

Քանի մը ամիս առաջ Տրենտան եւ ես տասնհինգ հազար տոլար նուիրեցինք ուրիշ առաքելութեան մը: Երբ կը պատրաստուէի հաւատքս արձակելու, Սուրբ Հոգին ինձի յիշեցուց Բ.Կորնթացիներուն 9.10-11-ը, եւ քանի մը օր ես չկրցայ այդ համարները իմ միտքէս հանել:

«Ուրեմն ան՝ որ սերմ կը հայթայթէ սերմնացանին, կերակուրի համար հաց հայթայթէ ձեզի ու բազմացնէ ձեր հունսը, եւ աճեցնէ ձեր արդարութեան պտուղները: Ամէն քանի մէջ հարստացած էք ամէն տեսակ առաքածեռնութեամբ, ինչ որ մեր միջոցով շնորհակալութիւն կը գոյացնէ Աստուծոյ հանդէպ»:

—Բ.Կորնթացիներուն 9.10-11

Ես կը խոկայի այն մասին վրայ, ուր կ'ըսէ, թէ Աստուած սերմ կը հայթայթէ սերմնացանին եւ կերակուրի համար հաց կը հայթայթէ, եւ «կերակուրի համար հաց» բառերը անմիջապէս ուշադրութիւնս գրաւեցին: Անդրադարձայ, որ շատեր կը վախնան երբ կ'ուզեն տալ, քանի որ այդ նախադասութիւնը չեն հասկնար: Մարդոց մեծ մասը կը կարծէ, թէ երբ տայ, բանէ մը կը հրաժարի, թէ անոր համար բան մը պիտի վճարէ: Բայց Աստուած ինձի յիշեցուց, որ Ան ոչ միայն ցանելու համար սերմ կը հայթայթէ, այլեւ կերակուրի համար հաց ալ կը հայթայթէ, կամ այն, ինչ որ մէկը անձնապէս պէտք ունի: Անշուշտ ես արդէն գիտէի ատիկա, բայց զգացի, որ Ան կ'ուզէր վստահ ըլլալ, որ ես մարդոց պիտի ըսեմ ատիկա՝ թէ ինք երկուքն ալ կու տայ մեզի, եւ թէ պէտք չէ վախնանք տալու:

Գիշեր մը, մեր տասնհինգ հազար տոլար ցանելէն քանի մը շաբաթ ետք, կը պատրաստուէի լոյսերը մարելու եւ քնանալու երբ, յանկարծ, մտածեցի բաժնետոմսերէս քանի մը հատը ստուգել՝ տեսնելու համար անոնց գիները շուկային մէջ: Համացանցին վրայ իմ անձնական հաշիւիս մէջ մտայ եւ տեսայ, որ իսկապէս անոնց գիները չափով մը բարձրացած են:

Կը պատրաստուէի հեռաձայնս անջատելու երբ աչքիս զարկաւ յատուկ բաժնետոմս մը, որ ինծի չէր պատկաներ: Ատկէ առաջ այդ բաժնետոմսը տեսած էի, եւ գնելու միտքով անոր նայած էի: Երբ քննեցի, թէ անցեալէն մինչեւ հիմա որքան արդիւնաւէտ եղած է, տեսայ, որ վերջին տասներկու ամիսներուն ընթացքին յառաջդիմութիւն չէ արձանագրած, ուստի զանց ըրի զայն:

Բայց չեմ գիտեր ինչո՞ւ այդ գիշեր այդ բաժնետոմսը շատ ուշադրութիւնս գրաւեց: Տարօրինակ կերպով զգացի, որ այդ բաժնետոմսերէն քանի մը հատ պէտք է գնեմ, բան մը, որ բնաւորութենէս բոլորովին դուրս է: Ուստի հազար հինգ հարիւր տոլար արժողութեամբ այդ բաժնետոմսերէն գնեցի եւ հեռաձայնս անջատեցի:

Տրենտան եւ ես քիչ մը խօսեցանք, եւ իրեն ըսի, որ բաժնետոմս գնեցի: Յետոյ հեռաձայնս հանեցի, որ իրեն ցոյց տամ: Երբ հանեցի, ցնցուեցայ: Միայն մէկ ժամուան մէջ հարիւր տոկոս յաւելում արձանագրած էր: Արթուն մնացինք եւ մէկ կողմէն խօսելով կը տեսնէինք, թէ թիւերը ինչպէս կամաց-կամաց կը բարձրանային:

Յաջորդ երեք ժամուան ընթացքին բաժնետոմսերուն գինը բարձրացաւ ասելի քան տասնեօթը հազար տոլարի, ուր կեցաւ: Տրենտային ըսի. «Ատիկա մե՛ր տասնհինգ հազար տոլարն է»:

Շուտով ծախեցի բաժնետոմսերը եւ շահը առի: Յաջորդ առաւօտ բաժնետոմսերուն գինը ետ իջաւ եւ ատկէ ետք ամիսներէ ի վեր տակաւին երբեք այդ մակարդակին չէ բարձրացած: Ատիկա ամէնէն տարօրինակ բանն էր, որ երբեւէ տեսած եմ: Գիտեմ, որ Սուրբ Հոգին էր, որ այդ բաժնետոմսը լուսաւորեց ինծի համար, եւ Տրենտային ըսի, որ Աստուած մեր հունտը մեզի կը վերադարձնէր:

Աստուած սերմ ցանողին սերմ կու տայ եւ կերակուրի համար հաց կու տայ: Գիտե՛ս, հոգս չէ, թէ Ան ինչպէս կ'ընէ ատիկա, բայց Ան մի՛շտ կ'ընէ ատիկա:

Սակայն հետաքրքրական էր: Բաժնետոմսը ծախելէս եւ դրամը հաշիւիս մէջ դնելէս ետք մտածեցի. «Եթէ ես գիտնայի, որ անոր գինը այդպէս պիտի բարձրանար, հազար հինգ հարիւր տոլարէն շատ ավելի կը ներդրէի»: Երբ անցեալի կացութիւններուն կը նայինք, ամէն բան յստակ կը տեսնենք, բան մը, որ տուեալ պահուն յստակ չէր մեզի համար: Այո, կրնայի տասը հազար տոլար դնել, կամ միտքդ կը շեղի եւ կը մտածես. «Հապա եթէ հարիւր հազար տոլար դնէի: Որքան մեծ գումար պիտի շահէի այդ ներդրումէն»: Բայց հարիւր հազար տոլար չդրի: Տասը հազար տոլար չդրի: Նոյնիսկ հինգ հազար տոլար չդրի. հազար հինգ հարիւր տոլար դրի: Իմ շահիս սահման դրուած էր: Ես հազար հինգ հարիւր տոլար ներդրում ըրի, եւ թէեւ անշուշտ ավելին կ'ուզէի, բայց ուզածս պիտի չ'իրականանար, քանի որ ես միայն հազար հինգ հարիւր տոլար յատկացուցի:

Ղուկաս 6.38-ին մէջ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, թէ ինչ էր պատահածը, ինչն էս ավելի դրամ չշահեցայ այդ գիշեր:

«Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի. լաւ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը. քանի որ պիտի չափուի ձեզի այն չափով՝ որով դուք կը չափէք»:

—Ղուկաս 6.38

(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Գիտե՛ս, ե՛ս որոշեցի չափը, եւ ինձի չափուեցաւ այն չափով՝ որով ես չափեցի. այն կարողականութիւնը, որ այդ գիշեր ունէի, ուղիղ համեմատական էր իմ ներդրածիս: Ե՛ս որոշեցի չափը, եւ այն չափով՝ որով չափեցի, հատուցում քաղեցի: Յիսուս կ'ըսէ, թէ այս նոյն սկզբունքը կը վերաբերի նաեւ քու տալուդ:

Աստուածաշունչին մէջ կայ պատմութիւն մը, որ կ'ուզեմ քեզի ցոյց տալ, ուր ասիկա կը պատահի: Մենք կրնանք շատ ավելին սորվիլ չափի օրէնքին մասին այս պատմութենէն:

«Մարգարէներու որդիներուն կիներուն մէջէն կին մը Եղիսէի աղաղակելով՝ ըսաւ. «Քու ծառադ՝ ամուսինս մեռաւ, ու դուն գիտես, թէ քու ծառադ աստուածավախ էր: Պարտապէրը եկաւ, որպէսզի երկու զաւակներս առնէ՝ իրեն ստրուկ ընելու»: Եղիսէ անոր ըսաւ. «Քեզի ինչ ընեմ. ըսէ՛ ինձի, տունը ինչ ունիս»: Ան ալ պատասխանեց. «Քու աղախինդ տան մէջ սրուակ մը իղէն զար ուրիշ ոչինչ ունի [ամբողջովին բան մը չունի]»: Եղիսէ անոր ըսաւ. «Գնա՛, դուրսէն՝ բոլոր դրացիներէդ պարսպ անօթներ ուզէ քեզի համար. քիչ մի՛ ուզեր: Ապա տունդ մտիր, վրայէդ եւ որդիներուդ վրայէն դժուր գոցէ, իւղդ այդ բոլոր անօթներուն մէջ պարպէ՛, ու լեցուածը վերցնուր»: Ան ալ անոր քովէն գնաց, եւ իր վրայէն ու որդիներուն վրայէն դուր գոցեց. անոնք անօթները իրեն կը մօտեցնէին, եւ ինք կը լեցնէր: Երբ այդ անօթները լեցուեցան, իր որդիին ըսաւ. «Ինձի ուրիշ անօթ մը մօտեցուր»: Ան ալ իրեն պատասխանեց. «Ուրիշ անօթ չկայ»: Այն ատեն իւղը կանգ առաւ: Կինը գնաց եւ Աստուծոյ մարդուն պատմեց: Ան ալ ըսաւ. «Գնա՛, իւղը ծախէ՛ ու պարտքդ վճարէ՛, եւ մնացածով դուն ու որդիներդ ապրեցէ՛ք»»:

—Թագաւորներուն Չորրորդ Գիրք 4.1-7

Ասիկա հիանալի պատմութիւն մըն է, որուն մէջ Թագաւորութեան մասին շատ յայտնութիւններ կան:

Այդ կինը մարգարէին քով կ'երթայ՝ օգնութեան համար: Ան պարտքի մէջ է եւ իր տղաքը պիտի կորսնցնէ: Բայց, հետաքրքրականօրէն, մարգարէն իր դրամապանակէն դրամ չի հաներ: Փոխարէնը, անոր շատ տարօրինակ հարցում մը կը հարցնէ՝ նկատի ունենալով տուեալ պայմանները. «Տունը ինչ ունիս»:

Կարծեմ կինը անակնկալի կու գայ, քանի որ անոր զարմանքը կը լսես անոր պատասխանին մէջ. «Ես ամբողջովին բան մը չունիմ», կ'ըսէ ան: Ան «ամբողջովին» բառը կ'աւելցնէ՝ շեշտելու համար: Բայց ան չ'ըսեր, թէ ինչ ունի: Անոր ունեցածը շատ բան չէ, բայց ան քիչ մը ձիթաիւղ ունի: Մարգարէն ճիշդ ատիկա պէտք

ունէր լսելու: Ատիկա էր լուծումը: Ուշադրութեամբ նայիր անոր թելադրանքներուն:

«Եղիսէ անոր ըսաւ. “Գնա՛, դուրսէն՝ բոլոր դրացիներէդ պարապ անօթներ ուզէ քեզի համար. քիչ մի՛ ուզեր”»:

Քիչ մի՛ ուզեր: Քանի՛ հատ: Կարծեմ համաձայն ես, որ անոր հաւաքած անօթներուն թիւը յայտնի չէ, քանի որ միայն ինք կրնար սահմանել, թէ ատիկա ինչ կը նշանակէր իրեն համար: Հետագային ան յայտնաբերեց, որ վստահաբար բաւարար թիւով անօթներ չէր հաւաքած:

«Ան ալ անոր քովէն գնաց, եւ իր վրայէն ու որդիներուն վրայէն դուռը գոցեց. անոնք անօթները իրեն կը մօտեցնէին, եւ ինք կը լեցնէր: Երբ այդ անօթները լեցուեցան, իր որդիին ըսաւ. “Ինծի ուրիշ անօթ մը մօտեցուր”: Ան ալ իրեն պատասխանեց. “Ուրիշ անօթ չկայ”: Այն արեւն իւղը կանգ առաւ»:

Նկատի առ, երբ ան իւղը չհոսեցաւ. ոչ թէ յատուկ թիւով անօթներ լեցուելէ ետք, այլ երբ այլեւս անոր քով ուրիշ անօթ չմնաց: Երբ բոլոր անօթները լեցուեցան, կինը իր տղուն ըսաւ, որ ուրիշ անօթ մը մօտեցնէ, եւ ան ըսաւ, որ ուրիշ անօթ չկար: Վստահ եմ, որ կինը պիտի ուզէր, որ իւղը շարունակէր հոսիլ, բայց ան միայն փոքր թիւով անօթներ հաւաքած էր: Աստուած չէր, որ անոր աճը սահմանափակեց, այլ անոր միտքն էր, որ ատիկա ըրաւ:

Վստահ եմ, որ հաւանաբար ան կ'ուզէր անելի անօթներ ունենալ, շատ անելի: Եւ եթէ իրապէս հասկնար պատահելիքը, վստահ եմ, որ քաղաքի բոլոր դռները պիտի զարնէր՝ անօթներ գտնելու համար: Նոյնիսկ թերեւս ուրիշ քաղաքներէ ալ խնդրէր, որ իրեն անօթներ հաւաքէր:

Սակայն պատմութիւնը լաւ վախճան ունեցաւ. անոր պարտքերը վճարուեցան, եւ ընտանիքը ծախսուած իւղին մնացած դրամով ապրեցաւ:

Բայց ինչ կրնար ըլլալ արդիւնքը: Կինը կրնար իր բոլոր

Ծանօթներուն պարտքերը վճարել, քաղաքին մէջ նոր հրապարակ մը շինել, եւ շատերու օգնել:

Ուստի ինչո՞ւ միայն այդ քանակութեամբ անօթներ հաւաքեց: Կը հաւատամ, որ անոր պատասխանը այն է, որ ան գոյատեւումի մտածելակերպ ունէր: Ան կեդրոնացած էր ճնշումի կէտին վրայ. այն գումարը, որ պարտք ունէր եւ այն, ինչ որ կը կարծէր, թէ ինք պէտք ունի՝ իր տղաքը մեծցնելու համար: Փոխանակ ճնշումէն անդին մտածէր, ան կեդրոնացած էր ճնշումը վերցնելու վրայ: Կը հաւատամ, որ եթէ հազար անօթ հաւաքած ըլլար, բոլորն ալ պիտի լեցուէին: Ի՞նք սահմանեց չափը:

Աստուած բոլորիս ալ նոյն առիթը կու տայ, որ այդ կինը ունեցաւ: Մենք բոլորս պէտք է որոշենք, թէ ինչպէս կ'ուզենք սահմանել չափը:

Պիտի բացատրեմ քեզի մինչ կը վերաքաղենք այս գլուխին բանալի համարը:

«Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի. լաւ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը. քանի որ պիտի չափուի ձեզի այն չափով՝ որով դուք կը չափէք»:

—Ղուկաս 6.38

Մենք բոլորս կը սիրենք մէջբերել այս համարին առաջին բաժինը՝ եթէ տանք, լեփլեցուն առատութեամբ պիտի քաղենք: Բայց շատ անգամ վերջին բաժինը չենք կարդար, այն բաժինը, որ կ'ըսէ, թէ մենք պիտի քաղենք այն չափով՝ որով մենք չափեցինք երբ տուինք:

Ինչո՞ւ այս սկզբունքը շատ կարեւոր է քեզի եւ ինծի համար: Քեզի օրինակ մը տամ:

Ենթադրենք, որ դուն սկսնակ հողագործ մըն ես եւ քեզի կ'ըսես, որ կ'ուզեմ հինգ հազար գրիւ ցորեն գնել: Դուն եւ ես մէկ գրիւ գինին շուրջ կը համաձայնինք, եւ կը պատրաստուիս քու տասը արտավար տարածութեամբ դաշտիդ մէջ ցորեն ցանելու՝ այդ հունձքը ունենալու համար:

Կարծեմ գիտես ինչ պիտի պատահի: Դուն պիտի չյաջողիս

այդքան գրիւ ցորեն ունենալ՝ մեր համաձանագիրը իրագործելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ դուն բնաւ գաղափար չունիս, թէ քանի՛ արտավար հողի պէտք ունիս՝ հինգ հազար գրիւ ցորեն հնծելու համար:

**ՈՐՔԱՆ ՄԵԾ ԹԻՒՈՎ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ ԻՐԵՆՑ
ԲԵՌՆԱԿԱՌՔԵՐԸ ՇԱՐՔԻ ԿԸ ՇԱՐԵՆ ԵՒ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ
ԻՐԵՆՑ ԲԵՐՔԸ ՇՈՒԿԱՅ ՏԱՆԵԼՈՒ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ
ԼՈԼԻԿԻ ՏՈՒՆԿ ՑԱՆԱԾ ԵՆ:**

Չափը հողագործին օրինակին մէջ այն արտավարներուն քանակն է, ուր ան ցանեց: Կնոջ պարագային անիկա անօթներուն թիւն էր, զորս ան հաւաքեց: Յիսուսի օրինակին մէջ ատիկա մեր ցանածին քանակն է:

Ուստի եթէ մեր ակնկալած հունձքը կարելի չէ ձեռք բերել այն չափով, որ զանիկա ստանալու համար սահմանած ենք, ուրեմն յուսախաբ պիտի ըլլանք, եւ հաւանաբար տկար հասկացողութեան տէր մարդիկ կրնան նոյնիսկ զԱստուած մեղադրել, այսպէս ըսած, Անոր Խօսքին սխալ ըլլալուն համար:

Ահա շատ կարեւոր հարցումը. եթէ հողագործ մը հինգ հազար գրիւ ցորենի պէտք ունի եւ գաղափար չունի, թէ քանի՛ արտավար հողի վրայ պէտք է ցանէ, ինչ պէտք է ընէ:

Հարցնէ հողագործի մը, որ գիտէ:

Հիմա եկէք իրական կեանքի օրինակ մը առնենք, զոր միշտ կը տեսնեմ, եւ այս սկզբունքը անոր մէջ կիրարկենք:

Ընտանիք մը կ'ուզէ իր տան պարտքը վճարել, որ երեք հարիւր հազար տոլար է, եւ գիտէ, թէ պէտք է ցանէ (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տայ) եւ իբրեւ ամուսին եւ կին համաձայնին եւ իրենց հաւատքը արծակեն: Բայց դժբախտ պէտք է ցանեն: Միշտ այս հարցումը կը հարցնեն ինծի: Ո՞րքան պէտք է ցանեն, որպէսզի երեք հարիւր հազար տոլար հունձելու համար ճիշդ չափը որոշած ըլլան: Բնաւ գաղափար չունին: Պէտք է հարցնեն մէկու մը, որ գիտէ, եւ ատիկա Սուրբ Հոգին է:

Մենք բոլորս այլ բազմաթիւ անգամներ լսած ենք, որ Ան այդ հարցումին պատասխանը կը փսփսայ մեզի: Ընդհանրապէս երբ լաւ ուսուցում չենք ստացած, պարզապէս կ'անտեսենք այդ մեղմ ձայնը իբրեւ բան մը, որ չենք կրնար ընել: Օրինակ՝ երբ յատուկ բանի մը համար Աստուծոյ գործին համար գումար մը նուէր կու տաս, կը զգաս, որ պէտք է հազար տոլար տաս: Անմիջապէս միտքդ կը միջամտէ եւ կ'ըսէ. «Ո՛հ, չեմ կրնար ատիկա ընել», կամ աւելի վատ՝ «Ետե՛ս գնա, Սատանայ»:

Կրնաս վստահ ըլլալ, որ Սատանան երբեք քեզի պիտի չըսէ, որ աւելի տաս Աստուծոյ Թագաւորութեան համար: Ան քաջածանօթ է Թագաւորութեան այս օրէնքին: Ուստի, այս պարագային, քանի որ չափը որոշելու սկզբունքին հետ կապուած վստահութիւնդ չես զարգացուցած, երբ միտքդ կ'առարկէ, կը յանձնուիս եւ քու սովորական հարիւր տոլարդ կու տաս: Եւ անշուշտ, ինչպէս ցորենի օրինակիս մէջ տեսանք, դուն բնաւ չես հասնիր այն հունձքին, որուն պէտք ունիս:

Նախքան շարունակելս, պէտք է բան մը յստակացնեմ:

Քու տուածիդ չափը քու տուած դրամիդ չափով չէ, որ կ'որոշուի:

Կարդա՛ Ղուկաս 21.1-4-ը.

«Մինչ կը նայէր, տեսաւ հարուստները՝ որ գանձանակը կը ձգէին իրենց ընծաները: Տնանկ այրի մըն ալ տեսաւ, որ երկու լումայ ձգեց հոն: Ուստի ըսաւ. “Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի, թէ այս աղքատ այրին՝ բոլորէն աւելի ձգեց. որովհետեւ անոնք իրենց առատութենէն ձգեցին Աստուծոյ ընծաներուն մէջ, բայց ասիկա ձգեց իր կարօտութենէն՝ իր ամբողջ ունեցած ապրուստը”»:

Նկատի առ, որ Յիսուս կ'ըսէ, թէ աղքատ այրին այդ օրը տուող բոլոր հարուստներէն աւելի տուաւ: Հարուստները շատ աւելի դրամ տուին, բայց Աստուածաշունչը կ'ըսէ, թէ անոնք իրենց առատութենէն տուին, կամ կրնանք ըսել՝ իրենց աւելորդ գումարներէն: Աղքատ այրին իր ամբողջ ունեցած ապրուստը տուաւ, եւ ատիկա մեծ հաւատք կը պահանջէր:

Քու աւելորդէդ տալը հաւատք չի պահանջեր: Անշուշտ

առատաձեռնութեամբ քու անելորդէդ տալը լաւ բան է, բայց այդ օրերուն մարդիկ կը տեսնէին, թէ ուրիշներ որքան կը դնէին, եւ հարուստները, շատ անգամ, կու տային, որպէսզի մարդոցմէ տեսնուէին եւ իրենց հասակակիցներուն քով կրօնական համբաւ ունենային:

Ուստի պարզապէս քու տուած գումարովդ չափը որոշելը չափը որոշելու ճշգրիտ սահմանումը չէ: Ատիկա անոր մեծ մասն է, բայց միակ մասը չէ:

Պէտք է յիշենք, որ ինչ որ մէկու մը համար «մեծ» է, անպայմանօրէն մեծ չի համարուիր ուրիշի մը համար:

Անցեալին հազար տոլար տալը ՀՍԿԱՅԱԿԱՆ գումար էր ինծի համար: Իրականութեան մէջ, սկիզբը այդպիսի ընծայ մը տալը քանի մը ամիս կը տուէր մեզի համար: Բայց մեր կարողութիւնը աճեցաւ, եւ հիմա շատ անելին կու տանք, քանի որ մեր հաւատքը եւ վստահութիւնը աճեցան:

Շտեմտելով կ'ըսեմ մարդոց. «Երբ հայթայթումի համար Աստուծոյ գործին համար գումար մը նուէր կու տաս, ժամանակ առ եւ Սուրբ Հոգիին հարցուր, թէ ինչ կամ որքան պէտք է ցանես եւ ո՛ր պէտք է ցանես»:

Ընդհանրապէս սովորական պէտքերու համար ցանելը (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տալը) այնքան հաւատք չի պահանջեր, որքան մեծ ճեղքումներու համար ցանելը, ինչպէս՝ տունի մը ամբողջ պարտքը վճարելը: Երբ մեծ բաներու համար կը ցանեմ, միշտ կ'ուզեմ զգալ ատիկա: Շտեմտելով ըսել կ'ուզեմ՝ չեմ ուզեր իմ ունեցած անելորդ դրամէս տալ: Կ'ուզեմ այնքան ցանել, որ զգամ, որ հաւատքի պէտք ունիմ այդ գումարը ցանելու համար: Գումարը բաւարար մեծ պէտք է ըլլայ, որ մարմինիս մղէ, որ հակազդէ եւ միտքիս մէջ լսեմ. «Վստահ ես, որ ասիկա կ'ուզես ընել»:

Ես յայտնաբերած եմ, որ Սուրբ Հոգին քեզի գումարը պիտի ըսէ երբ Իրեն հարցնես. միայն վստահ եղիր, որ դուն իրապէս կ'ուզես լսել Անոր ձայնը:

Այս հարցին մէջ բազմաթիւ անգամներ օգնութեան պէտք ունեցած եմ: Քանի որ հաշիւները ես կը վճարեմ, Տրենտային

համար միշտ աւելի դիրին է լսել գումարը, որ պէտք է ցանենք եւ առանց վարանումի: Կը յիշեն այն պատմությունը, որ պատմեցի առաջին անգամ ըլլալով մեր «Ֆէյթ Լայֆ» եկեղեցիին համալիրին համար երկու հարիւր հազար տոլար ցանելու մասին:

Այդ պատմութեան բոլոր մանրամասնութիւնները չպատմեցի քեզի: Ատիկա երեք տարուայ յանձնառութիւն մը պիտի ըլլար, ոչ թէ պարտք, այլ նպատակ մը, որ մենք դրինք, որ այդ ժամանակամիջոցին մէջ տանք: Երբ օրը եկաւ, որ մեր մտադրութիւնը յայտնենք եւ մեր առաջին հունտը ցանենք, ես իրապէս կը կարծէի, թէ միայն հարիւր յիսուն հազար տոլար կ'ուզեմ տալ: Բայց Տրենտան ինծի հետ վիճաբանեցաւ, ըսելով, թէ ինք լսեր էր, որ պէտք է երկու հարիւր հազար տոլար տանք: Ես մերժեցի անոր ըսածը եւ իմ դիրքիս մէջ հաստատ մնացի, որ հարիւր յիսուն հազար տոլար պիտի տամ: Ծառայութեան ընթացքին ան դարձեալ պնդեց, որ երկու հարիւր հազար տոլար տանք, բայց ես դարձեալ մերժեցի:

Նախքան որ Աստուծոյ գործին համար մեր դրամական նուէրը տանք այդ օրը, եկեղեցիէս հողագործ մը ոտքի ելաւ եւ հրաման առաւ, որ խօսի: Ան բոլոր ներկաները քաջալերեց, որ Աստուծոյ վստահին իրենց բերքին համար: Ան շարունակեց բացատրել, թէ իբրեւ հողագործ, իր գոյատեւումը կախեալ էր ցանելու եւ հնձելու օրէնքներէն եւ թէ ինք յայտնաբերած էր, թէ անոնք վստահելի են: Ըսաւ, թէ ինք ամէն տարի երկու հարիւր հազար տոլար կը ծախսէր միայն իր հունտը ցանելու համար: Յետոյ շարունակեց ըսելով, թէ սկիզբը ատիկա անմտութիւն կրնայ թուիլ՝ երկու հարիւր հազար տոլար հողին մէջ նետել, քանի որ անգամ մը, որ կը ցանես, ետ առնելու միջոց չկայ: Բայց ան շեշտեց, թէ ցանելու եւ հնձելու օրէնքը միշտ կը գերակայէ՝ տալով բերք մը, որ շատ աւելին կ'արժէ քան այդ երկու հարիւր հազար տոլարը, որ ան կը ծախսէ՝ իր դաշտին մէջ ցանելու համար:

Տրենտան կողմէս թեթեւ մը հարուածեց: Ես հասկցայ ինչ ըսել կ'ուզէր. լա՛ւ, երկու հարիւր հազար տոլար, եւ մենք ճիշդ այդ գումարը սերմանեցինք (Աստուծոյ գործին համար նուէր տուինք): Եւ կը յիշես ինչպէս Աստուած շարժեցաւ այդ փոխնախագահին վրայ եւ

զինք մղեց, որ այդ տարի մեզի այդ տարեկան պարգեւը տայ՝ ճիշդ երկու հարիւր հազար տոլար: Մենք մէկ լումայ իսկ չվճարեցինք այդ սերմը ցանելու համար: Եւ ինչպէս ըսի այդ գլուխին մէջ, մենք տարիներէ ի վեր այդ պարգեւը կը ստանանք եւ մինչեւ հիմա երկու միլիոն տոլարէն աւելի եկամուտ ունեցած ենք անկէ:

Գիտէս, Տրենտային միտքը լեցուն չէր մեր բոլոր վճարելիքներուն մանրամասնութիւններով, բան մը, որ վախին առիթ չի տար, որ բարձրանայ: Ան պարզապէս Աստուծոյ ձայնը լսեց: Եւ իրականութեան մէջ, ես ալ պարզապէս ատիկա պէտք է ընէի: Բայց ասիկա առաջին անգամն էր, որ այդպիսի գումար մը կը ցանէինք, ուստի այո՛ր, ես վախին անձնատուր կ'ըլլայի երբ հարիւր յիսուն հազար տոլարին կը բռնուէի: Փառք կու տամ Աստուծոյ կնոջս համար, որ զիս քաջալերեց, որ այդ աւելի մեծ գումարին համար Տիրոջ վստահիմ:

Յանելը միշտ հաւատք կը պահանջէ, միշտ: Ուստի չարտօնենք, որ վախը արգելք ըլլայ, որ մենք քաղենք այն բոլոր բաները, զորս Աստուած կը փորձէ մեզի տալ:

«Բայց սա՛ գիտցէք, թէ ան որ խնայելով կը սերմանէ՛ խնայելով ալ պիտի հնձէ, եւ ան որ առաքածեռնութեամբ կը սերմանէ՛ առաքածեռնութեամբ պիտի հնձէ»:

—Բ.Կորնթացիներուն 9.6

Այս հատուածին մէջ Պօղոս ուրիշ եկեղեցիի մը համար ընծայ կը հաւաքէ, եւ ժողովուրդին կը յիշեցնէ այն սկզբունքը, որ ըստ երեւոյթին, նախապէս սորվեցուցած էր անոնց, թէ՛ պիտի հնձեն այն, ինչ որ կը սերմանեն եւ այն չափով, որ կը սերմանեն: Պօղոս կը բացատրէ չափը որոշելու սկզբունքը:

Երբ այն օրը լիճին վրայ Պետրոս իր նաւակը Յիսուսի տուաւ, որ գործածէ, տեսանք, որ Յակոբոսին եւ Յովհաննէսին նաւակը լեցուեցաւ ճիշդ այնքան որսով, որ Պետրոսին հաւատքը ստացած էր, քանի որ անոնք գործակիցներ էին: Սակայն հետեւեալը հարցնեմ քեզի՝ եթէ Պետրոսը այդ օրը հազար նաւակ ունենար իր գործին մէջ, քանի՞ նաւակ պիտի լեցուէր:

Եթե պատասխանդ հազար է, ճիշդ ես:

Դարձեալ կը տեսնենք, որ չափ մը սահմանուած էր: Տրուած չափը այն անօթն է, որ Աստուած կրնայ լեցնել: Ուստի կը քաջալերենք քեզ, որ երբ չափը կը սահմանես, մեծ տեսիլք ունենաս: Պիտի չուզէիր ետեւ նայիլ եւ ըսել. «Ունու, այդ բաժնետոմսը երեք ժամուայ մէջ հազար տոկոս բարձրացաւ: Երանի՛ր աւելի ներդրում ըրած ըլլայի»:

Ուստի ինչն էր, որ զիս մղեց, որ միայն հազար հինգ հարիւր տոլար ներդրեմ այդ գիշեր Սուրբ Հոգիին կողմէ մղուելէս ետք, որ գնեմ: Իմ պարագայիս, պարզապէս Աստուծոյ չհարցուցի, որ իմ ներդրելիք գումարս ըսէ ինձի: Պարզապէս իմ միտքովս քայլ առի եւ Անոր ձայնը չլսեցի:

Կը խնդրեմ, որ չերթաս մեծ քանակութեամբ բաժնետոմսեր չգնես այս պատմութեան պատճառով: Ինչպէս նախապէս ըսի, ես շատ դրամական ներդրում չեմ ըներ սակարանին մէջ: Բայց Աստուած ազդու կերպով Իր տեսակէտը յայտնեց այդ գիշեր. Ան ցանելու համար սերմ կը հայթայթէ եւ կերակուրի համար հաց կը հայթայթէ: Եւ առիկա լաւ յիշեցում էր, թէ մե՛նք կ'որոշենք չափը:

Յուսամ կը յիշես այս պատմութիւնը յաջորդ անգամ երբ Աստուած ուսիդ կը դպնայ, որ պարտականութիւն մը ֆինանսաւորես:

Մենք բոլորս պէտք է արտօնենք, որ Աստուած ասոր մէջ մեզ մարզէ:

Կը յիշեմ երբ 2009 թուականի տնտեսական տագնապին ընթացքին Ֆլորիտայի մէջ կալուածներուն գինը անկում արձանագրեց: Հոն բարեկամներ ունէինք, որոնք ծովեզերքը կ'ապրէին, եւ մենք յաճախ անոնց կ'այցելէինք: Այդ ժամանակներուն ամբողջ Ֆլորիտայի տարածքին ծախու տուներ կային: Օր մը երբ մեր բարեկամին հետ ծովեզերքը կը քալէինք, ան ըսաւ. «Կ'ուզեմ բան մը ցոյց տալ ձեզի»:

Մօտեցանք տան մը, որուն վրայ «Ծախու է» գրութիւնը կար: Կալուածին վրայ գտնուող երկու տուներուն գինը միայն վեց հարիւր իննիսունհինգ հազար տոլար էր: (Այ՛ր, ճիշդ

է կարդացածդ, ծովեզերքին վրայ երկու տուն վեց հարիւր իննիսունհինգ հազար տոլարի: Անոնք նաեւ կահաւորուած էին: Կարծեմ երկուքս ալ համաձայն ենք, որ ատիկա ճրի էր): Անոնցմէ մէկը վարձուած էր եւ վստահ մեծ եկամուտ կը բերէր, քանի որ այդ տուները ճիշդ ծովեզերքին վրայ էին: Բայց այդ ժամանակ չէի կրնար պատկերացնել, որ այդպիսի գումար մը կրնայի ծախսել, եւ զանոնք գնելու առիթը մերժեցի: (Գիտեմ, գիտեմ, խելացուփին չէր ըրածս): Բարեկամս արդէն շատ տուներ ունէր եւ այն ժամանակ չէր ուզեր երկու տուն եւս կառավարել: Այսինքն՝ մեզ ուղղակի անոնց քով տարաւ: Ամէն օր չէ, որ բազմամիլիոնատէր մը իր անձնական կարծիքը կու տայ քեզի եւ կ'ըսէ. «Ես այսպէս կ'ընէի»: Անշուշտ Տրենտան կ'ըսէր, թէ պէտք է գնենք, բայց ես միտքս չփոխեցի:

Կրնաս արդիւնքը կռահել: Այդ տուները ծախուեցան եւ քանի մը տարի ետք նորէն ծախուեցան երեք միլիոն տոլարի:

Գիտեմ ինչն էր ամենատխտուր եւ ամենահիասթափեցնող բաժինը: Ես նոյնիսկ անոր համար չաղօթեցի այդ օրը: Ես մէկդի դրի, մերժեցի Սուրբ Հոգիին իմաստութիւնը: Ես անտեսեցի բարեկամիս եւ կնոջս իմաստութիւնը, որ շատ իմաստուն է: Տակաւին «Ո՛՛ջ» ըսի, քանի որ գիտէի, որ այն ատեն մեր ունեցած ամբողջ կանխիկ դրամը պիտի դնէինք, եւ այդ աղիտալի տնտեսական անկումով, պարզապէս հանգիստ չզգացի ատիկա ընելու: Բայց ինչպէս ըսի, այդ մասին Աստուծոյ չհարցուցի, ինչ որ սուղ սխալ մըն էր:

**ՈՒՍՏԻ ՄԻ ԱՐՏՕՆԵՐ,
ՈՐ ՎԱԽԸ ՔԵՁԻ ԽՕՍԻ
ԵՐԲ ԿԸ ՑԱՆԵՍ ԵՒ
ՀԱՓԸ Կ'ՈՐՈՇԵՍ:
ՀԱՄԱՐՁԱ՛Կ ԵՂԻՐ:**

Դժբախտաբար ես շատ հունձքեր կորսնցուցած եմ (ոչ բոլորը, բայց շատ), եւ Աստուած ինձի հետ խօսած է եւ տակաւին կը խօսի այդ մասին:

Օր մը, տարիներ առաջ, Տրենտան պատահաբար Քենեթ Քոփլանտին հանդիպեցաւ ճաշարանի մը մէջ, եւ ան Տրենտան հրաւիրեց, որ իրեն եւ իր կնոջ՝ Կլորիային հետ նախաճաշ ընէ:

Երբ սեղան նստած էին, Քենեթը ըսաւ, որ Տրենտային եւ

ինձի համար խօսք մը ունէր: Տրենտան խօսքը իր հեռաձայնին վրայ արձանագրեց ինձի համար, քանի որ այդ ճամբորդութեան ընթացքին ես իրեն հետ չէի: Խօսքը այսպէս կ'ըսէր.

«Ես փորձեցի փուներ եւ հողեր բերել ձեզի, բայց դուք թոյլ չփուլիք Ինձի»:

Ուսնու, ատիկա ծանր յանդիմանութիւն էր: Բայց երբ մտածեցի շատ բաներու մասին, որոնց համար «Ո՛՛ջ» ըսած էի, տեսայ սխալս: Ուստի որոշեցի, որ այդ օրուրնէ սկսեալ անգամն ալ իմ հունձքս պիտի չկորսնցնեմ: Երբ այդ որոշումը կայացուցի, զարմանալի էր, թէ Աստուած ինչ արագութեամբ ինձի բերաւ այն բաները, որոնց համար Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուած էի:

Ուստի մի՛ արտօներ, որ վախը խօսի քեզի երբ կը ցանես եւ չափը կ'որոշես: Համարձակ եղիր: Չես գիտեր, թէ Աստուած ինչպէս այդ բաները պիտի իրագործէ, ճիշդ ինչպէս որ վստահ եմ, որ Թագաւորներուն Չորրորդ Գիրքին 4-րդ գլուխին մէջ գտնուող այրին չէր կրնար պատկերացնել, որ իւրը պիտի շարունակէր հոսիլ: Եթէ ատիկա գիտնար, անոր պատմութիւնը բոլորովին ուրիշ պատմութիւն մը պիտի ըլլար: Հաւանաբար մինչեւ այսօր մենք պիտի կարդայինք այն աղքատ այրիին մասին, որ իւրի առեւտուրին մէջ միլիառատէր եղաւ:

Վերջապէս յիշէ, որ միշտ պէտք է ցանես՝ աւելի եւ աւելի մեծ բերքի մը համար: Այսօր դուն երեկուան բերքով կ'ապրիս, ուստի միտքդ պահէ ատիկա երբ կը ցանես:

Նաեւ յիշէ, որ ցանելէդ անմիջապէս ետք ամէն բան աւելի վատ պիտի ըլլայ նախքան լաւանալը: Հունտին սնտուկը պարապ կ'երեւնայ եւ բոյսերը տակաւին չեն սկսած ծիլ: Բայց դուն Աստուծոյ Խօսքին կառչիր, ամուր կանգնիր, եւ Հոգիով աղօթէ՝ Աստուծոյ քեզի բերելիք բերքին մասին ուղղութիւն եւ մանրամասնութիւններ ստանալու համար:

Կ'ուզեմ այս գլուխը աւարտել պատմութեամբ մը, որ բազմաթիւ անգամներ պատմած եմ, բայց պէտք է կրկնուի: Անիկա իմ վաճառորդներէս մէկուն մասին է, տարիներ առաջ, երբ առաջին

անգամ ըլլալով կը սորվէի չափը որոշելու սկզբունքը: Ան նոր տուն մը կը շինէր եւ, ինչպէս նոր տուն շինողներուն մեծ մասը կ'ընէ, ան իր դրած պիտոճէն անցաւ: Միշտ բան մը կը փոխուի կամ կ'աւելցուի, որ կը փոխէ վերջին գումարը:

Այս պարագային ընկերս արդէն սպառեր էր այն ամբողջ գումարը, որ դրամատունը իրեն յատկացուցած էր, եւ դրամի պէտք ունէր: Եթէ կը յիշեմ հարցը, խոհանոցին պահարաններուն համար բաւարար դրամ չունէր, որ վճարէր: Կարծեմ քսանհինգ հազար տոլար կը պակսէր իրեն:

Գիշեր մը, իմ մէկ ուրիշ ներկայացուցիչս պաշտամունքի ծառայութեան մը գնաց այն ներկայացուցիչին հետ, որ տունը կը շինէր: Պատգամին վերջաւորութեան քարոզիչը յատուկ նպատակի մը համար ընծայ հաւաքելու մասին կը խօսէր, որուն մանրամասնութիւնները չեմ գիտեր, բայց այն վաճառորդը, որ միւս վաճառորդին հետ գացած էր, որ իր տունը կը շինէր, ինծի եկաւ եւ ըսաւ, որ իր տունը շինող վաճառորդը կարծես պայքար մը ունէր այդ գիշեր:

Բացատրեց, թէ իր տունը շինող մարդը եկեղեցւոյ առջեւի մասը գնաց եւ իր ընծան տուաւ եւ յետոյ եկաւ եւ նստաւ: Բայց գրգռուած կ'երեւէր: Յետոյ ինծի ըսաւ, թէ ան կանգնեցաւ եւ նորէն առջեւ գնաց եւ անլի դրամ տուաւ: Այս անգամ երբ իր աթոռին վերադարձաւ, անլի գրգռուած կ'երեւէր: Քանի մը վայրկեան նստաւ, եւ յետոյ հառաչելով նորէն առջեւ գնաց եւ անլի դրամ տուաւ: Այդ անգամ երբ վերադարձաւ, խաղաղ կ'երեւէր եւ այլեւս գրգռուած չէր:

Յետոյ, այդ ամսուան ընթացքին, իր տունը շինող վաճառորդը վկայեց, թէ այդ գիշեր ինք եկեղեցւոյ մէջ կը ցանէր, որպէսզի ստանար այն գումար, որուն պէտք ունէր՝ խոհանոցի պահարաններուն գինը վճարելու համար: Եթէ ճիշդ կը յիշեմ, շինարարը որոշեց պահարաններուն գինէն յիսուն տոկոս զեղչել եւ ան կրցաւ բաւարար բան ծախել եւ այդ վերջին հաշիւը վճարել:

Ուստի ինչ կը պատահէր այդ գիշեր: Վաճառորդը, որ իր տունը կը շինէր, ինծի ըսաւ, որ ան պարզապէս խաղաղութիւն չունեցաւ մինչեւ երրորդ անգամը երբ գնաց եւ իր ամբողջ ունեցածը

տուաւ: Գիտէս, ան կ'աղօթէր, որպէսզի գիտնար, թէ ինչպէս պիտի կարենար այդ քսանհինգ հազար տոլարը վճարել, եւ Սուրբ Հոգին զինք կ'առաջնորդէր, որ սահմանէր այն չափը, որ պէտք էր՝ վաստկելու համար այն գումարը, որ ինք կ'ուզէր:

Ուստի գալ անգամ երբ պիտի ցանես (Աստուծոյ գործին համար գումար մը պիտի նուիրես), յիշէ Թագաւորութեան այս շատ կարեւոր օրէնքը՝ չափի օրէնքը:

ԱՌԱՏԱԶԵՌՆ ԹԱԳԱԽՈՐԸ

Վստահ եմ, որ բոլորս ալ ըրած ենք ասիկա: Մէկը կը մօտենայ մեզի եւ գովասանքի խօսքեր կ'ըսէ մեզի եւ մենք այսպիսի բան մը կ'ըսենք. «Օ՛, տան մը մէջ գործածուած ապրանքներու վաճառքի մը ընթացքին գնեցի ասիկա՝ հինգ տոլարի»:

Ինչո՞ւ այսպիսի բաներ կ'ըսենք: Ինչո՞ւ կ'ամչնանք, որ գեղեցիկ բան մը ունինք: Հետաքրքրական եւ նոյն ատեն ցաւալի է, որ երբ քսան տարի առաջ գիւղը մեր նոր տունը շինեցինք, իրականութեան մէջ աղօթեցինք, որ ներսէն մեծ ըլլայ, բայց դուրսէն պզտիկ երեւնայ: Այն ատեն մենք նոր հովիւներ էինք, եւ կը կարծէինք, թէ եթէ մեծ տուն շինենք, մարդիկ պիտի նեղանան: Այն ատեն մենք եկեղեցիէն որեւէ եկամուտ չէինք առներ. մեր անձնական գործին դրամով կը շինէինք այդ տունը. բայց պատճառով մը կը զգայինք, թէ մարդիկ պիտի կարծեն, որ եկեղեցիէն կ'առնէինք դրամը: Ուստի եօթը հարիւր տասնհինգ քառակուսի մետր տարածութեամբ տուն մը շինեցինք, բայց եթէ նայիս տան, սովորական երկու յարկանի տունի կը նմանի:

Հետագային անդրադարձանք, որ որքան յիմար բան էր մեր ըրածը: Ինչո՞ւ պիտի ամչնանք Տիրոջ օրհնութենէն:

Ես այս օրինակը կը գործածեմ իմ խորհրդաժողովներու մէջ:

Ենթադրենք, որ ես բեմ կը բարձրանամ պատռտուած եւ աղտոտ հագուստներով եւ կը յայտարարեմ, որ այսօր տօն է. այսօր Տրենտան եւ ես մեր տան ամբողջ պարտքը վճարեցինք: Յետոյ կ'ըսեմ, որ որքան շատ աշխատեցանք (երբեմն շաբաթական ութսուն ժամ), որպէսզի ասիկա ընենք, բայց յաջողեցանք:

Ամէն մարդ կը ծափահարէ եւ կը պոռայ: Ինչո՞ւ: Որովհետեւ մէկը իրապէս յաղթեց համակարգին: Ելք կայ:

Բայց եթէ բեմ ելլեմ եւ ըսեմ. «Այսօր օտարական մը մեզի մօտեցաւ եւ մեզի մէկ միլիոն տոլար տուաւ, եւ մենք մեր տան պարտքը ամբողջութեամբ վճարեցինք»:

Բոլորը պիտի ըսեն, թէ ատիկա արդար չէ: Ինչո՞ւ: Քանի որ մենք աշխարհի ծանր եւ քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին մէջ մեծցած ենք: Մենք այդպէս մարզուած ենք դրամ ձեռք բերել: Անշուշտ ատիկա ստրկութեան համակարգ մըն է, քանի որ մարդոց մեծամասնութիւնը երբեք իրական ֆինանսական ազատութիւն չի վայելել: Եւ այդ պատճառով մարդոց մեծ մասը երբեք իր իսկական նպատակը, իր հոգեւոր «Տի.էն.էյ.»ը չի յայտնաբերեր: Գոյատեւումի համակարգին պատճառով, որուն տակ կ'ապրինք, ֆինանսական որոշումներուն մեծ մասը դրամի շուրջ կը կայացուի եւ ոչ թէ նպատակի շուրջ: Մարդիկ կ'երազեն ազատ ըլլալ՝ իրենց երազները եւ ցանկութիւնները հետապնդելու համար, բայց մեծամասնութեան համար, ատիկա երբեք չ'իրականանար:

Քանի մը տարի առաջ Աստուած սկսաւ ինծի հետ խօսիլ կրկնապատիկ բաժինին մասին եւ թէ ինչպէս անիկա մեզի կը պատկանի: Կրկնապատիկ բաժինը մեզ կ'ազատագրէ աշխարհի գոյատեւումի անէծքի համակարգէն եւ պարզապէս գոյատեւելու համար ծանր եւ քրտնաջան աշխատանքին յենելէն:

Մէկ խօսքով, կրկնապատիկ բաժին կը նշանակէ աւելի քան քաւարար: Մեր պէտքերէն աւելին ունենալը մեզի կ'արտօնէ, որ պարտքէ ազատ կեանք մը ապրինք եւ ըլլանք այն տեղին մէջ եւ ընենք այն գործը, որուն համար դրկուած ենք, փոխանակ մեր կեանքերը դրամի համար ծախենք:

Թէեւ կրկնապատիկ բաժինին մասին տարիներ շարունակ խօսած եմ իմ խորհրդաժողովներուս մէջ, զգացի, թէ Տէրը կ'ուզէր անոր մասին բան մը ցոյց տալ ինծի, որ տակաւին չէի հասկցած: Գիտէի, որ իմ տեսածէս աւելին կար, եւ Սուրբ Հոգիէն խնդրեցի, որ ինծի ցոյց տայ, թէ ինչ էր ատիկա:

Սկսայ ուսումնասիրել այն աստուածաշնչական համարները,

որոնք կը վերաբերին կրկնապատիկ բաժինին եւ սպասեցի, որ Տէրը ինձի ցոյց տայ, թէ ինձմէ ինչ կը վրիպի: Ան ուշադրութիւնս գրաւեց շատ տպաւորիչ օրինակով մը այն բանին մասին, որ Ան կը փորձէր ինձի հասկցնել, որ երբեք պիտի չկարենայի պատկերացնել:

Հեռաձայն մը ստացայ մարդէ մը, որուն երբեք չէի հանդիպած, մեր ծառայութեան գործակիցներէն մէկը: Գիրքերս կարդալէ ետք ան հասկցած էր, թէ ես որսորդութիւն կը սիրեմ: Ուստի հեռաձայնեց եւ ըսաւ. «Կ'ուզեմ քեզի համար որսորդական հրացան մը գնել: Ինչ տեսակ հրացան չունիս»:

Այն ժամանակ ես սովորական, պարզ, բազմաթիւ նպատակներու համար օգտագործուող որսորդական հրացան մը ունէի, զոր ամէն բանի համար կը գործածէի՝ սկսելով եղնիկ որսալէն մինչեւ բադեր, փասեան թռչուններ եւ նապաստակներ որսալը: Նաեւ ունէի քսան տրամաչափով, երկու կողք-կողքի փողեր ունեցող որսորդական հրացան մը, որ հայրս գներ էր ինձի համար երբ տասնվեց տարեկան էի: Բայց ես միշտ սիրած եմ եւ հետաքրքրութիւն ունեցած եմ գեղեցիկ, երկու տակ-տակի փողեր ունեցող հրացաններու հանդէպ, զորս բազմաթիւ անգամներ տեսած եմ որսորդական ամսաթերթերու մէջ: Անոնք միշտ գեղեցիկ փորագրութիւններ կ'ունենան եւ հիանալի փայտէ կոթեր եւ կատարեալ շինուածք: Ուստի անոր ըսի, թէ երկու տակ-տակի փողերով հրացան չունէի եւ իրականութեան մէջ միշտ ալ ուզած էի ունենալ: Յնցուեցայ երբ ըսաւ, թէ ինձի այդպիսի հրացան մը պիտի դրկէր: Անշուշտ ատիկա անսովոր բան մըն էր, եւ ես շատ ուրախացայ:

Իրապէս ալ, շաբաթ մը ետք, եկեղեցւոյ գրասենեակս տուփ մը եկաւ, եւ երբ բացի զայն, ոչ թէ մէկ հատ, այլ երկու հատ տակ-տակի փողեր ունեցող ամենագեղեցիկ որսորդական հրացանները գտայ, զորս երբեւէ տեսած էի:

Շուտով գործակիցիս հեռաձայնեցի եւ անոր շնորհակալութիւն յայտնեցի այդպիսի հրաշալի նուէրի մը համար:

Յաջորդ շաբաթ երկու հատ ենս դրկեց ինձի: Այդպիսով ես ունեցայ չորս հատ լաւագոյն գէնքերէն, զորս երբեւէ

ունեցած եմ: Նորէն հեռաձայնեցի անոր, եւ ըսաւ, որ յաճախ մարդիկ չեն հեռաձայներ եւ շնորհակալութիւն չեն յայտներ իր դրկած նուէրներուն համար. եւ քանի որ ես հեռաձայնեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի, ան մտածեց երկու հատ եւս դրկել ինծի: Բացայայտօրէն, ես գիտէի, թէ ասիկա բան մըն էր, որ Աստուած կը ծրագրէր: Այսինքն՝ անոնք երկու-երկու կու գային եւ ասիկա պատահելէն առաջ ես Անոր կրկնապատիկ բաժինին մասին կը հարցնէի:

Կարճ ըսելով, սկսան հրացաններ դրկուիլ ինծի՝ միշտ երկու-երկու: Շատ չանցած, հաւանաբար ՏԱՄՆԶՈՐՍ հատ նոր որսորդական հրացան ունեցայ, բոլորն ալ բարձրագոյն որակի: Անոնք աժան գէնքեր չէին: Այդ գէնքերը հազարաւոր տոլարներ կ'արժէին:

Յետոյ երկու հատ ճերմակ մարգարիտի գոյնով «Քատիլաք Էսքալատ Էս.Եու.Վի.» ստացայ: Այն ատեն մենք կը քշէինք մեր տասը տարուայ «Հոնտա Փայլըթ» ինքնաշարժը, որ կը սիրէինք («Հոնտա»ները միշտ հիանալի ինքնաշարժներ են), բայց անոնք «Էսքալատ» չեն:

Տրենտան քանի մը տարիէ ի վեր «Լուի Վիթոն» պայուսակ կ'ուզէր, եւ քանի մը տարի առաջ անոր նուիրեցի այդ պայուսկը, իբրեւ կաղանդի յատուկ նուէր: Բայց այս տարի, անոր ծննդեան օրը, ան ստացաւ – գիտցիր ինչ – ԵՐԿՈՒ «Լուի Վիթոն» պայուսակ, երկու տարբեր անձերէ:

Մենք նաեւ ունեցանք մեր երկրորդ օդանաւը այդ եղանակին, ինչպէս նաեւ Ովկիանոսի ավիին գտնուող երկու տուներ, եւ ի վերջոյ, Սուրբ Ծնունդին օրը երկու հատ ջրադուէսի մորթէ վերարկուներ՝ իւրաքանչիւրը տասը հազար տոլար արժողութեամբ:

Պահ մը կանգ պիտի առնեմ եւ պիտի շեշտեմ, թէ ես չեմ փորձեր պարծենալ, քանի որ անոնցմէ ո՛չ մէկը ես ըրի: Զէնքերը յանկարծ յայտնուեցան: Երկու ճերմակ «Էսքալատ»ները յանկարծ յայտնուեցան: Պայուսակները յանկարծ յայտնուեցան: Զրադուէսի մորթէ վերարկուները յանկարծ յայտնուեցան:

Երկու տուներուն մէջ անշուշտ ատելի դեր ունեցանք, բայց քանի մը տարի առաջ ծովափին վրայ տուն մը ունենալու համար

սերմ ցանած էինք (Աստուծոյ գործին համար գումար մը նուէր տուած էինք): Ես ատկէ տեղեակ չէի եւ այն ատեն Տրենտան ինծի չէր ըսած, բայց քանի մը տարի առաջ Տրենտան անշարժ կալուածքի ամսաթերթի մը մէջ տուն մը գտած էր, որ շատ սիրած էր: Ան կը յիշէ, թէ մատը դրած էր այդ նկարին վրայ եւ ըսած էր. «Տէր, ատիկա՛ կ'ուզեմ»: Այն ատեն այնքան շատ ֆինանսական պարտաւորութիւններ եւ ծրագիրներ ունէինք, որ իրականութեան մէջ բաւարար կանխիկ դրամ չունէինք Ֆլորիտայէն տուն մը գնելու համար, բայց գիտէինք, թէ ճիշդ եղանակին տունը պիտի յայտնուի:

Օր մը, երբ կը վազէի, Տէրը խօսեցաւ ինծի եւ ըսաւ. «Վաղը Տրենտան Ֆլորիտա դրկէ, որպէսզի իր Ֆլորիտայի տունը գնէ»: Յատուկ անյետաձգելիութիւն մը կար «վաղ»ուան հետ կապուած, ուստի ըսի. «Ուանո: Լաւ, Տէր»:

Ուստի Տրենտան Ֆլորիտա գնաց եւ քսանհինգ տարբեր տուներու նայեցաւ: Անոր նայած տուներուն մէջ կար տուն մը, որ զինք դէպի իրեն կը քաշէր իբրեւ այն տունը, որ իրը պիտի ըլլար:

Հոն ճամբորդեցի եւ միասին նայեցանք տունին եւ իրեն հետ համաձայն էի, որ անիկա կատարեալ էր: (Այդ ամբողջ ընթացքին ան մոռցած էր այն օրուան մասին երբ իր մատով ցոյց տուած էր այդ անշարժ կալուածքի ամսաթերթին եւ հռչակած էր, որ այդ տունը իրը պիտի ըլլար: Այդ օրուրնէ երեք տարիներ անցած էին, եւ մենք երբեք անձամբ չէինք տեսած այն տունը, որ ինք մատով ցոյց տուած էր):

Մենք Տրենտային ուզած տան համար պայմանագիր մը կնքեցինք. եւ օր մը, երբ մեր Օհայոյի տան մէջ նստած պայմանագիրին պահանջած կալուածին վիճակին մասին տեղեկացնող տեղեկագիրին վրայ կ'աշխատէինք, յանկարծ Տրենտան պոռաց. «Ասիկա ի՛մ տունս է»:

Ես ապշեցայ, քանի որ պայմանագիր կնքած էինք եւ ամէն բան ճիշդ կ'ընթանար եւ տունը գնելու վերջին հանգրուանին մէջ էինք: «Անշուշտ ատիկա քու տունդ է», ըսի:

«Դուն չես հասկնար», ըսաւ Տրենտան: «Ասիկա ճիշդ այն տունն է, որ քանի մը տարի առաջ անշարժ կալուածքի ամսաթերթին մէջ մատնանշեցի»:

Յետոյ յիշեցի, որ անշարժ կալուածքի ամսաթերթը, որուն ան երեք տարի առաջ նայած էր, նոյն քաղաքին մէջ գտնուող տուներ ծանուցած էր: Կրնայ ըլլալ, որ ատիկա նոյն տունն է: Տրենտան վստահ էր, որ ատիկա նոյն տունն էր, եւ ան սկսաւ նշել տան այն յատկութիւնները, որոնք տարիներ առաջ իր ուշադրութիւնը գրաւած էին: Անոնք ճիշդ այս տան կը յարմարէին: Ուստի որոշ հետազօտութիւններ կատարեցի, եւ իրապէս ալ այն տունը, որ կը գնէինք, իրապէս ծախու դրուած էր այն տարին եւ տարուան այն ժամանակին երբ Տրենտան ըսաւ, որ անոր մատնանշած եւ հռչակած էր, որ անիկա իրը պիտի ըլլար: Բայց յետոյ տեսայ, որ պատճառով մը, հիմնականօրէն իր հռչակելէն անմիջապէս ետք, թէ ատիկա իրը պիտի ըլլար, տունը շուկայէն վերցուած էր:

Երբ այդ տան անցեալը ուսումնասիրեցի, անդրադարձայ, որ այդ ամբողջ ժամանակին ընթացքին անիկա շուկայէն վերցուած էր եւ միայն քանի մը օր առաջ շուկային վրայ յայտնուած եւ վերստին ծախու դրուած էր: Ուրեմն ասոր համար Սուրբ Հոգին ըսաւ, որ զինք «վանդը» Ֆլորիտա դրկեմ:

Ուստի մենք գնեցինք այդ ծովեզերեայ տունը, եւ Տրենտան վերջապէս իր տունը ունեցաւ, բան մը, որուն մասին իր ամբողջ կեանքին ընթացքին երազած էր: Յետոյ նոյն տարուան մէջ երկրորդ ծովեզերեայ տուն մըն ալ ժառանգեցինք Քանատայի մէջ: Ունու:

Եթէ չնկատեցիր, ամէն բան, որ Աստուած մեզի դրկեց, սուղնոց եւ շատ բարձրորակ բաներ էին. շատ բարձրորակ: Այդ բոլոր եղածներով քիչ մը ցնցուած էինք: Բայց Տէրը խօսեցաւ ինձի եւ ըսաւ. «Գիտեմ, որ տասնչորս որսորդական հրացանի ՊԷՏՔ չունիս: Գիտեմ, որ երկու ճերմակ «Էսքալատ»ի պէտք չունիս ...» եւ մէկ առ մէկ Իր բոլոր տուածներուն անդրադարձաւ:

Յետոյ ըսաւ. «Չեմ ուզեր, որ Իմ զաւակներս միշտ մտազբաղ ըլլան իրենց պէտքերով: Ամբողջ կալուածը եւ ստացուածքը իրենցն է, եւ Ես հաճոյքով լաւ բաներ կու տամ Իմ զաւակներուս»:

Ան ինձի յիշեցուց, որ Ինք ատիկի քան բաւարարին Աստուածն է, կրկնապատիկին Աստուածը: Յետոյ շարունակեց ըսելով, թէ Իր ժողովուրդը մեծ բաներու մասին չի մտածեր, մեծ երազներ չունի,

եւ կը սահմանափակէ զԻնք ընելէ այն բաները, զորս Ինք կրնայ ընել անոնց համար:

Տրենտան եւ ես քիչ մը զարմացած էինք այն բոլոր բաներէն, զորս Տէրը մեզի ցոյց կու տար: Անդրադարձանք, որ պէտք է մարդոց ըսենք կրկնապատիկ բաժինին մասին: Կրկնապատիկ բաժինը բառացիօրէն չի նշանակեր ամէն բանէն երկու հատ. Տէրը ատիկա կը գործածէր իմ ուշադրութիւնս գրաւելու համար: Կրկնապատիկ բաժին կը նշանակէ աւելի քան բաւարար:

**ԱՆ ԻՆՏԻ ՅԻՇԵՑՈՒՑ,
ՈՐ ԻՆՔ ԱԻԵԼԻ
ՔԱՆ ԲԱՒԱՐԱՐԻՆ
ԱՍՏՈՒԱԾՆ Է,
ԿՐԿՆԱՊԱՏԻԿ
ԲԱԺԻՆԻՆ ԱՍՏՈՒԱԾԸ:**

Յետոյ Աստուած ինձի ըսաւ, որ պէտք է ատիկա եկեղեցիս սորվեցնեմ, եւ իրենց պատմեմ այն բոլոր բաներուն մասին, զորս Ան զրկած էր մեզի եւ թէ ինչպէս ատիկա պատահեցաւ:

Տրենտան եւ ես մեր ունեցուածքին մասին չենք խօսիր, քանի որ առարկաները կեանքը չեն ներկայացներ՝ կեանքին ամենակարեւոր մասը չեն կազմեր, եւ անշուշտ մենք երբեք չենք ուզեր շեշտը դնել բաներ ունենալու կամ բաներ ձեռք բերելու հետամուտ ըլլալու վրայ: Բայց մենք այդ բաներուն ետեւէն չէինք. Աստուած զրկեց զանոնք: Ուստի եկեղեցիին մէջ տասնմէկ շաբաթ կրկնապատիկ բաժինին մասին սորվեցուցինք, եւ իմ կարծիքովս ատիկա հաւանաբար ամենամեծ ազդեցութիւնը ունեցաւ մեր ժողովուրդին ֆինանսներուն վրայ, քան որեւէ դասաշար, որ ես երբեւէ սորվեցուցած եմ:

Բայց գիտե՞ս ինչ: Եղան նաեւ մարդիկ, որոնք եկեղեցին ձգեցին, քանի որ իմ ըսածներէս գայթակղեցան: Անոնք կը մտածէին, որ ես պէտք չունի այդ բոլոր զէնքերուն, կամ երկու «Էսքալատ»ի, կամ երկու ծովեզերեայ տուներու, կամ երկու օդանաւի, կամ երկու գեղեցիկ մուշտակէ վերարկուներու: Անոնք կը կարծէին, թէ ես պարզապէս կը պարծենայի եւ ինչքերուն շատ մեծ կարեւորութիւն կու տայի:

Բայց անոնք բուն միտքը չհասկցան. Աստուած մեզի ցոյց կու տար, թէ Ինք աւելի քան բաւարար է: Իր Թագաւորութիւնը գոյատեւումով ծածկուած չէ ինչպէս երկիրը ծածկուած է: Իր

Թագաւորութիւնը անլի քան բաւարարի թագաւորութիւն է, եւ հինք կ'ուրախանայ Իր զաւակներուն շատ լաւ հոգ տանելով:

Ես ստիպուեցայ մարդոց յիշեցնել, թէ ես չէի ատիկա ընողը: Աստուած ատիկա ըրաւ, որպէսզի կէտ մը շեշտէ. ոչ թէ ամէն մարդ պէտք է սուղնոց ինքնաշարժ քշէ, այլ քանի որ Ան կ'ուզէ, որ մենք դադրինք բաւարարուելէ եւ զինք սահմանափակելէ: Ան կ'ուզէ, որ դադրինք սովորութենէ մղուած «Ո՛չ» ըսելէ եւ այդպիսով զինք սահմանափակելէ, որ չկարենայ Իր ուզած բաները ընել: Ան կ'ուզէ, որ գիտնանք, թէ հինք անլի քան բաւարարի Աստուածն է:

Այս հասկացողութիւնը շատ կարեւոր է առատաձեռն ըլլալու մասին մեր քննարկումին մէջ: Պէտք է բան մը ունենաս առատաձեռն ըլլալու համար, յատկապէս ամէն առթիւ առատաձեռն ըլլալու համար: Գիտեմ, որ Ան ուշադրութիւնս գրաւեց, եւ ես սորվեցայ երբեք չամչնալ Աստուծոյ բարութենէն:

Յաջորդ աշնան տեղացի հովիւ մը հարցուց եթէ կրնար իմ հողիս վրայ որսորդութիւն ընել: Ես միշտ մարդոց կ'ըսեմ, որ ես չեմ արտօներ, որ ոեւէ մէկը իմ հողիս վրայ որսորդութիւն ընէ մինչեւ որ զաւակներս եւ ես մեր եղնիկները որսանք: Անկէ ետք, նախքան որսորդութեան եղանակը վերջանայ, քանի մը հոգի կ'արտօնեմ, որ ներս մտնեն: Այդ աշնան, մենք բոլորս մեր եղնիկները ունէինք սառնարանին մէջ, ուստի այդ հովիւը հրաւիրեցի, որ մեզի գայ:

Այն օրը երբ ան եկաւ, դուրսը զինք դիմաւորեցի, որպէսզի իրեն ուղղութիւն տամ, թէ ո՛ր պէտք է որսայ: Տեսայ, որ ան թռչուն որսալու հին գէնք մը կը գործածէր, այսինքն՝ անոր վրայ միայն արոյրէ (դեղին պղինձէ) ուլունք մը կար՝ նշան առնելու համար: Անիկա նախատեսուած չէր եղնիկ որսալու համար: Պէտք է եղնիկին մօտ ըլլաս, որովհետեւ հին թռչունի գէնքերը ձեւաւորուած չեն եղնիկ որսալու փամփուշտը գործածելու մէջ ճշգրիտ ըլլալու համար: Բայց անշուշտ կրնաս զանոնք գործածել, ինչպէս ես քանի մը անգամ ըրած եմ իմ որսորդական կեանքիս մէջ:

Սակայն երբ նստած անոր հետ կը խօսէի, յիշեցի, որ գէնքերէն մէկը, որ Աստուած ինծի դրկած էր, իսկապէս աղուոր եղնիկ որսալու հրացան մըն էր: Իրականութեան մէջ անիկա իր

տեսակին մէջ ամէնէն սուղ եւ լաւագոյն հրացաններէն մէկն էր: Զգացի, որ Սուրբ Հոգին կ'ըսէ. «Ինչո՞ւ այս հովիւին չես տար այն եղնիկ որսալու հրացանը, որ դուն ստացար: Դուն քանի մը ուրիշ եղնիկ որսալու հրացաններ ունիս, բայց ան լաւ հրացան չունի, որուն հետ կրնայ որսալ»:

Ուստի անոր տուի այդ որսորդական հրացանը, եւ շատ ուրախացաւ: Այդ նուէրը անոր հաստատեց Աստուծոյ բարութիւնը եւ զինք քաջալերեց, որ Աստուծոյ մօտենայ:

Յիշէ՛ք քանի մը գլուխ առաջ քեզի ինչ ըսի, թէ՛ քու ունեցած դրամիդ կամ ինչքիդ մէկ մասը քեզի համար չէ: Աստուած քեզի զրկեց զանիկա, որպէսզի ուրիշի մը պէտքը հոգաս:

Այդ բոլորը ըսի, որպէսզի հետեւեալը ըսեմ. «Դուն կը բնակիս առատաձեռն Թագաւորութեան մը մէջ, որ առատաձեռն Թագաւոր մը ունի, բայց դուն երբեք Թագաւորութեան մէջ գտնուող բոլոր բաները պիտի չվայելես եթէ չկոտրես այն աղքատութեան հոգին, որ քեզ կը մղէ, որ քու ստացած բոլոր բաներդ կուտակես եւ պահես»:

Գիտեմ, որ դուն հաւանաբար դիտած ես կուտակողներու մասին այդ հեռատեսիլի յայտագիրը, ուր անոնք իրականութեան մէջ միջամտութիւն մը կ'ընեն: Տունը այնքան աղբով լեփլեցուն կ'ըլլայ, որ նոյնիսկ կարելի չէ անոր մէջէն քալելով անցնիլ: Շատ մը պարագաներու, տունը պէտք է փլցուի կամ վերակառուցուի, որովհետեւ աննորոգելի դարձած է: Մեր սիրտերը ասոր կը նմանին, երբ մենք լեցուն ենք ազահութեամբ եւ պարզապէս կ'ուզենք նեղ օրերու համար ամէն բան հաւաքել: Պէտք չէ դրամին եւ ստացուածքին բռնուինք:

Իրապէս դժուար է առատաձեռն ըլլալ երբ գոյատեւումի գաղափարով կլանուած ես: Աստուած կ'ուզէ, որ գիտնաս, թէ առատութիւն կայ Իր տան մէջ, ուստի դուն քեզ ազատ զգայ առատաձեռն ըլլալու: Քու առատաձեռնութիւնդ մարդիկը Աստուծոյ Թագաւորութենէն ներս կը հրաւիրէ եւ անոնց սիրտերը կը բանայ՝ Իր բարութիւնն ու առատաձեռնութիւնը ընդունելու: Յիշեցնեմ, որ Աստուծոյ բարութիւնն է, որ մարդիկը ապաշխարութեան կ'առաջնորդէ:

«Արդարեւ, երկինքի արքայութիւնը կը նմանի հեքեւեալին. կալուածատէր մարդ մը կար, որ առաւօտը կանուխ գնաց մշակներ վարձելու՝ որպէսզի իր այգիին մէջ աշխատին: Եւ մշակներուն հեք օրական մէկ արծաթ դահեկանի համաձայնելէ ետք, զանոնք դրկեց իր այգին: Ժամը իննի ապենները դարձեալ գնաց եւ հրապարակին վրայ ուրիշներ ալ տեսաւ, որոնք անգործ կեցած էին: Ասոնց ալ ըսաւ. “Դուք ալ այգիս գացէք եւ ինչ որ է ձեր իրաւունքը պիտի տամ ձեզի”: Անոնք ալ գացին: Յետոյ կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք ժամը երեքի ապենները կրկին գնաց եւ նոյնը ըրաւ: Ժամը հինգի ապենները երբ հրապարակ գնաց, դարձեալ պարապ կեցած մշակներ տեսաւ: Ասոնց հարցուց. “Ինչո՞ւ ամբողջ օրը պարապ կեցեր էք հոս”: “Որովհետեւ մէկը չվարձեց մեզ”,- պատասխանեցին անոնք: Ասոնց ըսաւ. “Դուք ալ այգի գացէք եւ ինչ որ է ձեր իրաւունքը՝ պիտի ստանաք”: Երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը գործավարին ըսաւ. “Կանչէ մշակները եւ իրենց օրականը տուր, վերջին եկողներէն սկսելով մինչեւ առաջինները”: Անոնք որոնք ժամը հինգի ապենները վարձուած էին, մէկական արծաթ դահեկան ստացան: Առաւօտեան վարձուածներուն կարգը որ եկաւ, կը կարծէին, թէ անելի պիտի ստանան, բայց անոնք ալ մէկական արծաթ դահեկան ստացան: Երբ օրականը առին, սկսան տիրոջ դէմ տրտնջալ, ըսելով. “Վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան, մինչ մենք ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք. հակառակ ասոր, դուն մեզ անոնց հաւասար նկատեցիր”: Կալուածատէրը անոնցմէ մէկուն պատասխանեց, ըսելով. “Բարեկամ, ես քեզ չզրկեցի, դուն մէկ արծաթ դահեկանով չհամաձայնեցամ ինձի հետ. ան օրականդ ու գնա՛: Ես վերջին եկողներուն ալ քու առածիդ չափ կ’ուզեմ տալ. ես իրաւունք չունիմ դրամս ուզածիս պէս գործածելու. կամ կը նախանձիս, որ ես այսպէս առաւարձեռն եմ”: Եւ Յիսուս եզրակացուց. “Այսպէս ալ, անոնք որոնք հիմա վերջին են՝ առաջին պիտի ըլլան, եւ առաջին եղողները՝ վերջին»»:

—Մատթէոս 20.1-16

Ուստի Յիսուս ինչ կ'ըսէ այս առակին մէջ: Նախ եւ առաջ պէտք է անդրադառնանք, որ կալուածատէրը Հայրը կը ներկայացնէ, եւ այն հունձքը, որուն Ան հետամուտ է, սօճալուբիա կամ եգիպտացորեն չէ: Անիկա մարդոց հոգիներն են: Մշակները կը ներկայացնեն մեզ՝ անոնք որոնք Ան դէպի հունձքի դաշտերը կը դրկէ: Երկու բան կայ, որ կը հաւատամ, որ Յիսուս կ'ուզէ, որ մենք տեսնենք: Առաջին՝ նկատի առ, որ կալուածատէրը որքան վճռակամութեամբ լեցուած է, որ օգնութիւն գտնէ:

«Արդարեւ, երկինքի արքայութիւնը կը նմանի հեփթեւալին. կալուածատէր մարդ մը կար, որ առաւօտը կանուխ գնաց մշակներ վարձելու՝ որպէսզի իր այգիին մէջ աշխատին»:

Ան կանուխ կ'արթնայ՝ մշակներ գտնելու համար եւ օրուան ընթացքին բազմաթիւ անգամներ կ'երթայ, որպէսզի գտնէ ռելէ մէկը, որ կրնայ իրեն օգնել իր դաշտերուն մէջ: Հրատապութիւն կայ անոր արարքներուն մէջ: Հունձքը հասած է եւ պէտք է հնձուի, այլապէս պիտի կորսուի: Նկատի առ, որ Ան նոյնիսկ կը վարձէ մշակ մը երբ տակաւին միայն մէկ ժամ մնացած է, որ օրուան գործի ժամանակը աւարտի:

«Յեպոյ կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք ժամը երեքի արեւները կրկին գնաց եւ նոյնը ըրաւ: Ժամը հինգի արեւները երբ հրապարակ գնաց, դարձեալ պարապ կեցած մշակներ տեսաւ: Ասոնց հարցուց. “Ինչո՞ւ ամբողջ օրը պարապ կեցեր էք հոս”: “Որովհետեւ մէկը չվարձեց մեզ”, - պատասխանեցին անոնք: Ասոնց ըսաւ. “Դուք ալ այգի գացէք [...]»:

Ահա առակին խորհուրդը. ինչո՞ւ ան վճարեց անոնց նախ վերջին վարձուածներէն սկսելով: Պատասխանը կը գտնենք տասնհինգերորդ համարին մէջ:

«Անոնք որոնք ժամը հինգի արեւները վարձուած էին, մէկական արծաթ դահեկան ստացան: Առաւօտեան

վարձուածներուն կարգը որ եկաւ, կը կարծէին, թէ աւելի պիտի ստանան, բայց անոնք ալ մէկական արծաթ դահեկան ստացան: Երբ օրականը առին, սկսան փրորջ դէմ տրտնջալ, ըսելով. “Վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան, մինչ մենք ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք. հակառակ ասոր, դուն մեզ անոնց հաւասար նկատեցիր”: Կալուածատէրը անոնցմէ մէկուն պատասխանեց, ըսելով. “Բարեկամ, ես քեզ չզրկեցի, դուն մէկ արծաթ դահեկանով չհամաձայնեցա՞ր ինձի հետ. ա՛ն օրականդ ու գնա՛: Ես վերջին եկողներուն ալ քու առածո՞ղ չափ կ’ուզեմ տալ. ես իրաւունք չունիմ դրամս ուզածիս պէս գործածելու. կամ կը նախանձիս, որ ես այսպէս առատաձեռն եմ”»:

ԿԸ ՆԱԽԱՆՁԻՄ, ՈՐ ԵՍ ԱՅՍՊԵՍ ԱՌԱՏԱԶԵՈՒՆ ԵՄ:

Երբ այս առակը կը կարդանք, թերեւս մտածենք. «Հէյ, ատիկա արդար չէ»: Եւ դուն ճիշդ ես եթէ անոր նայիս մեր երկրի անէծքի ժամական աշխատավարձ ստանալու մտածելակերպին համաձայն: Սակայն ինչպէս նախապէս ըսի, ատիկա չէ Աստուծոյ մտածելակերպը: Կալուածատէրը ուզեց վստահ ըլլալ, որ անոնք, որոնք օրուան վերջաւորութեան եկան եւ անարդարօրէն չափազանց շատ վճարուեցան, կը տեսնեն իր առատաձեռնութիւնը եւ կ’ուզեն շարունակել աշխատիլ իրեն համար: Դեռ ատկէ աւելի լաւ, կալուածատէրը կ’ուզէ, որ անոնք վերադառնան իրենց բոլոր ընկերներուն եւ անոնց պատմեն, թէ որքան աշխատավարձ ստացան եւ թէ ան որքան առատաձեռն էր իրենց հանդէպ: Ուստի ի՞նչ է առակին եզրակացութիւնը: Աստուած մարդոց գործով կը զբաղի, մարդիկն են Աստուծոյ գործը, եւ եթէ Անոր գործին մասնակցիս, Ան շատ առատաձեռն է եւ մեծապէս պիտի վարձատրէ քեզ:

**ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՑ
ԳՈՐԾՈՎ ԿԸ ԶԲԱՂԻ,
ԵՒ ԵԹԷ ԱՆՈՐ ԳՈՐԾԻՆ
ՄԱՍ ԿԱԶՄԵՍ, ԱՆ
ՇԱՏ ԱՌԱՏԱԶԵՈՒՆ Է
ԵՒ ՄԵԾԱՊԵՍ ՊԻՏԻ
ՎԱՐՁԱՏՐԷ ՔԵԶ:**

Կրնան ձրիօրէն ստանալ Աստուծմէ:

Յիսուս Աստուածաշունչին ամէնէն հիանալի առակներէն մէկը կը պատմէ ստանալու մասին: Գիտեմ, որ լսած ես այս առակը, Անառակ Որդիին առակը: Կ'ուզեմ, որ կարդաս զայն, եւ յետոյ անոր մասին պիտի խօսինք: Շարունակենք, ինծի հետ մնացիր: Գրեթէ գիրքին վերջաւորութեան հասած ենք, եւ չեմ ուզեր, որ հեռանաս մինչեւ ինծի լսես: Այս պատմութիւնը կը գտնենք Ղուկաս 15-ին մէջ: Հաստուածը քիչ մը երկար է, բայց կը խնդրեմ, որ ժամանակ տրամադրես զայն վերաքաղելու:

«Ապա [Յիսուս] ըսաւ. «Մարդ մը ունէր երկու որդի: Անոնցմէ կրտսերը ըսաւ հօրը. 'Հայր, տո՛ւր ինծի քու ունեցածդ ինծի վիճակուելիք բաժինը': Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շափ օրեր չանցած՝ կրտսեր որդին ժողվեց բոլոր բաները, մեկնեցաւ հեռաւոր երկիր մը, ու հոն փճացուց իր ունեցածը՝ անառակութեամբ ապրելով: Երբ ծախսեց ամէնը՝ սաստիկ սով մը եղաւ այդ երկրին մէջ, եւ ինք սկսաւ կարօտութեան մէջ ըլլալ: Ուստի գնաց՝ այդ երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ. ան ալ իր արտը դրկեց զայն՝ խոզ արածելու համար: Կը ցանկար խոզերուն կերած եղջիրէն իր փորը լեցնել, բայց ո՛չ մէկը կու տար անոր: Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. 'Քանի վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. "Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս"»: Ուստի կանգնեցաւ ու գնաց իր հօր քով: Մինչ ինք դեռ շափ հեռու էր՝ հայրը տեսաւ զայն եւ գթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն: Որդին ալ ըսաւ անոր. 'Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւդ, եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ կոչուելու': Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. '[Անմիջապէս] Հանեցէք առաջին պարեգօտը եւ հագցուցէք անոր, մտաւնի դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէք պարարտ զուարակը, մորթեցէք, ուտենք ու զուարճանանք.

որովհետև այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ՝: Եւ սկսան զուարճանալ: Անոր երէց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ փան, լսեց նուագարաններու եւ պարերու ծայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցուփորձեց, թէ ինչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր. ‘Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ զուարակը, որովհետև ողջ առողջ վերստացաւ զայն’: Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ’աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր հօր. ‘Ահա՛ այսչափ փարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնաւ քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ու մը չտուիր ինծի՝ որ զուարճանայի բարեկամներուս հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պոռնիկներու հետ, մորթեցիր անոր պարարտ զուարակը’: Ան ալ ըսաւ անոր. ‘Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քու կը: Սակայն պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետև այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ”»:

—Ղուկաս 15.11-32

Նախ, պէտք է հասկնանք, որ կրտսեր որդին ինչո՞ւ հօրը տունէն հեռացաւ: Պատասխանը՝ որովհետև ան հօր մասին նոյն սխալ պատկերը ունէր, որ իր երէց եղբայրը ունէր: Յիշեցնեմ, որ երէց եղբայրը ըսաւ, թէ ան իր ամբողջ կեանքին ընթացքին ստրուկի պէս կը ծառայէր իր հօրը, սակայն հայրը երբեք ու մը չէր տուած իրեն՝ որ զուարճանար բարեկամներուն հետ: Երէց եղբոր համար հայրը խիստ գործավար մըն էր: Ուստի կրնաս հարցնել, թէ՛ ինչո՞ւ երէց եղբայրը կրտսեր եղբոր հետ չմեկնեցաւ: Ասիկա իմ կարծիքս է, բայց հրեական սովորութեան համաձայն, երբ հայրը մահանար, երէց եղբայրը կրկնապատիկ բաժինը կը ժառանգէր: Կրտսեր եղբայրը այդ առաւելութենէն օգտուելու իրաւունք չունէր: Ուստի իմ կարծիքովս՝ երէց եղբայրը ունէր բան մը, որ օր մը իրը պիտի ըլլար, եւ կը մտածէր, որ կ’արժէր մնալ:

Կրտսեր եղբայրը կ’ուզէր նոր տեղ մը գտնել, որ իրեն նոր

առիթներ պիտի ընծայէր եւ կ'ուզէր իր հօր իշխանութեան տակէն դուրս ելլել: Ուստի առաւ ժառանգութենէն իրեն ինկած բաժինը եւ հեռացաւ: Սակայն երբ հեռացաւ, ինքզինք գտաւ աշխարհի մը մէջ, որ չէր ակնկալէր: Երբ անոր դրամը վերջացաւ, յայտնաբերեց, որ ամբողջ երկիրը, ուր ինք փախած էր, ամբողջովին սնանկացած էր: Ամբողջ երկրին մէջ սաստիկ սով կար: Իր սովահար վիճակին մէջ ան ըրաւ բան մը, որ բոլորովին օտար կամ խորթ էր իրեն համար: Ան ինքզինք իբրեւ վարձկան ծախեց՝ կերակուրի համար: Ասիկա առաջին անգամն էր, որ այդ վարձկանի մտայնութիւնը ծնունդ կ'առնէր իր կեանքին մէջ: Նախապէս իրեն հոգ կը տանէին իր ինքնութեան պատճառով, եւ ոչ թէ իր մէկ ըրածին համար: Հիմա որ ստիպուած էր աշխատելու, միակ գործը, որ կրցաւ գտնել, խոզեր կերակրել էր՝ հրեայի մը համար բոլորովին անմաքուր եւ անարգ գործ մը: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ ան այնքան անօթի էր, որ կը ցանկար խոզերուն կերածներուն փշրանքներէն ուտել, բայց ո՛չ մէկը կու տար իրեն: Պատճառը: Ամէն մարդ նոյն վիճակին մէջն էր, սնանկացած եւ գոյատեւումի վիճակին մէջ: Այս բաները ծանձօթ են քեզի. այս վիճակներէն անցամ՞ծ ես: Յամենայն դէպս օր մը ան ինքզինքին եկաւ եւ յիշեց, որ նոյնիսկ իր հօր տան վարձկանները պէտք եղածէն աւելին ունէին:

«Եւ ինքնիրեն գալով՝ ըսաւ. ‘Քանի վարձկաններ կան հօրս տունը՝ հացով լիացած, ու ես հոս սովամահ կը կորսուիմ: Կանգնիմ, երթամ հօրս քով եւ ըսեմ անոր. “Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւ, եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս”։ Ուստի կանգնեցաւ ու զնաց իր հօր քով»:

Անդրադառնալով, որ տունը շատ ուտելիք կայ, ան ճամբայ ելաւ իր հօր տունը վերադառնալու՝ ոչ թէ իբրեւ որդի, այլ իբրեւ ստրուկ, իբրեւ վարձկան: Ան ծրագրեց, որ իր սխալն ու մեղքը պիտի խոստովանէր իր հօրը եւ յետոյ անոր պիտի աղաչէր, որ իրեն արտօնէ, որ իբրեւ ծառայ վերադառնայ: Սակայն երբ իր տան մօտեցաւ, հայրը դուրսն էր: Հայրը զինք տեսնելուն պէս վազելով դիմաւորեց զինք, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց:

«Մինչ ինք դեռ շափ հեռու էր՝ հայրը փեսաու զայն եւ գթաց. վազելով՝ անոր վիզին վրայ ինկաւ ու համբուրեց զայն»:

Եկէք յստակ պատկեր մը ունենանք պատահածին մասին, քանի որ այս պատմութիւնը իրականութեան մէջ նմանութիւն մը կամ օրինակ մըն է Հայր Աստուծոյ եւ մեզի: Այդ որդին ուղղակի խոզի փարախէն եկած էր: Ըստ հրեական օրէնքին, անիկա անմաքուր կը սեպուէր: Այն պահուն, որ հայրը իրեն փաթթուեցաւ, ինքն ալ անմաքուր եղաւ. բայց ան կամաւորաբար ըրաւ ատիկա՝ իր որդիին սիրոյն համար: Փոխանակ իր կրտսեր որդին յանդիմանէր եւ անոր յիմարութեան համար զինք պատժէր, հայրը զինք լաւագոյն պատմուճանով ծածկեց: Յետոյ անոր մատին դրաւ փորագրութեամբ զարդարուած մատանին, որ կը նշանակէր, թէ իբրեւ որդի՝ անոր իշխանութիւնը վերականգնուած էր: Յետոյ անոր ոտքերուն կօշիկներ հագցուց, որ կը նշանակէ, թէ ան արտօնութիւն ունէր կալուածին բոլոր մասերը մտնելու: Այդ սովորութեան մասին կը կարդանք Հռութ 4.7-ին մէջ:

«Առաջ Իսրայէլի մէջ սա՛ սովորութիւնը կար.- փրկելու կամ փոխանակելու պարագային, ամէն արարք հաստատելու համար՝ մէկը իր կօշիկը կը հանէր ու միւսին կու տար. ասիկա Իսրայէլի մէջ վկայութիւն կ'ըլլար»:

Եւ վերջապէս, անոր համար խնճոյք մը սարքեցին եւ պարարտ զուարակը մորթեցին:

Այս կրտսեր որդին վերադարձաւ յուսալով, որ լաւագոյն պարագային վարձկան կրնար ըլլալ, բայց հայրը զինք իբրեւ որդի վերականգնեց:

«Որդին ալ ըսաւ անոր. ‘Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւ, եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ կոչուելու’: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. ‘[Անմիջապէս] Հանեցէ՛ք առաջին պարեգօսը եւ հագցուցէ՛ք անոր, մատանի՛ դրէ՛ք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը: Եւ բերէ՛ք պարարտ զուարակը, մորթեցէ՛ք, ուտենք ու

զուարճանանք. որովհետեւ այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ: Եւ սկսան զուարճանալ»:

Բայց պատմութեան յաջորդ մասն է, որ իրապէս կ'ուզեմ, որ տեսնես:

«Անոր երէց որդին արտն էր. երբ եկաւ ու մօտեցաւ փան, լսեց նուագարաններու եւ պարերու ձայնը, ու իրեն կանչելով ծառաներէն մէկը՝ հարցուփորձեց, թէ ինչ էր այդ: Ան ալ ըսաւ անոր. 'Եղբայրդ եկաւ, ու հայրդ մորթեց պարարտ զուարակը, որովհետեւ ողջ առողջ վերստացաւ զայն': Իսկ ինք բարկացաւ եւ չէր ուզեր ներս մտնել. ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ'աղաչէր անոր: Ան ալ պատասխանեց իր հօր. 'Ահա՛ այսչափ փարի է՝ որ կը ծառայեմ քեզի, ու բնան քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ուլ մը չփուր ինծի՝ որ զուարճանայի բարեկամներուս հետ: Բայց երբ եկաւ այդ որդիդ՝ որ լափեց քու ունեցածդ պողոնիկներու հետ, մորթեցիր անոր պարարտ զուարակը': Ան ալ ըսաւ անոր. 'Որդեանկ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ'»:

Երբ երէց որդին տան մօտեցաւ, երբ գիտցաւ պատահածը, մերժեց ներս մտնել: Նկատի առ, թէ երէց որդին ինչ ըսաւ. «Ահա՛ այսչափ փարի է՝ որ կը **ծառայեմ** քեզի, ու բնան քու պատուիրանդ զանց չըրի. սակայն երբեք ուլ մը չփուր ինծի՝ որ զուարճանայի բարեկամներուս հետ»: Ան կ'ըսէր, թէ իր հայրը խիստ գործավար մըն էր, եւ ինչ կոչեց ինքզինք: **Ծառայ՝ ստորուկ:** Բայց հայրը ինչ կոչեց զինք 31-րդ համարին մէջ: Որդեանկ: Ահա՛ հիմնական միտքը, որ կ'ուզեմ հաղորդել:

Դուն մեծցած ես Աստուծոյ հանդէպ նոյն մտածելակերպով, որ այդ երկու զաւակները ունէին իրենց հօր մասին, թէ ան խիստ գործավար մըն էր, այսինքն՝ անոր ծառայելու մէջ վարձատրութիւն չկար: Կրօնը քեզի սորվեցուցած է, որ պէտք է Աստուծոյ համար

աշխատիս, որպեսզի ընդունուիս: Սակայն կրտսեր որդիին համար իր հոր պատկերը փոխուեցաւ երբ հայրը զինք վերստին ընդունեց՝ առանց պատիժի եւ զինք ընդունեց իբրեւ իր որդին եւ ոչ թէ իբրեւ ստրուկ մը: Երէց որդիին յարաբերութիւնը իր հոր հետ հիմնուած էր իր ըրածներուն վրայ, հետեւաբար ան կը ծառայէր անոր եւ միշտ կը փորձէր ամէն բան ճիշդ ընել: Երբ քու ինքնութիւնդ քու ըրածներուդ ակնոցով դիտես, միշտ ինքզինքդ պակաս պիտի գտնես, եւ շուրջիններդ սխալ ձեռով պիտի դատես՝ իբրեւ մարդիկ, որոնք երբեք ուրախ չեն քեզմով: Սակայն անկեղծ ըլլալու համար, երէց եղբայրը ինքն իր անձին խիստ գործավարն էր, այն աստիճան, որ ան չէր կրնար ստանալ իր հոր բարութիւնը: Երբ հայրը անարդարութեամբ կը մեղադրէ եւ կ'ըսէ, թէ ան երբեք նոյնիսկ ու մը չէ տուած իրեն, որ իր ընկերներուն հետ զուարճանայ, հայրը հետեւեալը կ'ըսէ.

«Որդեակ, դուն միշտ ինձի հետ ես, ու ամբողջ ունեցածս քուկդ է»:

Չ'ըսեր. «Ստրուկս»: Զինք իր որդին կը կոչէ: Որդին կալուածին համասեփականատէրն է. ան ընտանիքին կը պատկանի: Ստրուկը ժառանգութիւն չունի: Գիտես, կալուածին մէջ գտնուող բոլոր բաները արդէն երէց եղբոր կը պատկանէին: Բայց իր հոր մասին իր ունեցած խելաթիրուած տեսակէտը եւ իր անձին մասին ունեցած սխալ տեսակէտը իրեն թոյլ չէին տար, որ հանդարտի եւ վայելէ այն, ինչ որ արդէն իրն էր, քանի որ ան ինքզինք վարձկան կը համարէր:

Ինչո՞ւ այսքան ժամանակ տրամադրեցի, որ ասոր մասին խօսիմ քեզի: Որովհետեւ վարձկանները Աստուծմէ ստանալու մե՛ծ դժուարութիւն կ'ունենան: Անոնք միշտ կը զգան, որ պէտք է Անոր հաճութիւնը շահին. եւ քանի որ կը ձախողին, կ'ամչնան, կը վախնան եւ իրենք զիրենք Հօրմէն ստանալու անարժան կը զգան: Եթէ դուն քու անձիդ մասին քու տեսակէտդ չարբագրես, դուն երբեք պիտի չկարենաս ձրիօրէն ստանալ Հօրմէն: Եւ յիշեցնեմ, որ մենք պէտք է կարենանք ձրիօրէն ստանալ եթէ մեր Հօր նման առատաձեռն պիտի ըլլանք:

Չես կրնար շահիլ քու արդարութիւնդ. անիկա սիրոյ նուէր մըն է քեզի: Կը սիրեմ ինչ որ Մատթէոս 3.16-17-ը կ'ըսէ:

«Յիսուս մկրտուելէ ետք՝ անմիջապէս ջուրէն դուրս ելաւ: Եւ ահա երկինքը բացուեցաւ, եւ տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի նման կ'իջնէր եւ կու գար իր վրայ: Եւ ահա երկինքէն լսուեցաւ ձայն մը, որ կ'ըսէր. “Արիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ”»:

Ասիկա պատահեցաւ այն պահուն երբ Յիսուս իր առաքելութիւնը պիտի սկսէր: Անիկա տակաւին ոչ մէկ բան չէր ըրած Աստուծոյ գովասանքին արժանանալու համար, բայց նկատի առ, թէ Աստուած ինչ կ'ըսէ. թէ Ան կը սիրէր զինք եւ կը հաճէր Անոր:

Կը յիշեն այն երկու գողերը, որոնք խաչերու վրայ էին երբ Յիսուս խաչին վրայ էր: Անոնցմէ մէկը ըսաւ. «[...] Յիշէ՛ զիս՝ երբ գաս քու թագաւորութեամբդ»: Յիսուս ալ ըսաւ անոր. «Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. “Դուն այսօր ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ”»: Ինչ ըրաւ ան ատոր արժանանալու համար: ՈՉԻՆՉ:

Երբ Յիսուսի անունը կը կանչենք, Աստուածաշունչը կ'ըսէ, թէ վերստին ծնունդ կը ստանանք եւ խաւարի թագաւորութենէն դէպի Աստուծոյ Թագաւորութիւնը կը փոխադրուինք: Ինչ ըրինք ատոր արժանանալու համար: ՈՉԻՆՉ:

Ուստի մինչ այս գլուխը կը փակեմ, կը խնդրեմ, յիշէ, որ ես արժանի չէի այդ բաներէն որեւէ մէկուն, զորս Աստուած ինծի ղրկեց այդ տարի: Ան կը փորձէր ինծի օգնել, որ հասկնամ, թէ ես ամբողջ Թագաւորութիւնը ստացայ երբ Յիսուսի անունը կանչեցի: Պէտք չունիմ զայն շահելու: Ես պարզապէս պէտք է Անոր բարութիւնն ու առատաձեռնութիւնը ստանամ: Երբ կարող կը դառնաս ստանալու Անոր առատաձեռնութիւնը, դուն կրնաս առատաձեռն ըլլալ Անոր բարութեամբ:

ԱՌԱՏԱԶԵՌՆ ՄԱՐԴՈՅ ՏՐՈՒԱԾ ԽՈՍՏՈՒՄԸ

Պիլը եւ անոր կինը՝ Էյփրիլը, տասնչորս տարիներէ ի վեր ընտանեկան փոքր գործ մը ունէին կապարագործութեան վերաբերեալ: Իբրեւ «Ֆէյթ Լայֆ» եկեղեցիին անդամներ, անոնք տեսած են այն աճը, որ տարիներու ընթացքին տեղի ունեցած է, ինչպէս նաեւ յաղթանակի պատմութիւնները: Ուստի երբ լսեցին, որ «Ֆէյթ Լայֆ» եկեղեցին պիտի ընդլայնենք՝ համայնքին վրայ աւելի մեծ ազդեցութիւն բերելու համար, անոնք լիովին համաձայն էին մեզի աջակցելու:

Էյփրիլը ըսաւ, որ ինք կատարելապէս պատրաստ էր տասը հազար տոլար տալու այդ ծրագիրին համար, բայց ան բոլորովին զարմացաւ երբ Պիլը նպարավաճառին քովէն տուն եկաւ եւ իրեն ըսաւ, որ Տէրը իրեն ըսած է, որ եօթանասունհինգ հազար տոլար տայ, եւ ոչ թէ՛ տասը հազար տոլար:

Անոնք բնաւ գաղափար չունէին, թէ ատիկա ինչպէս կրնար ըլլալ, բայց Էյփրիլը համաձայնեցաւ եօթանասունհինգ հազար տոլար տալու այդ ընդլայնման գործին համար: Բայց նորէն, անոնք ոչ այդ գումարը ունէին եւ ոչ ալ գաղափար ունէին, թէ ո՛րկէ կրնային այդպիսի գումար մը ձեռք բերել:

Քանի մը շաբաթ ետք քաղաքին ջուրի բաժանմունքէն հեռաձայնեցին եւ իրենց ըսին, թէ վերանորոգման մեծ ծրագիր մը որդեգրած են եւ հարցուցին եթէ հետաքրքրուած են այդ գործը ընելու համար գին մը առաջարկելով: Անոնք «Այո» ըսին

Եւ սկսան քաղաքին համար գործ մը ընելու համար պահանջուած օրինական գործողութիւնները եւ անհրաժեշտ փաստաթուղթերը պատրաստել: Էյփրիլը ըսաւ, որ համաձայնագիրը հարիւր էջէն աւելի էր, եւ նոյն ատեն պէտք էր ապահովագրական համաձայնութիւն մըն ալ կնքէին: Այդ բոլորը յաջողութեամբ աւարտելը բաւական երկար եւ յոգնեցուցիչ գործընթաց մըն էր, բայց յաջողցուցին: Անոնք յայտնաբերեցին, որ իրենք միակ ընկերութիւնն էին, որ այդ ծրագիրին համար գումար մը առաջարկած էին, եւ բնաւ գաղափար չունէին, թէ ինչպէս եւ ինչո՞ւ իրենց հետ կապուած էին, որ այդ ծրագիրին համար դիմում կատարեն:

Երբ համաձայնագիրը ներկայացուցին, քաղաքապետարանէն իրենց հեռաձայնեցին եւ ըսին, թէ կը զգային, որ անոնց ընկերութիւնը շատ պզտիկ էր այդ գործը յանձն առնելու համար, քանի որ պէտք էր երկու հարիւր տան գործերը միայն եօթանասունհինգ օրուան մէջ աւարտէին: Սակայն որոշ քննարկումներէ ետք անոնք քաղաքապետարանի պատասխանատուները համոզեցին, որ կրնան այդ գործը յաջողութեամբ գլուխ հանել:

Պիլը կ'ըսէ, թէ ատիկա ամբողջ անձնակազմին անմիջական եւ ներդաշնակ ճիգերը պահանջող ծրագիր մըն էր, որուն ընթացքին խումբը մինչեւ գիշերուան ուշ ժամերը կ'աշխատէր, ինչպէս նաեւ՝ Շաբաթ օրերը: Բայց գիտէն ինչ: Անոնք ճիշդ ժամանակին վերջացուցին եւ կրցան առատաձեռն կերպով եօթանասունհինգ հազար տոլար տալ եկեղեցիին ծրագիրին համար, ինչպէս նաեւ այդ ընթացքին իրենց բոլոր սպառողական պարտքերը վճարեցին: Շատ ոգեւորուած էին:

Գիտէն, Աստուած աւելի մեծ ծրագիր մը ունէր Պիլին եւ Էյփրիլին համար, քան ինչ որ անոնք ունէին իրենք իրենց համար: Ան գիտէր անոնց նուիրումը Իրեն հանդէպ, բայց ուզեց զիրենք տարածել կամ ընդարձակել, անոնց կարողութիւնը ընդարձակել:

Հիմա, որ արդէն հաւանութիւն ստացած են կառավարութեան համար գործեր ստանձնելու եւ քաղաքապետարանին համար յաջող գործի համաձայնագիր մը աւարտած են, դռները բաց են

ապագային աւելի մեծ համաձայնագիրներ կնքելու:

Աստուած կը սիրէ մարդիկը ընդարձակել: Ան գիտէ մեր կարողականութիւնը, բայց մենք յաճախ չենք գիտեր մեր կարողականութիւնը եւ ընդհանրապէս պէտք ունինք մղուելու կամ հրուելու: Ասիկա ձեւ մըն է, որուն պէտք է վարժուիս:

«Դարձեալ, երկինքի արքայութիւնը պիտի նմանի հետեւեալին. մարդ մը կար, որ երբ ուրիշ երկիր պիտի երթար, կանչեց իր ծառաները եւ անոնց յանձնեց իր ստացուածքը, որ շահարկեն: Եւ համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր: Եւ ապա ճամբորդեց: Ծառաներէն ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, անմիջապէս գնաց, շահարկութեան դրաւ եւ հինգ հարիւր եւս շահեցաւ: Նոյն ձեւով, ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, երկու հարիւր ալ շահեցաւ: Բայց ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, գնաց հողը փորեց եւ իր տիրոջ դրամը հոն պահեց»:

—Մատթէոս 25.14-18

Ասկէ առաջ այս առակը կարդացած ենք, բայց կ'ուզեն մատնանշել բան մը, որուն մասին չենք խօսած:

Նկատի առ, որ երբ սեփականատէրը իր ծառաներուն պարտականութիւններ յանձնեց, կ'ըսէ, թէ պարտականութիւնները յանձնեց *«համաձայն անոնց կարողութիւններուն»*: Ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացաւ, անոր հինգ հարիւր ոսկի դրամ վստահուած էր, այսինքն՝ այն ատեն ան հինգ հարիւր ոսկի դրամ կառավարելու կարողութիւնը ունէր: Եթէ աւելի մեծ կարողութիւն կամ ատակութիւն ունենար, սեփականատէրը աւելի կու տար անոր: Նոյնը կը վերաբերի միւս ծառաներուն:

Բայց տես ի՞նչ պատահեցաւ: Հինգ հարիւր ոսկի դրամ ունեցող ծառան զայն աւելցուց եւ հազար ոսկի դրամ ունեցաւ: Այդ ընթացքին ի՞նչ պատահեցաւ: Պարզ ըսելով, անոր կարողութիւնը կամ ատակութիւնը հինգի մակարդակէն տասի մակարդակի բարձրացաւ: Անոր պատասխանատուութիւն ստանձնելու եւ

կառավարելու կարողությունը անելցաւ: Ան շատ անելի արժէքաւոր դարձաւ սեփականատիրոջ համար եւ ինքզինք դիրքաւորեց՝ պաշտօնի անելի մեծ բարձրացում ստանալու համար:

Ահա սեփականատիրոջ իմաստութիւնը: Ան գիտէր հինգ հարիւր ոսկի դրամ ունեցող ծառային նկարագիրը: Գիտէր, թէ ան ունէր կարողականութիւնը այդ նոր մակարդակին բարձրանալու: Թէեւ սեփականատէրը հինգ հարիւր ոսկի դրամ տուաւ ծառային, ինչ որ տուեալ պահուն անոր կարողութիւնն էր, այն պարտականութիւնը, որ ան հինգ հարիւր ոսկի դրամ ունեցող ծառային տուաւ, անելի արդիւնք պիտի բերէր, քան այն ինչ որ ծառան ունէր եւ ատիկա զինք պիտի մղէր, որ կառավարելու կարողութեան նոր մակարդակ մը ունենար:

Սեփականատէրը գիտէր, որ իր ծառան անելի արժէքաւոր դարձնելու միակ միջոցը անոր արտօնելն էր, որ ան ընդարձակուի եւ անձամբ յայտնաբերէ իր կարողութիւնը: Աստուած նոյն գործընթացը կը գործածէ մեր կեանքերուն մէջ, որպէսզի մեզ անելի արժէքաւոր դարձնէ եւ մեզ մեր կոչումին համար մարգէ:

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է՝ մեծին մէջ ալ հաւատարիմ է, իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է՝ մեծին մէջ ալ անհաւատարիմ է»:

—Ղուկաս 16.10

Ինչպէս նախորդ գլուխներէն մէկուն մէջ ըսի, չկան փոքր պարտականութիւններ: Դուն անոնցմէ իւրաքանչիւրին միջոցով պիտի մեծնաս, եւ իւրաքանչիւրը կարողութիւնդ պիտի անելցնէ յաջորդին համար:

Ես այս գործընթացէն բազմաթիւ անգամներ անցած եմ: Ամէն անգամ փորձութեան կ'ենթարկուիմ եւ կը մտածեմ. «Ո՛չ, չեմ կրնար ընել ասիկա: Չեմ գիտեր ինչպէս ընել» կամ «Ժամանակ չունիմ»: Բայց ամէն անգամ կ'ըսեմ. «Այո՛, ես ընդարձակուած եմ» եւ անելի ատակ կը դառնամ հասնելու իմ կարողականութեանս:

Թերեւս մարդիկ կեանքիս նային եւ մտածեն. «Օ՛հ, շատ

դիրին պէտք է ըլլայ առանց պարտքի ըլլալը, հեռատեսիլին վրայ ելոյթ ունենալը, անձնական օդանաւ ունենալը: Ունու, ինչ հիանալի կեանք է»: Համաձայն եմ. ինչ հիանալի կեանք է. անիկա լա՛ն կեանք է եւ փառաւոր կեանք է: Բայց դուն չես գիտեր, թէ իմ կեանքս ինչպէս հասաւ հոն, ուր որ է այսօր: Չես գիտեր, թէ ատիկա որքան յարատեւութիւն պահանջեց, շատ անգամ ծայրայեղ ճնշումի տակ, որպէսզի կարողութեան այս մակարդակին բարձրանամ:

Եւ տակաւին կը մեծնամ, եւ Աստուած կը շարունակէ նոյնիսկ ակելի մեծ պարտականութիւններ տալ ինձի: Կը զգամ, որ շարունակ կ'ընդարձակուիմ ակելի մեծ ծրագիրներով եւ կ'ընդարձակուիմ ակելի շատ դրամի պէտք ունենալով, որպէսզի զանոնք իրագործեմ: Բայց ես այդ ճնշումը (եւ երբեմն քառու) ոչ մէկ բանի հետ չեմ փոխեր, քանի որ ատիկա Աստուծոյ մարգումի ձեւն է, որպէսզի ինձի օգնէ, որ իրագործեմ այն բոլոր բաները, որոնց համար կանչուած եմ:

Եթէ խրատ մը պիտի տայի քեզի, հետեւեալը պիտի ըլլար. «ՄԻ ՅԱՆՁՆՈՒԻՐ»: Արտօնէ, որ Աստուած ընդարձակէ քեզ, որպէսզի ըլլաս այն անձը, որ կանչուած ես ըլլալու:

Աստուած միշտ կ'ընդառաջէ քու պէտքերուդ, քու ակնկալութիւններուդ: Ան բնաւ յուսախաբ չ'ըներ: Ապագադ առջեւդ է եւ պէտք է վճռականութեամբ շարունակես:

Թոյլ կու տան, որ Աստուած ընդարձակէ քեզ:

Չորեքշաբթի երեկոյեան աղօթքի պահի մը ներկայ էի: Աղջիկս աղօթքը կ'առաջնորդէր երբ յանկարծ կեցաւ, ինձի նայեցաւ եւ սկսաւ մարգարէանալ: Հետեւեալը ըսաւ.

«Տէրը կ'ըսէ. “Հունձքը շար մեծ է քեզի համար: Ես կ'ընդարձակեմ քեզ: Միայն Իմ Հոգիովս կրնաս հասկնալ, թէ ինչ պիտի պատահի շուրջով: Քայլ կ'առնես, թոյլ կու տան Ինձի, որ առաջնորդեմ քեզ դէպի քու հասկացողութենէդ վեր գտնուող դժուար բաներու, անկարելիին”»:

Մտածեցի. «Օ՛հ, ո՛չ, ես գիտեմ ատիկա ի՛նչ կը նշանակե՛»: Ասիկա առաջին փորձառությունս չէր:

Ես շնորհակալ եմ, որ Աստուած ինձի կը հարցնէր եթէ Իրեն կ'արտօնեմ, որ ինձի առաջնորդէ դէպի դժուար բաներ, անկարելի բաներ: Գիտեմ, որ անոնցմէ հիանալի պատմություններ դուրս կու գան երբ անոնց մէջէն կ'անցնիս եւ թէ Աստուած միշտ կը յայտնուի:

Սակայն ես նաեւ գիտեմ ընդարձակուելու ցաւը, այն գինը, որ պէտք է վճարես՝ երթալու տեղ մը, որ ատկէ առաջ չես գացած: Բայց, եւ ասիկա մեծ ԲԱՅՅ է, ես նաեւ գիտեմ Աստուծոյ բարութիւնը եւ Անոր բարձրացնելու ձեւը, ուստի անմիջապէս «ԱՅՈ՛» ըսի:

Աստուած կ'ուզէ դուրս հանել այն կարողականութիւնը, որ քու մէջդ դրած է: Ատիկա միակ միջոցն է, որով դուն քու վախճանիդ կամ կոչումիդ պիտի հասնիս: Ան պէտք է ընդարձակէ քեզ: Աստուած ի՛նչպէս կ'ընդարձակէ մեզ: Ճնշումով:

Եթէ փուչիկ մը ուռեցնես եւ յետոյ ձգես, որ օդը դուրս ելլէ, փուչիկը կ'ընդլայնի. աւելի մեծ կ'ըլլայ: Նոյնն է նաեւ իմ եւ քու պարագայիդ: Երբ յանձն կ'առնենք ճնշումի տակ մտնել, եւ չենք յանձնուիր, մեր կարողութիւնը կը մեծնայ: Կարողութիւն կը նշանակէ աւելի մեծ ծրագիրներ եւ աւելի մեծ չէքեր: Գիտե՛ս, հաճելի է առատաձեռնութեան մասին խօսիլ քանի դեռ Աստուած քեզի չէ ըսած, որ հարիւր հազար տոլար նուէր տաս: Կամ քու նախասիրած ինքնաշարժդ նուէր տաս: Աստուծոյ հանդէպ վստահութիւնդ պէտք է մեծնայ, եւ քու սեփական կարողութիւնդ ալ պէտք է մեծնայ:

Այդ պահին ընթացքին Աստուծոյ «Այո՛» ըսելէս քանի մը շաբաթ ետք, գիտցայ, թէ ատիկա ինչի՛ մասին էր: Մեր հեռատեսիլի յայտագիրը, որ շաբաթական դրութեամբ կը սփռուէր, շաբաթը մէկ օր, առաջարկ մը ստացաւ, որ օրական դրութեամբ ըլլայ: Ատիկա հիանալի կրնայ թուիլ, բայց այդպիսի փոփոխութիւն մը ընելու համար քանի մը բարդ հարցեր կային, որոնք պէտք է լուծուէին: Առաջինը այն է, որ մեր եթերաժամանակին սակը անմիջապէս հինգ հարիւր տոկոսով պիտի բարձրանար, եւ այդ օրերուն մենք

հազիւ կրնայինք մեր շաբաթական սակը վճարել: Երկրորդ՝ պէտք էր շաբաթական հինգ յայտագիրներ արտադրէինք եւ խմբագրէինք, եւ մենք հեռատեսիլի բաժանմունք չունէինք: Այն ժամանակ մենք մեր հեռատեսիլի յայտագիրին համար, որ շաբաթը մէկ անգամ կը սփռուէր, ընկերութեան մը հետ համաձայնագիր մը կնքած էինք, որ մեր քով գան եւ մէկ շաբաթուայ մէջ չորս յայտագիր արձանագրեն տուեալ ամսուան համար: Անոնք կը սրբագրէին եւ կը խմբագրէին յայտագիրները, հեռատեսիլի կայանը կը դրկէին, եւ ամբողջ գործը կ'ընէին: Բայց յետոյ անդրադարձայ, որ ես ստիպուած պիտի ըլլայի այդ բոլորը տունս փոխադրելու, որպէսզի կարենայի ատիկա գլուխ հանել: Եւ ատիկ մեծ հարցը այն էր, որ Տրենտան եւ ես չէինք գիտեր, թէ ինչպէս կարելի է հեռատեսիլի բաժանմունք մը ստեղծել: Բայց մենք պայքարեցանք, որպէսզի պէտք եղածը սորվինք եւ հասկնանք:

Ինչ կը վերաբերի դրամին, մեր Նոր Կեդրոնը՝ մեր եկեղեցւոյ տարածքը, տակաւին շինարարութեան մէջ էր եւ հեռատեսիլի բաժանմունք մը շինելու համար ատելորդ դրամ չկար: Արտադրութեան կողմէ, պէտք էր *քամերայի* ապրանքներ գնէինք եւ անձնակազմ մը վարձէինք, որ արտադրութեան գործը ընէր: Եղան օրեր, երբ ատիկա անկարելի կը թուէր: Բայց Աստուած հաւատարիմ էր եւ Տրենտան եւ զիս շարունակ կը քաջալերէր, եւ մենք յառաջ գացինք:

Մեր ամենամեծ խոչընդոտը եկաւ մօտաւորապէս չորս ամիս ետք երբ յայտնաբերեցինք, որ մեր եթերաժամանակի վճարումներէն տակաւին կէս միլիոն տոլար վճարելիք ունէինք: Յատկապէս ատիկա դժուար էր, քանի որ մեր հեռատեսիլի յայտագիրին անունը «Դրամին Հարցը Լուծել» է:

Մտածեցի, թէ արդեօք պիտի կարենայինք մեր հեռատեսիլի ծրագիրը շարունակել: Զգացի, որ պիտի չկարենամ պարկեշտութեամբ շարունակել եթէ եթերաժամանակի վճարումներս չկատարեմ: Այդ ժամանակ ես շատ կասկածներու դէմ պայքարեցայ: Բայց նորէն, Աստուած հաւատարիմ է, եւ Տրենտան մեծ քաջալերանք էր:

Այդ շաբաթ երազիս մէջ Աստուած ինձի ցոյց տուաւ, որ այդ բոլոր հաշիւները մէկ խոշոր գումարով պիտի վճարուէին, բան մը, որ ըստ իս՝ բնականին մէջ անկարելի էր: Բայց այդ շաբաթավերջին եկեղեցիին մէջ, հինգ հարիւր հազար տոլարի մուտք ունեցանք, անցեալի եւ ներկայի եթերաժամանակի վճարումները վճարուեցան, եւ անկէ ի վեր անցեալէն մնացած պարտքեր չենք ունեցած:

Ուսնու, հրաշալի ճամբորդութիւն մըն էր:

Այդ գործընթացին միջոցով մենք փոխուեցանք: Ներկայիս մենք ամէն օր երկու յայտագիր կը ներկայացնենք եւ Աւետարանը տարածելու համար միլիոնաւոր տոլարներ կը ծախսենք: Հիմա կը նայինք այն բաներուն, զորս այն ատեն դիմագրուեցինք, եւ ատիկա այնքան մեծ չ'երեւիր մեզի ինչպէս այն ժամանակ կ'երեւէր: Պէտք է միշտ յիշես այն բաները, զորս սորվեցանք առաջին գլուխին մէջ. Աստուծոյ շնորհքը քեզի հետ կը գործէ: Տարիներու ընթացքին Աստուծոյ հետ քալելով՝ ես հասկցայ, թէ ինչո՞ւ Պօղոսին նամակներուն մեծ մասը հետեւեալ բառերով կը սկսին.

«Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի»:

Պէտք է յիշենք, որ մենք առանձին չենք: Անոր շնորհքը, այդ գերբնական զօրութիւնը, կ'աշխատի մեր կեանքերուն մէջ: Իսկապէս քաջութիւն կ'ուզէ ըսելու՝ «Այո՛» եւ քայլ առնելու դէպի անյայտութիւնը, բայց կ'արժէ ատիկա ընել. ես կրնամ վկայել այդ մասին:

Տրենտան եւ ես աշխարհը դարձած եւ Աւետարանը քարոզած ենք: Մենք տեսած ենք Նոր Կտակարանին մէջ արձանագրուած բոլոր հրաշքները կը կատարուին մեր աչքերուն առջեւ: Տեսած ենք հազարաւոր մարդոց կեանքերուն փոխուիլը եւ երկրին լաւագոյն բարիքները վայելած ենք: Չկայ աւելի լաւ տեղ մը, ուր կրնաս գտնուիլ, քան՝ նպատակը:

Քեզի համար իմ աղօթքս է, որ ճոխանաս ամէն բարի գործով, որ Աստուած քեզի կու տայ, որ ընես, եւ յիշես, թէ որքան կարեւոր

է առատաձեռն ըլլալը: Եզրափակելով, հետեւեալը իմ ամէնէն շատ սիրած սաղմոսներէս մէկն է.

«Ալէլուիա: Երանի այն մարդուն՝ որ Տիրոջմէն կը վախնայ, եւ անոր պատուիրաններէն յոյժ կ'ախորժի. անոր զարմը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ, ուղիղներուն սերունդը պիտի օրհնուի: Փարթամութիւն ու հարստութիւն պիտի ըլլայ անոր փան մէջ, եւ անոր արդարութիւնը յաւերժ պիտի գոյատեւէ: Խաւարին մէջ լոյս կը ծագի ուղիղներուն, անոր՝ որ ողորմած, գթած եւ արդար է: Բարի մարդը կ'ողորմի ու փոխ կու փայ, իր գործերը իրաւունքով կը վարէ: Իրապէս ան յաւիտեան պիտի չսասանի. արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ: Ան չարագուշակ լուրէն չի վախնար. անոր սիրտը հաստատ է, ու Տիրոջ կը վստահի: Անոր սիրտը նեցուկ ունի. պիտի չվախնայ՝ մինչեւ որ իր հակառակորդներուն կորուստը տեսնէ: Բաշխեց եւ աղքատներուն տուաւ. անոր արդարութիւնը յաւերժ կը գոյատեւէ, անոր եղջիւրը փառքով պիտի բարձրանայ: Ամբարիշտը պիտի տեսնէ ու գրգռուի. իր ակոռները պիտի կրճտէ եւ պիտի հալի: Ամբարիշտներուն փափաքը պիտի կորսուի»:

—Սաղմոս 112.1-10

Ես կը սիրեմ այն բաժինը, ուր կը խօսի ամբարիշտներուն գրգռուելուն մասին: Վերջին խօսքը միշտ Աստուծոյ կը պատկանի: Յաջողութիւնը միշտ մեծագոյն վրէժխնդրութիւնն է:

Եթէ գիտես իմ պատմութիւնս, գիտես, որ 1.3 միջին ունենալու համար ես դպրոցէն վտարուած եմ: Աստուած զիս քարոզելու կանչելէ ետք երբ ինծի ըսաւ, որ համալսարան երթամ, ես խանդավառ չէի այդ մէկը ընելու:

Առաջին տարուայ անգլերէնի դասարանիս մէջ պէտք էր յօդուած մը գրէի: Ուսուցիչս թուղթս ինծի վերադարձուց առաջին էջին վրայ մեծ «էֆ»ով մը (ձախող նիշ) եւ նկատողութեամբ մը, որ կ'ըսէր. «Դուն բնաւ դպրոց գացամ՞ ես»: Անձնական ուսուցիչի մը օգնութեան դիմեցի, որ ինծի օգնեց, որ սորվիմ այն, ինչ որ երբեք չեմ սորված դպրոցին մէջ:

Երբ առաջին գիրքս լոյս տեսաւ, ե-նամակ մը ստացայ այդ անգլերէնի ուսուցիչէս: Այսպէս կ'ըսէր. «Ասիկա այդ նոյն Կէրի Քիսին է, որ իմ դասարանս էր»: Ան շատ զարմացած եւ ցնցուած էր, որ ես գիրք գրած էի:

Հէյ, թող Աստուած եւ դուն բոլոր ընկերներդ ցնցէք:

Մէկը, որուն հետ դպրոց գացած եմ, օր մը իմ ֆինանսական ընկերութեանս գրասենեակը հանդիպեցաւ եւ ըսաւ. «Պարզօրէն չեմ հասկնար: Կէրին, որ իր ձախող նիշերուն պատճառով դպրոցէն վտարուեցաւ, հիմա հեռատեսիլին վրայ ելոյթ կ'ունենայ եւ ամբողջ աշխարհը զինք կը դիտէ»:

Ես կը սիրեմ այսպիսի պատմութիւններ, եւ Աստուած ալ կը սիրէ: Ուստի յիշեցնեմ, որ քու պատմութիւնդ չէ աւարտած: Զգտիր առատաձեռն ըլլալ: Այդպիսով կը ներկայացնես Աստուծոյ սիրտը ո՛ր որ երթաս: Սորվիր, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ, եւ պիտի վայելես այն լաւ կեանքը, որ Աստուած խոստացած է:

**ՍՈՐՎԻՐ, ԹԷ ԱՍՏՈՒԾՈՅ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՐԾԷ,
ԵՒ ՊԻՏԻ ՎԱՅԵԼԵՍ
ԱՅՆ ԼԱ՛Ի ԿԵԱՆՔԸ, ՈՐ
ԱՍՏՈՒԱԾ ԽՈՍՏԱՅԱԾ Է:**

— Կէրի Քիսի

«[...] Այս պաշտօնին սպասարկումը ո՛չ միայն կը լրացնէ սուրբերուն պակասը, այլ նաեւ կը ճոխանայ շատ շնորհակալութիւններով՝ ուղղուած Աստուծոյ: Այս սպասարկութեան փորձառութեամբ անոնք պիտի փառաւորեն Աստուած՝ Քրիստոսի ւեպարանին ձեր դաւանած ենթարկումին համար, նաեւ ձեր առաքածեռն հաղորդակցութեան համար՝ անոնց եւ բոլորին հետ. ու պիտի աղերսեն [աղօթեն] ձեզի համար, կարօտնալով ձեզ Աստուծոյ գերագանց շնորհքին համար՝ որ ձեր մէջ է: Շնորհակալութիւն Աստուծոյ՝ իր անպարմելի պարգեւին համար»:

—Բ. Կորնթացիներուն 9.12-15
(Շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ կը փափաքիս յաւելեալ տեղեկութիւն ստանալ «Ֆորուլըրտ Ֆայնենշըլ Կրուփ»ին մասին, կամ դրամ ներդրելու մեր ապահով ռազմավարութիւններուն մասին, այցելէ forwardfinancialgroup.com կայքէջը կամ հեռաձայնէ 1-(888)-397-3328 թիւին:

Եթէ կը փափաքիս յաւելեալ տեղեկութիւն ստանալ «Ֆինանսական Յեղափոխութեան Խորհրդաժողովներ»ուն (Financial Revolution Conferences) մասին, կամ եթէ կ'ուզես խորհրդաժողով մը կազմակերպել, կը խնդրենք, որ մեզի հետ կապուիս (740) 964-7400 թիւին եւ խնդրես գործադիր մարմինին հետ կապուիլ:

ԿԷՐԻ ՔԻՍԻԻ
«Ձեր ֆինանսական Յեղափոխությունը»
գրքաչառի գիրքերը

Համաձայնության զորությունը

Հանգիստի զորությունը

Մարտավարության զորությունը

Մատակարարման զորությունը

Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը՝
Ներբեռնելու համար
յաւելեալ ձրի ուսուցումներ
քու լեզուով:

Կը փափաքիս ունենալ յաւելեալ ՁՐԻ ուսուցումներու
աղբիւրներ քու լեզուով: Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը:

Աստուած կ'ուզէ, որ դուն օրհնուած եւ բարգաւաճ ըլլաս, որպէսզի կարենաս ամէն առիթով առատաձեռն ըլլալ:

Դուն երբեք ազատ պիտի չըլլաս, քանի դեռ ֆինանսապէս ազատ չես: Եւ ինչպէս Տրենտան եւ ես վերջին երեսուն տարիներուն ընթացքին ըսած ենք՝ դուն երբեք չես իսկական ինքնութիւնդ պիտի չյայտնաբերես եւ չես կեանքիդ հոգոր նպատակին մէջ պիտի չբալես, մինչեւ որ դրամին հարցը չլուծես:

ԴՈՒՆ ԿՐՆԱՎՍ ԱԶԱՏԱԳՐՈՒԻԼ

Ես ատիկա փաստեցի, եւ հազարաւոր ուրիշներ ալ փաստած են: Աստուծոյ շնորհքը ներկայ է քեզի օգնելու: Կան բաներ, զորս կանչուած ես ընելու, որ երբեք պիտի չկարենաս ընել առանց ֆինանսներու: Դուն պետք է ֆինանսապէս ազատ ըլլաս ոչ միայն դուն քեզի եւ ընտանիքիդ համար, այլեւ որպէսզի մարդիկ տեսնեն, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէ չուն կեանքէդ ներս:

Մարդիկ լուծումներ կը փնտռեն: Անոնք ճշմարիտը, իրականը կը փնտռեն: Անոնք շատ կարիքը ունին տեսնելու Թագաւորութիւնը եւ ոչ թէ կրօն:

Աստուած բարի է եւ առատաձեռն: Երբ առատաձեռն կ'ըլլանք, մարդոց համար Աստուծոյ ունեցած սիրտը ցոյց կու տանք: Ինչպէս շատ տաք օրուան մը ընթացքին ումպ մը պաղ ջուր խմելը, նոյնպէս առատաձեռն ըլլալը հանգստութիւն եւ յոյս կը բերէ աշխարհի մը, որ կը գտնուի աղքատութեան անապատին մէջ:

Կերի Քիսին «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը» խորագիրով գիրքերու շարքին այս հինգերորդ եւ վերջին գիրքին մէջ, յայտնաբերէ, թէ ինչպէս կրնաս Աստուծոյ հետ համագործակցիլ Իր պարտականութիւններուն մէջ եւ յաջողութեան հիանալի նոր մակարդակներ վայելել:

Այս հիանալի գիրքին ընդմէջէն, որ լեցուն է թարմ յայտնութիւնով, Աստուծոյ Խօսքէն առնուած հզօր օրհնակներով եւ ներշնչիչ անձնական պատմութիւններով Կերիին եւ ուրիշներու մասին, որոնք կիրարկած են առատաձեռնութեան գործութիւնը իրենց կեանքերուն մէջ եւ իբրեւ արդիւնք արմատական փոփոխութիւն վայելած են, դուն յստակօրէն պիտի հասկնաս Աստուծոյ Թագաւորութեան առատաձեռնութեան հզօր սկզբունքը եւ թէ ինչպէս ատիկա կը գործէ:

Առատաձեռնութիւնը մարդոց ցոյց կու տայ չուն սիրտդ եւ Աստուծոյ սիրտը իրենց հանդէպ:



Կերի Քիսին հեղինակ է, բանախօս, ձեռնարկատեր, ֆինանսական մասնագետ եւ հովիւ, որ մեծ սեր ունի մարդոց օգնելու, որպէսզի կեանքի մէջ յաղթեն, յատկապէս՝ հաւատքի, ընտանիքի եւ ֆինանսներու մարգերուն մէջ: Կերին եւ անոր կինը՝ Տրենտան, ստեղծած են բաւական յաջողակ ընկերութիւններ եւ հիմնադիրներն են «Ֆէյթ Լայֆ Լաու» ծառայութեան, որ կ'արտադրէ երկու հեռատեսիլային հաղորդում՝ «Դրամին Հարցը Լուծել» եւ «Տրենտա» անուններով, կը կազմակերպեն համաժողովներ ամբողջ աշխարհի տարածքին եւ կը ներկայացնեն գործնական կիւբեր: Քիսիները նաեւ կը հովուեն «Ֆէյթ Լայֆ» եկեղեցին, որ կը գտնուի Օհայօ նահանգին Քոլումպոս քաղաքին մօտակայքը:

GKM GARY KEESEE
MINISTRIES

garykeesee.com